

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

Դասագիրք բուհերի համար

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՏԴ 343.8(479.25)(075.8)

ԳՄԴ 67.409(52)g73

Խ 288

***Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:***

Գրախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ա.Ռ. Մարգարյան**,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ս.Վ. Առաքելյան**

Խ 288 Հայաստանի Հանրապետության քրեակատարողական իրավունք: Դասագիրք բուհերի համար/ Հ. Մ. Խաչիկյան: Եր., ԵՊՀ հրատ., 2024, 390 էջ:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ առաջին անգամ բուհական դասագրքի տեսքով ներկայացվում են քրեակատարողական իրավունքի տեսության հիմնարար դրույթները: Բացահայտվում են քրեակատարողական իրավունքի և ՀՀ քրեակատարողական քաղաքականության սկզբունքները, պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների կարգավիճակը, դատապարտյալների իրավական դրությունը, քրեական բոլոր պատժատեսակների կատարման և կրման կարգն ու պայմանները: ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերի, նորմատիվ իրավական, այդ թվում՝ ներգերատեսչական այլ ակտերի հիման վրա: Հաշվի են առնվել նաև դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի պահանջները, քրեակատարողական իրավունքի գիտության և պրակտիկայի նվաճումները:

Ներկայացվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և պատիժների կատարումը կարգավորող այլ իրավական ակտերում 2023թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները:

Դասագիրքը նախատեսված է առաջին հերթին իրավաբանական բուհերի ուսանողների և ասպիրանտների համար: Միաժամանակ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել գիտաշխատողների, դասախոսների, քրեակատարողական համակարգի աշխատակիցների և բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են պատիժների և դրանց կատարման ու կրման խնդիրներով:

ՀՏԴ 343.8(479.25)(075.8)

ԳՄԴ 67.409(52)g73

ISBN 978-5-8084-2672-6

DOI: <https://doi.org/10.46991/YSUPH/9785808426726>

©ԵՊՀ հրատ., 2024

© Խաչիկյան Հ. Մ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....9

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....17

1. Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը և քրեակատարողական քաղաքականությունն այդ համակարգում 17
2. «Պատիժ» հասկացությունը և տարրերը 22
3. Հանցանք կատարած անձանց վերադասարկականացման սոցիալ-իրավական (քրեակատարողական) համակարգը 28
4. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը 36
5. Քրեակատարողական իրավունքի հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ 42
6. Քրեակատարողական իրավունքի սկզբունքները 48
7. Քրեակատարողական իրավունքի գիտությունը 55
8. Քրեակատարողական իրավունքի դասընթացի առարկան և համակարգը 57

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍՐԴՐՈՒԹՅՈՒՆԸ61

1. Քրեակատարողական օրենսդրության հասկացությունը, բովանդակությունը, նպատակները և խնդիրները 61
2. Քրեակատարողական իրավունքի նորմերի հասկացությունը, բովանդակությունը, տեսակները և կառուցվածքը 70
3. Քրեակատարողական իրավունքի նորմերի կիրառումը 76

ԳԼՈՒԽ 3. ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ77

1. Դատապարտյալի իրավական վիճակի հասկացությունը և սոցիալ-իրավական հիմքերը 77

2. Դատապարտյալի հիմնական պարտականությունները	81
3. Դատապարտյալի հիմնական իրավունքները	83
ԳԼՈՒԽ 4. ՊԱՏԻՇՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ	
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ: ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ	
ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	
ՆԿԱՏՄԱՄԲ.....	96
1. Քրեական պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների տեսակներն ու խնդիրները	96
2. Քրեական պատժի նպատակները	100
3. Քրեակատարողական հիմնարկների տեսակները և խնդիրները	121
4. Վերահսկողությունն ու հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ	129
5. Դատախազական հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ	130
6. Դատական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ	133
7. Գերատեսչական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ	134
8. Հասարակական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ	135
9. Պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքը	137

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳՐԱՎՈՒՄԸ	
140	
1.Անվտանգության միջոցները.....	140
2. Գույքի բռնագրավումը.....	150

ԳԼՈՒԽ 6. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	155
1. Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	155
2. Տուգանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	159
3. Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	168
4. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	173
5. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	181
6. Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները	185
7. Ազատության սահմանափակումը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները.....	186

ԳԼՈՒԽ 7. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	192
1. Կարճաժամկետ ազատազրկման կատարման կարգն ու պայմանները	192
2. Կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները.....	199

ԳԼՈՒԽ 8. ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ.....	204
1. Ազատազրկում պատժատեսակի կատարման ընդհանուր դրույթներ.....	204

2. Ազատագրկման դատապարտվածների դասակարգման հասկացությունը և դասակարգման խմբերը: Ազատագրկման դատապարտվածների դասակարգումը որոշակի հատկանիշների հիման վրա նրանց բաժանումն է՝ ըստ համեմատաբար միասեռ խմբերի, որն ուղղված է պատժի նպատակների առավել արդյունավետ իրականացմանը	209
3. Դատապարտյալների տեղաբաշխումն ըստ քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակների	217
4. Ազատագրկման դատապարտվածներին պատիժը կրելու ուղարկելը և քրեակատարողական հիմնարկներ ընդունելու կարգը	227
5. Դատապարտյալին կալանավորվածներին պահելու վայրում թողնելը կամ բարձր անվտանգային գոտի տեղափոխելը կամ վարույթն իրականացնող մարմնի մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկում պահելը	233
6. Քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակը փոխելը	237

ԳԼՈՒԽ 9. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	243
---	------------

1. Ազատագրկում պատժատեսակի կատարման կանոնակարգի հասկացությունը և հիմնական պահանջները	243
2. Ազատագրկում պատժատեսակի կանոնակարգի գործառույթները	248
3. Ազատագրկման կանոնակարգի բովանդակությունը	250
4. Առանց պահակախմբի կամ առանց ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս դատապարտյալների տեղաշարժվելու իրավունքը	263
5. Դատապարտյալների մեկնումները քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս	266
6. Կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներում	272

7. Ազատագրված և դատապարտվածների պատժի կրման պայմանների փոփոխումը.....	275
8. Ազատագրված կատարման կարգը և պայմանները տարբեր տեսակի քրեակատարողական հիմնարկներում	277
9. Կանոնակարգի ապահովման միջոցները քրեակատարողական հիմնարկներում	293
10. Կարգապահական ներգործության՝ խրախուսանքի և տույժի միջոցները.....	297
11. Անձնական անվտանգության միջոցների և մարտական կամ ծառայողական զենքի գործադրումը	304
 ԳԼՈՒԽ 10. ԴԱՏԱՊԱՐՏՑԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	309
1. Դատապարտյալների աշխատանքի իրավական կարգավորումը	309
2. Դատապարտյալների կրթության և մասնագիտական կրթության իրավական կարգավորումը.....	317
3. Դատապարտյալների վերասոցիալականացման իրավական կարգավորումը	321
 ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	329
1. Պատժից ազատելու հասկացությունը և տեսակները.....	329
2. Պատիժը պայմանականորեն չկիրառելը	335
3. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը	343
4. Պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու անհնարինության դեպքում պատժից ազատելը.....	352
5. Հղի կնոջ կամ խնամքին մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը	355

6. Պատժից ազատելը կամ պատիժը հետաձգելը հիվանդության հետևանքով	360
7. Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով	366
8. Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով	371
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	387

ԱՌԱՋԱԲԱՆ

Քրեական իրավունքի բոլոր համակարգերում ակնբախ է մի դիրքորոշում. անմեղը պետք է արդարացվի, իսկ մեղավորը՝ պատժվի: Առանց պատժի և նրա հարակից ինստիտուտների, որոնց միջոցով որոշվում են պատժի չափն ու կատարումը, քրեական իրավունքը գոյություն ունենալ չի կարող: Հետևաբար սխալված չենք լինի, եթե ասենք, որ վերջինիս հիմնական բնութագրիչ գծերը պայմանավորված են նաև պատժի ինստիտուտով:

Ինչպես հայտնի է, պատիժը պետական հարկադրանքի ամենախիստ միջոցն է, որը կիրառվում է դատարանի դատավճռով հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ: Ակնհայտ է, որ դեռ ոչ ոք չի ապացուցել՝ պատիժը բարի՞ք է, թե՞ չարիք: Ըստ երևույթին այն միաժամանակ և՛ մեկն է, և՛ մյուսը: Ակնհայտ է, որ հանցագործությունների կանխման գործում պատիժը երկրորդական նշանակություն ունի, որովհետև չի վերացնում հանցավորությանը նպաստող գործոնները, ուղղված չէ հանցագործությունների պատճառների և պայմանների չեզոքացմանը: Մինևույն ժամանակ չի կարելի թերագնահատել պատժի կանխիչ նշանակությունը: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնցում ապացուցվում է, որ պատժողական ճիշտ քաղաքականությունը, պատիժների կատարման գործընթացի բարելավումը կարող են էապես նպաստել հանցավորության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, հանցավորությունը որոշակի նվազ մակարդակի վրա պահելու գործում: Ուստի թեև պատժի՝ որպես հանցավորության դեմ պայքարի միջոցի նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ, այնուամենայնիվ պետք է փաստել, որ տեսանելի ապագայում հասարակությունն առանց պատիժների չի կարող գոյատևել:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաի-

րավական բարեփոխումների հիմքը կազմող օրենսդրական ակտերի ընդունման գործընթացը կարելի է համարել ավարտված: Այն անցել է զարգացման երկու փուլ՝ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունում¹ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ընդունում²: Օրենսգրքերի ընդունման հակառակ հաջորդականությունն անտրամաբանական կլիներ, քանի որ պատիժների համակարգը և բովանդակությունը սահմանող նյութական (քրեական) իրավունքի նորմերի բացակայության պարագայում ընթացակարգային (քրեակատարողական) նորմերը չեն կարող սահմանել դրանց իրականացման կարգը և պայմանները:

Քրեակատարողական օրենքը միայն քրեական պատիժների կատարումը կարգավորող գործիք չէ: Այն պարունակում է նյութական իրավունքով նախատեսված սահմանափակումների բազմաթիվ նորմեր, այդ թվում՝ պատժիչ բնույթի: Ուստի տրամաբանական է օրենսդրական ակտերի նման հաջորդականությամբ ընդունումը. մեկը նախատեսում է քրեական պատիժները (քրեական օրենսգիրք), մյուսը կարգավորում է դրանց կատարումը (քրեակատարողական օրենսգիրք):

Բարեփոխումները օրենսդրության ցանկացած ճյուղում, այդ թվում՝ քրեակատարողական, անհնար է իրականացնել, առանց հաշվի առնելու երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումները, հասարակության բարոյական արժեքները, հասարակական և իրավական ինստիտուտների զարգացման միտումները, հանցավորության շարժընթացը և կառուցվածքը, պատմական դրական և բացասական փորձը, ժողովրդի իրավագիտակցությունը, մարդու իրավունքների և դա-

¹ ՀՀ նոր քրեական օրենսգիրքն ընդունվել է 05.05.2021թ., գործողության մեջ է դրվել 01.07.2022թ.:

² ՀՀ նոր քրեակատարողական օրենսգիրքն ընդունվել է 15.06.2022թ., գործողության մեջ է դրվել 01.07.2022թ.:

տապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական ակտերի դրույթները և այլն:

ՀՀ քրեական և քրեակատարողական նոր օրենսգրքերի ընդունումը պայմանավորեց քրեական պատիժների կատարման օրենսդրական մոտեցումների ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտությունը: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ընդունումը ոչ միայն իրավական բարեփոխումների նոր փուլ հանդիսացավ, այլև ծառայեց որպես դրա շարունակման և կատարելագործման խթանիչ ուժ: Օրենսգրքի նորմերին համապատասխան ընդունվեցին և ընդունվում են քրեական պատիժների կատարման բնագավառը կարգավորող այլ նորմատիվ իրավական բազմաթիվ ակտեր:

Այս պարագայում «ՀՀ քրեակատարողական իրավունք» բուհական դասագրքի հրատարակումը խիստ անհրաժեշտ, հիմնավորված և արդիական է: Քրեակատարողական իրավունքը՝ որպես ուսումնական դասընթաց, լիարժեք բարձրագույն իրավաբանական կրթության անբաժանելի մասն է: Այս դասագիրքը հայ իրավագիտության պատմության մեջ քրեական պատիժների կատարումը կարգավորող իրավունքի ճյուղի վերաբերյալ առաջին³ գիտագործնական ուսումնասիրությունն է, որտեղ իրականացվել է բոլոր պատժատեսակների կատարման տեսական և գործնական խնդիրների համակարգված և համալիր վերլուծություն: Քրեական պատիժների հիմնախնդիրները հայրենական իրավագիտության մեջ նման կտրվածքով և բովանդակությամբ երբևէ չեն ներկայացվել:

Դասագրքում բացահայտվում են քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատիժների կատարման օրենսդրական և

³ ԵՊՀ հրատարակչությունը 2009 և 2011թթ. հրատարակել էր *«ՀՀ քրեակատարողական իրավունք» ուսումնական ձեռնարկը*՝ Հ.Մ. Խաչիկյանի հեղինակությամբ, որի հիմքում 2004թ. ՀՀ քրեակատարողական օրենսգրքն էր:

իրավակիրառ հիմնախնդիրները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է պետության քրեաիրավական և քրեակատարողական քաղաքականությունների տեղի ունեցած փոփոխություններով, որոնք կապված են առաջին հերթին երկրի քրեակատարողական համակարգի բարեփոխման հետ: Հայաստանի Հանրապետությունում, իրոք բարեփոխվել է քրեակատարողական համակարգի գործունեության բովանդակությունը. այն դարձել է առավել ժողովրդավարական և մարդասիրական: Բայց անելիքները դեռ շատ են. առաջին հերթին անհրաժեշտ է բարելավել պատժի կրման պայմանները, դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները և ողջ քրեակատարողական համակարգի գործունեությունը: Այս կապակցությամբ ևս մեկ անգամ ընդգծվում է սույն դասագրքի հրատարակման անհրաժեշտությունը, որտեղ բացի տեսական վերլուծություններից առաջարկվում են նաև քրեակատարողական համակարգի գործունեության բարելավման գիտագործնական ուղիները:

Քրեակատարողական համակարգի բարեփոխումը ներկայացվում է որպես անցում խորհրդային պետության ուղղիչ-աշխատանքային համակարգից մեկ այլ, նոր՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական համակարգի: Այստեղ խոսքը ոչ թե եզրույթների անվանումների փոփոխման, այլ պատիժների կազմակերպման և կատարման ողջ բովանդակության փոփոխման մասին է:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքերի ընդունումն ունեցել է պատմական որոշակի զարգացում, որը, կարծում ենք, արժանի է հակիրճ ներկայացման: Նշենք, որ տողերիս հեղինակին բախտ է վիճակվել լինել քրեակատարողական օրենսգրքի նախագծերը մշակող աշխատանքային խմբերի անդամ և ղեկավար: 1997թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովի պետաիրավական մշտական

հանձնաժողովի նախագահի խնդրանքով ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում կազմավորվեց ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբ: Սեպտեմբերին նախագիծն արդեն պատրաստ էր և դրվեց շրջանառության մեջ: Օրենսգրքի նախագիծն ուղարկվեց ՀՀ Ազգային ժողով, արդարադատության և ներքին գործերի նախարարություններ, գլխավոր դատախազություն, գերագույն դատարան, փաստաբանների միություն և բոլոր վերոհիշյալ մարմիններից ստացվեցին դրական կարծիքներ: Կազմակերպվեցին սեմինարներ, քննարկումներ, հանդիպումներ այդ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ և նախագիծը՝ առաջարկված փոփոխություններով ու լրացումներով, արժանացավ հավանության: Բայց առանց որևէ պատճառաբանության և առանց որևէ դիտողության այն մատնվեց մոռացության:

Աշխատանքները վերսկսվեցին 2002-2003 թթ.: Ներկայացվեց նոր նախագիծ, որի վերաբերյալ մեր կողմից արվեցին սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ, որոնք ամբողջությամբ ընդունվեցին: Նշենք նաև, որ 2004 թ. դեկտեմբերի 24-ին ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքի բովանդակությունը պարունակում է մեր մշակած նախագծի ավելի քան կեսը:

2004թ. ՀՀ քրեակատարողական օրենսգրքը որոշակի իմաստով համապատասխանում էր պատիժների կատարման հիմնախնդիրների սկզբունքներին և քրեակատարողական իրավունքի գիտության տեսական մշակումների պահանջներին: Բայց, այնուամենայնիվ, այս բնագավառում օրենսդրությունը և քրեակատարողական համակարգն ամբողջությամբ հետագա բարեփոխումների կարիք ունեին. անհրաժեշտ էր աստիճանական անցում քրեական պատիժները կատարելու և կրելու առավել լիբերալ ու արդյունավետ կառուցակարգերի, ինչպես նաև պատժի կատարման միջազգային չափանիշներին համապատասխանող

սոցիալական, նյութական և տնտեսական պայմանների փոփոխությունները:

ՀՀ նոր (2021թ.) քրեական օրենսդրությունը նախատեսում էր պատժի՝ որպես պետական հարկադրանքի ամենախիստ միջոցի տեսակների և սահմանման այլ մոտեցում մասնավորապես պատժի նպատակների մասով. սոցիալական արդարության վերականգնման և հանցագործությունների կանխման նպատակներին զուգահեռ՝ ուներ նաև պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման նպատակ:

ՀՀ նոր (2022թ.) քրեակատարողական օրենսգրքի նախագծի հետ կապված աշխատանքները ևս իրականացվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնում ՀՀ արդարադատության նախարարի (2015թ.) կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից (աշխատանքային խմբի ղեկավար՝ Հ.Մ.Խաչիկյան):

ՀՀ նոր քրեակատարողական օրենսգիրքը մարմնավորում է ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան երկրների գիտության և պրակտիկայի նվաճումները, ընդգրկում է միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական չափանիշները, լուսաբանում է քրեական բոլոր պատժատեսակների և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կատարման ու կրման օրենսդրական և իրավակիրառ հիմնախնդիրները՝ հաշվի առնելով իրականությունը և մեր երկրում վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունները և հուսալիորեն կարող է նպաստել պատիժների արդյունավետ կատարման տեսագործական մոտեցումները կյանքի կոչելուն:

ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը ձևակերպում է ՀՀ քրեակատարողական համակարգի բարեփոխումը և սահմանում է նրա գործունեության որոշակի ուղղությունները ոչ միայն մոտ

ապագայում, այլև հեռանկարում: Պետք է նկատի ունենալ, որ նպատակամղված առաջընթաց այստեղ անհնար է, քանի որ «բանտային գործը» ինքնին պահպանողական է, խիստ և ուղղվածություն ունի դեպի ավանդույթներն ու սովորույթները: Փոփոխություններն այս բնագավառում հնարավոր են միայն աստիճանաբար և փուլերով՝ հաշվի առնելով հասարակության և պետության ներսում գործող սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնները: Վերլուծելով սոցիալ-տնտեսական իրողությունները, բարոյահոգեբանական հասարակական գործընթացը և մեր պետության զարգացման հեռանկարները՝ կարող ենք վստահաբար փաստել, որ պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների կարիքը, չնայած սպասվելիք փոփոխություններին, շարունակելու է մնալ, ուստի դրանց նյութատեխնիկական, բարոյական, իրավական բազմաբնույթ հարցերի հրատապ լուծման անհրաժեշտությունը կասկած չի հարուցում:

Եթե ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը դիտենք որպես առանց բացառության բոլոր պատժատեսակների կատարումը կարգավորող ինքնուրույն իրավաբանական ակտ, ապա մեր պետության պատմության ամբողջ ընթացքում այն կլինի երկրորդը: ՀԽՍՀ 1934 թ. և 1971 թ. ուղղիչ-աշխատանքային օրենսգրքերը կարգավորում էին միայն քրեական պատիժների որոշ տեսակների կատարումը՝ ազատազրկում, աքսոր, արտաքսում և ուղղիչ աշխատանքներ առանց ազատազրկման:

«ՀՀ քրեակատարողական իրավունք» դասագիրքը հայ իրականության մեջ իրավունքի այս ճյուղի վերաբերյալ առաջին բուհական ձեռնարկն է:

Դասագիրքը շարադրված է քրեակատարողական իրավունքի դասընթացի ծրագրին համապատասխան, ընդգրկված են ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի բոլոր փոփոխությունները, և կարող է օգտակար լինել դասընթացի ուսումնասիրման, իրա-

վաբանական բուհերում դասավանդման, քրեակատարողական համակարգի աշխատակիցների և պրոբացիայի ծառայողների աշխատանքները կազմակերպելու համար, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են պատիժների և դրանց կատարման ու կրման խնդիրներով:

ԳԼՈՒԽ 1
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***1. Հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունը
և քրեակատարողական քաղաքականությունն
այդ համակարգում***

Քրեակատարողական իրավունքի դասընթացի ուսումնասիրության առանցքային ուղղություններից է «քրեակատարողական քաղաքականության» հասկացության բովանդակության բացահայտումը, քանի որ զգալի է դրա ազդեցությունը իրավունքի վրա. այն ձևավորում է նրա գաղափարախոսությունը, ուղղվածությունը, սկզբունքները, ինչպես նաև վերնաշենքի մյուս մասերը՝ բարոյականությունը, փիլիսոփայությունը և այլն: Ընդհանրապես քաղաքականությունը պետության իրավական համակարգի, նրա գործունեության իրավական ձևերի, օրենսդրության տարբեր ճյուղերի ձևավորման և զարգացման հիմքն է, որն արտահայտում է հասարակության, քաղաքական և իշխանական կառույցների կողմից առաջադրվող սոցիալական նպատակներին հասնելու հիմանական ուղղությունները, սկզբունքները և եղանակները: Այդ քաղաքականության խնդիրները ընդհանուր ձևով ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում, որի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետության քաղաքականությունն իրականացվում է երկու ուղղություններով՝ արտաքին (այլ պետությունների հետ) և ներքին (հարաբերություններ սեփական քաղաքացիների հետ): Ներքին պետական քաղաքականությունը բաժանվում է սոցիալական, ազգային, տնտեսական և այլ քաղաքականությունների: Սոցիալական քաղաքականության ընդհանուր նպատակը բխում է պետության ու նրա մարմինների գործունեության բնույթից և ուղղվածությունից:

Պետության սոցիալական քաղաքականության տեսակներից է մոտեցումները հանցավորության դեմ պայքարի բնագավառում⁴, որը հանցավորության նկատմամբ պետության վերահսկողության խնդիրների, սկզբունքների, ձևերի և եղանակների ամբողջությունն է: Այն պետք է արտահայտի քաղաքացիների շահերը և ապահովի նրանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից:

Հանցավորության դեմ պայքարի ոլորտում քաղաքականությունը պետության և նրա համապատասխան մարմինների գործունեությունն է հանցագործությունների ու այլ իրավախատումների հայտնաբերման, կանխման, հանցավոր արարք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու, դատապարտյալների նկատմամբ պատիժների կատարման և պատժի նպատակների իրականացման բնագավառներում: Պետության քաղաքականությունն այս ոլորտում բազմաբնույթ է: Այն պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ քաղաքականություն հանցագործությունների կանխման բնագավառում, քրեական քաղաքականություն և ***քաղաքականություն քրեական պատիժների կատարման բնագավառում կամ որ նույնն է՝ քրեակատարողական քաղաքականություն:***

⁴ Ст'у **Бриллиантов А.В., Курганов С.И.** Уголовно-исполнительное право Российской Федерации. М., 2021, էջ 12:

Իրենց սկզբունքներով, վերջնական նպատակի հասնելու առումով այս քաղաքականությունները կազմում են մեկ ամբողջություն և սերտորեն կապված են մեկը մյուսին: Երբեմն հնարավոր է դրանց որոշակի ուղղությունների միավորում, օրինակ՝ քրեական քաղաքականության և պատիժների կատարման բնագավառում քաղաքականության միավորում: Հնարավոր է նաև հակառակը, այսպես՝ հանցագործությունների կանխման քաղաքականությունից կարող է անջատվել մեկ այլ՝ պոստպենիտենցիար (հետպատժական) քաղաքականությունը, որը միտված է կրկնահանցագործության կանխմանը և դատապարտյալների վերադաստիարակմանը:

Առավել սերտ է կապը քրեական և քրեակատարողական քաղաքականությունների միջև, քանի որ վերջինս առանձնացել է քրեական քաղաքականությունից: Քրեական քաղաքականությունը որոշում է հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական եղանակները՝ քրեական պատասխանատվությունը, վերջինիս հիմքը, պատասխանատվության անհատականացումը և տարբերակումը, արարքի քրեականացումը և ապաքրեականացումը, պատիժների բովանդակությունը, նպատակները, տեսակները, համակարգը, պատժից ազատելը և այլն: Քրեակատարողական քաղաքականությունն ունի ավելի նեղ բովանդակություն. այն ներառում է պատիժներ կատարելիս պետության գործունեության հիմնական ձևերը, եղանակները, սկզբունքները և ռազմավարությունը: Այս քաղաքականությունը պատիժների կատարման բնագավառում միաժամանակ որոշակի ազդեցություն ունի քրեական քաղաքականության վրա, առաջին հերթին՝ պատիժների համակարգը և նրա առանձին տեսակները սահմանելու, ինչպես նաև պատիժների նշանակման գործընթացը: Վերջին հաշվով ո՞ր քաղաքականությունը ուղղակիորեն ազդում է հանցավորության դեմ պայքարի քաղաքականության, մասնավորապես՝ կրկնա-

հանցագործության կանխման և պատիժ կրած անձանց սոցիալական վերականգնման գործընթացի վրա⁵:

Այսպիսով՝ որպես հանցավորության դեմ պայքարի քաղաքականության բաղկացուցիչ մասը՝ *քրեակատարողական քաղաքականությունն ամբողջացնում է քրեական պատիժներ կատարելիս պետության գործունեության ձևերը, եղանակները, սկզբունքները, նպատակները և հիմնական ուղղությունները, ինչպես նաև դատապարտյալի վերասոցիալականացումը և իրավահպատակ վարքագծի ձևավորումը, նոր հանցագործությունների կանխումը և այլն*:

Այս բնագավառում քաղաքականության նպատակները և սկզբունքները կայուն են, քանի որ հիմնվում են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական չափանիշների և գիտության նվաճումների վրա:

Չնայած կայունությանը՝ քրեակատարողական քաղաքականության ռազմավարությունը կարող է վերանայվել պետության տնտեսության, քաղաքականության և գաղափարախոսության արմատապես փոփոխվելու դեպքում: Քրեակատարողական քաղաքականության վրա անմիջական ազդեցություն է ունենում երկրի տնտեսական վիճակը: Տնտեսապես հզոր պետությունը կարող է իր առջև ավելի բարձր նպատակներ դնել այդ խնդիրներ-

⁵ Քաղաքականությունը քրեական պատիժների կատարման բնագավառում ավանդականորեն անվանվել է «ուղղիչ-աշխատանքային»: XX-րդ դարի վերջում քրեական պատիժների համակարգային փոփոխությունների արդյունքում, այս արտահայտությունն այլևս չէր համապատասխանում իր բովանդակությանը: Դա առաջին հերթին պայմանավորված էր պետության գործունեության տվյալ ոլորտի քաղաքականության և դատապարտյալների նկատմամբ վերաբերմունքի փոփոխմամբ. դատապարտյալների աշխատանքն այլևս նրանց ուղղման հիմնական միջոց չէր համարվում, ուստի օրենսդրության այդ ճյուղի և այն սպասարկող գիտության անվանումը՝ «ուղղիչ-աշխատանքային» օրենսդրություն և իրավունք, այլևս արդիական չէ:

Այսպիսով՝ իրավունքի ճյուղը, գիտությունը, օրենսդրությունը, ինչպես նաև քաղաքականությունը այս բնագավառում կոչվեց քրեակատարողական:

րի իրականացման համար:

Քրեակատարողական քաղաքականության ռազմավարության ձևավորման վրա իր ազդեցությունն են ունենում հանցավորության կառուցվածքը և զարգացումը: Հանցավորության կայունության կամ նվազման միտումների դեպքում այս բնագավառի քաղաքականությունն ավելի մարդասիրական է: Հանցավորության աճը, ծանր և հատկապես բռնությամբ կատարվող հանցագործությունները բացասաբար են անդրադառնում հասարակության վրա ու ենթադրում են և պահանջում քաղաքական և իրավական առավել խիստ մոտեցումներ:

Քրեակատարողական քաղաքականության ձևավորման և զարգացման վրա ուրույն ազդեցություն կարող են ունենալ գիտության նվաճումները, որը մշակում է ոչ միայն հանցավորության դեմ պայքարի միջոցները (կրիմինալոգիա, քրեական իրավունք և այլն), այլև ուսումնասիրում է դատապարտյալների վերասոցիալականացման, իրավահպատակ վարքագծի խթանման խնդիրները (քրեակատարողական իրավունք, քրեակատարողական հոգեբանություն, քրեակատարողական մանկավարժություն, կրիմինապենոլոգիա և այլն) և համապատասխան «դեղատոմսերի» առաջարկում:

Քրեակատարողական քաղաքականությունն ապահովվում է մի շարք ձևերով և առաջին հերթին քրեակատարողական օրենսդրությամբ: Այն ամրագրվում է քրեակատարողական օրենսգրքում, ինչպես նաև այն օրենքներում ու այլ իրավական ակտերում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են պատիժների կատարմանը: Միաժամանակ, քրեակատարողական քաղաքականությունն իրականացվում է համապատասխան պետական մարմինների գործունեության միջոցով, որոնք ապահովում են քրեական պատիժների կատարումը:

2. «Պատիժ» հասկացությունը և տարրերը

Քրեական իրավունքում «հանցագործություն» և «պատիժ» հասկացությունների դիալեկտիկական կապը լավագույնս սահմանված է իտալացի հոգեբույժ Չեզարե Լոմբրոզոյի *«Կա հանցագործություն, կա պատիժ, չկա հանցագործություն, չկա պատիժ»* կարևորագույն դրույթում: ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել:

«Պատիժ» հասկացությունն առաջին անգամ ձևակերպվել է ֆրանսիական հեղափոխության՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (1789 թ.):

ՀՀ քրեական օրենսգիրքը⁶ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի հիման վրա սահմանում է արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը: *«Nulla poena sine lege»*⁷ հնագույն սկզբունքից բխում է, որ քրեական պատիժը կարող է նախատեսվել միայն քրեական օրենքով: Հանցավոր արարքն առաջ է բերում դրանում մեղավորի քրեական պատասխանատվությունը: Քրեական պատասխանատվության ձևերից է պատիժը: Այն հանցագործության իրավաբանական հետևանքն է և քրեական պատասխանատվության տրամաբանական ավարտը:

Քրեական պատիժը քրեական իրավունքի գիտության առավել բարդ և բազմաբնույթ հիմնախնդիրներից է, որի տեսական հարցերը մանրամասն վերլուծության են ենթարկվել իրավաբանական գրականության մեջ: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ի համաձայն՝

⁶ Այսուհետ՝ ՀՀ քր. օր.

⁷ Չկա պատիժ առանց պատժի մասին օրենքի (լատ.):

«Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից սույն օրենսգրքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ»:

Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները:

Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում են որոշակի տարրեր, որոնց համակցությունը ձևավորում է պատժի հասկացությունը և արտացոլում պատժի էությունը:

Պատիժը պետական հարկադրանքի միջոց է: Պետական հարկադրանքի միջոցները տարաբնույթ են. քրեական պատիժն այդ համակարգում համարվում է հատուկ, առավել խիստ և ծանր միջոց: Հարկադրանքի այս միջոցի հատուկ բնույթը հետևյալն է. պատիժ կարող է նշանակվել միայն քրեական օրենքով որպես հանցանք նախատեսված արարքների համար: ՀՀ քր. օր. հոդված 16-ի 1-ին մասի համաձայն՝ հանցանք է համարվում սույն օրենքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը: Անձի նկատմամբ քրեական պատժի կիրառման հիմքը նրա կողմից հանցավոր արարքի կատարումն է: Եթե անձը չի կատարել նման արարք, ապա ոչ մի պարագայում նրա նկատմամբ քրեական պատիժ չի կարող կիրառվել:

Պատիժը որպես պետական հարկադրանքի միջոց բնորոշելը հավաստում է այն փաստը, որ այն նշանակվում է միայն դատարանի դատավճռով և պետության անունից: Դրանով ընդգծվում է պատժի հանրային բնույթը, հաստատվում են դատարանակազմության սահմանադրական հիմքերը. «Հայաստանի Հանրապե-

տությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» (ՀՀ Սահմանադրություն, հոդված 162, 1-ին մաս):

Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պետության անունից կայացված և որոշակի պատիժ նախատեսող մեղադրական դատավճիռը ըստ էության հանցագործությանը և հանցագործին պետության կողմից տրված պաշտոնական՝ սոցիալ-բարոյական բացասական գնահատականն է (պետական պարսավանք):

Պատիժը, ի տարբերություն պետական հարկադրանքի այլ միջոցների, առաջացնում է յուրահատուկ իրավական հետևանք՝ դատվածություն, որը մարվում է կամ կարող է հանվել քրեական օրենքում նշված որոշակի պայմանների ուժով (ՀՀ քր. օր., հոդված 93): Դատվածությունը պատժի ինքնուրույն տարր համարելու հարցը վիճելի է քրեաիրավական գրականության մեջ⁸: Դատվածությունից բխում են որոշակի իրավասահմանափակումներ պատիժ կրող կամ արդեն իսկ կրած դատապարտյալի համար: Այն հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս: Դատվածությունն ընդգրկում է ժամկետային բնույթ ունեցող պատիժների (ազատազրկում, կարճաժամկետ ազատազրկում) կատարման ամբողջ ժամանակահատվածը՝ դրանով իսկ հանդիսանալով պատժի որոշակի տարր: Ինչ վերաբերում է ժամկետային բնույթ չունեցող պատիժներին (տուգանք), ապա այստեղ դատվածությունը հետևում է պատժի կատարմանը: Ուստի այս հարցի տարաբնույթ լուծումը թվում է անհիմն: ՀՀ քր. օր. հոդված 93-ում սահմանվում են դատվածության ժամկետները. անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

⁸ См. и Курс уголовного права. Общая часть. Т. 2. Учение о наказании. Под ред. Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой. М., 2018, էջ 13:

դատվածության վերացման պահը: Հետևաբար օրենսդիրը դատվածությունն ընդգրկում է ինչպես նշանակված, այնպես էլ կատարված պատժի մեջ: Դատվածությունը համարվում է նաև պատժի կրման հետևանք: Այդ պատճառով սխալված չենք լինի, եթե հավաստենք, որ դատվածությունը պատժի ինքնուրույն տարր է:

Պատժի հաջորդ տարրը պատիժը կրող անձն է: Պատիժը ցանկացած պարագայում խիստ անձնական բնույթ ունի: Պատիժ նշանակվում է միայն հանցագործության մեջ դատարանի կողմից մեղավոր ճանաչված անձի նկատմամբ: Հանցագործի անձը դատարանի կողմից պատժի անհատականացման ինքնուրույն հիմք է (ՀՀ քր. օր., հոդված 69): Վերջապես, ինչպես արդեն նշել ենք, պատիժ նշանակվում է միայն հանցագործի նկատմամբ և ոչ մի պարագայում չի կարող փոխանցվել այլ անձանց (օրինակ՝ հանցանք կատարած անչափահասի ծնողներին):

Պատժի վերջին տարրը վերաբերում է նրա բովանդակությա-
նը: Պատիժը միշտ կապված է դատապարտյալի իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ. այն պատճառում է (կամ՝ ծայրահեղ դեպքում կարող է պատճառել) բարոյական զրկանքներ և զրկում է նրան որոշակի բարիքներից (ազատություն, որոշ իրավունքներ և այլն): Այսինքն՝ պատիժն օբյեկտիվ հատուցումն է հանրոքեն վտանգավոր արարքի համար: Նման բովանդակությունն այս կամ այն չափով պարունակում է ցանկացած պատիժ: Պատժի խստությունը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորությանը, ինչպես նաև դատապարտյալի անձին: Նման համապատասխանությունը որոշակի առումով սոցիալական արդարության վերականգնում է, դատապարտյալի կողմից պետության, հասարակության և տուժողի հանդեպ մեղքի քավում:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ

պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ (ՀՀ քր. օր., հոդված 69, մաս 2-րդ):

Պատժի բովանդակությունը կազմող վերը նշված տարրերը հնարավորություն են տալիս պատիժը տարբերել պետական հարկադրանքի այլ միջոցներից: Տարբերությունը բխում է պատասխանատվության հիմքերից, բովանդակությունից և հետևանքներից: Այսպես՝ քրեական պատիժը նման է քաղաքացիական գործերով դատական ակտերի հարկադիր կատարմանը (որոնք նույնպես կայացվում են դատարանի կողմից, պետության անունից և կատարվում են հարկադրաբար), բայց վերջինիս դեպքում նման ակտերը կայացվում են ոչ թե հանցագործության, այլ գույքային կամ անձնական ոչ գույքային բնույթի վեճերի առիթով և չեն առաջացնում քրեաիրավական հետևանքներ (օրինակ՝ դատվածություն):

Պատիժը տարբերվում է նաև պետական հարկադրանքի այնպիսի միջոցներից, ինչպիսիք վարչական տույժերն են: Վերջիններս նախատեսված են վարչական օրենսդրությամբ և երբեմն համանուն են քրեական պատիժներին (օրինակ՝ տուգանք), բայց ինչպես պատժիչ բովանդակությամբ, այնպես էլ կիրառման ընթացակարգով դրանք էականորեն տարբերվում են քրեական պատիժներից: Վարչական ներգործության միջոցները (տույժերը) կիրառվում են վարչական իրավախախտումների դեպքում և կայացվում են ոչ թե պետության, այլ պետական մարմնի կամ պաշ-

տոնատար անձի անունից: Պատիժը պետք է տարբերել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներից, որոնք նշանակվում են ծառայողական ենթակայության կարգով ծառայական պարտականությունների խախտման համար:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում պատիժներից զատ նախատեսված են նաև քրեաիրավական ներգործության այլ միջոցներ, մասնավորապես՝ անվտանգության միջոցները և գույքի բռնագրավումը: Քրեական պատիժը պետք է տարբերել նաև այս միջոցներից: Դրանց հիմնական տարբերությունը բովանդակային է. քրեաիրավական այս միջոցները չունեն պատժիչ, ճնշող բնույթ, իսկ հարկադրանքն այստեղ անհամեմատ ավելի փոքր է, քան քրեական պատիժներում: Այս միջոցների նպատակն այն է, որ դատապարտյալը կրի որոշակի այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են՝ ժամանցի ազատության, որոշակի վայրեր այցելելու արգելքը և այլն: Պատիժների և քրեաիրավական այս միջոցների նմանությունը դրանց նշանակման հիմքի՝ հանցանքի կատարման մեջ է⁹:

Եզրափակելով փորձենք համառոտ ներկայացնել հանցավորության վրա քրեական պատիժների ազդեցությունը: Հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգում պատժի դերը վստահորեն կարելի է համարել ոչ հիմնական, քանի որ հանցավորության աճի միտումը կախված է այլ գործոններից՝ առավել հզոր, քան պատժի հնարավոր ազդեցությունն է (տնտեսական, քաղաքական, կազմակերպչակառավարչական): Պետությունը, պատժելով հանցագործին, նույնպես կրում է որոշակի կորուստներ՝ կապված արդարադատության իրականացման, պատժի կատարման և այլ հանգամանքների հետ: Այնուամենայնիվ հասարակության մեջ տիրում է այն թյուր կարծիքը (հատկապես հան-

⁹ Անվտանգության միջոցների և գույքի բռնագրավման մասին մանրամասն կլիտսվի 5-րդ գլխում:

ցավորության աճի պայմաններում), թե հանցագործությունների կանխման գրավականը քրեական պատիժների խստացումն է: Պատիժն այն միջոցներից մեկն է, որի օգնությամբ պետությունը ազդելով հանցավորության վրա, փորձում է պահել այն որոշակի սահմանների մեջ: Պատիժը վերջին ծայրահեղ միջոցն է, որը պետք է գործի այն պարագայում, երբ հասարակությունն այլևս ի գործու չէ կանխելու հանցագործությունը: Ոչ թե պատիժների խստությունն է ահաբեկում հանցագործներին, այլ օրենքների գործնական, օպերատիվ կիրառումը և հանցագործությունների հուսալի բացահայտումը: Պետության համար առավել նպատակահարմար է և շահեկան կանխել հանցագործությունը, քան պատժել հանցագործին:

3. Հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման սոցիալ-իրավական (քրեակատարողական) համակարգը

Քրեական և քրեակատարողական օրենսդրության նորմերի անմիջական կիրառման նպատակով պետության կողմից ստեղծվում և գործում են հատուկ մարմիններ ու հիմնարկներ՝ օպերատիվ հետախուզական գործունեություն ծավալող, նախաքննություն իրականացնող, արդարադատության, պրոբացիայի մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ և պատիժներ կատարող այլ մարմիններ: Եթե դիտարկենք այս մարմինների գործունեությունը վերջնական արդյունքի տեսանկյունից, այսինքն՝ նոր հանցագործությունների իրական կանխումը, ապա կարելի է առանձնացնել պատժի համակարգով նախատեսված՝ ընդհանրապես բոլոր պատժատեսակների կատարումը:

Քրեական օրենքով սահմանված պատժի տեսակների սպառնիչ ցանկն պատժի համակարգն է: Պատժի տեսակների, դրանց կատարման և կրման կարգի նախատեսումն օրենքում կարևոր

նշանակություն ունի պատժի նշանակման և անհատականացման ընթացքում քրեական իրավունքի հիմնական սկզբունքների իրականացման առումով: Պատժի տեսակների սպառիչ ցանկի նշանակությունն այն է, որ դատարանը չի կարող դատապարտյալի համար նշանակել այդ ցանկում տեղ չգտած որևէ այլ պատիժ:

Պատժի համակարգն արտահայտում է քրեական իրավունքի հիմնական, առաջին հերթին՝ օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները, ինչպես նաև արդի ժամանակաշրջանում հանցավորության դեմ պայքարի հիմնական ուղղությունները՝ քրեաիրավական ներգործության միջոցների խստացումը ծանր և առանձնապես ծանր (հատկապես բռնությամբ կատարվող) հանցագործությունների ու չարամիտ հանցագործների նկատմամբ և ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների շրջանակի սահմանափակումը նվազ վտանգավոր հանցագործությունների համար:

Քրեական պատիժների համակարգի տեսական և գործնական վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել նրա հետևյալ հիմնական հատկանիշները: Առաջին՝ պատժի համակարգը քրեական օրենքով նախատեսված պատիժների ամբողջությունն է: Երկրորդ՝ պատժի համակարգը վիճակագրական հասկացություն է, և ցանկացած պարագայում ու պահի նրա ցանկը սպառիչ է, ինչը իհարկե չի բացառում օրենսդրի իրավունքը (գիտագործնական հիմնավորվածության դեպքում)՝ փոփոխել այն: Երրորդ՝ պատիժների միայն այդ ցանկն է պարտադիր դատարանի համար (դատարանը չի կարող ընտրել այդ համակարգում տեղ չգտած որևէ այլ պատիժ): Չորրորդ՝ պատժի համակարգում ընդգրկված բոլոր պատիժները փոխադարձաբար կապված և համաստորադասված են, այսինքն՝ պատիժների մի մասը կարող է նշանակվել հիմնական, իսկ մյուս մասը՝ լրացուցիչ պատժի

ձևով, մի մասը՝ կիրառվել բոլոր դատապարտյալների, մյուսները՝ նրանց ավելի նեղ շրջանակի նկատմամբ¹⁰:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ ***պատժի համակարգը կարելի է սահմանել որպես քրեական օրենքով նախատեսված փոխկապակցված, համաստորադասված (փոխադարձորեն փոփոխվող), դատարանի համար պարտադիր պատժատեսակների սպառիչ ամբողջություն, որոնք նշանակվում են հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և ընդունակ են ապահովելու պատժի նպատակների իրագործումը:***

Քրեական օրենքը նախատեսում է խստությամբ, բնույթով և հանցագործի նկատմամբ ներգործության առանձնահատկություններով տարաբնույթ պատժատեսակներ: Պատժի տեսակների բազմազանությունը հնարավորություն է տալիս դատարանին հաշվի առնել հանցագործության և հանցագործի վտանգավորության աստիճանը, դրան համապատասխան նշանակել արդարացի պատիժ, որն առավելագույնս կնպաստի ինչպես դատապարտյալի վերասոցիալականացմանը, այնպես էլ սոցիալական արդարության վերականգնմանը և նոր հանցագործությունների կանխմանը:

ՀՀ քր. օր. 56-րդ հոդվածը նախատեսում է պատժի հետևյալ տեսակները՝

- 1) պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը,
- 2) տուգանքը,
- 3) հանրային աշխատանքները,
- 4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
- 5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետությո՝

¹⁰ Ст. 56 Уголовного право. Общая часть. Под ред. А.И. Ветрова, Ю. И. Ляпунова. М., 2014, էջ 399-401:

յան տարածքից վտարելը,

- 6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
- 7) ազատության սահմանափակումը,
- 8) կարճաժամկետ ազատազրկումը,
- 9) կարգապահական գումարտակումը պահելը,
- 10) ազատազրկումը,
- 11) ցմահ ազատազրկումը:

Օրենսդրությամբ նախատեսված քրեական պատիժների այս համակարգում պատժատեսակներն ունեն տրամաբանական դասավորվածություն: Պատժատեսակները համակարգված են նվազ խիստ պատժից դեպի առավել խիստը հաջորդականությամբ: Պատիժների նման աստիճանական դասավորվածությունը կարևոր նշանակություն ունի օրենսդրի և առավել ևս դատարանի համար: Այդ համակարգն ակնհայտ է դարձնում, թե օրենսդիրն ինչպես է գնահատում յուրաքանչյուր պատժատեսակի հարաբերական խստությունը և կոդմնորոշում դատարանին առավել արդյունավետ պատժատեսակի ընտրության հարցում, մասնավորապես օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս:

Հատուկ ուշադրության է արժանի անչափահասների համար նախատեսվող պատիժների համակարգը: Այն ընդգրկում է՝ տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ազատության սահմանափակումը, կարճաժամկետ ազատազրկումը և ազատազրկումը (ՀՀ քր. օր., հոդված 95):

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի համակարգում տեղ չեն գտել այնպիսի պատժատեսակներ, ինչպիսիք եղել են նախկինում՝ աքսորը, արտաքսումը, ուղղիչ աշխատանքները, պաշտոնանկությունը, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը, հասարակական պարսավանքը, դաստիա-

րակչական աշխատանքային պրոֆիլակտորիում ուղարկելը և ծնողական իրավունքներից զրկելը: Աքսորը և արտաքսումը տեղ չեն գտել քրեական օրենսգրքում, քանի որ այս պատժատեսակները մեր հանրապետության փոքր տարածքի պայմաններում անիրագործելի և անարդյունավետ կլինեն: Դաստիարակչական աշխատանքային պրոֆիլակտորիում ուղարկելու պատժատեսակի մերժումը պայմանավորված է մեր իրականությունում աշխատատեղերի անբավարարությամբ և մասնավորապես այս պատժատեսակի անարդյունավետությամբ: Հասարակական պարսավանքը դուրս է մնացել պատժի համակարգից, քանի որ այն, մեր կարծիքով, քրեաիրավական բնույթ չունի, համարժեք չէ հանցագործությանը: Բացի այդ, այս պատժատեսակը փաստորեն մերժված է դատավարագետների կողմից: Պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը և ծնողական իրավունքներից զրկելը քաղաքացիաիրավական հասկացություններ են, քաղաքացիաիրավական պատասխանատվության տարատեսակներ և քրեական պատիժների համակարգում անընդունելի են: Ինչ վերաբերում է պաշտոնանկությանը, ապա այն աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքներից է և կարգավորվում է աշխատանքային իրավունքի նորմերով: Պաշտոնանկության ընդգրկումը պատիժների համակարգում որոշակի իմաստով նույնացնում է քրեական և աշխատանքային իրավունքները, քրեական և կարգապահական պատասխանատվությունը:

Պատժի բոլոր տեսակներն օժտված են ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ գծերով, ինչը հնարավորություն է տալիս դրանք դասակարգել տարբեր հիմքերով: Պատիժների դասակարգումը քրեական իրավունքի կարևորագույն խնդիրներից է: Մեծ է դրա նշանակությունը պատիժներ կատարելիս քրեակատարողական իրավունքի խնդիրների մշակման, մանկավարժական և հոգեբանական դրույթների կիրառման գործընթացում:

Ըստ նշանակման կարգի և իրավաբանական նշանակության՝ պատժի համակարգը կազմող բոլոր պատժատեսակները, ՀՀ քր. օր. հոդված 57-ի համաձայն, բաժանվում են երեք խմբի՝ հիմնական և լրացուցիչ պատիժներ, ինչպես նաև պատիժներ, որոնք կարող են նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ:

Հիմնական պատիժները կարող են նշանակվել միայն առանձին և չեն միացվում որևէ այլ հիմնական պատժի: Այսինքն՝ որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել կիրառվող հոդվածի սանկցիայով նախատեսված հիմնական պատիժներից որևէ մեկը: Հոդվածի սանկցիայով չնախատեսված հիմնական պատժի նշանակումը հնարավոր է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (ՀՀ քր. օր., հոդված 72) կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս (ՀՀ քր. օր., հոդված 88): ՀՀ քր. օր. հոդված 57-ի 1-ին մասի համաձայն՝ հիմնական պատիժներն են՝ հանրային աշխատանքները, ազատության սահմանափակումը, կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը:

Լրացուցիչ պատիժները կարող են նշանակվել որպես լրացում հիմնական պատժին և չեն կարող նշանակվել ինքնուրույն: Օրենքը լրացուցիչ պատիժների շարքն է դասում պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը և օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը: Դատարանի նշանակած լրացուցիչ պատիժը չի կարող ավելի խիստ լինել, քան հիմնական պատիժը:

Պատիժները, որոնք կարող են նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ, իրավաբանական գրականության մեջ անվանվում են խառը տիպի: ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսում է հետևյալ խառը պատժատեսակները՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղ-

վելու իրավունքից զրկելը և զինվորական ծառայության մեջ սահմանափակումը (ՀՀ քր. օր., հոդված 57, 3-րդ մաս): Խառը տիպի պատիժները կարող են նշանակվել որպես հիմնական, եթե այդ մասին ուղղակիորեն նշված է կիրառվող հոդվածի սանկցիայում՝ բացառությամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում հիմնական պատիժները միմյանցից առանձնացվում են «կամ» շաղկապով:

Մեկ հանցագործության, ինչպես նաև հանցագործությունների համակցության դեպքում դատարանը դատապարտյալի նկատմամբ կարող է նշանակել միայն մեկ հիմնական պատիժ: Հիմնական պատիժն կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ՝ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով (ՀՀ քր. օր., հոդված 57, 4-րդ մաս):

Քրեական նոր օրենսգրքում կատարվել է մեկ սկզբունքային փոփոխություն. եթե քրեական նախկին օրենսգրքում նշված էր, որ լրացուցիչ պատժատեսակները կարող են կիրառվել միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում, ապա նոր օրենսգիրքը նման պահանջ չի սահմանում: Ընդ որում, այդ մոտեցումը վերաբերում է լրացուցիչ բոլոր պատժատեսակներին. քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում լրացուցիչ պատժատեսակները նախատեսված չեն, հետևաբար դատարանը յուրաքանչյուր դեպքում ինքն է նախատեսում և հիմնավորում այս կամ այն լրացուցիչ պատժատեսակը կիրառելու անհրաժեշտությունը:

Դատավճռում պետք է հիմնավորվեն դատապարտյալի նկատմամբ նշանակվող պատժատեսակների և դրանց ժամկետների հարցերը: Մասնավորապես դատավճռի նկարագրական մասում պետք է անպայմանորեն նշվեն այն շարժառիթները, որոնք պատժի այս կամ այն տեսակը նշանակելու հիմք են:

Քրեական իրավունքի տեսությանը հայտնի են պատիժների դասակարգման նաև այլ չափանիշներ, օրինակ՝ սուբյեկտի առանձնահատկությունների հիման վրա որոշվող ընդհանուր պատիժներ, որոնք կարող են նշանակվել բոլոր անձանց նկատմամբ, և հատուկ պատիժներ՝ որոշակի խումբ անձանց նկատմամբ նշանակվող¹¹:

Քրեակատարողական համակարգը, բացի քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի համակարգից, միաժամանակ ընդգրկում է նաև վարչական պատասխանատվության ձևերը: Այս համակարգին է վերաբերում նաև քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված և կրկնահանգագործության կանխման նպատակով իրականացվող պոստպենիտենցիար (հետպատժական) գործընթացը: Ահա այս համակարգը, որում միավորվում են վերոնշյալ, փոխհամաձայնեցված տարրերը, և որն ապահովում է հանցանք կատարած անձանց վերասոցիալականացումը, կարելի է անվանել հանցանք կատարած անձանց վերասոցիալականացման սոցիալ-իրավական (քրեակատարողական) համակարգ:

Քրեական օրենսգիրքը պատիժների այլ դասակարգում չի պարունակում, բայց ժամանակակից կրիմինալոգիայում քրեակատարողական ներգործության մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ վերաբերմունք դատապարտյալների նկատմամբ ***պենիտենցիար*** հիմնարկներից դուրս և վերաբերմունք ***պենիտենցիար*** հիմնարկներում, այսինքն՝ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ: Այս կապակցությամբ պատժի համակարգը կարելի է ներկայացնել մի կողմից որպես ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներ, մյուս կողմից՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ: Ազատությունից զրկելու հետ

¹¹ Այս մասին մանրամասն տե՛ս Уголовное право. Общая часть. Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамова. М., 1998, էջ 321-324:

չկապված պատիժներն են՝ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը, տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը, զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, ազատության սահմանափակումը: Ազատությունից զրկելու հետ կապված պատիժներն են՝ կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը:

Քրեակատարողական, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի միջոցների համակարգերը իրավունքի տարբեր ճյուղերի ներգործության օբյեկտ են, օրինակ՝ սահմանադրական, վարչական, քրեական, քրեակատարողական, քրեադատավարական և այլ իրավունքների համար: Այս համակարգերը նաև տեսական ուսումնասիրությունների և գիտական հետազոտությունների առարկա են փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի, կրիմինալոգիայի, քրեական, քրեադատավարական, քրեակատարողական իրավունքների համար:

4. Քրեակատարողական իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը

Քրեակատարողական իրավունքն իրավունքի ինքնուրույն ճյուղ է, որը բնութագրվում է իրավական կարգավորման ինքնուրույն առարկայով և մեթոդով, ինչպես նաև նորմերի ինքնուրույն համակարգով:

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ, այդ թվում և քրեակատարողականը, իր նորմերում և ինստիտուտներում ամրագրում է

սոցիալական այս կամ այն ոլորտում պետության քաղաքականության նպատակները, սկզբունքները, ռազմավարությունը և հիմնական ուղղությունները: Քրեակատարողական իրավունքը համապատասխանաբար ամրագրում է պատիժների կատարման բնագավառում պետության քաղաքականության հիմնական ուղղությունները:

Հայտնի է, որ իրավունքի՝ որպես ինքնուրույն ճյուղի առանձնացման առավել էական հիմքն իրավական կարգավորման առարկան է, այսինքն՝ փոխկապակցված և հայտնի իմաստով առանձնացված հասարակական հարաբերությունները:

Բացառություն չէ նաև քրեակատարողական իրավունքը, որի առարկան են որոշակի խումբ կազմող հասարակական հարաբերություններ: Առարկայի հասկացությունը տվյալ դեպքում սերտորեն կապված է այն հարցի հետ, թե ինչպիսի հասարակական հարաբերություններ են կարգավորվում քրեակատարողական իրավունքի նորմերով: Այս հարցի պատասխանն այնքան էլ պարզունակ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Բանն այն է, որ քրեակատարողական իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակը բավականին լայն է, քանի որ քրեական պատիժների կատարումը կարգավորող գործընթացն առնչվում է նաև իրավունքի այլ ճյուղերի հետ՝ քրեական, քրեադատավարական, սահմանադրական, աշխատանքային, վարչական, քաղաքացիական և այլն: Ինչո՞ւ է քրեական պատիժների կատարումը կարգավորվում իրավունքի նորմերով: Արդյոք բավարար չէ՞, որ քրեական օրենքը, բացահայտելով պատժի համակարգը և բովանդակությունը, սահմանում է դրա կատարման իրավական հիմքը: Հնարավո՞ր է արդյոք, որ քրեական պատիժների կատարման հետ կապված այլ հարցեր սահմանեն պատիժներ կատարող հիմնարկները և մարմինները:

Ո՛չ, հնարավոր չէ: Քրեական պատիժների կատարումը

կարգավորվում է իրավունքի նորմերով՝ հետևյալ պատճառաբանությամբ. նախ՝ պատիժների կատարման գործընթացը իշխանական-հարկադրական բնույթ ունի, ուստի պետական մարմինների գործունեությանը պետք է տալ իրավական կարգավորում, ապա՝ պատիժների կատարումը զուգորդվում է դատապարտյալների նկատմամբ իրավասահմանափակումների կիրառման հետ և ենթադրում օրենսդրական կարգավորում, այնուհետև՝ պատժի կատարումը քրեական և քրեադատավարական նորմերի կիրառման շարունակությունն է և պահանջում է իրավական զուգակցում, և վերջապես՝ անհրաժեշտ է ապահովել պատժի էության միասնությունը (քրեական օրենք) և դրա կատարման բովանդակությունը (քրեակատարողական օրենսդրություն)¹²:

Եթե փորձենք ներկայացնել ընդհանուր ձևով, ապա քրեակատարողական իրավունքի առարկան են այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են քրեական պատիժների կատարման ու կրման, ներգործության միջոցների կիրառման ընթացքում՝ այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են որևէ քրեական պատժի, ինչպես նաև՝ պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության ընթացքում ու պատժից ազատելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ծագող հասարակական հարաբերությունները:

Այսինքն՝ քրեակատարողական իրավունքի առարկա պետք է համարել հասարակական այն հատուկ հարաբերությունները, որոնք ծագում են քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատիժների կատարման ու կրման գործընթացում:

Քրեակատարողական իրավունքի առարկային են վերաբերում՝ քրեական պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմերի գործունեության կարգավորումը, որտեղ

¹² См. у Уголовно-исполнительное право. Учебник в двух томах. Том 1. Под общей ред. Ю.И.Калинина. М., 2006, էջ19:

աշխատում են դատապարտյալները, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները, դատական վարույթը դատական ակտերի կատարման փուլում, դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացին նպաստող հասարակայնության գործունեության կարգավորումը, ինչպես նաև պատժից ազատելը և հետպատժական գործընթացը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է ներկայացնել՝ *քրեակատարողական իրավունքի առարկան են այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատժատեսակների կատարման ու կրման ընթացքում դատապարտյալների և իրավաբանական անձանց նկատմամբ տվյալ պատժատեսակին բնորոշ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելիս, ինչպես նաև՝ հարաբերություններ, որոնք ծագում են տարբեր պատժատեսակներ կատարող մարմինների ու հիմնարկների և դատապարտյալների միջև, հարաբերություններ՝ կապված դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացում հասարակայնության մասնակցության հետ, հարաբերություններ, որոնք ծագում են տարբեր մարմինների և հիմնարկների վարչակազմերի և այդ վայրերում աշխատող՝ պատիժ կրող, դատապարտյալների միջև քրեական պատժից ազատելիս, պատիժը պայմանականորեն չկիրառելիս և հետպատժական գործընթացում ծագող հասարակական հարաբերությունները, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման ընթացքում ծագող, դատական ակտերի կատարման փուլում դատական վարույթը կարգավորող հասարակական հարաբերությունները, և վերջապես՝ հարաբերություններ, որոնք ծագում են պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների և առանձին քաղաքացիների միջև՝ որոշակի պատժատեսակներ կատարելու առիթով:* Բոլոր այս հարաբերությունները քրեակատարողական իրավուն-

քի առարկայի հիմքն են¹³:

Անցնելով քրեակատարողական իրավունքի այնպիսի հատկանիշի բնութագրմանը, ինչպիսին մեթոդն է, մենք պետք է հավաստենք, որ հասարակական հարաբերությունների կոնկրետ խմբի իրավական կարգավորման մեթոդը կամայականորեն չի որոշվում: Այն որոշվում է նախ և առաջ համապատասխան քաղաքականությամբ և օրենսդրության հիմքում ընկած աշխարհայացքով: Իրավունքի ցանկացած ինքնուրույն ճյուղ բնութագրվում է իր առարկայի մեջ մտնող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ինքնուրույն մեթոդով: Տվյալ դեպքում իրավական կարգավորման մեթոդ ասելով ընդունված է հասկանալ հասարակական հարաբերությունների նկատմամբ իրավունքի ներգործության հնարքների և միջոցների ամբողջությունը: Այն ազդում է սուբյեկտների միջև ծագող հասարակական հարաբերությունների բնույթի, ինչպես նաև նրանց իրավունքների և պարտականությունների հարաբերակցության վրա: Եթե քրեակատարողական իրավունքի առարկա հասկացությունը

¹³ Պատժի հիմնախնդիրների վերաբերյալ ձևավորվել են նաև հետևյալ երկու գիտությունները՝ «Պենոլոգիա» և «Պենիտենցիար իրավունք կամ գիտություն»: «Պենոլոգիան» առաջացել է լատիներեն *poena* (պատիժ) և հունարեն *logos* (գիտություն) բառերից: Հետևաբար այն գիտություն է քրեական պատիժների և քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման մասին: «Պենիտենցիար իրավունքի» անվանումն ունի որոշակի պատմական ծագումնաբանություն: 1786 թ. Փենսիլվանիա նահանգի Ֆիլադելֆիա քաղաքում ամերիկյան կվակերների կրոնական սեկտան (քրիստոնեա-բողոքական սեկտա, որ ծագել էր Անգլիայում 17-րդ դարում և լայնորեն տարածված էր Հյուսիսային Ամերիկայում) կառուցեց մի բանտ, որտեղ դատապարտյալները բաշխվում էին ըստ մենախցերի, և, այն կառուցողների կարծիքով, միայնակ մնալով իրենց խղճի ու կրոնի հետ՝ բացարձակ լռության պայմաններում, աշխարհից մեկուսացված դատապարտյալները պետք է գղջային և ուղղվեին: Այդ բանտը ստացավ լատիներեն **«penitenciarium»** անվանումը **գղջում, ուղղում**: Այդպես էլ մի շարք երկրներում բանտային գործի մասին գիտությունը ստացավ **պենիտենցիար** անվանումը:

վերաբերում է այն հարցին, թե ինչպիսի հասարակական հարաբերություններ է կարգավորում իրավունքի այս ճյուղը, ապա մեթոդը պայմանավորում է այն հարցը, թե ինչպես են այդ հարաբերությունները կարգավորվում քրեակատարողական իրավունքի նորմերով: Իրավական կարգավորման առարկան և մեթոդը սերտորեն փոխկապակցված են: Մեթոդը կանխորոշվում է իրավական կարգավորման առարկայի առանձնահատկություններով:

Քանի որ պատիժը պետական հարկադրանքի ձև է, ուստի դրա կատարումը ենթադրում է իրավական կարգավորման հիմնական՝ իմպերատիվ (հրամայական) մեթոդի առկայությունը, որի առանձնահատկությունն են իրավահարաբերության սուբյեկտների անհավասարությունն ու ենթակայությունը: Այն պատժի կատարման և քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման իրավական կարգավորման հատուկ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս և չի բացառում առանձին պահերի օգտագործել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ խրախուսման, դիսպոզիտիվ կամ համակարգման (օրինակ՝ դատապարտյալների կողմից իրենց իրավունքների իրականացումը) և այլն:

Իմպերատիվ մեթոդն իրավական կարգավորման հատուկ մեթոդ է ոչ միայն քրեակատարողական, այլ նաև քրեական և քրեադատավարական իրավունքների համար:

Իրավական կարգավորման առարկային և մեթոդին վերաբերող՝ վերը շարադրված դրույթները հնարավորություն են տալիս քրեակատարողական իրավունքը դիտել որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, որը կարգավորում է քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատիժների կատարման և կրման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները: Այս հարաբերություններում մասնակցում են հատուկ հիմնարկներ և մարմիններ, որոնք ապահովում են դատարանների դատավճիռների կատարումը:

Եզրափակելով հարցը՝ նշենք, որ ընդունելով քրեակատարողական իրավունքի ինքնուրույնությունն իրավունքի ամբողջ համակարգում, մենք այն չենք համարում բացարձակ: Քրեակատարողական իրավունքը, լինելով իրավունքի ինքնուրույն ճյուղ, ունի առանձնահատուկ կապեր իրավունքի այլ ճյուղերի հետ: Այն, մասնավորապես, չի կարելի տարանջատել քրեական իրավունքի մաս կազմող քրեական պատասխանատվության հիմնական դրույթներից և սկզբունքներից:

5. Քրեակատարողական իրավունքի հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ

Քրեակատարողական իրավունքը՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ, պարունակում է մի շարք նորմեր, որոնք փոխառնված են իրավունքի այլ ճյուղերից, և, բնականաբար, գտնվում է որոշակի հարաբերակցության մեջ իրավունքի այդ ճյուղերի հետ: Այս հարցը հնարավոր է դիտարկել մի քանի տեսանկյունից:

Նախ՝ պետք է խոսել քրեակատարողական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի հարաբերակցության մասին քրեաիրավական (քրեական իրավունք, քրեադատավարական իրավունք, կրիմինալոգիա) համալիրի շրջանակներում: Ապա՝ իրավական կարգավորման առարկայի պարզաբանման նպատակով անհրաժեշտություն է առաջանում սահմանազատել քրեակատարողական իրավունքը վարչական իրավունքից, որը պարունակում է նորմեր հանցագործություններ չհամարվող իրավախախտումների համար կիրառվող սանկցիաների կատարման կարգի և պայմանների վերաբերյալ: Վերջինս արդյունք է իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն տեսակետի, համաձայն որի՝ քրեակատարողական իրավունքի առարկայի մեջ պետք է ընդ-

գրկել նաև այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են մասնավորապես որոշ վարչական պատասխանատվության միջոցների կիրառման ընթացքում: Պատիժը պետք է տարբերել պետական հարկադրանքի այնպիսի միջոցներից, ինչպիսիք վարչական տույժերն են: Վերջիններս նախատեսված են վարչական օրենսդրությամբ և երբեմն համանուն են քրեական պատիժներին (օրինակ՝ տուգանք), բայց ինչպես պատժիչ բովանդակությամբ, այնպես էլ կիրառման ընթացակարգով դրանք էականորեն տարբերվում են քրեական պատիժներից: Վարչական ներգործության միջոցները (տույժերը) կիրառվում են վարչական իրավախախտումների դեպքում և կայացվում են ոչ թե պետության, այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի անունից:

Եվ վերջապես, քրեակատարողական իրավունքը փոխադարձ կապի մեջ է իրավունքի այնպիսի ճյուղերի հետ, ինչպիսիք են՝ սահմանադրական, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, ֆինանսական իրավունքները, քանի որ քրեակատարողական իրավունքի մի շարք նորմեր վերոհիշյալ իրավունքների նորմերի փոխակերպման արդյունք են: Նորմերի նման ձևափոխում քաղաքացու համար առաջանում է դատապարտյալի կարգավիճակ ձեռք բերելով:

Այժմ փորձենք ներկայացնել քրեակատարողական իրավունքի հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ առանձին-առանձին:

Քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրությունները կազմում են իրավունքի ճյուղի ընդհանուր համալիր, որոնց միավորում է մեկ ընդհանուր խնդիր՝ պայքարը հանցավորության դեմ քրեական պատասխանատվության շրջանակներում: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն են ձեռք բերում քրեակատարողական իրավունքի դերը նշված իրավական համալիրում, կապը և սահմանազատումը քրեական ու

քրեադատավարական իրավունքներից: Իրավական կարգավորման առարկաների նմանությունը պայմանավորված է նաև նրանով, որ իրավունքի այս ճյուղերի նորմերը կարգավորում են քրեական պատիժների հետ կապված հասարակական հարաբերություններ: Այսպես՝ պատիժների նշանակումը կարգավորվում է քրեական և քրեադատավարական, պատժի կատարումն ու կրումը՝ քրեակատարողական, պատժից ազատելը՝ քրեական և քրեակատարողական օրենսդրություններով: Նմանություններով հանդերձ՝ նշված իրավունքի ճյուղերից յուրաքանչյուրն ունի միայն իրեն հատուկ գծեր:

Քրեական և քրեակատարողական իրավունքների միջև տարբերությունը այն է, որ իրավունքի այս ճյուղերի նորմերը կարգավորում են միմյանց մերձ, բայց միմյանցից տարբեր հասարակական հարաբերություններ: Քրեական իրավունքը հանցավորության դեմ պայքարը կարգավորող իրավունքի ճյուղերի համակարգում զբաղեցնում է հիմնարար տեղ, որն էլ կանխորոշում է նրա առաջնայնությունը և միաժամանակ նպատակների ու իրավական կարգավորման մեթոդների ու սկզբունքների միասնությունը:

Քրեական օրենսդրությունը որոշում է «պատիժ» հասկացությունը, բովանդակությունը որպես երևույթ և պատիժների հիմնական գծերը այն սահմաններում, որ անհրաժեշտ է դատարանի կողմից պատժի նշանակման կամ պատժից ազատելու հարցի լուծման համար: Կարգավորում է նաև դատական կարգով պատիժ նշանակելու կամ պատժից ազատելու ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները: Քրեակատարողական օրենսդրությունը, զարգացնելով պատիժների բովանդակությունը, կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են պատիժների կատարման ու կրման, դատապարտյալին պատժից ազատելու գործընթացում, ինչպես նաև

դատապարտյալների նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներն օգտագործելիս:

Քրեական իրավունքի հիմնարար դերը քրեակատարողական իրավունքի նկատմամբ դրսևորվում է հետևյալ սկզբունքային դրույթով: Ինչպես հայտնի է, նյութական իրավունքի իրագործման եղանակը (ձև) դատավարական օրենքն է: Քրեական իրավունքի իրականացման նման ձև է ոչ միայն քրեադատավարական, այլ նաև քրեակատարողական իրավունքը: Քրեական իրավունքը, ունենալով ընդհանուր ինստիտուտներ, սահմանում է վերջիններիս նյութական բովանդակությունը, իսկ քրեակատարողականը՝ ընթացակարգայինը: Այլ խոսքով՝ քրեակատարողական իրավունքը՝ որպես ընթացակարգային իրավունք, նյութական (քրեական) իրավունքի իրականացման ձև է մասնավորապես քրեական պատիժների կատարման մասով: Այդ պատճառով իրավունքի տվյալ ճյուղերի սահմանազատման շեմ պետք է համարել քրեական պատժի նյութական և կատարողական (ընթացակարգային) բովանդակությունը:

Քրեակատարողական իրավունքը փոխադարձ կապի մեջ է քրեադատավարական իրավունքի և մասնավորապես դատական ակտերի կատարման հետ: Քրեադատավարական օրենսդրությունը որոշում է պատժի նշանակման դատական քննության կարգը, իսկ քրեակատարողականը՝ պատժի կատարման կարգի բովանդակությունը: Քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով դատական ակտը հանձնվում է կատարման, այդ պահից էլ գործում են քրեակատարողական իրավունքի նորմերը:

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը¹⁴ չի նախատեսում դատական վարույթը դատական ակտերի կատարման

¹⁴ ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը ընդունվել է 30.06.2021, ուժի մեջ է մտել 01.07.2022:

փուլում, այն սահմանված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքով: Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է իրավունքի այս երկու ճյուղերի ընդհանրության մասին:

Առավել սերտ է կապը քրեակատարողական իրավունքի և կրիմինալոգիայի միջև: Այն դրսևորվում է բազմաթիվ ոլորտներում: Իրավունքի այս ճյուղի մի շարք նորմեր պահանջում են կրիմինալոգիական հիմնավորվածություն, մասնավորապես՝ դատապարտյալների դասակարգումը, դատապարտյալներին միայնցից անջատ պահելը և այլն: Դատապարտյալների անձի պարտադիր ուսումնասիրումը կրիմինալոգիայի կարևոր ուղղություններից է. այն ամրագրված է քրեակատարողական իրավունքում: Դատապարտյալների և պատիժ կրածների ուսումնասիրման նպատակով օգտագործվում են կրիմինալոգիական վերլուծության մեթոդները: Իր հերթին էլ՝ հանցավորության, հատկապես կրկնահանցագործության կանխման համալիր խնդիրների լուծումը պայմանավորված է քրեական պատիժների կատարման արդյունավետությունից:

Այժմ համեմատենք ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարումը կարգավորող քրեակատարողական իրավունքի նորմերը սահմանադրական և վարչական իրավունքների նորմերի հետ: Սահմանադրական իրավունքի նորմը (երբ դրա սուբյեկտներից մեկը քաղաքացին է) կարգավորում է պետական մարմնի հետ ոչ բոլոր հարաբերությունները, այլ միայն նրանք, որոնք վերաբերում են քաղաքացիների մասնակցությամբ պետական իշխանության առանձին գործառնությունների իրականացմանը (ընտրությունների մասնակցություն և այլն): Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտվածները նման հարաբերությունների մեջ որպես կանոն չեն մտնում: Նրանք անմիջականորեն հասարակական հարաբերությունների մեջ են մտնում ոչ թե պետական իշխանության և կառավարման

մարմինների, այլ պետությունը ներկայացնող քրեակատարողական հիմնարկների կամ պատիժներ կատարող այլ մարմինների հետ: Այս դեպքում քաղաքացիների իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են սահմանադրական և վարչական իրավունքների նորմերով, դատապարտյալների համար ձևափոխվում են և կարգավորվում են քրեակատարողական իրավունքի նորմերով: Դատապարտյալների իրավական վիճակի կարգավորման հարցերում առավել սերտ է կապը սահմանադրական և քրեակատարողական իրավունքների միջև:

Քրեակատարողական իրավունքի այն նորմերը, որոնք կարգավորում են քրեակատարողական հիմնարկների, պատիժներ կատարող այլ մարմինների աշխատակիցների, դրանց ղեկավար մարմինների աշխատանքի իրականացման կարգը, նրանց կառուցվածքը, պատիժների կատարման ու կրման վերաբերյալ նորմատիվ ակտերի հրատարակումը, այդ ակտերի կատարման նկատմամբ վերահսկողությունը, վերաբերում են վարչական իրավունքին:

Քրեակատարողական իրավունքի նորմերով կարգավորվում են նաև դատապարտյալների աշխատանքը և ուսումը: Այդ նորմերը թեև ունեն նմանություններ աշխատանքային և սահմանադրական իրավունքների նորմերի հետ, սակայն տարբերվում են առանձնահատուկ բովանդակությամբ և նպատակով:

Քրեակատարողական իրավունքը կապված է նաև քաղաքացիական և ընտանեկան իրավունքների հետ: Քրեակատարողական իրավունքի նորմերը կարող են դատապարտյալին զրկել բնակության վայրը ազատ ընտրելու իրավունքից, որի հետևանքով նրա քաղաքացիական և ընտանեկան մի շարք իրավունքներ սահմանափակվում են:

6. Քրեակատարողական իրավունքի սկզբունքները

Իրավունքի և նրա առանձին ճյուղերի էության ու սոցիալական դերի առավել խորը ըմբռնման համար կարևոր նշանակություն ունի դրանց սկզբունքների պարզաբանումը: Իրավունքի ընդհանուր տեսության մեջ սկզբունքը դիտվում է որպես իրավունքի հիմնարար գաղափար, իրավական համակարգի ղեկավար դրույթ: Սկզբունքը հիմք է, հասարակական երևույթի, մասնավորապես իրավական ինստիտուտի, իրավունքի ճյուղի, իրավունքի ճյուղի խմբի և ընդհանրապես իրավունքի սկզբնաղբյուր: Հայտնի է, որ այն առաջացել է լատիներեն *«principum»*՝ հիմք, նախասկիզբ բառից:

Քրեակատարողական իրավունքի սկզբունքները հիմնվում են իրավունքի ընդհանուր և իրավունքի ճյուղային այն սկզբունքների վրա, որոնք կարգավորում են պայքարը հանցավորության դեմ: Իրավունքի այս ճյուղի սկզբունք ասելով պետք է հասկանալ հասարակական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններով պայմանավորված այն դրույթները, որոնք, ամրապնդված լինելով քրեակատարողական իրավունքի նորմերով, որոշում են նրա ամբողջ բովանդակությունը: ***Քրեակատարողական իրավունքի սկզբունքները ղեկավար դրույթներ են, գաղափարներ, որոնք արտացոլում են պատիժներ կատարելիս պետության քաղաքականության ընդհանուր ուղղվածությունը և առավել էական գծերը:***

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը¹⁵ նախատեսում է քրեակատարողական օրենսդրության սկզբունքները: Սկզբունքների ամրագրումն օրենսդրության մեջ պետության պենիտենցիար քաղաքականության զարգացման արդյունքն է, որն արտացոլում է քրեակատարողական իրա-

¹⁵ Այսուհետ՝ ՀՀ ՔԿՕ:

վունքի գիտության նվաճումները, ինչպես նաև պատիժների կատարման իրավական կարգավորման ոլորտում արտասահմանյան երկրների փորձը: Քանի որ իրավունքը քաղաքականության դրսևորման ձևերից է, ուստի քրեակատարողական իրավունքի նորմերում զետեղված քրեակատարողական քաղաքականության սկզբունքները նաև քրեակատարողական իրավունքի և օրենսդրության սկզբունքներ են:

ՀՀ ՔԿՕ-ի երկրորդ գլուխը նախատեսում է՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրության սկզբունքները: Դրանք են՝ *մարդասիրության, օրենքի առջև դատապարտյալների հավասարության և խտրականության արգելքի, պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման, դատապարտյալի վերաառցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցների կիրառման համարժեքության և պիտանիության սկզբունքները:*

Մարդասիրության սկզբունքն ամրագրված է ոչ միայն ՀՀ ՔԿՕ-ի 5-րդ հոդվածում, որտեղ բացահայտվում են սկզբունքի բնույթն ու էությունը, այլև օրենսգրքի շատ նորմերում և ինստիտուտներում, ինչպես նաև մարդու իրավունքների և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային բազմաթիվ իրավական փաստաթղթերում: Պատիժների կատարումը և քրեաիրավական այլ միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնությամբ կամ այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի զարգացման հետընթաց առաջացնող սոցիալ-հոգեբանական փոփոխությունների: Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող այլ վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգա-

մանք չի կարող արդարացնել նման վերաբերմունքը:

Պատիժների կատարման ընթացքում դատապարտյալների նկատմամբ կիրառվում են այնքան իրավասահմանափակումներ, որքան անհրաժեշտ է և բավարար պատժի նպատակների իրականացման համար:

Դրանք համապատասխանեցված են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափանիշներին:

Մարդասիրության սկզբունքը ՀՀ ՔԿՕ-ում արտահայտվում է տարբեր ուղղություններով և ձևերով: Այստեղ տեղ չեն գտել դատապարտյալների նկատմամբ նախկին օրենսդրությամբ նախատեսված բազմաթիվ իրավասահմանափակումներ: Էականորեն ընդարձակվել է դատապարտյալների՝ իրենց ազգականների, բարեկամների և այլ անձանց հետ կապեր պահպանելու ցանկը: Դատապարտյալների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքն արտահայտված է ՀՀ ՔԿՕ-ի այնպիսի նորմերում, որոնք վերաբերում են, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս գալուն (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված), տեսակցություններին (ՀՀ ՔԿՕ, 80-րդ հոդված), հղի, կերակրող մայր և երեխա ունեցող դատապարտյալներին (ՀՀ ՔԿՕ, 90-րդ հոդված), հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու իրավունքին (ՀՀ ՔԿՕ, 83-րդ հոդված) և այլն:

Օրենքի առաջն դատապարտյալների հավասարության և խտրականության արգելքի հիմքում դրված է օրենքի առաջ ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը (ՀՀ Սահմանադրություն, 28-րդ հոդված): Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ

սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է (ՀՀ Սահմանադրություն, 29-րդ հոդված):

Բոլոր դատապարտյալները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով: Պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա (ՀՀ ՔԿՕ, 6-րդ հոդված): ՀՀ ՔԿՕ-ի նորմերը չեն նախատեսում դատապարտյալների համար որևէ արտոնություն ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված հատկանիշներով: Միաժամանակ օրենքի առջև դատապարտյալների հավասարության սկզբունքը չի նշանակում, որ քրեակատարողական հարկադրանքի միջոցները բոլոր դատապարտյալների նկատմամբ կիրառվում են միատեսակ կամ պատժի կրման պայմանների հավասարություն: ՀՀ ՔԿՕ-ի 19-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարած հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, դատապարտյալի անձը, պատժի կատարման ընթացքում դատապարտյալի դրսևորած վարքագծի առանձնահատկությունները, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցանքին, պատժի ժամկետը, ինչպես նաև պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ:

Պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման սկզբունքը ապահովում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրականացումը, որը նախատեսված է ՀՀ քր. օր. 7-րդ հոդվածում: Այս սկզբունքը ենթադրում է պատժի կրման տարբեր պայմանների ստեղծում ինչ-

պես մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում, այնպես էլ դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով՝ կախված դատապարտյալի անձի բնութագրից, հանցագործության բնույթից, մեղքի ձևից, պատժի կրման ընթացքում նրա վարքագծից և պատժի կրման ժամկետից:

Այս սկզբունքն իր արտահայտությունն է գտել, մասնավորապես, ՀՀ ՔԿՕ-ի 57-րդ հոդվածում, որը նախատեսում է քրեակատարողական հիմնարկների տեսակները, ՀՀ ՔԿՕ-ի 58-րդ և 59-րդ հոդվածներում, որոնք սահմանում են պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկի տեսակը որոշելը դասակարգման տարբեր խմբերի պատկանող դատապարտյալների համար: Տվյալ պարագայում մենք գործ ունենք դատապարտյալների դասակարգման հետ, որն ապահովում է պատժի կատարման փուլում դրա տարբերակումը: Եթե դատապարտյալների դասակարգումը կատարվում է քրեական իրավունքի նորմերի հիման վրա, ապա պատժի կատարման տարբերակումը և անհատականացումն իրականացվում են քրեակատարողական իրավունքի նորմերով: Պատժի կատարման տարբերակումն ապահովվում է քրեակատարողական հիմնարկների համակարգով, իսկ անհատականացումն իրականացվում է ինչպես կոնկրետ տեսակի քրեակատարողական հիմնարկի սահմաններում՝ պատժի կրման պայմանների փոփոխմամբ, այնպես էլ դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով: Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ տվյալ սկզբունքը բնութագրական է ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների կատարմանը¹⁶:

¹⁶ Պատիժների կատարման անհատականացման և տարբերակման ինստիտուտները մարդկության պատմության նորագույն շրջանի իրավական

Ղատապարտյալի վերասոցիալականացման և իրավահաշտակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցների կիրառման համարժեքության և պիտանիության սկզբունքը նախատեսված է ՀՀ ՔԿՕ 8-րդ հոդվածով: Համաձայն այս հոդվածի՝ դատապարտ-

երություններից են, որովհետև ողջ միջնադարյան շրջանում «պենիտենցիար հիմնարկները կատարում էին միայն սարսափեցնող գործառնություն և հանցանք կատարած անձի վարքագծի փոփոխման մասին խոսք չէր կարող լինել» (Տե՛ս **Березиков С.В.**, Правовые и организационные аспекты обеспечения эффективности дифференциации условий отбывания наказания в виде лишения свободы в исправительных колониях. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. - М.: 2012. էջ 28): Այս եզրակացությանը համաձայնվելով, անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ, այդուհանդերձ, ազատագրվում պատժատեսակի նախատեսման և կատարման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում նկատվում են տարբերակման և անհատականացման որոշակի դրվագային դրսևորումներ ու կիրառումներ, որոնք, լինելով պատմական եզակի փաստեր, այդուհանդերձ հիմք չեն տալիս եզրակացնելու, որ պենիտենցիար քաղաքականությանը, մասնավորապես Հին և Միջնադարյան Հայաստանում բնութագրական էին տարբերակման և անհատականացման իրավական ինստիտուտները:

Այս հետևությունը հաստատվում է նաև հեղինակի ազատագրվում պատժատեսակի կատարման պատմաիրավաբանական հետազոտություններով: Համաձայն դրանց արդյունքների՝ դեռևս մ.թ.ա. I հազարամյակի վերջերին և մ.թ. սկզբին ազատագրվման պատժատեսակի կատարման գործընթացում երևում են պատժի կրման պայմանների տարբերակման ու անհատականացման տարրեր, մասնավորապես՝ ազատագրկվածները կարող էին պահվել շղթաներով և առանց դրա, հնարավոր էին պատժի կրման պայմանների փոփոխություններ, գոյություն ուներ ազատագրկվածների վաղաժամկետ ազատման հնարավորություն՝ տարբեր ձևերով՝ համաներում, ներում, փրկագնի վճարում, ամրոցներում, որտեղ պահվում էին դատապարտյալները, առկա էին տարբեր պայմաններով խցեր, վանդակներ, ազատագրվման կատարման առաջադիմական համակարգի որոշակի տարրեր՝ ընդուպ միջև պատժի հետագա կրումից ազատումը: Ընդ որում առաջադիմական համակարգի որոշ տարրեր հետագայում ամրագրում ստացան հայկական միջնադարյան դատաստանագրքերում (Տե՛ս **Хачикян А.М.**, Лишения свободы и актуальные проблемы его исполнения в Республике Армения, Автреф. дисс. док. юрид. наук. 12.00.05. Ереван, 2005. – էջ 13, 42, ինչպես նաև История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении.- Монография, Изд. ЕГУ, Ереван, 2005. – 168 էջ):

յալի նկատմամբ կիրառվող վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցները՝ պատիժների կատարման սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը պետք է պիտանի և համարժեք լինեն դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելու համար:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքն իրավացիորեն պատժի նպատակները շարադրում է նորովի և հոդված 55-ի երկրորդ մասում սահմանում պատժի նոր նպատակ՝ վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին:

Պատժի ենթարկված անձի *վերասոցիալականացման* նպատակի բացահայտումն ուղղակիորեն կապված է քրեակատարողական նոր օրենսդրությամբ նախատեսված խնդրո առարկա նոր սկզբունքի հետ¹⁷:

Վերասոցիալականացումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալների հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև իրավահպատակ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով:

Այս սկզբունքը վերաբերում է ոչ միայն ազատազրկմանը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժներին, որոնց կատարման ընթացքում կիրառվում է օրենսդրությամբ նախատեսված քրեակատարողական ներգործության միջոցների ողջ համակարգը, այլև այն պատժատեսակներին, որոնց կատարման

¹⁷ *Վերասոցիալականացման*՝ որպես պատժի նպատակի մասին մանրամասն տես՝ սույն դասագրքի 4-րդ գլխում:

ընթացքում վերը նշված միջոցները չեն կիրառվում կամ կիրառվում են մասամբ:

7. Քրեակատարողական իրավունքի գիտությունը

Քրեակատարողական իրավունքի գիտությունն ուսումնասիրում է այն սոցիալ-քաղաքական, տնտեսական, բարոյական և հոգեբանական օրինաչափությունների ամբողջ համակարգը, որոնք ծագում են քրեական պատիժների կատարման ու կրման, դատապարտյալների նկատմամբ վերասոցիալականացման միջոցների կիրառման բնագավառում, ինչպես նաև՝ քրեակատարողական հիմնարկների և պատիժներ կատարող այլ մարմինների տեղը և դերը, գործունեության սկզբունքները: Քրեակատարողական իրավունքի գիտությունը պարզաբանում է այն հասարակական հարաբերությունների բովանդակությունը, որոնք ծագում են պատիժների կատարման ու կրման ընթացքում, և ուսումնասիրում է այդ հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերը:

Գիտության այս ճյուղի դրույթների հիման վրա ընդհանրացվում և տեսականորեն հիմնավորվում է պատիժներ կատարող հիմնարկների և այլ մարմինների գործունեության պրակտիկան: Տեսության և պրակտիկայի գիտական ընդհանրացումները հիմք են տալիս մշակելու քրեակատարողական իրավունքի նոր նորմեր, իսկ գործող նորմերի վերաբերյալ արվում են գիտական մեկնաբանություններ ու եզրակացություններ:

Քրեակատարողական իրավունքի գիտության բովանդակությունը, ինչպես և ցանկացած ճյուղային գիտության, ավելի ընդարձակ հասկացություն է, քան իրավունքի նույնանուն ճյուղի բովանդակությունը: Այն ընդգրկում է պետության քաղաքականությունը պատիժների կատարման բնագավառում, ուսումնասիրում է օրենսդրությունը և պատիժներ կատարող հիմնարկների

գործունեությունը պատմության զարգացման ընթացքում, դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերը, արտասահմանյան երկրների իրավունքի համապատասխան ճյուղն ու փորձը, ինչպես նաև կազմակերպում է պետությունների փոխհամագործակցություն պենիտենցիար խնդիրների վերաբերյալ և այլն:

Վերոշարադրյալը կազմում է քրեակատարողական իրավունքի գիտության առարկան: Այսպիսով՝ *քրեակատարողական իրավունքի գիտության առարկան ընդգրկում է քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պատիժների կատարման և կրման իրավական կարգավորման հիմնախնդիրները, քրեակատարողական իրավունքի գործառնությունները, իրավունքի և օրենսդրության այս ճյուղի, քրեակատարողական հիմնարկների, պատիժներ կատարող այլ մարմինների զարգացման պատմությունը, պատիժների կատարմանը հասարակայնության մասնակցության, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման իրավական կարգավորման, պատիժների կատարման օրինականության ապահովման հիմնախնդիրները:*

Քրեակատարողական իրավունքի գիտությունը ճյուղային իրավաբանական գիտություն է, գիտելիքների ստեղծման մարդկային գործունեության հատուկ ձև և արտահայտում է քրեական բոլոր պատիժների կատարման հիմնական հատկանիշների ու օրինաչափությունների, դատապարտյալների նկատմամբ քրեակատարողական միջոցների կիրառման բովանդակությունը:

Քրեակատարողական իրավունքի գիտությունն արդի ժամանակաշրջանում կոչված է գիտականորեն ապահովելու քրեական պատիժների կատարման բնագավառում իրավական բարեփոխման կայացումը: Այս հիմնական խնդրից բխում են ավելի կոնկրետ խնդիրներ: Առաջին հերթին այն վերաբերում է քրեակատարողական օրենսդրության զարգացմանը:

Քրեակատարողական իրավունքի գիտության կարևորագույն խնդիրն է գիտության այս ճյուղի ընդհանուր տեսության կատարելագործումը: Տեսության հիմնախնդիրներից են՝ պատիժների կատարման իրավական կարգավորման առարկան, քրեակատարողական իրավահարաբերությունների ու դրանց սուբյեկտների տեսությունը, քրեական պատիժների դատապարտված անձանց իրավական վիճակը, քրեակատարողական հիմնարկների համակարգը, դատապարտյալների դասակարգումը, պատժի կանոնակարգի իրավական կարգավորումը, դատապարտյալների աշխատանքի իրավական կարգավորումը և այլն: Մասնավոր խնդիր կարելի է համարել պատիժների կատարման ժամանակակից հիմնախնդիրների լուծման վերաբերյալ գիտական աշխատանքների մշակումը, քրեակատարողական հիմնարկների և պատիժներ կատարող այլ մարմինների գործունեության մեջ պաշտոնապես հավանություն ստացած գիտական առաջարկությունների ներդրումը և այլն:

8. Քրեակատարողական իրավունքի դասընթացի առարկան և համակարգը

Քրեակատարողական իրավունքի դասընթացի առարկան է գիտության այն ճյուղը, որը լուսաբանում է քրեական պատիժների կատարման իրավական կարգավորումը: Դասընթացի առարկան ավելի լայն հասկացություն է, քան իրավունքի նույնանուն ճյուղի առարկան, քանի որ, բացի պատիժների կատարման իրավական կարգավորման հարցերից, այն ընդգրկում է նաև օրենսդրության և գիտության զարգացման պատմությունը, պատիժների կատարման ընդհանուր դրույթները, պատիժների կատարման արտասահմանյան երկրների առաջադեմ փորձը, միջազգային համագործակցությունը պենիտենցիար հիմնախնդիրների

շուրջ և այլն: Քրեակատարողական իրավունքի դասընթացն ավանդականորեն բաժանվում է ընդհանուր և հատուկ մասերի, որոնք համապատասխանում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի կառուցվածքին: Դասընթացի ընդհանուր մասում ուսումնասիրվում են քրեակատարողական իրավունքի տեսության ընդհանուր հարցեր՝ իրավունքի այս ճյուղի հասկացությունը, կարգավորման առարկան, սկզբունքները, ընդհանուր դրույթները, որոնց համապատասխան իրականացվում են պատիժների առանձին տեսակների կատարումը, քրեակատարողական օրենսդրությունը, դատապարտյալի իրավական վիճակը, դատապարտյալի վերասոցիալականացումը, Հայաստանի քրեակատարողական օրենսդրության և իրավունքի զարգացման պատմությունը¹⁸, պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների համակարգը և վերահսկողությունն ու հսկողությունը վերջիններիս գործունեության նկատմամբ:

Քրեակատարողական իրավունքի դասընթացի հատուկ մասը բաղկացած է մի քանի բաժնից:

Նախ լուսաբանվում են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման կարգն ու պայմանները, այն է՝ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը, տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը, զինվորական ծառայության մեջ սահմանափակումը և ազատության սահմանափակումը:

¹⁸ Պատիժների կատարման և զարգացման պատմության, մասնավորապես ազատազրկում պատժատեսակի մասին մանրամասն տե՛ս **Хачикян А.М.** История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении. Ереван, 2005.

Հատուկ մասի հաջորդ բաժինը նվիրված է ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման կարգին և պայմաններին: Սահմանվում են կարճաժամկետ ազատազրկման կատարման հիմնահարցերը, ապա կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակի կատարումը դատապարտյալ զինծառայողների նկատմամբ:

Քրեակատարողական իրավունքի դասընթացի հատուկ մասի այս բաժնի ամենաձավալուն հատվածը նվիրված է ազատազրկման և ցմահ ազատազրկման կատարման ու կրման կարգին և պայմաններին: Ներկայացվում են ազատազրկման կատարման ընդհանուր դրույթները, ազատազրկման դատապարտվածների դասակարգումը, վերասոցիալականացման հիմնական միջոցների իրավական կարգավորումը, կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում և այն ապահովելու միջոցները, դատապարտյալների աշխատանքը, կրթությունը, մասնագիտական կրթությունը, նյութակենցադային ապահովումը և բժշկական օգնությունը և սպասարկումը, ազատազրկման դատապարտվածների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները, քրեակատարողական հիմնարկների տեսակները, պատժի կատարման առանձնահատկությունները տարբեր տեսակի քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտվածների, անչափահասների և մինչև 21 տարեկան դատապարտյալների պատժի կրման առանձնահատկությունները:

Ապա սահմանվում են **պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների բողոքարկման կարգը, իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները:**

Հատուկ մասի հաջորդ բաժնում բացահայտվում են պատժից

ազատելու հիմնախնդիրները: Ներկայացվում են պատժից ազատելը և օգնության ցուցաբերումը պատժի կրումից ազատվածներին ու վերահսկողությունը նրանց նկատմամբ:

Առանձին բաժիններ են նվիրված քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգին և պայմաններին (անվտանգության միջոցներ), դատական ակտերի կատարման փուլում դատական վարույթին:

Քրեակատարողական իրավունքի դասընթացի համակարգին են վերաբերում նաև մեղադրյալներին և կասկածյալներին կալանավորումից հետո պահելու վայրերում կամ ձերբակալման վայրերում պահելու բովանդակությունը և պայմանները: Այն քրեակատարողական իրավունքի դասընթացում ներառելու հարցի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ չկա միատեսակ մոտեցում. որոշ հեղինակներ դա չեն ընդգրկում համակարգի մեջ: Տվյալ դասընթացի դասավանդման փորձն ապացուցում է կալանավորվածներին պահելու և ձերբակալման վայրերի գործունեության, ինչպես նաև մեղադրյալներին և կասկածյալներին այդ վայրերում պահելու պայմաններն ու բովանդակությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, պետք է նաև նկատի ունենալ, որ իրավունքի որևէ այլ ճյուղ այն չի ուսումնասիրվում: Իսկ նման գիտելիքների իմացությունն անհրաժեշտություն է:

Քրեակատարողական իրավունքի դասընթացի հատուկ մասի վերջին բաժնում բացահայտվում են արտասահմանյան երկրներում քրեական պատիժների կատարման իրավական կարգավորման փորձն ու առանձնահատկությունները, ինչպես նաև դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական ասպեկտները:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Քրեակատարողական օրենսդրության հասկացությունը, բովանդակությունը, նպատակները և խնդիրները

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ ընդունված է օրենսդրության այս կամ այն ճյուղը դիտարկել նեղ կամ լայն առումով: Նեղ առումով օրենսդրության ճյուղն իր առարկային վերաբերող հասարակական հարաբերություններ կարգավորող օրենքների ամբողջությունն է: Հետևաբար՝ քրեակատարողական օրենսդրություն ասելով պետք է հասկանալ համալիր հասարակական հարաբերություններ կարգավորող օրենքների համակարգ, որոնք կապված են դատարանի նշանակած պատժատեսակների կատարման և կրման, դատապարտյալների նկատմամբ քրեափրավական ներգործության միջոցների կիրառման հետ:

Քանի որ պատիժների կատարման ընթացքում ծագում են հասարակությունում անձի դրության սոցիալ-իրավական խնդիրներ, գործում են պետության կողմից անձի նկատմամբ կիրառվող ներգործության հատուկ ձևեր, ստեղծվում են հարկադրանք իրականացնող պետական հատուկ մարմիններ, հետևաբար քրեակատարողական իրավունքի նորմերը պետք է պարտադիր ամրագրված լինեն օրենքում: Այդ պատճառով քրեակատարողական օրենսդրությունն այդ հասկացության նեղ առումով կազմվում է համապատասխան օրենքներից:

Պատիժների կատարումը միաժամանակ ենթադրում է պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների, պետական այլ մարմինների, նրանց պաշտոնատար անձանց ամենօրյա կոնկրետ գործունեություն, և անընդհատ անհրաժեշտություն է առա-

ջանում մշակել, մեկնաբանել օրենքի դրույթները, որոնք վերաբերում են ինչպես համապատասխան պաշտոնատար անձանց, այնպես էլ՝ դատապարտյալներին: Այս գործընթացն իրականացվում է գործադիր իշխանության մարմինների, մասնավորապես ՀՀ արդարադատության և այլ նախարարությունների ու գերատեսչությունների կողմից ընդունվող իրավական ակտերի, հրամանների, որոշումների և այլնի միջոցով:

Ասվածից հետևում է, որ քրեակատարողական օրենսդրությունը լայն առումով *պատիժների կատարման ու կրման, դատապարտյալների նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման հետ կապված իրավական ակտերի (օրենքներ և ենթօրենսդրական ակտեր) համակարգ է, որոնք կարգավորում են քրեակատարողական իրավունքի առարկային վերաբերող հասարակական հարաբերություններ:*

Քրեակատարողական օրենսդրությունը մինչև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (24.12.2004թ.) ընդունումը կազմված էր ՀՀ ուղղիչ-աշխատանքային օրենսգրքից (ընդունվել է 07.07.1971, ուժի մեջ է մտել 01.01.1972), դատապարտյալների նկատմամբ ուղղիչ-աշխատանքային ներգործության միջոցների հետ չկապված քրեական պատիժները Հայաստանի Հանրապետությունում կատարելու կարգի և պայմանների մասին կանոնադրությունից (30.01.1985թ.), ՀՀ ՆԳ նախարարության քրեական պատիժների իրականացման վարչության կանոնադրությունից և պատիժների կատարման ու կրման վերաբերյալ գերատեսչական ու միջգերատեսչական այլ նորմատիվ իրավական ակտերից:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ընդունմամբ քրեակատարողական օրենսդրության համակարգը սկզբունքորեն փոփոխվեց: Նախ ուժը կորցրած ճանաչվեցին վերը թվարկված բոլոր իրավական ակտերը, իսկ քրեակատարողական օրենսգիրքը դարձավ քրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր պա-

տիժների կատարումը կարգավորող հիմնական օրենք:

2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունված և 2005թ. փետրվարի 10-ից կիրառության մեջ դրված ՀՀ ՔԿՕ-ն կարևոր իրավական ակտերից էր, որը միասնական, համակողմանի և համակարգված կարգավորում էր քրեակատարողական ոլորտի հասարակական հարաբերությունները: Բարձր գնահատելով ՀՀ ՔԿՕ-ի դերը մեր երկրի իրավական համակարգում՝ միաժամանակ պետք է նշել, որ ժամանակակից պայմաններում այն օբյեկտիվորեն այլևս չէր համապատասխանում մեր երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններին:

ՀՀ նոր ՔԿՕ-ի (28.06.2022) ընդունմամբ հնարավորություն ստեղծվեց ընդարձակելու ոչ միայն իրավական կարգավորման առարկան, այլև համակարգելու տարբեր պատժատեսակների կատարումը կարգավորող տարաբնույթ իրավական ակտերը: ՀՀ նոր ՔԿՕ-ն ամրապնդում է մեր պետության քրեակատարողական քաղաքականության կարևորագույն դրույթներն օրենսդրության ուղղվածության և դրանց կիրառման ընթացքում առաջնահերթ կարևորության խնդիրների լուծման բնագավառներում, որոնցից կարևորագույնը դատապարտյալի վերասոցիալականացումն է:

Այն իր տրամաբանական ավարտին հասցրեց քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումները: ՀՀ ՔԿՕ-ն քրեական արդարադատության ոլորտում կիրառվող հարկադրանքի միջոցների պատշաճ կիրառությունն ապահովող, միջազգային ժամանակակից իրավաբանության ու փորձի վրա հիմնված, արդի իրավամտաճողությունն արտահայտող իրավական նոր սերնդի միասնական փաստաթուղթ է:

ՀՀ ՔԿՕ-ի 1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է քրեակատարողական օրենսդրության բովանդակությունը և կարգավորում այն բավական մանրամասն. Հայաստանի Հանրապետությո-

յան քրեակատարողական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերից, պատիժների կատարման ու պատժից ազատելու կարգն ու պայմանները կարգավորող օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Այստեղից հետևում է, որ քրեակատարողական օրենսդրությունը ներառում է նաև քրեական պատիժների կատարումը կարգավորող այլ օրենսդրական ակտեր:

ՀՀ քրեակատարողական օրենսդրության հիմքը կազմող օրենքների շարքն են դասվում՝ ՀՀ օրենքը «Ձերբակալած և կալանավորված անձանց պահելու մասին» (06.02.2002թ.), ՀՀ օրենքը «Քրեակատարողական ծառայության մասին» (08.07.2005թ.), ՀՀ օրենքը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (24.03.2011թ.), ՀՀ օրենքը «Պրոբացիայի մասին» (17.05.2016թ.), ՀՀ օրենքը «Ներման մասին» (07.03.2018թ.), ՀՀ քրեական օրենսգիրքը (05.05.2021թ.) և այլն:

Այլ օրենսդրական ակտերի շարքում անհրաժեշտ է նշել ՀՀ կառավարության որոշումները՝ ՀՀ արդարադատության նախարարության համակարգում քրեակատարողական ծառայություն ստեղծելու մասին (19.10.2001թ.), Կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը հաստատելու մասին (15.02.2018թ.), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին (13.04.2023թ.) և այլն: Այս շարքին են դասվում նաև ՀՀ արդարադատության նախարարի հրամանները՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնելու կարգի վերաբերյալ (24.11.03.2010թ.), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում

տեղաբաշխման հանձնաժողով ստեղծելու և դրա գործունեության կարգ հաստատելու վերաբերյալ (14.03.2012թ.), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգի վերաբերյալ (20.03.2020թ.), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում անվտանգային գոտիների տեսակները և քրեակատարողական հիմնարկների լրակազմերը սահմանելու վերաբերյալ (21.07.2022թ.) և այլն:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ *Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քրեակատարողական օրենսգրքից, պատիժների կատարման ու կրման, դատապարտյալների նկատմամբ քրեաիրավական բնույթի ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները կարգավորող օրենքներից, ինչպես նաև գործադիր իշխանության մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերից:*

ՀՀ ՔԿՕ-ն քրեական բոլոր պատժատեսակների կատարումը և կրումը կարգավորող հիմնական իրավական ակտ է: Այլ նորմատիվ իրավական ակտերը միայն լրացնում և զարգացնում են նրա առանձին դրույթները: ՀՀ ՔԿՕ-ի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա, որոնք սահմանում են պատիժների կատարման կարգն ու պայմանները, դատապարտյալների հետ վարվեցողության կանոնները, դատապարտյալների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեաիրավական

ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները:

Քրեակատարողական իրավունքի աղբյուրների տեսակետից կարևոր են ՀՀ քրեակատարողական օրենսդրության կապը և հարաբերակցությունը միջազգային իրավական փաստաթղթերի հետ:

Գոյություն ունեն միջազգային իրավական մեծ քանակությամբ փաստաթղթեր, որոնք սահմանում են դատապարտյալների հետ վարվեցողության իրավական չափանիշներ և ուղղված են պատիժների կատարման բնագավառում ազգային օրենսդրության կատարելագործմանը: Այդ փաստաթղթերը մշակվել են Միացյալ ազգերի կազմակերպության և միջազգային մի շարք այլ կազմակերպությունների նախաձեռնությամբ: ՀՀ ՔԿՕ-ն մշակելիս հաշվի են առնվել դատապարտյալների հետ վարվեցողության կարևոր միջազգային փաստաթղթերը, որոնցից հիշատակելի են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948), Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշները (1955), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966), Խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և պատժից բոլոր անձանց պաշտպանության հռչակագիրը (1975), Եվրոպական բանտային (պենիտենցիար) կանոնները (1987), Դատապարտյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները (1990), Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006) 2 հանձնարարականով ընդունված «Եվրոպական բանտային կանոնները», Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) 2015 թ. գործունեության վերաբերյալ 25-րդ ընդհանուր զեկույցը (ցմահ ազատազրկման դատապարտվածների վե-

րաբերյալ), 2017 թվականի գործունեության վերաբերյալ 27-րդ ընդհանուր զեկույցը (բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ), ՄԱԿ-ի 2015 թ. դեկտեմբերի 17-ի «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» (Նելսոն Մանդելայի կանոններ), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2010 թ. դեկտեմբերի 21-ի «Ազատությունից զրկված կանանց վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկյան կանոններ) և այլ փաստաթղթեր:

Պետք է նշել, որ ՀՀ ՔԿՕ-ի 1-ին հոդվածի 2-րդ մասի միջազգային իրավունքի սկզբունքներին վերաբերող նորմը դեկլարատիվ բնույթ չի կրում, քանի որ այդ դրույթները կոնկրետացվում են օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում և ապահովված են դատավարական երաշխիքներով: Այդ դրույթները տեղ են գտել նախ և առաջ դատապարտյալների իրավական վիճակը կարգավորող բազմաթիվ նորմերում:

Քրեակատարողական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս իրավական նորմի ունեցած ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա: Այսպես՝ ՀՀ ՔԿՕ-ում պատիժների կատարման ընդհանուր դրույթների և սկզբունքների ձևով սահմանվում են օրենսդրության տվյալ ճյուղի նպատակները և խնդիրները, բովանդակությունը, պատիժները կատարելու հիմքը և այլն: Պատիժների կատարման ընդհանուր դրույթները և սկզբունքները որոշակիացվում են ՀՀ ՔԿՕ-ի այն հոդվածներում, որոնք վերաբերում են յուրաքանչյուր պատժատեսակի կատարման ու կրման կարգին և պայմաններին: Քրեական պատիժների կատարումը կարգավորող օրենսդրության մեջ որպես ինքնուրույն կատեգորիաներ առանձնացվում են իրավունքի տվյալ ճյուղի նպատակները և խնդիրները:

ՀՀ ՔԿՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեակատարողական օրենսդրության նպատակներն են՝ դատապարտյալի վերասոցիալականացումը, նրա իրավահպատակ վարքագծի ձևավորումը և նոր հանցագործությունների կանխումը:

Դատապարտյալի վերասոցիալականացումը հոգեբանամանկավարժական, տնտեսական, հոգեթերապևտիկ, իրավաբանական, սոցիալական և կազմակերպական միջոցների բարդ համալիր կազմող երկարատև գործընթաց է, որն ուղղված է յուրաքանչյուր դատապարտյալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ընդունակություններ, հմտություններ և պատրաստակամություն:

Դատապարտյալի վերասոցիալականացման հիմնական միջոցներն են՝ պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Դատապարտյալների կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցագործությունների կանխումն ապահովվում է դատապարտյալների նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված կանխարգելիչ միջոցների կիրառմամբ: Ընդհանուր կանխումը (այլ անձանց կողմից հանցագործությունների կանխում)՝ որպես քրեակատարողական օրենսդրության նպատակ, իրականացվում է միջնորդավորված: Օրենքով նախատեսված հարկադրանքի միջոցները, պատժի կրման բավական խիստ պայմանները, դատապարտյալների իրավունքների և ազատությունների սահմանափակումներն ազդեցություն ունենում են հասարակության և նրա քաղաքացիների վրա՝ նպաստելով ձեռնպահ մնալ հանցագործություններից:

Քրեակատարողական օրենսդրության նպատակներն իրականացվում են օրենսդրության տվյալ ճյուղի առաջ որոշակի խնդիրներ դնելով: Վերջիններս հստակ ձևակերպված են ՀՀ ՔԿՕ-ում և ներառում են քրեակատարողական իրավունքի ինստիտուտների ու նորմերի իրականացման առավել կարևոր ուղղությունները:

ՀՀ ՔԿՕ-ի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեակատարողական օրենսդրության խնդիրներն են՝ սահմանել պատիժների կատարման և դատապարտյալի կողմից կրման, քրեախրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները, իրավաբանական անձի նկատմամբ քրեախրավական ներգործության միջոցների կիրառման կարգն ու պայմանները, դատապարտյալի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցները, պաշտպանել նրա իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, վերահսկել դատապարտյալի պարտականությունների կատարումը, նախապատրաստել նրանց հասարակությունում վերաինտեգրմանը և պատժից ազատվող անձանց ցուցաբերել սոցիալական աջակցություն:

Քրեակատարողական օրենսդրության խնդիրներն իրականացնելու համար ՀՀ ՔԿՕ-ն ամրագրում է պատիժների կատարման ընդհանուր դրույթները և սկզբունքները, պատիժների կատարման կարգն ու պայմանները, քրեախրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգը, դրանց նկատմամբ իրականացվող հսկողությունն ու վերահսկողությունը, դատապարտյալի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման նպատակով հիմնական միջոցների կիրառումը, դատապարտյալի իրավական վիճակը, նրա իրավունքները և ազատություններն ապահովելու երաշխիքները, պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության, պատժից ազատե-

լու և դատապարտյալներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու կարգը, ինչպես նաև իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման կարգն ու պայմանները: Քրեակատարողական օրենսդրության խնդիրներն իրականացնում են քրեական պատիժներ կատարող հիմնարկները և մարմինները, որոնք ապահովում են դատարանի դատավճռով նախատեսված պատժի տեսակի և ժամկետի կատարումը, պատժի նպատակների իրականացումը:

2. Քրեակատարողական իրավունքի նորմերի հասկացությունը, բովանդակությունը, տեսակները և կառուցվածքը

Քրեակատարողական իրավունքի նորմերը պետության կողմից սահմանված և համապատասխան իրավաբանական ակտերում ամրագրված համապարտադիր կանոններ են, որոնք կարգավորում են պատիժների կատարման ու կրման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունները և քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը:

Քրեակատարողական իրավունքի նորմերը, սահմանելով պատիժներ կատարող և պատիժը կրող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, որոշում են նաև համապատասխան պաշտոնատար անձանց ծառայողական և դատապարտյալների շուրջօրյա վարքագիծը: Քրեակատարողական իրավունքի նորմերը, ունենալով առանձնահատուկ կարգավորման առարկա, օժտված են միայն իրենց հատուկ բովանդակությամբ: Դրանք ներկայացնում են վարքագծի այնպիսի կանոններ, որոնք իրավունքի մեկ այլ ճյուղ չի կարող նախատեսել: Քրեակատարողական իրավունքի նորմերը, որոնք նախատեսում են պատիժների կատարման ու կրման կարգը և պայմանները, անմիջա-

կանոթեն կարգավորում են նաև դատապարտյալների առօրյան ու կենցաղը, հանգիստը և աշխատանքը, ուսումը և այլն, այսինքն՝ այն հարաբերությունները, որոնք պատիժներ կատարող մարմիններից և հիմնարկներից դուրս կարգավորում են իրավունքի այլ ճյուղեր:

Քրեակատարողական իրավունքի նորմերի, ինչպես նաև իրավական ցանկացած նորմի բնորոշ գծերն են՝ սահմանվում են պետության կողմից, նորմերի անմիջական բովանդակությունը կազմում են վարքագծի կանոններ, որոնք ունեն երկկողմ՝ ներկայացուցչական և պարտադրող բնույթ, կարգավորում են հասարակական հարաբերություններ, պարտադիր են բոլոր նրանց համար, որոնց ուղղված են, գործում են բազմակի, պաշտպանվում են պետության կողմից, զարգանում և կատարելագործվում են պետության և օրենսդրության զարգացմանը զուգընթաց, օրենսդրության համակարգում գտնվում են որոշակի աստիճանակարգային ենթակայության մեջ:

Ըստ իրավական կարգավորման առարկայի՝ քրեակատարողական իրավունքի նորմերը լինում են՝ առանձին քրեական պատժատեսակներ կարգավորող նորմեր (տուգանք, հանրային աշխատանքներ, ազատազրկում և այլն) և իրավունքի այս ճյուղի առանձին ինստիտուտներ կարգավորող նորմեր (դատապարտյալների իրավական վիճակ, պատժից ազատել, տեսակցություններ և այլն):

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ ընդունված է իրավունքի նորմերը բաժանել երեք խմբի՝ ***կարգավորող, խրախուսող և պահպանող***: Քրեակատարողական իրավունքի նորմերը նույնպես կարելի է խմբավորել այս դասակարգմանը համապատասխան:

Կարգավորող նորմերը սահմանում են քրեակատարողական իրավահարաբերությունների սուբյեկտների և այլ մասնակիցներ-

րի իրավունքներն ու պարտականությունները, որոնց բնույթից կախված՝ կարգավորող նորմերը իրենց հերթին բաժանվում են ***պարտադրող, արգելող և իրավալիազորող*** նորմերի:

Պարտադրող նորմերը կարգավորում են դատապարտյալների վարքագիծը և սահմանում որոշակի պահանջներ սուբյեկտների համար՝ կատարել որոշակի գործողություններ: Պարտադրող նորմի օրինակ կարող են լինել կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածին պահելու խիստ մեկուսացման պայմանները՝ դատապարտյալներին անջատ պահելու չափանիշներին համապատասխան (ՀՀ ՔԿՕ, հոդված 43, 1-ին մաս):

Արգելող նորմերը նույնպես սահմանում են որոշակի պահանջներ սուբյեկտների համար՝ ձեռնպահ մնալ որոշակի գործողությունների կատարումից, որոնք օրենքով գնահատվում են որպես անօրինական: Այսպես՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը¹⁹ սահմանում է, թե ինչ է արգելվում կալանավորված անձին կամ դատապարտյալին՝ իր մոտ ունենալ կամ խցում պահել արգելված առարկաներ, իրեր և սննդամթերք, խցի կամ զբոսանքի վայրի սահմաններից դուրս նետել որևէ իր կամ վերցնել այդ տարածքում հայտնաբերված իրը, կիպ մոտենալ խցի կամ կացարանի դռան դիտանցքին և փակել այն, փչացնել քրեակատարողական հիմնարկի՝ օգտագործման համար տրված իրերը, պատերի վրա նշումներ կամ գրառումներ անել, օգտվել ինքնաշեն էլեկտրասարքերից կամ սարքավորումներից, օգտագործել ալկոհոլային խմիչքներ, թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութեր, խախտել տեղաշարժման համար նախատեսված վայրերի սահմանները, զբաղվել մոլախաղերով, նյութական կամ այլ շահ ստանալու նպատակով զբաղվել

¹⁹ Այսուհետ՝ Ներքին կանոնակարգ:

թույլատրելի խաղերով, անհարկի բղավել, աղմկել, խանգարել անդորրը և այլն (Ներքին կանոնակարգի 74-րդ կետի 1-ից 22-րդ ենթակետեր): Արգելող նորմերը կարող են վերաբերել նաև պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների աշխատակիցներին. այսպես՝ արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (ՀՀ օրենքը Քրեակատարողական ծառայության մասին, հոդված 49, 4-րդ մաս): Արգելող նորմի օրինակ է նաև ՀՀ ՔԿՕ-ի 86-րդ հոդվածի 4-րդ մասը՝ «Առանց պահախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս բերել չի թույլատրվում տվյալ քրեակատարողական հիմնարկում վեց ամսից պակաս ժամկետով պատիժ կրողներին, չհանված կամ չմարված տույժեր ունեցող դատապարտյալներին, անվտանգային գոտու խիստ պայմաններում գտնվողներին, պատժի կատարման ընթացքում դիտավորյալ հանցագործությունների համար դատապարտյալներին, ռեցիդիվի դեպքում, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց»:

Իրավալիազորող նորմերը սուբյեկտներին հնարավորություն են տալիս օրենքի շրջանակներում ինքնուրույն ընտրելու իրենց վարքի ձևը: Այսպես, դատապարտյալի ցանկությամբ երկարատև մեկ տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև մեկ տեսակցությամբ, իսկ կարճատև մեկ տեսակցությունը՝ մեկ հեռախոսակապով կամ տեսազանգով: (ՀՀ ՔԿՕ, հոդված 80, 4-րդ մաս):

Խրախուսող նորմերը քրեակատարողական իրավունքում կոչված են խթանելու դատապարտյալների օրինակելի վարքը, նրանց վերասոցիալականացումը: Խրախուսող նորմի օրինակ կարող են լինել դատապարտյալների նկատմամբ խրախուսանքի

միջոցների կիրառումը կարգավորող նորմերը (ՀՀ ՔԿՕ, 46,102-րդ հոդվածներ) և այլն:

Պահպանող նորմերն ապահովում են իրավահարաբերությունների պաշտպանությունը, որոնք ծագում են քրեական պատիժների կատարման ու կրման ընթացքում, ինչպես նաև ապահովում են քրեակատարողական իրավունքի այլ նորմերի կատարումը, օրինակ՝ դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցների կիրառումը (ՀՀ ՔԿՕ, 47,104-րդ հոդվածներ) և այլն:

Քրեակատարողական օրենսդրությունը պարունակում է բազմաթիվ բլանկետային նորմեր, որոնք հղում են կատարում ՀՀ կառավարության, ՀՀ արդարադատության, ՀՀ պաշտպանության և այլ նախարարությունների նորմատիվ իրավական ակտերին: Այսպես՝ ՀՀ ՔԿՕ-ի 79-րդ հոդվածի 7-ին մասի համաձայն՝ դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի օրական միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ ՀՀ ՔԿՕ-ի 58-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատում է ՀՀ արդարադատության նախարարը, դատապարտյալ զինծառայողների նյութակենցաղային և բժշկական օգնության և սպասարկման ապահովումն իրականացվում է զինվորական կանոնագրքերով սահմանված չափանիշներով (ՀՀ ՔԿՕ-ի 55-րդ հոդվածի 1-ին մաս) և այլն:

Քրեակատարողական իրավունքի նորմերը դասակարգվում են նաև նյութական և դատավարական (ընթացակարգային) նորմերի: Սակայն քրեակատարողական օրենսդրությունում բացակայում է այդ նորմերի հստակ տարանջատումը: Նյութական

իրավունքի նորմերը սահմանում են վարքագծի կանոնների բովանդակությունը, իսկ ընթացակարգային նորմերը՝ դրանց իրականացման կարգը և պայմանները: Այսպես՝ ՀՀ ՔԿՕ-ի ինքնուրույն նորմերով (նյութական նորմեր) սահմանվում են ազատագրկման դատապարտվածների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները (ՀՀ ՔԿՕ-ի 102, 104-րդ հոդվածներ), իսկ նույն օրենսգրքի այլ նորմերով (ընթացակարգային նորմեր)՝ դրանց կիրառման կարգը և պայմանները (ՀՀ ՔԿՕ-ի 103, 106-րդ հոդվածներ):

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ նորմի կառուցվածքում առանձնացվում են՝ **հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա**: Նման կառուցվածքային բաժանում ունեն նաև քրեակատարողական իրավունքի նորմերը: Հիպոթեզը (ենթադրություն) իրավունքի նորմի կիրառման պայմանն է: Հիպոթեզում շարադրվում են այն փաստական հանգամանքները և անձանց շրջանակը, որոնց առկայության դեպքում իրավունքի սուբյեկտների մոտ ծագում են իրավաբանական իրավունքներ և պարտականություններ, այսինքն՝ նորմն իրացվում է, սկսում է գործել:

Դիսպոզիցիան (կարգադրություն) իրավահարաբերության մասնակիցների և սուբյեկտների վարքագծի բուն կանոնն է, որը սահմանում է նաև նրանց իրավունքները և պարտականությունները: Դիսպոզիցիայում նշվում է, թե ինչպիսին կարող է լինել կամ պետք է լինի վարքագիծը հիպոթեզում նշված պայմանների առկայության դեպքում:

Սանկցիան (հարկադրանք) իրավունքի նորմի կատարման կամ չկատարման հետևանքն է: Սանկցիայում ամրագրվում է, թե պետական հարկադրանքի ինչպիսի միջոցներ կարող են կիրառվել դիսպոզիցիայում նախատեսված կանոնը խախտողների նա-

կատամար²⁰: Քրեակատարողական իրավունքի նորմի սանկցիայի տարբերությունը քրեական իրավունքի նորմի սանկցիայից այն է, որ այն կարող է գտնվել մեկ հոդվածում, բայց կիրառվել մեկ այլ հոդվածում նախատեսված վարքագծի կանոնները խախտելու դեպքում:

3. Քրեակատարողական իրավունքի նորմերի կիրառումը

Իրավական նորմը գործում է օրենսդրի սահմանած նպատակները կատարելու համար: Այդպիսի գործունեության արդյունք է իրավունքի նորմերի կիրառումը: Քրեակատարողական օրենսդրության նորմերի կիրառումը օրենսդրության այս ճյուղի խնդիրների իրականացման անհրաժեշտ պայմանն է: ՀՀ ՔԿՕ-ում բավականին շատ կան ընթացակարգային նորմեր, որոնք համապատասխան պայմաններ են ստեղծում նյութական նորմերի կատարման համար:

Այսպես՝ ՀՀ ՔԿՕ-ում դատապարտյալների հիմնական իրավունքները և պարտականությունները նախատեսող նորմերը (10,11-րդ հոդվածներ) նյութական նորմերի ամբողջությունն են: Օրենսգրքի հատուկ մասի բազմաթիվ նորմեր, ինչպես նաև այլ իրավական ակտեր սահմանում են դրանց կատարման ընթացակարգը: Օրինակ՝ դատապարտյալի իրավունքը տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների ու պարտականությունների, պատժի կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկության մասին՝ բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տվյալների, կարգավորվում է Ներքին կանոնակարգով:

²⁰ Տե՛ս Ա. Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն 2, (դասախոսություններ), ԵՊՀ հրատ., Երևան 2017, էջ 139:

ԳԼՈՒԽ 3
ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ
ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1. Դատապարտյալի իրավական վիճակի հասկացությունը և սոցիալ-իրավական հիմքերը

Քրեական պատիժների դատապարտված անձանց իրավական վիճակը քրեակատարողական իրավունքի տեսության և պրակտիկայի կարևոր խնդիրներից է: Քրեական պատիժների կատարման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման շրջանակում հայտնված անձինք ձեռք են բերում որոշակի իրավական վիճակ, և, համապատասխանաբար, կարելի է խոսել դատապարտյալի, պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների աշխատակիցների, դրանց վերադաս մարմինների, դատապարտյալի ազգականների, ինչպես նաև այն անձանց իրավական վիճակի մասին, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են քրեական պատիժների կատարման հետ: Դրանց թվում հատուկ ուշադրության է արժանի դատապարտյալների իրավական վիճակը, որի սոցիալ-իրավական նշանակությունը հետևյալն է:

Յուրաքանչյուր իրավական պետության մեջ նախատեսվում են անհրաժեշտ երաշխիքներ բոլոր քաղաքացիների, այդ թվում և դատապարտյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Այդպիսի երաշխիքների հիմք են ՀՀ Սահմանադրությունը և այն նորմերը, որոնք կարգավորում են ՀՀ քաղաքացի դատապարտյալների իրավական վիճակը:

Քրեակատարողական օրենքը փոխում է դատապարտյալների իրավական վիճակը՝ նրանց վերապահելով որոշակի իրա-

վունքներ և պարտականություններ: *Քրեական պատիժների կատարման ու կրման ընթացքում դատապարտյալների հիմնական (սահմանադրական), քաղաքացիական և հատուկ իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը կազմում է նրանց իրավական վիճակը:*

Դատապարտյալների իրավական վիճակի հասկացության պարզաբանումն ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն: Տեսականորեն այն առավել արդյունավետ իրավունքների և պարտականությունների մշակումն է քաղաքացու համար, որը դատարանի դատավճռով դատապարտվել է որևէ քրեական պատժի, իսկ գործնականում թույլ է տալիս տարբերակել քրեա-իրավական ներգործությունը՝ կախված դատապարտյալի սեռից, տարիքից, հանցագործության բնույթից, պատժի տեսակից և դատապարտյալի դասակարգման այս կամ այն խմբին պատկանելուց և այլն:

Դատապարտյալը, անկախ կատարած հանցագործության ծանրության աստիճանից, շարունակում է մնալ իր պետության քաղաքացին և գտնվում է նրա պաշտպանության ներքո: Պետությունը պատասխանատու է դատապարտյալի կյանքի, առողջության և ֆիզիկական անձեռնմխելիության համար:

Հանցագործի նկատմամբ քրեական պատիժ նշանակելով՝ պետությունը ոչ թե վրեժ է լուծում նրա կատարած հանրորեն վտանգավոր արարքի համար, այլ նպատակ ունի վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել դատապարտյալին և կանխել նոր հանցագործությունները: Այս նպատակների իրականացման համար են դատապարտյալների նկատմամբ կիրառվում օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները և զրկանքները: Դատապարտյալների նկատմամբ կիրառվող իրավասահմանափակումների շրջանակը կախված է քրեական պատժի տեսակից, հանցագործության բնույթից

և վտանգավորության աստիճանից, դատապարտյալի անձից, պատժի կրման ընթացքում նրա վարքագծից:

Այս կարևորագույն խնդրին է նվիրված ՀՀ ՔԿՕ-ի երրորդ գլուխը՝ բաղկացած չորս հոդվածից: Բացի այդ, դատապարտյալների իրավական վիճակի բազմաթիվ այլ հարցեր բացահայտվում են օրենսգրքի՝ պատիժների առանձին տեսակների կատարման կարգն ու պայմանները կարգավորող գլուխներում և հոդվածներում: Փաստորեն դատապարտյալների իրավական վիճակը՝ նրանց հիմնական իրավունքները և պարտականությունները, ամրագրվում և կարգավորվում են օրենքով և ոչ թե գերատեսչական նորմատիվ ակտերով:

ՀՀ ՔԿՕ-ի՝ դատապարտյալների իրավական վիճակը կարգավորող գլխում սահմանվում են դատապարտյալների իրավական վիճակի հիմքերը, իրավունքների, պարտականությունների, ազատությունների և օրինական շահերի ապահովման երաշխիքները:

Ինչպես արդեն նշել ենք (գլուխ 1, պարագրաֆ 1), գոյություն ունեն դատապարտյալների հետ վարվեցողության վերաբերյալ միջազգային իրավական մեծ քանակությամբ փաստաթղթեր, որոնք սահմանում են դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական չափանիշներ և ուղղված են պատիժների կատարման բնագավառում ազգային օրենսդրության կատարելագործմանը: Այդ փաստաթղթերը մշակվել են Միացյալ ազգերի կազմակերպության և միջազգային մի շարք այլ կազմակերպությունների նախաձեռնությամբ:

ՀՀ ՔԿՕ-ի 9-րդ հոդվածը սահմանում է դատապարտյալի իրավական վիճակի հիմքերը՝ մասնավորապես նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանում է դատապարտյալի իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, երաշխավորում է պատիժների կատարման և քրեաիրավական

ներգործության այլ միջոցների կիրառման օրինականությունը, ինչպես նաև պատիժների կատարման ընթացքում ապահովում է դատապարտյալների անվտանգությունը:

Քրեակատարողական օրենքը դատապարտյալին երաշխավորում է ՀՀ քաղաքացիների իրավունքներով և ազատություններով, պատիժը կատարելու ընթացքում դատապարտյալի իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դատարանի դատավճռով, ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով և այլ օրենքներով: Ոչ մի այլ նորմատիվ իրավական ակտ չի կարող փոփոխել, նեղացնել կամ լրացնել այն: Այստեղից հետևում է, որ ՀՀ արդարադատության նախարարության ակտերը կարող են կարգավորել պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների, նրանց պաշտոնատար անձանց գործունեության կազմակերպական-տեխնիկական բնույթի հարցերը միայն:

Դատապարտյալի իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելու կարգը սահմանվում է ՀՀ ՔԿՕ-ով, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով: Դատապարտյալի իրավունքներն ու պարտականություններն իրականացնելիս չպետք է խախտվեն պատիժների կատարման կարգն ու պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանց սահմանափակումները նախատեսվում են քրեակատարողական օրենսգրքով, այլ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Դատապարտյալների իրավունքների, օրինական շահերի և պարտականությունների իրականացումն ապահովվում է քրեակատարողական օրենսդրությամբ՝ քրեական պատիժների կատարումն ու կրումը կարգավորող նորմերի ձևավորմամբ: Միաժամանակ, գոյություն ունեն նորմեր, որոնցում անմիջականորեն սահմանվում են բոլոր դատապարտյալների (անկախ պատժատեսակից) իրավունքները և պարտականությունները: Քրեակատարողական օրենսդրությունում դրանք անվանվում են դատապարտյալների հիմնական իրավունքներ և հիմնական պարտականություններ:

2. Դատապարտյալի հիմնական պարտականությունները

Դատապարտյալների իրավական վիճակը սահմանելիս կարևոր նշանակություն ունի նրանց պարտականությունների ամրագրումը: Դատապարտյալը պարտավոր է պահպանել պատիժների կրման կարգը և պայմանները կարգավորող ՀՀ օրենսդրությունը, կատարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ՀՀ քաղաքացիների պարտականությունները, հասարակությունում ընդունված բարոյականության նորմերը: Դատապարտյալը պետք է կրի պատիժ իր բոլոր զրկանքներով, դժվարություններով, որոշակի բարիքների կորստով, ինչպես նաև բազմաթիվ այլ բացասական հետևանքներով: ՀՀ ՔԿՕ-ի՝ դատապարտյալի իրավական վիճակին վերաբերող գլխում թվարկված դատապարտյալների պարտականությունները նրանց ընդհանուր պարտականությունների մասն են կազմում: Դրանք համարվում են հիմնական, քանի որ տարածվում են բոլոր դատապարտյալների վրա անկախ պատժատեսակից և ամրագրում են դատապարտյալներին ներկայացվող առավել կարևոր պահանջները: Դատապարտյալների պարտականությունների գերակշռող մասն ամրագրվում է ՀՀ

ՔԿՕ-ի՝ պատիժների առանձին տեսակների կատարման և կրման կարգն ու պայմանները կարգավորող նորմերում:

ՀՀ ՔԿՕ-ի 11-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատապարտյալը պարտավոր է՝ կատարել և պահպանել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված քաղաքացիների պարտականությունները, պատժի կրման կարգն ու պայմանները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները, կատարել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի աշխատակիցների օրինական պահանջները:

Դատապարտյալի վրա դրվում է հատուկ պարտականություն՝ կատարել պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները: Առանց վերջինիս հնարավոր չէ ամբողջ ծավալով և ժամանակին ապահովել քրեական պատժի պահանջների կատարումը:

Դատապարտյալների և պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների աշխատակիցների միջև կանոնավոր փոխհարաբերություններ ստեղծելու նպատակով ՀՀ ՔԿՕ-ն դատապարտյալների համար սահմանում է յուրօրինակ պարտականություն՝ հարգալից վերաբերմունք դրսևորել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի աշխատակիցների, այդ հիմնարկ և մարմին այցելող անձանց, ինչպես նաև այլ դատապարտյալների նկատմամբ:

Դատապարտյալների համար կարևոր պարտականություն է նաև այն, որ նրանք պարտավոր են ներկայանալ պատիժներ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի կանչով և տալ բացատրություններ պատժի կատարման կարգի պահանջները խախտելու վերաբերյալ: Այս պարտականությունը յուրահատուկ է հատկապես ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց համար, քանի որ այդ անձանց կանչով ներկայանալը պատժի կատարման նկատմամբ որոշակի վերահսկողության ձև է: Համապատասխան պաշտոնատար ան-

ձը կարող է բացատրություններ պահանջել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, հրաժարվելու դեպքում կարող են կիրառվել օրենքով սահմանված ներգործության միջոցներ:

ՀՀ ՔԿՕ-ի 11-րդ հոդվածի առաջին մասով սահմանվում է նաև, որ դատապարտյալը պարտավոր է պահպանել անձնական և ընդհանուր հիգիենայի կանոնները, խնամքով վերաբերվել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի գույքին:

Դատապարտյալն իր պարտականությունները, ինչպես նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքում ենթարկվում է օրենքով սահմանված պատասխանատվության: Օրենսդրությունը նախատեսում է պատասխանատվության տարաբնույթ ձևեր՝ կարգապահական պատասխանատվություն, իսկ ավելի խիստ ձևերից են պատժի կրման պայմանների խստացում, մեկուսացվածության ավելի խիստ աստիճան ունեցող անվտանգային գոտի տեղափոխելը և այլն:

Այս հիմնական պարտականություններից բխում և որոշակիացվում են ավելի մասնավոր պարտականություններ ՀՀ ՔԿՕ-ի առանձին պատժատեսակների կատարման ու կրման կարգն ու պայմանները նախատեսող հոդվածներում:

3. Դատապարտյալի հիմնական իրավունքները

ՀՀ ՔԿՕ-ում դատապարտյալների իրավունքները սահմանվում են բավականին մանրամասն: Այդպիսի կարգավորվածությունը բխում է պատիժների կատարման և դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային իրավական փաստաթղթերի պահանջներից:

Պատժի կրման պայմաններին հաջող հարմարվելու գրավականը դատապարտյալների կողմից իրենց իրավունքների և պար-

տականությունների իմացությունն է: Այդ պատճառով ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի առաջին մասում շեշտվում է դատապարտյալի իրավունքը՝ մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր կամ բանավոր տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, պատժի կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկության մասին, բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տվյալների: Պատիժներ կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմը պարտավոր է դատապարտյալներին տրամադրել նշված տեղեկությունները, ինչպես նաև ծանոթացնել նրանց պատիժների կրման կարգի և պայմանների փոփոխություններին:

Վերը նշվեց, որ դատապարտյալը պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել պատիժ կատարող հիմնարկի և մարմնի աշխատակիցների նկատմամբ, բայց, միաժամանակ, ինքը ևս նույն վերաբերմունքին արժանանալու իրավունքն ունի: Նա պատիժներ կատարող հիմնարկների կամ մարմինների աշխատակիցների կողմից չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ նման բնույթի կարգապահական պատասխանատվության: Քրեաիրավական հարկադրանքի միջոցները դատապարտյալի նկատմամբ չեն կարող կիրառվել ոչ այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Դատապարտյալը նույնիսկ իր համաձայնությամբ չի կարող ենթարկվել կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող բժշկական կամ այլ փորձերի՝ կապված հիվանդությունների բուժման, կանխարգելման և ախտորոշման նոր մեթոդների, դեղորայքային միջոցների փորձարկման, ինչպես նաև կենսաբժշկական հետազոտությունների անցկացման հետ:

Դատապարտյալը կարող է պաշտպանել իր նկատմամբ

հարգալից վերաբերմունքի իրավունքը բոլոր օրինական միջոցներով՝ դիմելով համապատասխան մարմիններ: Ընդ որում՝ քրեակատարողական օրենսդրությունը էապես ընդարձակել է դատապարտյալի իրավունքը դիմելու համապատասխան մարմիններ: Դատապարտյալն իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ և կուսակցություններ, լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ: Դատապարտյալի դիմումները և բողոքները գրաքննության ենթակա չեն:

Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են քննարկել դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և ընդունված որոշումների մասին տեղյակ պահել դատապարտյալին:

Արգելվում է որևէ ձևով հետապնդումը դատապարտյալի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Քրեակատարողական օրենսդրությունը նախատեսում է դատապարտյալի իրավունքը՝ դիմելու մարդու իրավունքների և

ազատությունների պաշտպանության միջազգային միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններ: Այս կարգն առաջին անգամ նախատեսվել էր նաև 2004թ. ՀՀ ՔԿՕ-ում:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային միջկառավարական մարմիններ են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և այլն, իսկ միջազգային ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպություններ են՝ Միջազգային համաներումը, Միջազգային բանտային ռեֆորմը, Պենիտենցիար համակարգի ռեֆորմի Հովարդի լիգան, Դատապարտյալների օգնության միջազգային ասոցիացիան, Միջազգային քրեական և պենիտենցիար հիմնադրամը, Բանտային եղբայրությունը և այլ կազմակերպություններ: Միջպետական մարմինը, քննարկելով իրեն ուղղված դատապարտյալի դիմումը, կայացնում է որոշում, որի մասին հայտնում է դատապարտյալին և համապատասխան պետությանը:

Կարևոր նշանակություն ունի դատապարտյալի առողջության պահպանման իրավունքը հատկապես հասարակությունից մեկուսացման պայմաններում, այդ թվում՝ ստանալու առողջության համար բավարար սննդային արժեք ունեցող սննդամթերք, բժշկական օգնություն (առաջնային, մասնագիտացված, շտապ և անհետաձգելի), հոգեբանական կամ հոգեթերապևտիկ օգնություն, ինչպես նաև դատապարտյալի ցանկությամբ իր դրամական միջոցների հաշվին գննվելու իր ընտրած բժշկի կողմից (ՀՀ ՔԿՕ, հոդված 10, առաջին մաս, 5-րդ կետ): Առողջության պահպանման իրավունքը մարդու բնական իրավունքն է, և պատժի կատարումը չի կարող սահմանափակել այն: Այս իրավունքի իրականացման պարտականությունը դրվում է պատիժ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմի վրա:

ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետը ամրա-

գրում է դատապարտյալների սոցիալական ապահովության, այդ թվում՝ կենսաթոշակներ և պետական նպաստներ ստանալու իրավունքը: Այն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան²¹:

ՀՀ ՔԿՕ-ում ձևակերպվել է նաև դատապարտյալների իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (ՀՀ ՔԿՕ, հոդված 10, առաջին մաս, 10-րդ կետ), որի իրականացման նպատակով նրանք կարող են օգտվել փաստաբանական ծառայությունից:

Օրենսդրությունը նախատեսում է նաև դատապարտյալի անձնական անվտանգության ապահովման իրավունքը: Խոսքը ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձանց անձնական անվտանգության ապահովման մասին է, այսինքն՝ երբ դատապարտյալն ամբողջությամբ կամ մասամբ մեկուսացված է հասարակությունից և գտնվում է քրեակատարողական համակարգի պահպանության ու հսկողության ներքո: Նման դատապարտյալները հնարավորություն չունեն ինքնուրույն ապահովելու իրենց անվտանգությունը: Դատապարտյալների անձնական անվտանգությանը վտանգ սպառնալու դեպքում նրանք իրավունք ունեն խնդրանքով դիմելու պատիժներ կատարող հիմնարկի ցանկացած պաշտոնատար անձի, ընդ որում՝ սպառնալիքի բովանդակությունը կարող է տարբեր լինել՝ սպանության, մարմնական վնասվածքներ հասցնելու, համասեռ բռնության սպառնալիք և այլն: Նման դեպքում համապատասխան պաշտոնատար անձինք պարտավոր են միջոցներ ձեռնարկել դատապարտյալների անձնական անվտանգությունն ա-

²¹ Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրողներին կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նրանց հաշմանդամ ճանաչելու կարգը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ (07.10.2004թ.) և առաջին անգամ ձևակերպել է 2004թ.-ի ՀՀ ՔԿՕ-ում: Նախկին խորհրդային օրենսդրությամբ քրեական պատիժների դատապարտված անձանց կենսաթոշակներ չէին վճարվում, պատժի կրման ընթացքում դրանց վճարումը կասեցվում էր:

պահովելու համար: Այդ նպատակով դատապարտյալը կարող է տեղափոխել անվտանգ վայր, կամ կարող են կիրառվել դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովող այլ միջոցներ:

ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատապարտյալը բացառիկ դեպքերում կարող է պահվել առանձնացված՝ պաշտպանական (անձնական անվտանգության) նպատակով՝ իր, իսկ կանխարգելիչ նպատակով՝ այլ անձանց կամ քրեակատարողական հիմնարկի անվտանգությանն ու ապահովությանը սպառնացող վտանգի դեպքում:

ՀՀ ՔԿՕ 78-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալն իր դիմումի համաձայն կամ քրեակատարողական հիմնարկի պետի նախաձեռնությամբ կարող է պահվել առանձին: Եթե պաշտպանական նպատակով առանձին պահելու համար դատապարտյալը դիմում է քրեակատարողական հիմնարկի պետին, ապա դիմումում պետք է ներկայացնի իր անվտանգությանն ու ապահովությանն սպառնացող վտանգի վերաբերյալ տեղեկություններ: Դիմումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից երկու ժամվա ընթացքում մերժվում կամ բավարարվում է քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ: Վերջինս կայացնում է պատճառաբանված որոշում, որը պետք է պարունակի դատապարտյալին պաշտպանական կամ կանխարգելիչ նպատակով առանձին պահելու վերաբերյալ տվյալներ և դատապարտյալի դիրքորոշումը՝ իրեն առանձին պահելու վերաբերյալ:

Առանձին պահելու վերաբերյալ դատապարտյալի դիմումն ստանալուց կամ սպառնացող վտանգը հայտնաբերելուց հետո՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմն անձին անհապաղ առանձնացնում է տվյալ քրեակատարողական հիմնարկի անվտանգ գոտում մինչև համապատասխան որոշման կայացումը:

ՀՀ ՔԿՕ-ն որոշակիացնում է մարդու մտքի, խղճի և կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության իրավունքը դատապարտյալների համար: Դատապարտյալները, ինչպես և ՀՀ բոլոր քաղաքացիները երաշխավորվում են մտքի, խղճի և կրոնի ազատություն իրավունքով: Նրանք կարող են ազատորեն ընտրել, ունենալ և տարածել կրոնական կամ աթեիստական համոզմունքներ: Միևնույն ժամանակ, այդ իրավունքն իրականացնելիս չպետք է խախտվեն պատիժը կատարող հիմնարկի ներքին կարգապահության կանոնները, ինչպես նաև չպետք է սահմանափակվեն այլ անձանց իրավունքները:

Կրոնի բարոյահոգեբանական ազդեցությունը մարդու վրա հսկայական է, իսկ հասարակությունից մեկուսացման պայմաններում՝ ազատագրկման վայրերում, որոշակի գործոնների ազդեցության ներքո այն ձեռք է բերում առավել մեծ կարևորություն: Նման ազդեցությունն առաջին հերթին բխում է կրոնի հոգեթերապևտիկ և փոխհատուցողական գործառնություններից, այն ընդունակ է սփոփել, մեղմել անձի հոգեցունց վիճակը, զղջման, վերասոցիալականացման գործընթացի բարոյական խթան հանդիսանալ: Իր գործառնությունների խնդիրներով կրոնը պենիտենցիար հիմնարկների համար ավելի մեծ նշանակություն ունի, քան հասարակությունը: Կրոնական սփոփանքի առավել կարիք ունեն խարխլված հոգեկան կամ տհաճ, ծանր ներգործության ազդեցության ներքո գտնվող անձինք, որն ավելի բնութագրական է դատապարտյալներին: Կրոնը հանդես է գալիս որպես մարդու վարքագծի կարգավորիչ՝ ելնելով համամարդկային բարոյական արժեքներից, բացահայտելով մարդու ներքին խնդիրները, բարոյական գիտակցության շեղումները: Մարդու նկատմամբ ներգործության մեթոդներով կրոնն առավել է, քան որևէ այլ երևույթ, համապատասխանում է դատապարտյալների հետ աշխատանքի

պենիտենցիար բնագավառի պահանջներին²²:

Կարող ենք վստահաբար հավաստել, որ ՀՀ քրեակատարողական համակարգի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները որակապես նոր փուլում են: Յուրաքանչյուր դատապարտյալ իրավունք ունի անձամբ կամ իր համախոհների հետ դավանել ցանկացած կրոն, իհարկե բանականության սահմաններում՝ ելնելով քրեակատարողական հիմնարկի հնարավորություններից, բավարարել իր կրոնական պահանջմունքները, մասնակցել կրոնական արարողություններին: Դատապարտյալների խնդրանքով պատիժը կրելու վայրերում կարող են թույլատրվել անցկացնել կրոնական ծիսակատարություններ (մկրտություն, ամուսնություն, կրոնական գրականության ուսումնասիրություն և այլն), օգտվել պաշտամունքի առարկաներից և կրոնական գրականությունից: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ նպատակով առանձնացնում է համապատասխան տարածք: Դատապարտյալի մասնակցությունը կրոնական արարողություններին չի ազատում նրան օրենքով սահմանված իր պարտականություններից և պատասխանատվությունից՝ դրանք խախտելու դեպքում: Հոգևորականների այցելությունները թույլատրվում են նաև քրեակատարողական հիմնարկների բարձր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալներին: Այս դրույթի իրավական նշանակությունը այն է, որ արտահայտում է սոցիալական վտանգավորության բարձր աստիճանով տարբերվող դատապարտյալների օրինական շահերը: Այս շահերը բավարարվում են, եթե ապահովվում է հոգևորականների անվտանգությունը:

ՀՀ ՔԿՕ-ն նյութականացնում է դատապարտյալ օտարերկր-

²² Տե՛ս **Հ. Մ. Խաչիկյան**, Դատապարտյալների խղճի և դավանանքի ազատության իրավունքը հասարակությունից մեկուսացման պայմաններում// Իրավագիտության հարցեր, Երևան, 2001, թիվ 3, էջ 7:

յա քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի առաջարկությունները, որոնք հաստատվել են ՄԱԿ-ի 7-րդ վեհաժողովի կողմից: Այն ամրագրված է նաև Դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային նվազագույն չափանիշներում: Օտարերկրյա քաղաքացի դատապարտյալն իրավունք ունի կապեր հաստատելու և պահպանելու ՀՀ-ում իր պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ չունեցող պետության քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող, փախստականի կարգավիճակ ունեցող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած դատապարտյալներն իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու համապատասխանաբար իրենց կամ այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հետ, որն ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը, կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

Օտարերկրյա քաղաքացիները այլ պետությունների քաղաքացիություն կամ հպատակություն ունեցող անձինք են և մշտապես կամ ժամանակավորապես բնակվում են ՀՀ-ում, իսկ քաղաքացիություն չունեցողներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր կորցրել են այլ պետությունների քաղաքացիությունը կամ հպատակությունը և մշտապես կամ ժամանակավորապես բնակվում են ՀՀ-ում:

ՀՀ ՔԿՕ-ում սահմանվում են հասարակությունից մեկուսացման պայմաններում պատժի կրման բովանդակությունը՝ որպես ազատազրկման ինքնուրույն տարր, որի հիմնական մասը կազմում են դատապարտյալների հատուկ իրավունքները և հասարակությունից մեկուսացման պայմաններում դրանցից օգտվելու կանոնները: Այդ իրավունքներն են՝ արտաքին աշխարհի հետ

հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, տեսագանգից, գրականությունից և զանգվածային լրատվության միջոցներից, պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի աշխատակիցների միջոցով սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու, դրամական փոխանցումներ, հանձնույթներ ու ծանրոցներ ստանալու և ուղարկելու, ինչպես նաև առանց պահակախմբի կամ առանց ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու, քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս մեկնումների իրավունքը և այլն:

Դատապարտյալների հատուկ իրավունքները որոշակիացվում են ՀՀ ՔԿՕ-ի առանձին պատիժների կատարումը կարգավորող գլուխներում, իսկ դրանց իրականացման կարգն ու պայմանները՝ պատիժների կրման կարգի վերաբերյալ իրավական այլ ակտերում, մասնավորապես Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգում:

ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի մասնակցելու քաղաքացիաիրավական գործարքների: Կալանավորված անձանց և դատապարտյալների քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու կարգը նախատեսված է Քրեակատարողական հիմնարկների Ներքին կանոնակարգով: Կալանավորված անձը կամ դատապարտյալը շարունակում է մնալ քաղաքացիաիրավական հարաբերությունների լիիրավ սուբյեկտ: Գործարք կնքելու համար նրանք կարող են գրավոր դիմում ներկայացնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմին:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կալանավորված անձի կողմից քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու ցանկության մասին հայտնում է քրեական վարույթն

իրականացնող մարմնին: Վերջինս, քննության շահերից ելնելով, կալանավորված անձանց կարող է արգելել քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը՝ օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:

Կալանավորված անձը կամ դատապարտյալն իրավունք ունի իր ներկայացուցչի միջոցով կամ անձամբ մասնակցելու քաղաքացիաիրավական գործարքների, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Եթե կալանավորված անձը կամ դատապարտյալը ցանկություն է հայտնել քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցել իր ներկայացուցչի միջոցով, ապա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համապատասխան լիազորագիր տալ իր ներկայացուցչին, որը հաստատվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ ստորագրությամբ և զինանշանի պատկերմամբ կնիքով: Դատապարտյալի ներկայացուցիչը կարող է ներկայացնել դատապարտյալի շահերը ցանկացած պարագայում: Եթե անձը ցանկություն է հայտնել անձամբ մասնակցել քաղաքացիաիրավական գործարքներին, ապա կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հնարավորություն է ընձեռում կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում գործարքի մեջ մատնանշված կողմերի ներկայությունն ապահովելու համար: Եթե գործարքի կնքման համար նոտարական ձևակերպումը պարտադիր է, ապա քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ապահովում է նաև նոտարի մասնակցությունը: Քաղաքացիաիրավական գործարքի կնքման համար քրեակատարողական հիմնարկում կարող է տրամադրվել տեսակցությունների համար նախատեսված սենյակը:

Քաղաքացիաիրավական գործարքին մասնակցելու և դրա կնքման հետ կապված ծախսերն իրականացվում են կալանա-

վորված անձի կամ դատապարտյալի կամ նրանց կողմից մատնանշված անձի կողմից, և դրա համար քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պատասխանատվություն չի կրում:

Դատապարտյալների նկատմամբ կարող են կիրառվել քաղաքացիական, ընտանեկան և իրավունքի մի շարք այլ ճյուղերի նորմերը: Դատապարտյալի իրավունքը գույքի ժառանգման կամ տնօրինման, որը գտնվում է պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների սահմաններից դուրս, իրականացվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Օրինական ներկայացուցիչների միջոցով դատապարտյալները կարող են մասնակցել գույքային իրավահարաբերություններում (առուծախ, նվիրատվության, գրավի և այլ պայմանագրերում), կարող են սեփականության իրավունքով ունենալ անշարժ գույք, անձնական սեփականություն հանդիսացող այլ գույք: Դատապարտյալը մինչև ձերբակալումը կնքված գործարքների սուբյեկտ է և կրում է դրանով սահմանված համապատասխան պարտականությունները:

Կալանավորված անձի կամ դատապարտյալի ամուսնության գրանցման կարգը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմինը: Ամուսնության գրանցումից հետո կալանավորված անձին տրվում է տեսակցություն, իսկ դատապարտյալին՝ երկարատև տեսակցություն:

Քրեական պատիժների դատապարտված անձանց իրավունքների շարքում անհրաժեշտ է նշել նաև քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված հետևյալ իրավունքները՝ հանգստի, այդ թվում՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության և ութամյա գիշերային քնի, իր անվամբ և ազգանվամբ կոչվելու, օրենքով նախատեսված կրթություն ստանալու, նույնականացման քարտ ստանալու՝ «Նույնականացման քարտերի մասին» սահմանված կարգով:

ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի նաև անձնական ընդունելության խնդրանքով դիմելու պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի ղեկավարին, այդ հիմնարկի կամ մարմնի գործունեության նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմիններ:

ՀՀ ՔԿՕ-ի 10-րդ հոդվածի երկրորդ մասը նախատեսում է նաև, որ դատապարտյալին կարող են վերապահվել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

Դատապարտյալի օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները կարող են տարբերակվել՝ հիմք ընդունելով եզրափակիչ դատական ակտով նշանակված պատիժը, պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի տեսակը և սահմանված Ներքին կանոնակարգը, ինչպես նաև դատապարտյալի նկատմամբ կիրառված խրախուսանքի և տույժի միջոցները:

ԳԼՈՒԽ 4

ՊԱՏԻՓՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ: ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

1. Քրեական պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների տեսակներն ու խնդիրները

Քրեական պատիժների կատարումը համարվում է բացառապես պետության գործառույթ, որի նպատակով ստեղծվում են պետական մասնագիտացված հիմնարկներ և մարմիններ, որոնց ողջ գործունեությունն ուղղված է պատժի նպատակների իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարությունը, մասնավորապես այդ համակարգում գործող քրեակատարողական ծառայությունը, որի կենտրոնական մարմինը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունն է, ղեկավարում և կազմակերպում է քրեակատարողական հիմնարկների գործունեությունը, արձակում է հրամաններ, կայացնում որոշումներ, լուծում քրեակատարողական համակարգի գործունեության կազմակերպական բնույթի և այլ հարցեր: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունն իր կառուցվածքային ստորաբաժանումների և քրեակատարողական հիմնարկների միջոցով ապահովում է քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրների իրականացումը: Քրեակատարողական ծառայության հիմնական խնդիրները նախատեսված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով: Այդպիսիք են համարվում՝ ՀՀ քր.օր. նա-

խատեսված, դատարանի նշանակած պատիժները (ազատություն-
նից զրկելու հետ կապված) կատարելը, անձանց կալանքի տակ
պահելը, քրեակատարողական հիմնարկների պահպանությունը,
ազատությունից զրկելու ձևով պատիժ կրող դատապարտյալնե-
րին և կալանավորվածներին փոխադրելը, կալանավորվածների և
դատապարտյալների՝ իրենց իրավունքներից և ազատություննե-
րից օգտվելու երաշխիքներ ապահովելը, քրեակատարողական
հիմնարկներում պահվող անձանց, այդ հիմնարկների անձնա-
կազմերի և այնտեղ գտնվող այլ անձանց անվտանգությունն
ապահովելը, այդ հիմնարկների ու մարմինների նյութատեխնի-
կական և սոցիալական պայմանների զարգացում ապահովելը,
կալանավորվածների և դատապարտյալների զբաղվածությունն
ապահովելը, քրեակատարողական հիմնարկների տարածքում
կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով դեպ-
քի վայրը պահպանելը և այլն: Քրեակատարողական ծառայու-
թյունն իրականացնում է նաև օրենքով նախատեսված այլ խնդիր-
ներ:

Պրոբացիայի ծառայությունը՝ որպես պետական ծառայու-
թյան ինքնուրույն տեսակ ՀՀ «Պրոբացիայի մասին» օրենքի 4-րդ
հոդվածով սահմանված կարգով ապահովում է պրոբացիայի²³

²³ **Պրոբացիա** – պրոբացիայի շահառուի սոցիալական վերաինտեգրման, ինչպես նաև հասարակության անվտանգության ապահովման նպատակով պրոբացիայի շահառուի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառ-
ված այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու
հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների, պատիժը պայ-
մանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազա-
տելու հետևանքով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու,
պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարում ու
վերասոցիալականացման իրականացում հասարակությունում՝ անձի
նկատմամբ հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու մի-
ջոցով: **Պրոբացիայի շահառու** – անձ, ում նկատմամբ կիրառվել է այլընտ-
րանքային խափանման միջոց կամ նշանակվել ազատությունից զրկելու

նպատակները.

1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.

2) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.

3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

4) պրոբացիայի շահառուին և տուժողին (տուժողի իրավահաջորդին) հաշտեցնելը.

5) քրեական արդարադատության իրականացման աջակցությունը:

ՀՀ ՔԿՕ-ն պատիժ կատարող հիմնարկներին և մարմիններին վերաբերող այս կարևորագույն խնդիրը կարգավորում է նորովի. հատուկ նորմով սահմանում է առանձին պատիժները և այն կատարող մարմիններն ու հիմնարկները: Այսպես, ՀՀ ՔԿՕ 13-րդ հոդվածը սահմանում է.

1. Տուգանքի, հանրային աշխատանքների, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու

հետ չկապված պատիժ կամ անվտանգության միջոց, կամ նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ նրան պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում նշանակվել է փորձաշրջան, կամ նա պատիժը կրելուց ազատվել է, կամ նրա պատժի կրումը հետաձգվել է:

իրավունքից զրկելու, ազատության սահմանափակման կատարումն ապահովում է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը:

2. Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու կատարումն ապահովում է պրոբացիայի ծառայությունը՝ ՀՀ ոստիկանության աջակցությամբ:

3. Զինվորական ծառայության մեջ սահմանափակումն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարությունը:

4. Կարճաժամկետ ազատազրկման կատարումն ապահովում է քրեակատարողական հիմնարկը: Դատապարտված զինծառայողների նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման կատարումն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող կայազորային կարգապահական մեկուսարանը:

5. Կարգապահական գումարտակում պահելու կատարումն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող կարգապահական գումարտակը:

6. Ազատազրկման և ցմահ ազատազրկման կատարումն ապահովում է քրեակատարողական հիմնարկը:

7. Լրացուցիչ պատժի կատարումն ապահովում է հիմնական պատիժ կատարող մարմինը կամ հիմնարկը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Այլ պատժատեսակների կատարման համար հատուկ մասնագիտացված հիմնարկներ չեն ստեղծվում: Պատժի կատարման գործառույթը դրանց համար լրացուցիչ է: Այսպես՝ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը պատժատեսակի կատարումն ապահովում է հիմնական պատիժը կատարող մարմինը կամ հիմնարկը: Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական

պարզևից գրկելու մասին եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, հիմնական պատիժ կատարող հիմնարկը կամ մարմինը եզրափակիչ դատական ակտի պատճենն ուղարկում է այդ կոչումը, կարգը, աստիճանը, որակավորման դասը կամ պետական պարգևը շնորհած մարմին կամ պաշտոնատար անձին՝ համապատասխան գործողություններ կատարելու նպատակով (ՀՀ ՔԿՕ, 24-րդ հոդված):

Այսպիսով՝ քրեական օրենսդրությամբ նախատեսված քրեական պատիժների կատարումն իրականացվում է ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարությունների համակարգի մասնագիտացված պետական մարմիններում կամ հիմնարկներում: Բացի այդ, քրեակատարողական օրենսդրությունում հստակ սահմանազատվում են պատիժների կատարման և դատարանի որոշման պահանջների կատարման գործառնությունները: Վերջինս վերապահված է պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների վարչակազմերին և քրեակատարողական իրավահարաբերությունների այլ մասնակիցներին՝ տարբեր պատժատեսակների դատապարտված անձանց նկատմամբ:

2. Քրեական պատժի նպատակները

Քրեական պատժի նպատակները որոշում են պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների խնդիրների հիմնական ուղղությունները: Պատժի նպատակներն այն փաստական արդյունքն են, որին ձգտում է պետությունը՝ դատապարտելով հանցագործին և կիրառելով նրա նկատմամբ այս կամ այն քրեական պատիժը: Պատժի նպատակների սահմանումը քրեական իրավունքի պատմության և ժամանակակից տեսության առավել սկզբունքային ու վիճելի խնդիրներից է: Պատժի նպատակների

հիմնախնդիրը ոչ միայն և ոչ այնքան իրավաբանական, որքան փիլիսոփայական է, որը դարերի ընթացքում (հնագույն ժամանակներից մինչև անգլիական և ֆրանսիական հեղափոխությունները) զբաղեցրել է ժամանակի խոշորագույն փիլիսոփաների միտքը: Դեռևս XIX դարում այս խնդրին նվիրված էին փիլիսոփայական 24 ինքնուրույն համակարգեր և ավելի քան 100 իրավաբանական հայեցակարգեր²⁴: XX դարում գիտական միտքն այս խնդրի շուրջ նոր զարգացում ապրեց, և շարունակվում է այժմ՝ XXI-րդ դարում:

Պատժի նպատակների վերաբերյալ տեսությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական ուղղությունների: Առաջին՝ պատժի բացարձակ տեսություններ, որոնք պատժի նպատակը համարում են անցյալին ուղղված բացարձակ գաղափար՝ հատուցում կատարված ոսնձգության և հանցագործի պատճառած չարիքի համար (հատուցման տեսություն): Երկրորդ՝ պատժի հարաբերական տեսություններ, որոնք ուղղված են ապագային, և պատիժն ընդունում են ոչ միայն որպես հանցավոր արարքից բխող, այլև դրանով պայմանավորված, պետության կողմից իրականացվող նպատակամղված գործունեություն (օգտակարության տեսություն) դատապարտյալի վերառցիալականացման ուղղությամբ: Այս երկու հիմնական ուղղություններից, մասնավորապես երկրորդից, բխում են նաև այլ՝ ընդհանուր կանխման, հատուկ կանխման և խառը տեսությունները:

Հատուցման տեսությունը դարեր շարունակ ամենատարածվածն էր փիլիսոփայության մեջ: Հին Հունաստանում պատժի հատուցման գաղափարը պաշտպանում էին այնպիսի փիլիսոփաներ, ինչպիսիք էին Պյութագորասը և Արիստոտելը (կյանքի վերջին տարիներին նա փոխեց իր հայացքները): Միջնադարում այս

²⁴ См. у Курс уголовного права. Общая часть. Т. 2. Учение о наказании. Под ред. Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой. М., 2018, էջ 13

գաղափարն էր զարգացնում իտալացի ուտոպիստ Թ. Կամպանելան: Նա կողմնակից էր հանցագործության և պատժի համապատասխանության, թալիոնի՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքին:

Պատժի հատուցման տեսությունն առավել զարգացում ապրեց գերմանացի փիլիսոփաներ Կանտի և Հեգելի աշխատություններում, որոնք յուրովի հիմնավորեցին այն: Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Կանտը (1724-1804 թթ.) քրեական իրավունքը սահմանում էր որպես պատժի իրավունք և այն դիտում որպես հանցագործին գրկանքների պատճառում: Նա նույնպես կողմնակից էր թալիոնի սկզբունքին. չարիքը պահանջում է հատուցում չարիքով, և միայն հավասարության սկզբունքով հատուցումը կարող է որոշել պատժի տեսակն ու ծավալը:

Հեգելը (1770-1831 թթ.) նույնպես պատիժը հիմնավորում էր որպես հանցագործության համար հատուցում: Նա գտնում էր, որ պատիժը կարող է կիրառվել միայն մարդու հանրորեն վտանգավոր գործունեության արտաքին կողմի նկատմամբ և չի կարող առնչվել նրա գիտակցությանը: Պատիժը հատուցում է, բայց ոչ համարժեք հանցագործությանը պատճառված և հանցագործին պատժելով պատճառված վնասների միջև: Պատժի հատուցման հեգելյան ձևակերպումը տարբերվում է իր նախորդներից նրանով, որ Հեգելը խոսում էր ոչ թե լիարժեք հատուցման, այլ հանցագործի կողմից խախտված իրավունքների վերականգնման մասին:

Պատժի հատուցման տեսության կողմնակիցների հետ զուգահեռ՝ դեռևս հնագույն ժամանակներում որոշ գիտնականներ պատժի նպատակների շարքում բավարար չէին համարում միայն հատուցման ընկալումը և պատիժը կապում էին հասարակության համար ավելի օգտակար, գործնական նպատակների հետ: Նման գաղափարներով առաջին անգամ հանդես եկավ հին

հունական փիլիսոփա Պրոտագորասը (մ.թ.ա. 5-րդ դար): Ըստ նրա՝ «...իրավունքը խախտողին ոչ ոք չի պատժում իրավունքը խախտելու համար, այդպես կարող են վարվել միայն կենդանակերպ մարդիկ, ովքեր անգիտակցաբար վրեժ են լուծում: Խելամտորեն են գործում նրանք, ովքեր պատժում են ոչ թե կատարված հանցանքի համար (քանի որ կատարվածը չես վերականգնի), այլ որպեսզի ապագայում ոչ ոք իրավունքը չխախտի՝ թե՛ նա, ով կատարել է հանցանքը, թե՛ նա, ով տեսել է մեղավորին պատժված,... պատժում են ահաբեկելու համար»²⁵: Պրոտագորասն առանձնացնում էր նաև մեղավորների ուղղման և անուղղելի հանցագործների վնասագերծման նպատակները:

Հույն փիլիսոփա Պլատոնը (մ.թ.ա. 5-4-րդ դդ.) կյանքի վերջին տարիներին պատժի նպատակը նույնպես համարում էր ահաբեկումը և հանցագործների ուղղումը, չնայած երիտասարդ հասակում այլ կարծիքի էր և գտնում էր, որ պատժի նպատակը «հանցագործությամբ արատավորված հոգու մաքրումն է»²⁶:

Հույն փիլիսոփա Արիստոտելը, պատիժը հատուցում համարելով, ավելի ուշ շրջանում տարբերություն էր մտցնում պատժի և վրեժի (հատուցման) միջև: Նա վրեժը համարում էր զայրույթի և ցասման արդյունք: Զայրույթի պահին պատժելը անիմաստ է. պատիժ պետք է կիրառել մեղավորին ուղղելու և հանցագործությունները կանխելու համար²⁷:

Պատժի հատուցման գաղափարի դեմ նոր շրջանում հանդես եկան հոլանդացի իրավաբան, միջազգային իրավունքի գիտության հիմնադիր Հ. Հրոցհիուսը (1583-1645 թթ.) և անգլիացի գիտնական Թ. Հոբսը (1588-1679 թթ.): Նրանք պատժի նպատակները

²⁵ Մեջբերումն ըստ **Шаргородский М.Д.** Наказание по уголовному праву эксплуататорского общества. М., 1957, էջ 35:

²⁶ Տե՛ս **Платон.** Законы. Т. 14. П., 1923, էջ 838:

²⁷ Տե՛ս **Аристотель.** Риторика. СПб., 1994, էջ 76:

տեսնում էին ոչ թե հատուցման, այլ ահաբեկման և հանցագործների ու այլ անձանց ուղղման մեջ:

Պատժի ընդհանուր տեսության համար վճռական նշանակություն են ունեցել իտալացի լուսավորիչ-մարդասեր Զ. Բեկկարիայի (1738-1794 թթ.) հայացքները: Նա, մերժելով հատուցման գաղափարը, պատժին վերապահում էր օգտակար և կիրառական նպատակներ: Բեկկարիան պատժի նպատակն էր համարում «հանցագործի համար խոչընդոտների ստեղծումը, որպեսզի նա, ինչպես նաև այլ անձինք, հասարակությանը նոր վնաս չպատճառեն: Այդ նպատակով պետք է կիրառել այնպիսի պատիժ, որը համապատասխանի հանցագործությանը, հանցագործի համար լինի նվազ տանջալից, բայց նրա հոգեկանի վրա ունենա մեծ ազդեցություն»²⁸: Բեկկարիան ձևակերպեց մի սկզբունք, որը բավականին մեծ ազդեցություն ունեցավ քրեական իրավունքի հետագա զարգացման վրա. «Արդյունավետ է ոչ թե պատժի խստությունը, այլ նրա անխուսափելիությունը»²⁹: Այս սկզբունքն այժմ նույնքան արդիական է, որքան ավելի քան երկու հարյուր տարի առաջ:

Բեկկարիայի գաղափարներն առավել հետևողականորեն զարգացրեց գերմանացի քրեագետ Ա. Ֆոյերբախը (1775-1833 թթ.)՝ ստեղծելով քրեաիրավական տեսություն ինքնուրույն: Նա պատժի նպատակ էր համարում հանցագործությունների կանխումը, բայց այն կապում էր ահաբեկման հետ՝ նշելով, որ քրեական օրենքում տեղ գտած պատժի սպառնալիքը պետք է ազդի պոտենցիալ հանցագործի վրա, ահաբեկի նրան և դրանով իսկ կանխի հանցագործությունը: Նա առավել մեծ նշանակություն էր տալիս ոչ թե կոնկրետ անձի նկատմամբ պատժի գործնական կիրառմանը, այլ պատժի սպառնալիքով հանցագործի ահաբեկմա-

²⁸ Տե՛ս **Беккария Ч.** О преступлениях и наказаниях. М., 1995, էջ 105-106:

²⁹ Տե՛ս Նույն տեղում, էջ 162:

նը: Փաստորեն, Ֆոյերբախը որպէս պատժի նպատակ առաջնա-
յին էր համարում ընդհանուր կանխումը:

Պատժի գործնական նպատակների նշանակությունը հիմնա-
վորող փիլիսոփայական հայեցակետերի ընդհանրացումն ավար-
տենք անգլիացի գիտնական Ի. Բենտամի (1748-1832 թթ.) հա-
յացքները ներկայացնելով: Բենտամն առաջ էր քաշում պատիժ
չկիրառելու երեք հիմնական պայմաններ: Առաջին՝ պատիժ չի
կարող կիրառվել, եթե դրանով չի փոխհատուցվում հանցագոր-
ծությամբ պատճառված վնասը, երկրորդ՝ կիրառվող պատժի
ծախսերը պետության համար չեն կարող լինել ավելի թանկ, քան
հանցագործությամբ պատճառված վնասը, և երրորդ՝ եթե վնասը
կարող է հատուցվել ավելի արդյունավետ եղանակով: Ուստի
Բենտամը կողմնակից էր այնպիսի պատիժների, որոնք պետութ-
յունից մեծ ծախսեր չէին պահանջում³⁰:

Հին և միջնադարյան հայ իրավունքի հուշարձաններում, այդ
թվում Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ)
Դատաստանագրքերում նույնպէս ազդարարվում է, որ կիրառ-
վող քրեական պատիժը հետապնդում է որոշակի նպատակներ:
Թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ Սպարապետը պատժի նպա-
տակը տեսնում էին հանցավոր արարքներից հասարակությանը
պաշտպանելու մեջ: Նրանց համոզմամբ պատիժը պետք է հե-
տապնդի ոչ միայն պատիժ-հատուցման մերկ նպատակ (թալիո-
նի սկզբունքով), այլև մարդկանց կրոնաբարոյական իմաստով
ուղղելու նպատակ: Նրանք գտնում էին, որ պատիժները, հատ-
կապես մարմնական, հանցագործին ուղղելու, ահաբեկելու և հա-
տուցելու նպատակ ունեն: Ընդ որում, հատուցումը և ահաբեկու-
մը կիրառում է պետությունը, իսկ ուղղումը՝ գլխավորապէս եկե-
ղեցին: Հանցագործը պատժվում է այն պատճառով, որ նա խախ-

³⁰ См. у **Бентам И.** Избранные сочинения. Т. 1. СПб., 1867, էջ 167-173:

տել է օրենքը, իսկ նրա նկատմամբ նշանակված պատիժը պետք է օրինակ ծառայի ուրիշներին, նախագգուշացում լինի նրանց համար: Նրանք դեմ էին նաև պատիժների կիրառման դաժան, մարդու արժանապատվությունը վիրավորող մեթոդներին:

Ընդհանրացնելով պատժի վերը շարադրված կիրառական նպատակները՝ սկզբունքորեն դրանք կարելի է նույնացնել հանցագործի վերասոցիալականացման և հանցագործությունների կանխման նպատակների հետ:

Պատժի նպատակների և խնդիրների հարցը տասնամյակներ շարունակ քննարկվել է խորհրդային շրջանի իրավաբանական գրականության մեջ և եղել է քրեագետ իրավաբանների ուշադրության կենտրոնում: Այս հարցի կապակցությամբ գիտնականների մոտ վեճի առարկան հանգում էր հետևյալին. հատուցումը համարե՞լ պատժի նպատակ, թե՞ ոչ:

Հատուցման՝ որպես քրեական պատժի նպատակի կողմնակիցները (Ն.Ա. Բեյլան, Վ.Գ. Մմիժնով, Ի.Ի. Կարպեց, Բ.Ս. Ուտեսկի, Պ.Պ. Օսիպով և այլք) պնդում էին, որ պատիժ նշանակվում է ոչ միայն արդեն կատարվածի, այլև հետագա հանցագործությունները կանխելու համար: Հանցագործի նկատմամբ նշանակվում է պատիժ, որը որոշակի իմաստով կատարվածի համար հատուցում է այն պարզ պատճառով, որ հատուցումը վերջին հաշվով պատժի բաղկացուցիչ մասն է: Բացի այդ, դրանում հաճախ շահագրգռված է տուժող կողմը:

Նման մոտեցման հակառակորդները (Ա.Ա. Գերցենզոն, Ա.Ա. Պիոնտկովսկի, Ա.Լ. Ռեմենսոն, Մ.Դ. Շարգորոդսկի և այլք) իրենց հերթին պնդում էին, որ հատուցումը պատժի էությունն է և ոչ երբեք նրա նպատակը: Պատժի վերջնական նպատակը միայն և բացառապես հանցագործությունների կանխումն է (պրևենցիան):

ՀՀ 1961թ. քրեական օրենսգրքում սահմանվում էր. «Պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության հա-

մար, այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերադաստիարակել աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել նոր հանցագործությունների կատարումն ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից» (ՀՀ 1961թ. քր. օր.-ի հոդված 20): Այս ձևակերպումը, մեր կարծիքով, անընդունելի է հետևյալ նկատառումներով: Նախ՝ անորոշ է «մեղքի քավում» արտահայտությունը. այն պե՞տք է համարել պատժի նպատակ, ինչպես ենթադրվում է հոդվածի վերնագրից, թե՞ ոչ: Երկրորդ՝ քննադատության են արժանի պատժի քաղաքականացված և բարոյականացված այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝ «աշխատանքին ազնվորեն վերաբերվելը», «օրենքները ճշտորեն կատարելը» և այլն: Երրորդ՝ պատժի նպատակների պահանջների ոչ իրատեսական ուռճացումը: Կարելի է պնդել, որ նույնիսկ դրանց տառացիորեն հետևելու դեպքում ոչ մի դատապարտյալի նկատմամբ չեն կարող իրականանալ քրեական օրենքով նախատեսված նպատակները, և այդ պատճառով նա պետք է ցմահ պատիժ կրի: Չորրորդ՝ «ուղղում» և «վերադաստիարակում» արտահայտությունները ծնում են վեճեր դրանց բովանդակության վերաբերյալ:

Պատժի ենթարկված անձանց (դատապարտյալների) ուղղումը քրեակատարողական իրավունքի գիտության հասկացություն է և ամրագրված էր 2004թ. ՀՀ քրեակատարողական օրենքում (ՀՀ նոր՝ 2022թ. քրեակատարողական օրենսգրքում այն, բնականաբար, չի սահմանվել): Ուղղումը որպես կրիմինալոգիական ինստիտուտ, մարդու, հասարակության, աշխատանքի, համակեցության նորմերի և ավանդույթների նկատմամբ դատապարտյալների մոտ հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև իրավահպատակ վարքագծի խթանումը:

Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքերի, քրեա-

կան նոր օրենսգրքում չի սահմանվում ուղղման նպատակ, կապված վերադաստիարակման հետ, քանի որ հասարակության համար առաջնայինը պատժի կրումից հետո հանցագործին ազնիվ քաղաքացի տեսնելն է, որն այլևս ընդունակ չէ հանցագործության: Վերադաստիարակումը ենթադրում է բարոյական դաստիարակություն, որը բազմաբովանդակ և երկարատև գործընթաց է: Հաճախ մարդուն «դաստիարակում են» ամբողջ կյանքի ընթացքում, բայց նա հակում ունի միայն դեպի կողմնակի բացասական ազդեցությունը և վերածվում բարոյագուրկ անձնավորության կամ նույնիսկ՝ հանցագործի: Բնական է, որ նման անձն ի վիճակի չէ երեք կամ հինգ տարում բարոյապես վերադաստիարակվել, հետևաբար անիրական և անիմաստ է նման բան սպասել դատապարտյալից: Պատժի կրումից հետո նա կարող է դեռ վերափոխվել, իսկ թե ինչի շնորհիվ (պատժի սպառնալիքի ազդեցությամբ, թե՞ իր բարոյականության ուժով), մեր կարծիքով, էական չէ:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի երկրորդ մասը նորովի է սահմանում պատժի նպատակները: Այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները: Պատժի նպատակների նման ձևակերպմամբ իրացվում է քրեական իրավունքի սահմանադրական և առաջին հերթին՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը (ՀՀ քր. օր., հոդված 7):

Միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (ՀՀ Սահմանադրություն, 26-րդ հոդված): Իհարկե, քրեական պատիժն իր էությամբ օբյեկտիվորեն կարող է պատճառել նաև ֆիզիկական կամ բարոյական գրկանքներ, բայց դրանք չեն կարող համարվել պատժի նպատակ:

Պատժի նպատակների մեջ օրենսդիրն առաջինը սահմանում է **սոցիալական արդարության վերականգնումը**: Արդարությունը գնահատվում է որպես բարոյաիրավական և սոցիալ-քաղաքական ընկալում չարի և բարու, մարդկանց (սոցիալական խմբերի, առանձին անհատների) դերի և նրանց սոցիալական դրության, իրավունքների և պարտականությունների, կատարված արարքի և հատուցման հարաբերակցության մասին: Որպես վերջինիս մասնավոր դեպք կարելի է համարել հանցագործության և պատժի հարաբերակցությունը: Վերը թվարկված հասկացությունների անհամապատասխանությունը համարվում է անարդարություն, իսկ համապատասխանությունը՝ արդարություն: Բայց արդարությունը բազմաբովանդակ հասկացություն է, և պատժի նպատակի դերում դրան անպայման պետք է տրվի իրավաբանական գնահատական: Օրենքը, այդ թվում քրեական, բովանդակում է մարդու որոշակի իրավունքներ և պարտականություններ, որոնք չպահպանելը միշտ դիտվում է որպես արդարության խախտում: Այդ իմաստով քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի միջև առկա տարբերությունը հանգում է հետևյալին. հանցագործությունը, որի համար պատասխանատվությունը նախատեսված է քրեաիրավական նորմերով, համարվում է մեծագույն անարդարություն, արդարության բացառման բարձրագույն աստիճան, որը կարող է դրսևորվել, օրինակ՝ սպանություններով, մարմնական վնասվածքներ պատճառելով, ավազակային հարձակումներով և այլն: Պատիժն այս պարագայում դառնում է սոցիալական արդարության վերականգնման քրեաիրավական յուրօրինակ միջոց: Քրեաիրավական սանկցիայի «վերականգնողական» բնույթը սերտորեն կապված է հանցագործությամբ խախտված իրավունքների և ազատությունների առանձնահատկությունների հետ: Ուղղակի վերականգնողական բնույթ ունեն գույքային քրեաիրավական սանկցիաները (օրինակ՝ տուգանք): Բնական է, որ հան-

ցագործությամբ պատճառված ամեն մի վնաս ենթակա չէ համարժեք վերականգնման: Այսպես, ակնհայտ է, որ ոչ մի պատիժ չի կարող վերականգնել տուժողի կյանքը սպանության դեպքում կամ հանցագործությամբ առողջությանը պատճառված վնասը: Բայց, այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ այս հանցագործությունների դեպքում պատժի սոցիալական արդարության վերականգնման նպատակն անիրագործելի է: Սոցիալական արդարությունը նման պարագայում վերականգնվում է հանցագործի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ (օրինակ՝ երկարաժամկետ ազատազրկման դատապարտելը և պատժի բովանդակությանը համապատասխան խիստ պայմաններ ստեղծելը, բարոյական, ֆիզիկական զրկանքները և այլն): Այսպիսով՝ պատժի բովանդակությունն այս դեպքում սոցիալական արդարության վերականգնման քրեաիրավական ինքնուրույն միջոց է:

Պատժի՝ սոցիալական արդարությունը վերականգնելու նպատակը բխում է ՀՀ քր. օր. 7-րդ հոդվածի բովանդակությունից. հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը:

Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է ու բավարար պատժի նպատակների իրականացման համար:

Սոցիալական արդարության վերականգնումը որպես պատժի նպատակ, ենթադրում է անձին, հասարակությանը, պետությո-

յանը հանցագործությամբ պատճառված վնասի՝ պատժի միջոցով հնարավորինս հատուցում, հանցագործության վտանգավորության և պատժի համապատասխանություն, միևնույն հանցագործության համար կրկին պատժելու բացառում և ֆիզիկական տանջանքներ պատճառելու կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնելու անթույլատրելիություն:

Պատժելով հանցագործին և վերականգնելով վերջինիս կողմից խախտված սոցիալական արդարությունը՝ պետությունը միաժամանակ պաշտպանում է քրեական օրենքի հեղինակությունը և ձևավորում հարգանք նրա նկատմամբ: Դատապարտյալին պատժելու միջոցով սոցիալական արդարության վերականգնումն իրականացվում է ինչպես հասարակության, այնպես էլ տուժողի համար: Սոցիալական արդարությունը հասարակությունում վերականգնվում է հնարավորինս. պետությունը վերականգնում է հասցված վնասը, իսկ քաղաքացիները համոզվում են, որ պետական մարմիններն ի վիճակի են պատժել հանցագործին: Տուժողի նկատմամբ սոցիալական արդարությունը վերականգնվում է հանցագործությամբ խախտված նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ:

Պատժի հաջորդ նպատակը, ըստ ՀՀ քր. օր.-ի, ***դատապարտյալի վերասոցիալականացումն*** է: Դատապարտյալը պատժի կրման ընթացքում ենթարկվում է որոշակի լուրջ փոփոխությունների, որի արդյունքում նրա համար առաջնային նշանակություն են ստանում անհատական արժեքները և ոչ համընդհանուր, իսկ անձի սոցիալական էությունը բովանդակող արժեքները մղվում են երկրորդ պլան: Այս փաստը հիմնավորվում է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական գիտնականների բազմաթիվ հետազոտություններում:

Պատժի կրումից հետո դատապարտյալը վերադառնում է հասարակություն և պարտավոր է պահպանել այդտեղ գործող

օրենքները, բայց որոշակի հանգամանքների ուժով միշտ չէ, որ այն իրագործելի է, քանի որ նրա մոտ արգելակված է սոցիալական հարմարվողականությունը:

Ազատագրելու՝ պատժատեսակը կրելուց հետո անցումն ազատության մեջ կյանքի նորմերին այնքան էլ դյուրին գործընթաց չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Այն իրավագիտության մեջ անվանվում է *«վերասոցիալականացում»*, որը խիստ բարդ և տարողունակ երևույթ է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Այս հասկացությունը լայնորեն կիրառվում է այնպիսի գիտություններում, ինչպիսիք են՝ կրիմինալոգիան, քրեական և քրեակատարողական իրավունքները, սոցիոլոգիան, հոգեբանությունը և այլն: Այսպես, կրիմինոլոգիական գրականությունում *«վերասոցիալականացում»* արտահայտությունը կիրառվում է նեղ և լայն առումներով:

Նեղ առումով այն քրեական պատիժը կրելուց հետո՝ հետպատժական ժամանակաշրջանում, իրականացվող սոցիալական գործընթաց է, երբ իրացվում են անձի որակական փոփոխություններ, հայացքների վերախմաստավորում, որն արտահայտվում է իրավահպատակ վարքագծում:

Լայն առումով վերասոցիալականացումը փաստացի սկսվում է դատապարտյալի ազատագրվման վայր հայտնվելու առաջին օրվանից և շարունակվում պատժի կրման ամբողջ ժամկետի ընթացքում, իսկ պատժի կրման վերջին շրջանում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում է ավելի ինտենսիվ: Անհրաժեշտ է չանտեսել նաև, որ դատապարտյալներին կարող է տրամադրվել հոգեբանական օգնություն, ընդ որում ոչ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, այլ ուրիշների կողմից:

Իրավաբանական գրականության մեջ վերասոցիալականացում հասկացության ոչ միանշանակ ընկալումը դրսևորում է

երկու տեսակ՝ կամավոր և հարկադիր: Վերասոցիալականացումն իրականացվում է կամավոր, երբ անհատն ունի ինքնուրույն դրական վերաբերմունք տաբեր երևույթների նկատմամբ, վարքը փոխելու ազատ ընտրության իրավունք, օգնության խնդրանքով այլ անձանց դիմելու հնարավորություն և այլն: Հարկադիր վերասոցիալականացման նպատակն անհատի վերափոխումն է այնքանով, որքանով պահանջում են հասարակությունում գոյություն ունեցող համակեցության չափանիշները և սահմանափակումները:

Երբեմն գիտնականները համարժեք են համարում վերասոցիալականացումն ու դատապարտյալների ուղղում հասկացությունները: Կարծում ենք՝ վերասոցիալականացումն ավելի լայն հասկացություն է, իսկ ուղղումը պետք է դիտել որպես վերասոցիալականացման ինքնուրույն փուլ: Կրիմինալոգիական գրականությունում ոչ հաճախ վերասոցիալականացման գործընթացը նույնացնում են նաև սոցիալական հարմարվողականության հետ: Չնայած բազմաթիվ ընդհանրություններին սոցիալական հարմարվողականությունը նույնպես պետք է դիտել որպես վերասոցիալականացման առանձին տարր:

Վերը թվարկված տարրերից զատ՝ վերասոցիալականացումը վարքագծի նորմերի և կանոնների, անհատական արժեքների նոր համակարգ է, որը տարբերվում է սովյալ անհատի մոտ նախկինում ձևավորված արժեքներից: Ուստի վերասոցիալականացումը նոր արժեքների, դերերի, հմտությունների յուրացումն է հասարակական բարոյականությանը չհամապատասխանող նախկին վարքագծի փոխարեն:

Փաստորեն, դատապարտյալի *վերասոցիալականացումը* հոգեբանամանկավարժական, տնտեսական, թերապևտիկ, իրավաբանական, սոցիալական և կազմակերպական միջոցների երկարատև գործընթաց է, որն ուղղված է յուրաքանչյուր դատապարտ-

յալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ունակություններ, հմտություններ և պատրաստակամություն: Բայց դատապարտյալի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով միաժամանակ անհրաժեշտ են նաև պատժի կրման պայմաններին վերաբերող որոշակի պահանջներ: Դրանք պետք է լինեն բավարար, որպեսզի պատժի կրման ընթացքում դատապարտյալը հասարակությունում չկորցնի նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները:

Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման համար կիրառվում են մի շարք միջոցներ, որոնց տակ ընդհանրապես պետք է հասկանալ դաստիարակչական տարատեսակ միջոցառումների ընդարձակ համալիր, այսինքն՝ այն ամենը, ինչ ընդունակ է անձի մեջ ձևավորել դրական հատկանիշներ: ՀՀ ՔԿՕ-ի 20-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ դատապարտյալների վերասոցիալականացման հիմնական միջոցներն են՝

- 1) պատժի կատարման կարգն ապահովելը.
- 2) վերականգնողական ծրագրեր իրականացնելը.
- 3) անչափահասների հետ դաստիարակչական (մանկավարժական) աշխատանքներ իրականացնելը.
- 4) դատապարտյալներին աշխատանքով ապահովելը.
- 5) ընդհանուր, մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալը.
- 6) մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը.
- 7) արտաքին աշխարհի հետ կապն ապահովելը:

Վերասոցիալականացման միջոցները կիրառվում են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը պատժի կրման ընթաց-

քում, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժի ժամկետը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ:

Եզրափակելով հարցի քննարկումը՝ կարելի է վստահաբար պնդել, որ ***պատժի ենթարկվածների վերասոցիալականացումն*** ինքնին բազմաբովանդակ հասկացություն է: Նման բարդ գործընթացի միակ, ճիշտ և անսխալ հասկացության ձևակերպում հնարավոր համարել չենք կարող: Բայց ակնհայտ է, որ ***վերասոցիալականացման*** էության բացահայտման և գիտակցման համար անհրաժեշտ է այս կարևոր գործընթացը մեկնաբանել միայն լայն առումով: Կարող ենք սահմանել ***վերասոցիալականացման*** էության առավել ընդգրկուն հասկացություն. ***վերասոցիալականացումը*** դատապարտյալի գիտակցական վերականգնումն է որպես հասարակության սոցիալականացված, լիիրավ անդամի սոցիալական կարգավիճակում, որն իրականացվում է դատապարտյալի նկատմամբ իրավական, կազմակերպական, հոգեբանամանկավարժական, դաստիարակչական և այլ համալիր միջոցների կիրառմամբ՝ հակաօրինական արարքների կրկնությունը կանխելու նպատակով:

Վերջապես, պատժի երրորդ և, ինչպես նշում են մի շարք գիտնականներ, առավել կարևոր նպատակը ***հանցագործությունների կանխումն է*** (պրևենցիան):

Պատիժը՝ որպես իրավական ինստիտուտ և սոցիալական գործիք, վերջին հաշվով ուղղված է նոր հանցագործությունների կանխմանը: Հանցագործությունների կանխումը քրեական իրավունքի տեսությունում բաժանվում է երկու խմբի՝ մասնավոր կամ հատուկ կանխում (մասնավոր պրևենցիա) և ընդհանուր կանխում (ընդհանուր պրևենցիա): Օրենսդրական ձևակերպումը պատժի նպատակները չի բաժանում մասնավոր ու ընդհանուր

պրնենցիաների, և որի պատճառով այս խնդրի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Պատիժներ նախատեսող քրեական օրենքի առկայությունն ինքնին ունի կանխարգելիչ բնույթ ինչպես պատիժ կրողների համար, այնպես էլ նրանց համար, ովքեր հակված են հանցագործության:

Մասնավոր կանխումը՝ որպես պատժի նպատակ, ենթադրում է հանցանք կատարած անձի նկատմամբ ներգործության այնպիսի միջոցի կիրառում, որի շնորհիվ դատապարտյալը հետագայում ձեռնպահ է մնում նոր հանցագործություններից: Պատժի այս նպատակն իրականացվում է դատապարտյալների համար այնպիսի պայմաններ ստեղծելով, որոնք կբացառեն պատժի կրման ընթացքում դատապարտյալների կողմից նոր հանցագործությունների հնարավորությունը: Եվ իսկապես, բազմաթիվ հանցագործությունների համար մեղավոր ճանաչված և դատապարտված անձանց կողմից քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման ընթացքում նույնատիպ հանցավոր արարքների կատարումը գործնականորեն անհնար է (յուրացում, բռնաբարություն և այլն): Չնայած մի շարք այլ հանցագործություններ, այդ թվում՝ բռնությամբ կատարվող (սպանություն, մարմնական վնասվածքներ հասցնելը, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ և այլն), հնարավոր են նաև ազատագրվում կրելու ընթացքում: Մասնավոր պրնենցիան իրականացվում է ինչպես համապատասխան պատժատեսակի նշանակմամբ, այնպես էլ պատժի կրման ընթացքում քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված քրեակատարողական ներգործության այլ միջոցների (օրինակ՝ խրախուսանքի, տույժի և այլն) կիրառմամբ: Պատժի այս նպատակի իրականացման համար առավել արդյունավետ են պատժի անխուսափելիությունը և պետության կողմից այն ժամանակին կիրառելը, քան պատժի խստությունը:

Թեև բազմաթիվ իրավաբաններ թերահավատորեն են գնա-

հատում մասնավոր կանխման նպատակի իրականացման հնարավորությունը («բանտում ոչ ոք չի ուղղվում»), բայց, այնուամենայնիվ, պրակտիկան և վիճակագրական տվյալներն ապացուցում են հակառակը. այս նպատակը ոչ միայն սկզբունքորեն իրագործելի է, այլև գործնականում իրականացվում է: Վիճակագրությունը վկայում է, որ դատապարտյալների մեծամասնությունը այդուհանդերձ հետագայում հանցավոր արարքներ չի կատարում³¹:

Ի տարբերություն մասնավոր կանխման՝ ընդհանուր կանխումն ուղղված է այլ անձանց կողմից նոր հանցագործությունների կանխմանը: Հանցագործության համար դատապարտվածի նկատմամբ կիրառվող հարկադիր ներգործությունը (պատիժը) կասեցնում է այլ անձանց նմանատիպ հանցավոր ոտնձգությունները: Իրավաբանական գրականության մեջ շարունակում է վիճելի մնալ այն հարցը, թե վերջին հաշվով ո՞ւմ է ուղղված պատժի ընդհանուր պրենենտիվ ներգործությունը: Հեղինակների մի մասի կարծիքով պատժի ընդհանուր պրենենցիան ուղղված է հասարակության փոքրաթիվ հատվածին: Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ քրեական պատիժը պրենենտիվ ներգործություն է ունենում կամ ամբողջ հասարակության, կամ, ծայրահեղ դեպքում, նրա հիմնական մասի վրա: Կարծում ենք, որ երկրորդ տեսակետն ավելի ճիշտ է: Պատժի կանխարգելիչ ներգործությունը, ինչպես ընդունված է քրեաիրավական գրականության մեջ, ձևավորվում է երեք փուլով՝ օրենքի ընդունում, պատժի նշանակում և պատժի կատարում³²:

Քրեական օրենքի ընդունումով օրենսդիրը սահմանում է

³¹ Տե՛ս **Флетчер Дж., Наумов А.В.** Основные концепции современного уголовного права. М., 1998, էջ 103:

³² Տե՛ս **Уголовное право. Общая часть.** Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамова. М., 1998, էջ 320:

համապատասխան վարքագծի անթույլատրելիությունը: Նախատեսվում են պատիժներ այդ արգելքը խախտողների համար, որի սպառնալիքն ուղղված է հասարակության որոշակի տարրերին: Այսպիսով, ընդհանուր կանխման նպատակն իրականացվում է որոշակի խումբ քաղաքացիներին ահաբեկելով, իսկ հասարակության մյուս անդամների մոտ հանցագործություններից խուսափելու ցանկությունն ամրապնդելով: Բացի այդ, հանցագործի նկատմամբ պատժի նշանակումը հոգեբանորեն ներգործում է պոտենցիալ հանցագործի վրա, վկայում է այն մասին, որ օրենքը գործում է, և խախտված արդարությունն անպայմանորեն կվերականգնվի:

Դժվար է համաձայնել այն մտքի հետ, թե նոր քրեական օրենքի ընդունման փաստը, դրա հրապարակումը, արարքի քրեականացումը կամ վերջինիս համար պատժի խստացումը, ինչպես նաև քրեական գործի քննությունը դոմբաց դատական նիստում օրենսդրի կողմից նախատեսված են միայն հասարակության փոքր մաս կազմող քաղաքացիների համար: Կարծում ենք՝ դա վերաբերում է բոլոր քաղաքացիներին: Գործնականում խիստ դժվար է հայտնաբերել քաղաքացիների կայունության և անկայունության սահմանագիծը: Մի՞թե կարելի է մարդու արտաքին վարքագծից դատել նրա հայացքների և սովորույթների մասին: Օրինակ՝ տնտեսական կամ հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ հանդիսացող քաղաքացիները հիմնականում դրականորեն են բնութագրվում և՛ աշխատանքի, և՛ բնակության վայրում:

Պետք է նշել, որ իրավաբանական գրականության մեջ լայն տարածում են գտել ընդհանուր կանխման նպատակը ժխտող տեսակետները: Մասնավորապես, որոշ հեղինակներ փորձում են ապացուցել, որ ժողովրդավարական պետությունում (ի տարբերություն ամբողջատիրական պետության) անիմաստ է պատիժ-

ների կիրառումն այլ անձանց ահաբեկելու համար³³։ Իհարկե, պատժի սոցիալական արդյունավետությունն ընդհանուր առմամբ մշտապես գնահատվում է ոչ բարձր, բայց տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ քաղաքացիների որոշակի մասը այնուամենայնիվ ձեռնպահ է մնում հանցագործություններից միմիայն պատժի սպառնալիքով³⁴։ Վիճակագրությունը վկայում է նաև, որ քրեական արդարադատության ոլորտում հայտնված անձանց զգալի մասը նախկինում չդատապարտված անձինք են, հետևաբար՝ պատժի ընդհանուր կանխման նպատակը ինչպես նախկինում, այնպես էլ ներկա ժամանակաշրջանում խիստ արդիական է։

Քրեական օրենքում ամրագրված պատժի նպատակները, չնայած բովանդակությունների տարբերությանը, փոխկապակցված և փոխհամաձայնեցված են. մեկ նպատակը ենթադրում է մյուսները, իսկ յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին։ Պատժի նպատակներն իրագործելի են պատժի նշանակման և կատարման միասնությամբ։ Պատիժը պետք է լինի արդարացի, արարքի ծանրությանը և հանցագործի հասարակական վտանգավորությանը համապատասխան։ Միայն այդ պարագայում այն կարող է առավելագույնս նպաստել նպատակների իրականացմանը։ Միաժամանակ ոչ պակաս կարևոր է նշանակված պատժի պատշաճ կատարումը։

Եզրափակելով մեկ անգամ ևս նշենք, որ քրեական պատիժը հանցավորության դեմ պայքարի գլխավոր միջոցը չէ։ Պատիժը հանցագործության, հանցավորության և նրա նպատակների հա-

³³ Տե՛ս **Флетчер Дж., Наумов А.В.** նշված աշխ., էջ 104։

³⁴ Վիճակագրական հետազոտությունների մասին մանրամասն տե՛ս Российское уголовное право. Общая часть. Курс лекций. М., 1996, часть 1. Под ред. Наумова А.В.։

րաբերակցության մեջ ունի երկրորդային դեր: Պատժի կատարման արդյունավետությունը (հատկապես ազատագրվում պատժատեսակի համար) հեռու է հասարակության տաժած հույսերից: Հանցավորության դեմ մղվող պայքարում հիմնական դերը պատկանում է պետության կողմից իրականացվող տնտեսական, քաղաքական, կազմակերպչակառավարչական միջոցառումներին: Բայց, այնուամենայնիվ, պատիժը հանցավորության դեմ պայքարի ոչ միայն կարևոր, այլև անհրաժեշտ միջոց է: Պատիժն է կասեցնում հանցավոր ոտնձգությունները, ներգործում հասարակության վրա՝ ստիպելով պատժի սպառնալիքի ներքո չկատարել քրեորեն պատժելի արարքներ: Այս կապակցությամբ քրեական օրենքը պատժի կատարումն առանձնացնում է իբրև պետական հարկադրանքի առավել խիստ տեսակ: Այն նախատեսում է խիստ պատժատեսակներ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, ինչպես նաև չարամիտ հանցագործների համար: Միաժամանակ, քրեական օրենքը բարեհաճ է այն անձանց նկատմամբ, ովքեր զոջացել են հանցագործության համար, հատուցել են պատճառված վնասը, աջակցել են հանցակիցների մերկացմանը:

Պատժի նպատակներից բխում է, որ պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեությունն ուղղված է հետևյալ հիմնական խնդիրների իրականացմանը՝ դատավճռի կատարում՝ քրեակատարողական օրենսդրության պահանջներին համապատասխան, դատապարտյալի վերասոցիալականացման գործընթացի ապահովում, որը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների առաջնային ու առավել բարդ խնդիրն է: Հաջորդ խնդիրը դատապարտյալների նոր հանցագործությունների կանխումն է: Վերջին խնդիրը՝ այլ անձանց կողմից նոր հանցագործությունների կանխումը ապահովում են պատիժներ կատարող հիմնարկները և մարմինները՝ դատապարտյալների նկատ-

մամբ ամբողջ ծավալով և օրենսդրության պահանջներին համապատասխան իրավասահմանափակումներ կիրառելով:

Թվարկված հիմնական խնդիրներից զատ՝ պատիժներ կատարող հիմնարկները և մարմիններն ունեն նաև օժանդակ և ապահովող տարաբնույթ խնդիրներ: Այսպես՝ նման խնդիրներ կարելի է համարել պատիժներ կատարելիս իրավակարգի և օրինականության, դատապարտյալների, պատիժներ կատարող հիմնարկների և այլ մարմինների աշխատակիցների ու այլ անձանց անվտանգության, դատապարտյալների կյանքի, առողջության ապահովումը և այլն:

3. Քրեակատարողական հիմնարկների տեսակները և խնդիրները

ՀՀ ՔԿՕ-ի 56-րդ հոդվածի համաձայն՝ ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձը պատիժը կրում է համապատասխանաբար ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկում: Այս պատժատեսակները կատարող քրեակատարողական հիմնարկները, բնականաբար, գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կատարվում են կարճաժամկետ ազատազրկումը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը, ինչպես նաև կալանք խափանման միջոցը:

Քրեակատարողական հիմնարկներն ազատազրկման կամ ցմահ ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման կամ կալանք խափանման միջոցի կատարման նպատակով ստեղծված, հատուկ մասնագիտացված, կազմակերպական տեսակետից ինքնուրույն պետական հիմնարկներ են, որոնք գործում են

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան: Քրեակատարողական հիմնարկները ստեղծում, վերակազմակերպում և դրանց գործունեությունը դադարեցնում է ՀՀ կառավարությունը: Քրեակատարողական հիմնարկների տեսակները և լրակազմերը սահմանում է ՀՀ արդարադատության նախարարը՝ քրեակատարողական ծառայության պետի ներկայացմամբ (ՀՀ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 7-րդ հոդված):

Քրեակատարողական ծառայության պետը ղեկավարում և հսկում է քրեակատարողական ծառայության գործունեությունը, ապահովում է ՀՀ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի հրամանների և ցուցումների կատարումը, ընդունում է քրեակատարողական ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ և այլն (ՀՀ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդված):

Ազատազրկում պատժատեսակը կատարող քրեակատարողական հիմնարկները ըստ մեկուսացվածության և անվտանգության աստիճանի բաժանվում են անվտանգային երեք գոտիների՝ ցածր, միջին, բարձր: Բացի այդ, ՀՀ ՔԿՕ-ի 57-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ անչափահաս դատապարտյալները պատիժ են կրում անչափահաս դատապարտյալների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում, որտեղ նրանց համար նախատեսվում են պատժի կրման վերականգնողական հատուկ պայմաններ:

Միասին վերցրած՝ վերը թվարկվածները կազմում են քրեակատարողական հիմնարկների համակարգը:

ՀՀ նախկին ՔԿՕ-ն նախատեսում էր քրեակատարողական հիմնարկների հետևյալ տեսակները՝ բաց, կիսաբաց, կիսափակ և փակ: ՀՀ նոր ՔԿՕ-ի 170 հոդվածի անցումային դրույթներում սահմանվում է քրեակատարողական հիմնարկների այս տեսակ-

ներն անվտանգային գոտու տեսակներին համապատասխանեցնելու հետևյալ կարգը՝

1) **բաց** ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են ցածր անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին.

2) **կիսաբաց** ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են միջին անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին.

3) **կիսափակ** ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են միջին անվտանգային գոտու խիստ պայմանների համար նախատեսված պայմաններին.

4) **փակ** ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների պատժի կատարման պայմանները համապատասխանեցվում են բարձր անվտանգային գոտու մեղմ պայմանների համար նախատեսված պայմաններին:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում անվտանգային գոտիների տեսակները և քրեակատարողական հիմնարկների լրակազմերը սահմանելու մասին ՀՀ արդարադատության նախարարի 2022թ.-ի հուլիսի 21-ի հրամանով սահմանվել է քրեակատարողական հիմնարկներում անվտանգային գոտիների տեսակները, լրակազմերը. դրանք դասակարգվել են հետևյալ կերպ.

- 1) «Գորիս» քրեակատարողական հիմնարկ՝ 182 անձ, որից՝
ա. բարձր անվտանգային գոտի՝ 55 անձ,
բ. միջին անվտանգային գոտի՝ 52 անձ,
գ. ցածր անվտանգային գոտի՝ 5 անձ,
դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 70 անձ.
- 2) «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ՝ 373 անձ, որից՝

ա. Բարձր անվտանգային գոտի՝ 93 անձ,

բ. միջին անվտանգային գոտի՝ 150 անձ,

գ. ցածր անվտանգային գոտի՝ 30 անձ,

դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 100 անձ.

3) «Սևան» քրեակատարողական հիմնարկ՝ 548 անձ, որից՝

ա) միջին անվտանգային գոտի՝ 484 անձ,

բ) ցածր անվտանգային գոտի՝ 64 անձ.

4) «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ 265 անձ,
որից՝

ա. Բարձր անվտանգային գոտի՝ 25 անձ, այդ թվում՝ կարճա-
ժամկետ ազատազրկում պատժատեսակ կրող դատապարտյալ-
ների համար՝ 15 անձ,

բ. միջին անվտանգային գոտի՝ 55 անձ,

գ. ցածր անվտանգային գոտի՝ 65 անձ,

դ. անչափահասների քրեակատարողական հիմնարկի անվ-
տանգային գոտի՝ 40 անձ,

ե. կալանավորվածներին պահելու վայր՝ 80 անձ.

5) «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 780 անձ,
որից՝

ա. Բարձր անվտանգային գոտի՝ 105 անձ,

բ. միջին անվտանգային գոտի՝ 200 անձ,

գ. ցածր անվտանգային գոտի՝ 5 անձ,

դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 470 անձ.

6) «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 339 անձ,
որից՝

ա. Բարձր անվտանգային գոտի՝ 15 անձ, այդ թվում՝ կարճա-
ժամկետ ազատազրկում պատժատեսակ կրող դատապարտյալ-
ների համար՝ 5 անձ,

բ. միջին անվտանգային գոտի՝ 74 անձ,

գ. ցածր անվտանգային գոտի՝ 120 անձ,

դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 130 անձ.

7) «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ՝ 240 անձ, որից՝
ա. բարձր անվտանգային գոտի՝ 60 անձ,
բ. միջին անվտանգային գոտի՝ 85 անձ,
գ. ցածր անվտանգային գոտի՝ 5 անձ,
դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 90 անձ.

8) «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ 464 անձ, որից՝

ա. բարձր անվտանգային գոտի՝ 30 անձ, այդ թվում՝ կարճաժամկետ ազատազրկում պատժատեսակ կրող դատապարտյալների համար՝ 2 անձ

բ. միջին անվտանգային գոտի՝ 324 անձ,
գ. ցածր անվտանգային գոտի՝ 10 անձ,
դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 100 անձ.

9) «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ՝ 60 անձ, որից՝

ա. բարձր անվտանգային գոտի՝ 7 անձ,
բ. միջին անվտանգային գոտի՝ 8 անձ,
գ. կալանավորվածներին պահելու վայր՝ 45 անձ.

10) «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ 1240 անձ, որից՝

ա. բարձր անվտանգային գոտի՝ 192 անձ, այդ թվում՝ կարճաժամկետ ազատազրկում պատժատեսակ կրող դատապարտյալների համար՝ 12 անձ,

բ. միջին անվտանգային գոտի՝ 323 անձ,
գ. ցածր անվտանգային գոտի՝ 5 անձ,
դ. կալանավորվածներին պահելու վայր՝ 720 անձ:

Պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկի տեսակը յուրաքանչյուր դատապարտյալի համար որոշվում է ՀՀ ՔԿՕ-ի 58-59-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Վերը նշված քրեակատարողական հիմնարկները տարբերվում են միմյանցից այդտեղ պահվող դատապարտյալների շրջա-

նակով, հասարակությունից նրանց մեկուսացվածության աստիճանով, պատժի կրման պայմաններով: Պատժի կրման առավել խիստ պայմաններ, առավել խիստ մեկուսացվածություն սահմանվում են քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում: Ի տարբերություն քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտու՝ պատժի կրման պայմանները այլ քրեակատարողական հիմնարկի մյուս գոտիներում համեմատաբար թեթև են բարոյական, ֆիզիկական, հիգիենիկ և այլ առումներով: Պատժի կրման պայմանները անհամեմատ թեթև են քրեակատարողական հիմնարկի ցածր անվտանգային գոտում և ավելի ծանր՝ քրեակատարողական հիմնարկի միջին անվտանգային գոտում:

Քրեակատարողական հիմնարկները խիստ մեկուսացված գոտիներ են (պարիսպներով և փշալարերով շրջապատված): Քրեակատարողական հիմնարկների տարածքում, ելնելով դատապարտյալներին ցածր, միջին կամ բարձր անվտանգային գոտիներում պահելու օրենքով նախատեսված պայմանների առանձնահատկություններից, առնվազն տեղակայվում են բնակելի կացարաններ կամ խցեր, կարանտինային բաժանմունք, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատասենյակներ, ճաշարան, բժշկական ստորաբաժանման սենյակներ, դասասենյակներ, արտադրական գոտի, զբաղվածության, մշակութային և այլ միջոցառումների անցկացման ու տեսակցության սենյակներ, զբոսանքի կազմակերպման տարածք, գրադարան, բաղնիք, լվացքատուն, պատժախցեր, անձնական իրերի պահախցեր: Քրեակատարողական հիմնարկում կարող են տեղակայվել նաև այլ կառույցներ կամ սենյակներ (Ներքին կանոնակարգ, բաժին 2-րդ, 8-րդ կետ):

Քրեակատարողական հիմնարկի կառուցվածքը, բնակելի կացարանները և խցերը, ինչպես նաև մյուս կառույցները պետք է տեղակայվեն այնպես, որպեսզի ապահովվեն ՀՀ ՔԿՕ-ի 64-րդ

(դատապարտյալներին միմյանցից անջատ պահելը) և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 31-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Արտադրական գոտին, որտեղ կազմակերպվում է դատապարտյալների աշխատանքը, որպես կանոն, գտնվում է քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտու հարևանությամբ: Քրեակատարողական հիմնարկների սահմանների արտաքին պահպանությունն իրականացնում է քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումը, որը քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանում է և գործում է քրեակատարողական ծառայության պետի անմիջական ղեկավարությամբ: Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումն իրականացնում է արագ արձագանքման աշխատանքներ՝ քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներ առաջանալիս ներքին կանոնակարգի խախտումները վերացնելու նպատակով, ինչպես նաև աջակցում է քրեակատարողական հիմնարկների արտաքին պահպանության, ներքին կանոնակարգի պահպանմանն ուղղված գործառնությունների և ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտվածների և կալանավորվածների փոխադրումների իրականացմանը:

Քրեակատարողական հիմնարկը ղեկավարում է քրեակատարողական հիմնարկի պետը, որը կազմակերպում և հսկում է քրեակատարողական հիմնարկի՝ օրենքով սահմանված խնդիրների իրականացման աշխատանքները: Նա ունի օպերատիվ, սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների և անձնակազմի գծով տեղակալներ: Քրեակատարողական հիմնարկում գործում են հատուկ, կադրերի, սոցիալական, հոգեբանական, իրավական և այլ աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, ֆինանսական մաս և այլն: Ազատազրկում պատժատեսակը կատարող հիմնարկների առջև դրվում

են պատժի նպատակների կատարման հետ կապված որոշակի խնդիրներ: Այդ խնդիրներն իրականացվում են դատապարտյալների վերասոցիալականացման հիմնական միջոցների օգնությամբ, այն է՝ պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Պատժի կրման կանոնակարգի ապահովումը քրեակատարողական հիմնարկների հիմնական խնդիրն է: Այս խնդրի իրականացման նպատակով քրեակատարողական հիմնարկներում սահմանված կարգով կատարվում է դատապարտյալների գրանցում և հաշվառում, նրանց նկատմամբ սահմանվում է մշտական հսկողություն, արտաքին աշխարհից պարտադիր, տարբերակված մեկուսացում, դատապարտյալի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարման ապահովում, դատապարտյալին պահելու տարբեր պայմանների նախատեսում և այլն:

Քրեակատարողական հիմնարկների առջև դրված են նաև այլ՝ միայն իրենց հատուկ խնդիրներ՝ դատապարտյալների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը, դատապարտյալների նյութակենցաղային անհրաժեշտ պայմանների ապահովումը, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների անվտանգության և սոցիալական պաշտպանվածության ապահովումը և այլն: Վերջինս, մասնավորապես, ամրագրված է դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներում, որտեղ նշվում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել պենիտենցիար հիմնարկների աշխատակիցների աշխատանքի բացառիկ ծանր պայմանները և նախատեսել համապատասխան արտոնություններ ու աշխատանքի բարենպաստ պայմաններ:

4. Վերահսկողությունն ու հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ

Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների համակարգը ՀՀ իրավապահ մարմինների մասն է, որոնց կարևորագույն խնդիրն է պայքարը հանցավորության դեմ: Այս հարցում շահագրգռված է ամբողջ հասարակությունը, որը պետական և հասարակական կազմակերպությունների միջոցով մշտապես վերահսկողություն և հսկողություն է իրականացնում իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ: Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների նկատմամբ վերահսկողությունն ու հսկողությունն ունեն իրենց առանձնահատկությունները:

Առաջին հերթին պետք է առանձնացնել դրանց սոցիալ-իրավական նշանակությունը: Այս գործընթացում կարևորվում է օրինականությունը քրեական պատիժների կատարման բնագավառում: Օրենքների և սահմանված կարգի պահպանությունը պատիժներ կատարող մարմիններում և հիմնարկներում վերաբերում է և՛ վարչակազմին, և՛ պատիժը կրող դատապարտյալներին: Այդ մարմինների ողջ գործունեությունը հիմնվում է օրենքների խստիվ պահպանման վրա, և նրանք պատասխանատու են իրենց գործունեության օրինականության համար:

Պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների նկատմամբ *վերահսկողություն և հսկողություն ասելով պետք է հասկանալ այդ մարմինների գործունեության և քրեակատարողական օրենսդրության ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների համապատասխանության, իրավախախտումների հայտնաբերման ու վերացման և դրանց կանխման նպատակով իրականացվող դիտարկումների և ստուգումների ողջ համակարգը:*

ՀՀ ՔԿՕ-ի չորրորդ գլխում շարադրված է պատիժներ կատա-

րող մարմինների ու հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողության և հսկողության համակարգը: Այն կարող է դասակարգվել տարբեր հիմքերով: Գոյություն ունեն պատիժները կատարելու նկատմամբ վերահսկողության և հսկողության տարաբնույթ եղանակներ՝ ***դատախազական հսկողություն և դատական, գերատեսչական ու հասարակական վերահսկողություն:***

5. Դատախազական հսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Պատիժներ կատարելիս դատախազական հսկողության առարկան են՝ պատիժներ կատարող մարմիններում և հիմնարկներում, ինչպես նաև ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերում օրինականությունը, քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված դատապարտյալների, ձերբակալված ու կալանավորված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց պահելու կարգն ու պայմանները:

Պատիժները կատարելու և հարկադրանքի միջոցները կիրառելու նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այդ նպատակով ՀՀ գլխավոր դատախազության համակարգում գործում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ:

2) ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների, պրոբացիայի շահառուի անձնական գործին:

3) ստուգելու քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու կամ վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմին, իսկ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի դեպքում՝ Քրեակատարողական ծառայության պետին, իսկ նշված մարմինների կամ պաշտոնատար

անձանց կողմից ակտը վերանայելու և այն անփոփոխ թողնելու դեպքում գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը, կասեցնելով նշված ակտի գործողությունը, կարող է ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնել համապատասխանաբար ՀՀ արդարադատության կամ պաշտպանության նախարարին, որը վերջնականապես լուծում է հարցը:

Դատախազն իրավունք ունի նաև՝ հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց, անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի պատժախցերում ապօրինի պահվող անձանց և այլն:

Դատախազն օրենքով սահմանված կարգով մասնակցում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում:

Սահմանված լիազորությունները դատախազն իրականացնում է նաև պրոբացիայի ծառայության կողմից ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների (այլընտրանքային խափանման միջոցների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու պատճառով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու, պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարման) կիրառման օրինականության նկատմամբ:

Նմանատիպ կարգավորումներ է նախատեսում նաև ՀՀ ՔԿՕ-ի 16-րդ հոդվածը:

Դատախազական հսկողություն իրականացնելիս ստուգ-

ման արդյունքներով կազմվում է տեղեկանքը: Այդ փաստաթղթում մատնանշվում են հայտնաբերված խախտումները, դրան նպաստող պատճառներն ու պայմանները, օրինականության խախտման մեջ մեղավոր անձինք, ստուգման ընթացքում դատախազի կողմից ձեռնարկված միջոցառումները և ստուգման արդյունքներով արված որոշակի առաջարկությունները:

6. Դատական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ

Քրեակատարողական հիմնարկների և պատիժներ կատարող այլ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության կարևոր եղանակներից է դատական վերահսկողությունը: ՀՀ ՔԿՕ-ն առանձնացնում է դատական վերահսկողությունը որպես պատիժներ կատարող մարմինների ու հիմնարկների գործունեության նկատմամբ վերահսկողության ինքնուրույն տեսակ: Դատական վերահսկողության ձևերը բազմառեսակ են և խիստ արդյունավետ: ՀՀ ՔԿՕ-ի 14-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պատիժ կատարող հիմնարկների և մարմինների վարչակազմը եզրափակիչ դատական ակտ կայացրած դատարանին անհապաղ հաղորդում է պատժի կատարման և պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի մասին: Պատժի կատարման առաջնային փուլում այն դատական վերահսկողության յուրահատուկ տեսակ է:

Դատարանը վերահսկողություն է իրականացնում պատժի կատարման, քրեախրավական ներգործության միջոցների կիրառման, պատժից ազատելու հարցերը լուծելու նկատմամբ՝ ապահովելով դատական վերահսկողության իրավական մեխանիզմը պատիժների կատարման նկատմամբ:

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը

քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշումների դեմ: Դրանով իսկ կարող են բացահայտվել դատապարտյալի իրավունքների և օրինական շահերի խախտումները: Այս տեսակետից դատական վերահսկողությունը քրեական պատիժների դատապարտված անձանց օրինական շահերի և իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է:

7. Գերատեսչական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ

Քրեական պատիժների կատարման նկատմամբ վերահսկողության առավել լայն բովանդակություն ունի ***գերատեսչականը***: ՀՀ ՔԾՕ-ի 15-րդ հոդվածի համաձայն՝ պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք օրենսդրությամբ սահմանած կարգով իրականացնում են գերատեսչական վերահսկողություն:

Քրեակատարողական համակարգի մեջ մտնող հիմնարկների և պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

Նրա քրեակատարողական վարչության կողմից իրականացվող վերահսկողության ձևերը բազմաբնույթ են: Դրանք սահմանվել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կանոնադրությամբ (ընդունվել է 24.08.2006թ. ՀՀ Կառավարության որոշմամբ): Վերահսկողությունն իրականացվում է վարչության կառուցվածքային ստորաբաժանումների

կողմից իրականացվող ուսումնասիրությունների և ստուգայցերի միջոցով: Քրեակատարողական ծառայությունում ուսումնասիրությունները կատարվում են քրեակատարողական հիմնարկներ և կամ այլ մարմիններ պլանավորված և ոչ պլանավորված այցելությունների միջոցով՝ առանձին ոլորտի առնչվող հարցերի կամ հիմնարկի գործունեության համալիր ուսումնասիրման նպատակով: Ստուգայցն իրականացնող ծառայողներն իրավունք ունեն անարգել մուտք գործելու համապատասխան ստորաբաժանումները, պահանջելու փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, իրականացնելու ստուգայցի նպատակին առնչվող այլ գործառնություններ:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության և պրոբացիայի ծառայության վերահսկողության ձևերը բազմաբնույթ են: Դրանցից կարևոր է հատկապես տեսչական վերահսկողությունը, որի ժամանակ ստուգվում է պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների ողջ գործունեությունը՝ օպերատիվ-ծառայական, արտադրական, ֆինանսատնտեսական, աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը, օրինականության պահպանումը, դատապարտյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը և այլն: Այդ ընթացքում դատապարտյալները կարող են ներկայացնել իրենց դիմումները, առաջարկությունները, գանգատները և այլն:

8. Հասարակական վերահսկողությունը պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ

Պատիժներ կատարող հիմնարկների և մարմինների գործունեության նկատմամբ պետական մարմինների վերահսկողությո-

յունից ու հսկողությունից բացի՝ գործում է նաև **հասարակական վերահսկողության** համակարգ: Հասարակական կազմակերպությունները կարող են օժանդակել պատիժ կատարող հիմնարկների և մարմինների գործունեությանը, այդ թվում՝ դատապարտյալների վերասոցիալականացմանը: ՀՀ ՔԿՕ-ի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարների հաստատած՝ մրցութային կարգով ընտրված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

Օրենքը սահմանում է նաև, որ հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է, և խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը:

Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը նույնպես սահմանում են ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարները:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի հրամանով:

Հասարակական վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված հասարակական դիտորդների խումբը քրեակատարողական համակարգի հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է, որը պետք է ունենա սո-

ցիալական ուղղվածություն և ծավալի հրապարակային գործունեություն:

Հասարակական դիտորդների խմբի գործունեության նպատակներն են՝ ազատագրկվածների և քրեակատարողական համակարգի հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկումը, ազատագրկվածների աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը քրեակատարողական ծառայության հիմնախնդիրները ներկայացնելը, քրեակատարողական օրենսդրությունն ուսումնասիրելը, անհրաժեշտության դեպքում դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, քրեակատարողական համակարգի հսկողության տակ գտնվող անձանց հետ կապված այլ խնդիրների լուծմանը աջակցելը: Վերահսկողությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներ ու մարմիններ այցելություններ կատարելու և կատարված այցելությունների հիման վրա ՀՀ արդարադատության նախարարին և հասարակությանը հաշվետվություններ ներկայացնելու ձևով:

9. Պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունքը

Վերահսկողության համակարգում էական տեղ են զբաղեցնում բարձրաստիճան պետական ծառայողների, այլ իրավասու անձանց, լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլոց այցելությունները պատիժներ կատարող մարմիններ և հիմնարկներ: Նրանք կարող են հանդիպումներ ունենալ դատապարտյալների հետ, ընդունել նրանց դիմումները, զանգատները, առաջարկությունները և այլն: Նման այցելությունները կարգավորում են ՀՀ ՔԿՕ-ի 18-րդ հոդվածով:

Մի դեպքում նման այցելությունների համար բացակայում են սահմանափակումները, իսկ մեկ այլ դեպքում պահանջվում է հատուկ թույլտվություն: Յուրաքանչյուր անձի մուտքը քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց կամ դատապարտյալների բնակության տեղամաս իրականացվում է սահմանված կարգով տրված թույլտվության հիման վրա, բացառությամբ օրենքով նախատեսված առանց հատուկ թույլտվության անարգել մուտքի և ելքի իրավունք ունեցող անձանց և տվյալ քրեակատարողական հիմնարկի քրեակատարողական ծառայողների ու վարձու աշխատողների:

Պատիժ կատարող հիմնարկ և մարմին մուտքի և ելքի կարգը սահմանում են ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարները:

ՀՀ ՔԿՕ-ի 18-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է առանց հատուկ թույլտվության պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին անարգել մուտքի և ելքի իրավունք ունենող անձանց շրջանակը, որոնք բաժանվում են որոշակի խմբերի.

1) ՀՀ նախագահը, ՀՀ վարչապետը, ՀՀ Ազգային ժողովի նախագահը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը, ՀՀ արդարադատության և պաշտպանության նախարարները և նրանց՝ ոլորտը համակարգող տեղակալները.

2) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով.

3) միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա.

4) ՀՀ այն դատավորները, որոնք օրենքով սահմանված կարգով քննում են պատժի կատարման հետ կապված հարցերը, այդ թվում՝ դատապարտյալի՝ պատիժ կատարող հիմնարկների կամ մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքները.

5) ՀՀ գլխավոր դատախազը, նրա՝ ոլորտը համակարգող տեղակալը, ինչպես նաև այն դատախազները, որոնք օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.

6) փաստաբանները՝ իրենց վստահորդների հետ հանդիպման նպատակով.

7) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք, ինչպես նաև պրոբացիայի ծառայողը՝ իր լիազորությունների իրականացման նպատակով.

8) ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարման նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:

Պատիժ կատարող հիմնարկ կամ մարմին մուտք ու ելք ունեցող անձը, ինչպես նաև նրա իրերը պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի կողմից ենթարկվում են զննության, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության:

Նման այցելությունների դեպքում դատապարտյալների հետ տեսակցությունները չեն ազդում օրենսդրությամբ սահմանված՝ դատապարտյալներին տրամադրվող տեսակցությունների քանակի վրա:

ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 5

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄԸ

1. Անվտանգության միջոցները

Արտասահմանյան բազմաթիվ երկրների օրենսդրություններում նախատեսված են և վաղուց արդյունավետ կիրառվում են անվտանգության միջոցների մի ամբողջ համակարգ: Այս միջոցների նպատակը քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի բարոյահոգեբանական, ֆիզիկական վտանգավոր ակտիվության չեզոքացումն է: Նման միջոցների շարքը կարելի է դասել՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, կանխարգելիչ գրավը, որոշակի վայրեր այցելելու արգելքը, հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելու պարտականությունը, վարքագծի նկատմամբ հատուկ հսկողությունը և այլն:

Անվտանգության միջոցների՝ որպես քրեաիրավական ներգործության այլ միջոցների ընդգրկումը քրեական օրենսդրության մեջ կարելի է համարել նորույթ քրեաիրավական համակարգում, թեև «անվտանգության միջոցներ» արտահայտությունը բացակայում էր նախկին օրենսդրությունում, սակայն դրա առանձին տեսակներ նախատեսված էին, օրինակ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները:

ՀՀ քր. օր-ը և ՀՀ ՔԿՕ-ն նախատեսում են ներգործության այս միջոցների նյութական և ընթացակարգային բովանդակությունը՝ սահմանելով դրանց կիրառման կարգն ու պայմանները: ՀՀ քր. օր-ի 111 հոդվածը սահմանում է անվտանգության միջոցների հասկացությունն ու նպատակը. անվտանգության միջոցը պետա-

կան հարկադրանքով ապահովված քրեախրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Անվտանգության միջոցների նպատակն է կանխել պատժի սպառնալիքով արգելված արարքների կատարումը:

ՀՀ քր. օր-ի 113-րդ հոդվածը սահմանում է՝ պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ կարող են նշանակվել անվտանգության հետևյալ միջոցները՝

1) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ՝

ա. հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում,

բ. ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

գ. հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

2) որոշակի վայրեր այցելելու արգելք,

3) հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն:

Անձի կողմից կատարված և պատժի սպառնալիքով արգելված մեկ արարքի համար կարող են նշանակվել մեկից ավելի անվտանգության միջոցներ: Անվտանգության միջոց նշանակելը դատարանի համար ոչ թե պարտականություն է, այլ հայեցողության շրջանակներում տրված իրավունք: Դատարանը կարող է նշանակել անվտանգության միջոց, եթե համարի, որ պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը կրկին կարող է այդպիսի արարք կատարել, կամ անվտանգության միջոցի կիրառումն անհրաժեշտ է իր կամ այլ անձի անվտանգությունն

ապահովելու համար: Օրինակ, դատարանը, հաշվի առնելով հանցանք կատարած անձի մոտ հոգեբանական խնդիրների առկայությունը՝ ագրեսիվությունը, ինքնատիրապետման հետ կապված խնդիրները, կարող է որոշում կայացնել անվտանգության միջոց կիրառելու մասին՝ հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն սահմանելով: Ընդ որում, նշված անվտանգության միջոցի նշանակման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ անձի նկատմամբ դրա կիրառման անհրաժեշտության և առավել արդյունավետ իրականացման եղանակների վերաբերյալ փորձագետի, իսկ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման վերաբերյալ՝ բժշկական-մասնագիտական հանձնաժողովի տված եզրակացությունը: Սակայն, այդ եզրակացությունը դատարանի համար կաշկանդող չէ, քանի որ վերջինս ունի դատական հայեցողության շրջանակներում գործելու հնարավորություն, ինչին անդրադարձ կատարել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը³⁵:

Անվտանգության միջոց կարող է նշանակվել ինչպես պատժի հետ զուգակցված, եթե դատարանը հիմնավորի, որ միայն պատիժ կիրառելով հնարավոր չէ վերացնել անձի կողմից նոր հանցանքի կատարման հավանականությունը, այնպես էլ առանց պատժի՝ որպես ինքնուրույն ներգործության միջոց, այդ թվում՝ անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս (ՀՀ քր. օր., հոդված 112): Հետևաբար՝ անվտանգության միջոցներ կարող են կիրառվել ինչպես հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված, այնպես էլ քրեական օրենքով արգելված արարքը կատարած այլ անձի նկատմամբ, այդ թվում՝ անմեղսունակի, քրեական պատասխանատվությունից ազատված անձի և այլն:

³⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտավազդ Ծատուրյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշումը:

Այնուհանդերձ, միայն վերը նշված դասակարգման շրջանակին պատկանելը դեռևս հիմք չէ, որ դատարանը պարտադիր պետք է նշանակի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ: Դատարանը նման քայլ է դիմում, եթե հանգում է հետևության, որ անձը, իր առողջական վիճակով պայմանավորված, կարիք ունի բժշկական միջամտության, որը կապահովի իր կամ այլ անձի անվտանգությունը, ինչպես նաև անվտանգության միջոցների կիրառման նպատակի իրականացումը: Օրինակ, եթե անձը հանցանքի կատարման պահին գտնվել է պաթոլոգիական աֆեկտով պայմանավորված անմեղսունակության վիճակում, և բժշկական-մասնագիտական հանձնաժողովի եզրակացությամբ բժշկական միջամտության կամ հսկողության կարիք չկա, և նույն համոզմունքն էլ առկա է դատարանի մոտ, ապա վերջինս պետք է ձեռնպահ մնա բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելուց: Այն դեպքերում, երբ հանցանքի կատարման պահին անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում գտնված կամ հանցանքի կատարումից հետո հոգեկան առողջության խնդիրներ դրսևորած կամ ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, դեղամոլությունից կամ թունամոլությունից բուժման կարիք ունեցող անձն իր կամ այլ անձի համար վտանգավորություն չի ներկայացնում, դատարանն անձի վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկում է առողջապահության համապատասխան մարմին՝ այդ անձի բուժման հարցը լուծելու համար:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կոնկրետ տեսակը նշանակելու որոշում կայացնելիս դատարանը հիմնվում է հոգեբուժական կազմակերպության հանձնաժողովի եզրակացության վրա: Դատարանն է որոշում կայացնում նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը շարունակելու, դադարեցնելու կամ դրա տեսակը փոխելու մասին:

Ինչ վերաբերում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման հիմքերին, ապա դրանք նախատեսված են ՀՀ քր. օր.-ի 114-րդ հոդվածով: Այսպես, դատարանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոց է նշանակում այն անձի նկատմամբ, որը՝

1) պատժի սպառնալիքով արգելված արարքի կատարման պահին գտնվել է անմեղսունակության վիճակում,

2) հանցանքի կատարման պահին գտնվել է սահմանափակ մեղսունակության վիճակում,

3) հանցանքի կատարման պահին գտնվել է մեղսունակության վիճակում, սակայն դրանից հետո նրա մոտ դրսևորվել է հոգեկան առողջության խնդիր,

4) կատարել է հանցանք և ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, դեղամոլությունից կամ թունամոլությունից բուժման կարիք ունի:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի հոգեկան առողջության խնդրի դրսևորումն ու բնույթը, կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, դրա կատարմանը նպաստած գործոնները, անձի կողմից պատժի սպառնալիքով արգելված արարք կրկին կատարելու հավանականությունը, իր կամ այլ անձի համար վտանգավորություն ներկայացնելը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կոնկրետ տեսակը նշանակելու որոշում կայացնելիս դատարանը հիմնվում է հոգեբուժական կազմակերպության հանձնաժողովի տված եզրակացության վրա (ՀՀ քր. օր., հոդված 117):

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու կարգը նախատեսված է ՀՀ ՔԿՕ 142-րդ հոդվածով.

1. Ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրող դա-

տապարտյալը, որի նկատմամբ նշանակվել են հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում, այն կրում է պատիժ կատարող մարմնում կամ հիմնարկում, իսկ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակի դատապարտյալը՝ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություններում:

2. Ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձը, որի նկատմամբ նշանակվել է ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում, այն կրում է պատիժ կատարող մարմնում կամ հիմնարկում, իսկ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակի դատապարտյալը՝ հիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպության ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում:

3. Դատապարտյալը, որի նկատմամբ նշանակվել է հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում, այն կրում է հիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպության հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում:

Դատարանը հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում է նշանակում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած այն անձի նկատմամբ, որն իր հոգեկան վիճակով հիվանդանոցային բուժման կարիք չունի:

Դատարանը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում այն անձի նկատմամբ, որի հոգեկան վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պամաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային պայմաններում: Դատարանը հոգեբուժական կազմա-

կերպության հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած այն անձի նկատմամբ, որն իր հոգեկան վիճակով վտանգավոր է իր կամ այլ անձի համար և պահանջում է մշտական հսկողություն: Ընդ որում, ՀՀ քր. օր-ում շեշտադրվում է միայն մշտական հսկողությունը, քանի որ անձի իրավունքն է հրաժարվել բուժումից:

Որոշակի վայրեր այցելու արգելքն արդյունավետ անվտանգության միջոց է, որը կարող է սահմանվել ժամանցի վայրեր՝ ռեստորաններ, սրճարներ, տարբեր տեսակի ակումբներ, մարզասրահներ, խաղասրահներ և այլ վայրեր այցելելու արգելքով: Անվտանգության այս միջոցի կիրառման տևողությունը պետք է որոշվի դատարանի կողմից՝ օրենքով սահմանված ժամկետներում: Այն կարող է կիրառվել հանցավոր վարքագիծ դրսևորած անձի հնարավոր նոր հանցագործությունները կանխելու նպատակով: Այսպես, խուլիգանություն կատարած անձին ռեստորան, սրճարան և նման այլ վայրեր այցելելու արգելք:

ՀՀ քր. օր. 119-րդ հոդվածը սահմանում է որոշակի վայրեր այցելելու արգելքը, եթե դատարանը համարում է, որ որոշակի վայրերում գտնվելու դեպքում բարձրանում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի կողմից կրկին այդպիսի արարք կատարելու հավանականությունը, կարող է որոշում կայացնել անձին որոշակի վայրեր այցելելը արգելելու մասին՝ 3 ամսից մինչև 2 տարի ժամկետով: Այն վայրերի շրջանակը, որոնք անձին արգելվում է այցելել, սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կատարված արարքի բնույթը, դրա կատարմանը նպաստած գործոնները, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարածի անձը:

Եթե որոշակի վայրեր այցելելու արգելքը նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժին հետ զուգակցված,

ապա դրա ժամկետը հաշվվում է պատժի կրումն ավարտվելու կամ անձին պատժի կրումից ազատելու պահից:

Եթե անձը խուսափում է որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց, ապա այն փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ նշանակված անվտանգության միջոցի 1 ամիսը հաշվարկելով կարճաժամկետ ազատազրկման 3 օրվա դիմաց: Եթե հաշվարկի արդյունքով ստացված կարճաժամկետ ազատազրկման ժամկետը գերազանցում է 2 ամիսը, ապա նշանակվում է 2 ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկում:

ՀՀ ՔԿՕ-ի 144-րդ հոդվածը սահմանում է որոշակի վայրեր այցելելու արգելքը կիրառելու կարգը և պայմանները: Անվտանգության այս միջոցի կիրառումն ապահովում է պրոբացիայի ծառայությունը. պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է անձի գտնվելու վայրը, նրան պատշաճ ծանուցում է պրոբացիայի ծառայությունն ներկայանալու վերաբերյալ, անձը վերցվում է հաշվառման, նրա համար կազմվում է վերահսկողության պլան, անձին պարզաբանվում են որոշակի վայրեր այցելելու արգելքը, նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը և այլն: ՀՀ ՔԿՕ-ի 146-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի կողմից սահմանված որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց խուսափելու համար անձը ենթակա է պատասխանատվության:

Օրենսդիրը հստակեցրել է, որ անձը որոշակի վայրեր այցելելու պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 15 օրվա ընթացքում, կամ երկու կամ ավելի անգամ չի պահպանում դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը:

Այս դեպքում պրոբացիայի ծառայություն այդ մասին կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու և անվտանգության միջոցը կարճաժամկետ ազատագրվմամբ փոխարինելու վերաբերյալ:

Հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը որպես անվտանգության միջոց կարող է կիրառվել քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված բռնությամբ զուգորդված արարքներ կատարած անձանց նկատմամբ: Այն դրսևորվում է հոգեբանական ներգործության ենթարկելու համար՝ համապատասխան օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելով: Անվտանգության այս միջոցը կարող է կիրառվել, երբ անձի կողմից հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող գործոնները հանցանք կատարած անձի հոգեբանական բարդություններն են ու խանգարումները: Այն նշանակվում է անձի կողմից հնարավոր հանցավոր նոր վարքագիծը կանխելու համար:

ՀՀ քր. օր. 120-րդ հոդվածը նախատեսում է հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը որպես անվտանգության միջոց. եթե դատարանը համարում է, որ պատժի սպառնալիքով արգելված արարք կատարելը պայմանավորված է եղել անձի հոգեվիճակով, հոգեբանական խնդիրներով կամ բարդություններով, ապա կարող է որոշում կայացնել անձի նկատմամբ իրավասու մարմիններում հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն նշանակելու մասին՝ 3 ամսից մինչև 2 տարի ժամկետով: Հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն նշանակելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հիմնվում է հոգեբան-փորձագետի տված եզրակացության վրա:

Եթե հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատ-

Ժին զուգակցված, ապա դրա ժամկետը հաշվվում է հոգեբանական օգնությունը փաստացի ստանալու պահից, իսկ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանը սկսվելու պահից:

Օրենսդիրը հստակեցնում է այն իրավական հետևանքները, որոնք կառաջանան անվտանգության այս միջոցից խուսափելու կամ դրանից հրաժարվելու դեպքում, այն է՝ անվտանգության այս միջոցը փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ նշանակված անվտանգության միջոցի 1 ամիսը հաշվարկելով կարճաժամկետ ազատազրկման 3 օրվա դիմաց:

Դատարանն օրենքով սահմանված կարգով կարող է կրճատել կամ երկարաձգել հոգեբանական օգնություն ստանալու պարտականության տևողությունը կամ դադարեցնել հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը:

Օրենսդիրը հստակեցրել է նաև հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց խուսափելը, այն է՝ եթե անձը երկու և ավելի անգամ չի կատարել դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը:

ՀՀ ՔԿՕ 145-րդ հոդվածը սահմանում է հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կիրառելու ընդհանուր կարգը և պայմանները: Անվտանգության այս միջոցի կիրառումն ապահովում է պրոբացիայի ծառայությունը: Վերջինս անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է անձի գտնվելու վայրը, նրան պատշաճ ծանուցում է պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, անձը վերցվում է հաշվառման, նրա համար կազմվում է վերահսկողության պլան, լրացվում է հաշվառման քարտը, ստորագրությամբ անձին պարզաբանվում են հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը, նրա իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանք չկատարելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվությունը:

2. Գույքի բռնագրավումը

Հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Իրավաբանական գրականության մեջ պետական հարկադրանքի այս միջոցի վերաբերյալ տրվել են քրեաիրավական տարբեր գնահատականներ՝ երբեմն միմյանց հակասող: Հեղինակների մի մասի կարծիքով, այս հարկադրանքի միջոցը կարելի է ընդգրկել պատժի համակարգում և կիրառել որպես լրացուցիչ պատիժ: Տարիներ շարունակ այն որպես պատժատեսակ նախատեսված է եղել մեր քրեական օրենսդրությունում: Հեղինակների մի մասն էլ գտնում է, որ գույքի բռնագրավումը չի համապատասխանում քրեական իրավունքի նպատակներին և սկզբունքներին, մասնավորապես անձնական պատասխանատվության սկզբունքին, և հարկադրանքի այս միջոցի նույնիսկ սահմանափակ կիրառումն ուղղված է ոչ միայն և ոչ այնքան հանցավոր արարք կատարած անձի, որքան նրա ընտանիքի դեմ: Հեղինակների այս մասը հարկադրանքի այս միջոցը համարում է չափից ավելի դաժան: Նրանք բազմիցս առաջարկել են այս պատժատեսակը չընդգրկել պատժի համակարգում՝ համարելով այն ամբողջատիրական պետության ժառանգություն: Հաշվի առնելով իրավաբան գիտնականների այս կարծիքները, ինչպես նաև այս պատժատեսակի կիրառման պրակտիկան, այն որպես պատժատեսակ չնախատեսվեց ՀՀ նոր քրեական օրենսգրքում: ՀՀ քր. օր.-ն այս ինստիտուտը՝ հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տե-

սակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը, նախատեսել է քրեաիրավական ներգործության այլ միջոցների շարքում (ՀՀ քր. օր., հոդված 121):

Բռնագրավման հարկադիր բնույթն այն է, որ դատական վերջնական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատապարտյալի և նրա ընտանիքի անդամների կամքից անկախ՝ որոշակի գույքը բռնագրավվում է: Անհատույց բնույթը ենթադրում է, որ վերցված գույք չի փոխհատուցվում և չի վերադարձվում: Գույքը ենթակա է վերադարձի միայն անօրինական դատապարտման դեպքում, եթե այն դեռ չի վերածվել պետական սեփականության կամ չի իրացվել օրենքով սահմանված կարգով:

Հանցավոր ծագում ունեցող գույքի կամ եկամտի բռնագրավումը հանցագործությամբ ստացված եկամուտը, գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության:

Օրենսդիրը նաև հստակեցնում է, որ գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

Հանցագործության գործիքների կամ միջոցների բռնագրավումը այն առարկաները (գույքը) անհատույց վերցնելն է, որոնք օգտագործվել են հանցանքը դիտավորությամբ կատարելու համար: Բռնագրավման են ենթակա նաև անզգուշությամբ կատարված հանցանքի գործիք կամ միջոց հանդիսացած այն առարկա-

ները (գույքը), որոնք հանված են ազատ շրջանառությունից, կամ որոնց շրջանառությունն արգելված է:

Հանցագործության առարկաների բռնագրավումը այն իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները անհատույց վերցնելն է, որոնց շրջանառությունն արգելված է, կամ որոնք օգտագործվել են հանցագործության մեջ:

Եթե հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, պատկանում է բարեխիղճ երրորդ անձի, կամ այն չի հայտնաբերվել, ապա բռնագրավման է ենթակա համարժեք գույք:

Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի, առարկայի բռնագրավման կիրառման ընդհանուր կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ ՔԿՕ 28-րդ գլխում, որի 150-րդ հոդվածը սահմանում է. հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի, առարկայի բռնագրավման կատարումն ապահովում է հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քր. օր.-ում սահմանված է, որ գույքի բռնագրավումը կարող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի նկատմամբ:

Բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, տուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: Եթե բռնագրավ-

ման ենթակա գույքը ծանրաբեռնված է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներով, ապա այդպիսի իրավունքները պահպանվում են բռնագրավումից հետո:

Ինչ վերաբերում է բարեխիղճ երրորդ անձին, ապա բարեխիղճ երրորդ անձ է համարվում նա, ով ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել իր տիրապետությունից, կամ որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով:

Դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան բռնագրավելու համար:

Անդրադառնալով համաձայնեցման և համագործակցության վարույթների կիրառման դեպքում գույքի բռնագրավմանը՝ օրենսդիրը նշել է, որ քննարկվող կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագրավման ենթակա գույքի կամ դրա չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, բացառությամբ շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներ-

կայացնող գույքի: Բանակցությունների արդյունքով համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից:

ՀՀ քր. օր.-ում հատուկ շեշտվել է, որ հանցանքը կատարելու համար օգտագործված կամ շրջանառությունից հանված հանցագործության գործիքները կամ միջոցները, ինչպես նաև հանցագործության առարկա հանդիսացող իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները ենթակա են պարտադիր բռնագրավման, բացառությամբ այն դեպքի, երբ դրանց բռնագրավումն ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը: Օրենսդիրը չի հստակեցնում «ակնհայտ անհամաչափության» սահմանները՝ թողնելով այն իրավակիրառողի մեկնաբանությանը: Ակնհայտ անհամաչափության օրինակ կարող է լինել ավտոմեքենայի բռնագրավումը, երբ այն օգտագործվել է գողություն կատարած անձանց տեղափոխման համար:

Շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում է այն պատկանում:

ԳԼՈՒԽ 6
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ
ՉԿԱՊՎԱԾ ՊԱՏԻՃՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

***1. Պատվավոր կամ զինվորական կոչումից,
կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ
պետական պարգևից զրկելը պատժատեսակի
կատարման կարգն ու պայմանները***

Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը պատժատեսակի քրեաիրավական էությունը դատապարտյալի նկատմամբ բարոյաև հոգեբանական ներգործությունն է, որը նպաստում է պատժի նպատակների իրագործմանը: Այն դատապարտյալին զրկում է բոլոր հնարավոր արտոնություններից, իրավունքներից և առավելություններից, որոնք սահմանված են պատվավոր կամ զինվորական կոչում, կարգ, աստիճան, որակավորման դաս կամ պետական պարգև ունեցող անձանց համար:

Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը կարող է նշանակվել միայն որպես լրացուցիչ պատժատեսակ (ՀՀ քր. օր., 57-րդ հոդված, 2-րդ մաս): Այս լրացուցիչ պատժատեսակը նախատեսված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում: ՀՀ քր. օր.-ի 58-րդ հոդվածը սահմանում է՝ հանցագործության համար անձին դատապարտելիս դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, հանգամանքները, հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրան կարող է զրկել պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից:

Կարևորագույն փոփոխություն է այն, որ եթե քրեական նախկին օրենսգրքերով այս պատժատեսակը կիրառելի էր միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, ապա քրեական նոր օրենսգիրքը նման սահմանափակում չի նախատեսում: Եթե դատարանը, հաշվի առնելով դատապարտյալի անձը, եկել է այն եզրահանգման, որ նա արժանի չէ կրելու այդ պատվավոր կամ զինվորական կոչումը, կարգը, աստիճանը, որակավորման դասը կամ պետական պարգևը, ապա այդ առումով որևէ արգելք չի նախատեսվում, և դատարանը կարող է նշանակել այս պատժատեսակը:

Պատվավոր կոչումները շնհորվում են առանձնահատուկ ծառայությունների, մասնագիտական բարձր որակավորման, բազմամյա աշխատանքային գործունեության համար (օրինակ՝ ժողովրդական դերասան, ժողովրդական նկարիչ, վաստակավոր բժիշկ, վաստակավոր իրավաբան և այլն), ՀՀ պետական պարգևները համարվում են ՀՀ խրախուսանքի բարձրագույն միջոցներ և շնորհվում են տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի, հայրենիքի պաշտպանության և այլ բնագավառներում մատուցած ակնառու և բացառիկ ծառայությունների համար (օրինակ՝ «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչումը, «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանը, «Մարտական խաչ» շքանշանը, «Արիության մեդալը» և այլն):

Կարգն ու աստիճանը շնորհվում են պետական մարմիններում ծառայողներին, մասնավորապես հարկային, մաքսային, երկաթգծի, քաղաքացիական ավիացիայի և մի շարք այլ բնագավառների ծառայողներին: Դրանց շնորհման կարգը և դրա հետ կապված արտոնությունների ու առավելությունների տրամադրումը սահմանվում են նորմատիվ իրավական ակտերով (օրինակ, Մաքսային ծառայության մասին ՀՀ օրենքը, Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքը և այլն):

Զինվորական կոչումներ են համարվում ՀՀ զինված ուժերի ու այլ զորքերի (օրինակ՝ սահմանապահ) սպայական և բանակային կազմի անձանց շնորհվող կոչումները՝ շարքային, սերժանտ, ավագ, ենթասպա, սպա, ավագ սպա և բարձրագույն սպա:

Որակավորման դասը կամ աստիճանը պետական պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողների դասային կարգն է, որոնցից բխում են որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այսպես՝ դատախազության աշխատողների համար «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում են երրորդ դասի խորհրդականից մինչև ՀՀ արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճանները, իսկ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում են ՀՀ դիվանագիտական աստիճանները և այլն:

Մի քանի կոչումների առկայության դեպքում դատարանն իրավասու է դատապարտյալին զրկել բոլորից կամ դրանց մի մասից: Դատարանը նման իրավասություն ունի ինչպես ծառայության մեջ գտնվող, այնպես էլ կենսաթոշակի անցած կամ պահեստազորում գտնվող անձանց նախկինում վաստակած կոչումներից զրկելու խնդրում: Դատարանն իրավասու չէ դատապարտյալին զրկել գիտական աստիճաններից և կոչումներից (գիտությունների թեկնածու, դոկտոր, դոցենտ, պրոֆեսոր և այլն): Նման պարագայում դատարանը կարող է միայն տեղեկատվություն ուղարկել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտե նման անձանց դատապարտման մասին: Այստեղ տեղին է հիշատակել ռուս խոշորագույն քրեագետ Ն.Ս. Տագանցևի մտքերը. «... ոչ մի հանցագործություն, այդ թվում և ծանր, չի կարող ոչնչացնել տարիների ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ու անհիմն է դատապարտյալին զրկել համապատասխան կոչումից և այն հաս-

տատող վկայագրից...»³⁶:

Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու կատարման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ: ՀՀ ՔԿՕ-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ այս պատժատեսակի կատարումն ապահովում է հիմնական պատիժը կատարող մարմինը կամ հիմնարկը: Վերջինս պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու մասին եզրափակիչ դատական ակտի պատճենը ստանալուց և եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, եզրափակիչ դատական ակտի պատճենն ուղարկում է այդ կոչումը, կարգը, աստիճանը կամ որակավորման դասը շնորհած մարմին կամ պաշտոնատար անձին՝ համապատասխան գործողություններ կատարելու նպատակով:

ՀՀ ՔԿՕ-ի 25-րդ հոդվածը սահմանում է այս պատժատեսակը կատարելու կարգը, համաձայն որի՝ պատվավոր կամ զինվորական կոչում, կարգ, աստիճան, որակավորման դաս կամ պետական պարգև շնորհած մարմինը կամ պաշտոնատար անձը եզրափակիչ դատական ակտի պատճենը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, կատարում է համապատասխան գործողություններ՝ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու դատապարտված անձին այդ շնորհից զրկելու նպատակով, ինչպես նաև դրա հետ կապված բոլոր իրավունքներից և արտոնություններից նրան զրկելու ուղղությամբ՝ այդ մասին մեկամսյա ժամկետում տեղեկացնելով հիմնական պատիժը կատարող հիմնարկին կամ մարմնին:

³⁶ См. у Таганцев Н.С. Русское уголовное право. Лекции. Часть общая. Т.2. М., 1994, էջ 149.

2. Տուգանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

Տուգանքը դատապարտյալի գույքային իրավունքները սահմանափակող, անգգուշությամբ, ինչպես նաև շահադիտական դրդումներով կատարվող դիտավորյալ հանցանքների դեմ պայքարի գործում առավել նպատակահարմար և արդյունավետ պատժատեսակ է: ՀՀ քր. օր. 59-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով:

Քրեաիրավական տեսանկյունից տուգանքը որոշակի ծավալով գույքային սահմանափակման բնույթ ունեցող քրեական պատասխանատվության միջոց է: Իրավաբանական գրականության մեջ կարծիքներ են արտահայտվել, որ տուգանքի նշանակումով չեն իրականացվում պատժի նպատակները, այլ միայն մեկ անգամ ևս հիշեցվում է հանցագործին հետագայում ավելի շրջահայաց և հաշվենկատ լինելու անհրաժեշտության մասին: Նման դիրքորոշումը հակասում է քրեական օրենսդրությանը, որտեղ ամրագրված են պատժի համակարգի բոլոր պատժատեսակների համար համարժեք նպատակներ: Տուգանքը՝ որպես պատժի համակարգի ինքնուրույն պատժատեսակ, կարող է և պետք է ապահովի պատժի նպատակների իրականացումը: Այլ հարց է այդ նպատակներին հասնելու միջոցը, որը տուգանքի դեպքում խիստ յուրահատուկ է՝ դատապարտյալի նյութական իրավունքների անմիջական սահմանափակումը:

Տուգանքը կարող է նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ:

Տուգանքը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի հնգապատիկից հիսնապատիկ

տիկի չափով:

Տուգանքը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել ծանր և առանձնապես ծանր՝ գույքային վնաս պատճառելու հետ կապված կամ շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի կրկնապատիկից քսանապատիկի չափով:

Տուգանքի հաշվարկման հիմքում, ըստ քրեական օրենսգրքի, դրվում է ոչ թե նվազագույն աշխատավարձը, այսինքն՝ պետության սահմանած ֆիքսված որևէ գումար, այլ հանցանք կատարած անձի եկամուտը: ՀՀ քր. օր.-ի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանվում է ամսական եկամտի հաշվարկման կանոնը՝ հանցանքն ավարտվելու օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում անձի ստացած միջին ամսական եկամտի 35 տոկոսը: Միջին ամսական եկամտի մեջ հաշվարկվում են ստացվող աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները, անձի կողմից իր ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ) այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտը (շահաբաժինը, տոկոսը, ռոյալթին, վարձակալական վճարը): Ամսական եկամուտը հաշվարկելիս հաշվի չեն առնվում դրանց համար վճարվող հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ:

Հաշվի առնելով, որ քրեական օրենսգրքում տուգանքի հաշվարկման հիմքում դրվում է հանցանք կատարած անձի եկամուտը, օրենսդիրը կարգավորել է նաև այն, երբ անձը եկամուտ չունի կամ դրա չափը անհնարին է պարզել:

Հանցանք կատարած անձի եկամտի բացակայության կամ դրա չափը պարզելու անհնարինության դեպքում տուգանքի չափը հաշվարկվում է հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով: Տուգանքի չափը որոշվում է նույն կարգով, եթե հանցանք կատարած անձի եկամուտն առաջացել է հանցանքն ավարտվելուց հետո: Տուգանքի չափը որոշվում է

նույն կարգով նաև այն դեպքում, երբ անձի ամսական եկամտի հաշվարկի արդյունքով դրա չափը պակաս է ստացվում նվազագույն աշխատավարձի չափից (ՀՀ քր. օր., 59 հոդված, 5-րդ մաս):

Քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում տուգանքի չափը տարբերակված է: Տուգանքի նշանակման հնարավորությունը և չափը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, հանցագործությամբ ստացված գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտները, դատապարտվողի ու նրա ընտանիքի գույքային դրությունը, ինչպես նաև դատապարտվողի՝ եկամուտ ստանալու հնարավորությունը կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Դատապարտյալի գույքային դրությունն ասելով պետք է հասկանալ նրա վաստակի չափը, ընտանիքի ապահովվածությունը և այլն: Ընտանիքի շահերն այս պարագայում տուժում են ոչ պակաս, քան այլ պատժատեսակներ՝ մասնավորապես կարճաժամկետ ազատազրկում նշանակելիս:

Տուգանքը՝ որպես հիմնական պատիժ, նշանակվում է, երբ այն ուղղակիորեն նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (ՀՀ քր.օր., 72-րդ հոդված), պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս (ՀՀ քր. օր., 88-րդ հոդված), պատիժ նշանակելը համաձայնության կամ համագործակցության վարույթի դեպքում (ՀՀ քր. օր., 77-րդ հոդված):

Անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ (դատական քննության կամ նախաքննության ընթացքում), հաշվի առնելով փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը, դատարանը նվազեցնում է տուգանքի չափը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց (ՀՀ քր. օր., 79-րդ հոդված):

Տուգանք պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները կարգավորվում են քրեակատարողական օրենսդրությամբ: Դատապարտյալը պարտավոր է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատական ակտով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը ներկայացնելով պրոբացիայի ծառայություն:

ՀՀ ՔԿՕ-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ տուգանք նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողը դատապարտյալին պատշաճ ծանուցում է պրոբացիայի ծառայություն ներկայանալու և տուգանքի վճարման անդորրագիրը ներկայացնելու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, դատապարտյալը վերցվում է հաշվառման, լրացվում է հաշվառման քարտ, նրան ստորագրությամբ անհապաղ պարզաբանվում են տուգանքի կատարման կարգն ու պայմանները, իր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը: Այն դեպքում, երբ դատարանը թույլատրել է տուգանքը մաս առ մաս վճարել, կամ տուգանքի վճարման համար սահմանվել է մինչև մեկ տարի ժամկետ, ապա կազմվում է նաև վերահսկողության պլան:

Պատժի չկրած մասը տուգանքով փոխարինելու դեպքում սկզբնական պատիժ կատարող հիմնարկը կամ մարմինը, իսկ այն դեպքում, երբ տուգանքը նշանակվել է որպես լրացուցիչ պատիժ, ապա հիմնական պատիժ կատարող հիմնարկը կամ մարմինը դատապարտյալից վերցնում է ստորագրություն հնգօրյա ժամկետում պրոբացիայի ծառայություն ներկայանալու մասին, ապա ուղարկվում են նաև եզրափակիչ դատական ակտի պատճենը և դատապարտյալի ծանուցված լինելը հավաստող փաստաթուղթ:

Տուգանքի կատարումից հետո անձը հանվում է հաշվառումից, իսկ անձնական գործն արխիվացվում է: Տուգանքի կատարումից հետո՝ եռօրյա ժամկետում, պրոբացիայի ծառայությունը դատապարտյալին տալիս է տեղեկանք պատիժը կրած լինելու մասին և այդ մասին տեղեկացնում է եզրափակիչ դատական ակտը կայացրած դատարանին և ՀՀ ոստիկանությանը:

ՀՀ քր. օր. 59-րդ հոդվածի համաձայն, եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում՝ առավելագույնը մեկ տարի, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում:

Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց, և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը:

Քրեական օրենսգիրքը նախատեսել է նաև նման կարգավորում. եթե տուգանքը նշանակելուց հետո դատապարտյալի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից, ապա դատարանը, հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը՝

1) երկարաձգում է տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը մեկ տարով,

2) նշանակում է հանրային աշխատանքներ՝ հանրային աշխատանքների քսանչորս ժամը հաշվարկելով հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով (ՀՀ քր. օր., 59-րդ հոդված, 8-րդ մաս):

Ուշադրության է արժանի նաև այն, որ թեև տուգանքի չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում հանցանք կատարած ան-

ձի եկամուտը, սակայն տուգանքը վճարելու անհնարինության դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելիս հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկում է հանցանքը կատարելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի դիմաց:

Եթե հաշվարկի արդյունքում հանրային աշխատանքների ժամկետը գերազանցում է երկու հարյուր յոթանասուն ժամը, ապա նշանակվում է այդքան ժամ հանրային աշխատանքներ: Եթե հաշվարկի արդյունքում հանրային աշխատանքների ժամկետը պակաս է ստացվում վաթսուն ժամից, ապա հանրային աշխատանքները նշանակվում է այն ժամկետով, որը ստացվել է հաշվարկի արդյունքում: Ըստ էության, քրեական օրենսգրքի այս կարգավորումը նպատակ ունի վերացնել տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս առկա այն բացերը, որոնք արձանագրվել էին ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի, այնպես էլ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից³⁷:

Օրենսդիրը հստակեցրել է նաև, թե ով պետք է դիտարկվի տուգանք վճարելուց խուսափող, այն է՝ տուգանքի մասին պրոբացիայի ծառայության կողմից պատշաճ ծանուցվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տուգանքի վճարման անդորրագիրը չի ներկայացրել լիազոր մարմին, և կամ խախտել է տուգանքի վճարումը հետաձգելու կամ տուգանքը մաս առ մաս վճարելու կարգն ու պայմանները բացառությամբ այն դեպքերի, երբ նման արարքները պայմանավորված են եղել անձի նյութական վիճակի վատթարացմամբ (ՀՀ քր. օր., հոդված 59, 14-րդ մաս):

³⁷ Տե՛ս Գաբիկ Սողոմոնյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թ. սեպտեմբերի 13-ի թիվ ՍԴ/0001/15/13 որոշում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թ. ապրիլի 23-ի թիվ ՍԴՈ-1082 որոշում:

Առաջնային խնդիրներից մեկը պետք է համարել տուգանքը չվճարելու պատճառը պարզելը, ինչն էլ թույլ կտա տարանջատել «տուգանքը վճարելու անհնարինությունը» և «տուգանքը վճարելուց խուսափել» հասկացությունները: Այդ մասին անդրադարձ կատարվել է նաև Ռուշան Նիկողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման շրջանակներում³⁸:

Օրենսդիրը սահմանում է նաև տուգանքի վճարման առանձնահատկություններն այն դեպքերում, երբ տուգանքը նշանակվում է որպես լրացուցիչ պատիժ, մասնավորապես՝ եթե այն նշանակվում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ կամ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ, և դատապարտվողը հնարավորություն չի ունենում անհապաղ կամ պատիժը կրելու ընթացքում վճարելու այն, ապա տուգանքի վճարումը կարող է հետաձգվել մինչև հիմնական պատիժը կրելու ավարտը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ քրեական օրենսգրքով տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելու հնարավորություն նախատեսված չէ. օրենսդիրը սահմանում է, որ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնազանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին առկա է: Եթե այդպիսի գույք առկա չէ, ապա տուգանքը փոխարինվում է ազատագրկմամբ՝ ազատագրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

Տուգանքն ազատագրկմամբ փոխարինելիս ազատագրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը

³⁸ Տե՛ս Ռուշան Նիկողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թ.-ի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-171/07 որոշում:

դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքում ազատագրվման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով (ՀՀ քր. օր., հոդված 59, 12-րդ մաս): Եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատագրվում նախատեսված չէ, ապա այդ դեպքում ազատագրվման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում պրոբացիայի ծառայությունն այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արձանագրություն և միջնորդություն ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու կամ տուգանքը ազատագրվմամբ փոխարինելու վերաբերյալ:

Տուգանքը՝ որպես քրեական պատիժ, տարբերվում է նույնանուն վարչական տույժից նրանով, որ նշանակվում է բացառապես հանցագործության համար և դատարանի դատավճռով:

Որոշակի առանձնահատկություններ ունի տուգանքի կիրառումն անչափահասների նկատմամբ: Օրենսդիրը հաշվի է առել անչափահասի հոգեբանական և ֆիզիոլոգիական զարգացման տարիքային ու անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական և նյութական վիճակը: ՀՀ քր. օր. 96-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը կիրառվում է միայն անչափահասի ինքնուրույն եկամտի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է բռնագանձում տարածվել:

ՀՀ քր. օր. 95-րդ հոդվածը քրեական տարբեր պատիժների համար նախատեսված պատժի ժամկետների և չափի հետևյալ տարբերակումն է սահմանում անչափահաս դատապարտյալ-

ներ համար.

Մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: 16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

Տուգանք պատժատեսակը կարող է նշանակվել գրեթե բոլոր ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար թե՛ չափահասների և թե՛ անչափահասների նկատմամբ: Այն նախատեսվում է նաև գույքային բնույթի հանցագործությունների համար, երբ հանցագործը ձգտում է ուրշի հաշվին որևէ նյութական շահ ստանալ: Այս պարագայում տուգանքի կիրառումը ոչ միայն զրկում է նրան շահ ստանալու հնարավորությունից, այլև որոշակի չափով սահմանափակում է նրա անձնական շահերը:

Տուգանքն արդյունավետ պատիժ է նաև անգույշ, գույքային վնաս պատճառելու կամ շահադիտական հանցագործությունների դեմ պայքարի գործում, երբ հաճախ անհրաժեշտություն չկա հանցագործին մեկուսացնել հասարակությունից:

3. Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

Հանրային աշխատանքները դասվում են դատապարտյալին նյութական զրկանքներ պատճառող պատժատեսակների շարքը, բայց, միաժամանակ, այս կամ այն կերպ սահմանափակում է նաև դատապարտյալի ազատությունը: Հանրային աշխատանքների քրեաիրավական էությունը. դատարանի նշանակած և իրավասու մարմնի որոշած վայրում չվարձատրվող, դատապարտյալի ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում նրա կողմից հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարումն է, որոնք չեն վտանգում նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը (ՀՀ քր. օր., 60-րդ հոդված, 1-ին մաս):

Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով և կարող է դատարանի կողմից սահմանվել դատապարտյալի համաձայնությամբ ոչ ավելի, քան օրական 4 ժամ տևողությամբ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 60-270 ժամ տևողությամբ (ՀՀ քր. օր., 60-րդ հոդված, 2-րդ մաս): Հանրային աշխատանքների նվազագույն տևողությունը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է պակաս լինել 60 ժամից:

Քրեական օրենսգրքում հանրային աշխատանքները նախատեսված են ոչ թե որպես ազատագրկման այլընտրանք, ինչպես նախատեսված էր նախին օրենսդրությամբ, այլ՝ ինքնուրույն կիրառվող հիմնական պատիժ: Եթե քրեական նախկին օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում հանրային աշխատանքները որպես ինքնուրույն պատժատեսակ նշված չէին, ապա քրեական նոր օրենսգրքում արդեն ամրագրված են: Վերջինիս համաձայն՝ հանրային աշխատանքները կարող են նշանակվել

քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում, երբ դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով:

Հանրային աշխատանքների՝ որպես հիմնական պատժատեսակի ներգործության ուժն աշխատանքների բովանդակության մեջ է, որոնցում ներգրավվում են դատապարտյալները: Այդ աշխատանքները թեն հանրոքեն անհրաժեշտ են, բայց որպես կանոն ունեն ցածր վարկանիշ. դրանք քաղաքների և ավանների բարեկարգման, փողոցների և հրապարակների մաքրման, բեռնման կամ բեռնաթափման և այլ հատուկ որակավորում չպահանջող աշխատանքներ:

Հանրային աշխատանքների կատարման և կրման կարգը նախատեսված է քրեակատարողական օրենսդրությամբ: Հանրային աշխատանքների կատարումը և վերահսկողությունն օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի հիման վրա ապահովում է պրոբացիայի ծառայությունը: Հանրային աշխատանքների կատարումը կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ (ՀՀ ՔԿՕ, 29-րդ հոդված):

Հանրային աշխատանքներ նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում պարզում է դատապարտյալի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է Պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Հանրային աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը հաշվարկվում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքում փաստացի ներգրավվելու պահից:

Դատապարտյալը պարտավոր է դատավճռով սահմանված

ողջ ժամանակահատվածի ընթացքում պահպանել այն մարմինների կամ կազմակերպությունների ներքին աշխատանքային կանոնները, որտեղ նա կատարում է հանրային աշխատանքները, բարեխիղճ վերաբերմունք դրսևորել աշխատանքին, աշխատել իր համար որոշված վայրերում, ինչպես նաև բնակության վայրը փոխելու դեպքում այդ մասին տեղյակ պահել պրոբացիայի ծառայությանը (ՀՀ ՔԿՕ 29-րդ հոդված, 4-րդ մաս):

Հանրային աշխատանքներ չեն նշանակվում դատավճիռ կայացնելու պահին 15 տարին չլրացած անչափահասի, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ: Այսինքն՝ օրենսդիրը հնարավոր է համարել հանրային աշխատանքներն անչափահասների նկատմամբ կիրառել ոչ թե 16, այլ 15 տարեկանից:

Քրեական օրենսգրքում սահմանված են նաև անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում հանրային աշխատանքների կիրառման հարցը, մասնավորապես՝ եթե հանրային աշխատանքները նշանակելուց հետո տեղի է ունեցել դատապարտյալի առողջական վիճակի այնպիսի վատթարացում, որի պատճառով նա զրկվել է հանրային աշխատանքների հետագա կատարման հնարավորությունից, ապա անձն ազատվում է պատժի հետագա կրումից:

ՀՀ քր. օր. 60-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հանրային աշխատանքները կատարելուց խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը՝

1) մեկ ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների իննսուն տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի.

2) հանրային աշխատանքների կատարման ժամանակ մեկ ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ կոպտորեն խախտել

է աշխատանքային կարգապահության կանոնները.

3) ծանուցվելու դեպքում երկու և ավելի անգամ անընդմեջ կամ օրենքով նախատեսված դեպքում չի ներկայացել տարածքային մարմին.

4) հրաժարվել է հանրային աշխատանքներ կատարելուց:

Ինչպես տուգանք պատժատեսակի պարագայում, հանրային աշխատանքների դեպքում ևս օրենսդիրը կոշտ դիրքորոշում է դրսևորում հանրային աշխատանքները կատարելուց խուսափողների նկատմամբ՝ սահմանելով, որ հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ հանրային աշխատանքների 8 ժամը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց:

Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու կանոնը սահմանելիս օրենսդիրը դրսևորել է նույն մոտեցումը, ինչ և տուգանք պատժատեսակի պարագայում և հստակեցրել, որ ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով (ՀՀ քր. օր., 60-րդ հոդված, 7-րդ մաս): Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում սահմանվող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Պրոբացիայի ծառայողը, վերահսկողություն իրականացնե-

լով, ամիսը առնվազն մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ, այցելում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքների կատարման աշխատավայր՝ եզրափակիչ դատական ակտի պահանջների կատարման ընթացքը վերահսկելու և տվյալ աշխատավայրի վարչակազմից պարզաբանումներ ստանալու նպատակով, որի հիման վրա կազմվում է արձանագրություն: Պրոբացիայի ծառայողի առաջին այցելությունը հանրային աշխատանքների աշխատավայրի վարչակազմ իրականացվում է հանրային աշխատանքներն սկսելու օրը:

Հանրային աշխատանքների ոչ պատշաճ կատարման կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելուց խուսափելու դեպքերում հանրային աշխատանքների աշխատավայրի վարչակազմը պարտավոր է դրա մասին անհապաղ տեղեկացնել Պրոբացիայի ծառայությանը (ՀՀ ՔԿՕ, հոդված 30):

Հանրային աշխատանքների կատարման կարգն ու պայմանները խախտելու դեպքում պրոբացիայի ծառայողը եռօրյա ժամկետում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում է Պրոբացիայի ծառայություն, պարզում է կատարված խախտման պատճառը՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով համապատասխան փաստաթղթեր, և ըստ այդմ կազմում է արձանագրություն: Հարգելի պատճառների բացակայության դեպքում պրոբացիայի ծառայողը դատապարտյալին գրավոր նախազգուշացնում է օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

Հանրային աշխատանքներից խուսափելու դեպքում պրոբացիայի ծառայողն այդ մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմում է արձանագրություն և միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ (ՀՀ ՔԿՕ, հոդված 31):

ՀՀ քր. օր. 97-րդ հոդվածը սահմանում է անչափահասի

նկատմամբ նշանակվող հանրային աշխատանքները՝ սահմանելով, որ նրանք չեն կարող ներգրավվել իրենց ֆիզիկական կամ հոգևոր զարգացման կամ առողջության համար վտանգ ներկայացնող աշխատանքներում և հանրային աշխատանքների տևողությունը դատավճիռ կայացնելու պահին տասնհինգ տարին լրացած անչափահասների համար չի կարող գերազանցել օրական երկու, իսկ տասնվեցից տասնութ տարին չլրացած անչափահասների համար՝ երեք ժամը:

4. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

Պատժի այս տեսակը պայմանականորեն բաժանվում է երկու մասի: Պետական հարկադրանքի առաջին միջոցը՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը, որոշակի պաշտոններ զբաղեցնելն արգելելն է (ՀՀ քր. օր., 61-րդ հոդված, 1-ին մաս): Պետական հարկադրանքի երկրորդ միջոցը՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, կատարված հանցանքի բնույթով պայմանավորված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է (ՀՀ քր. օր., 61-րդ հոդված, 1-ին մաս): Վերջինս ընդգրկում է դատապարտյալի ինչպես ծառայական, այնպես էլ ծառայությունից դուրս գործունեությունը: Ծառայական է համարվում, օրինակ, մանկավարժական, բժշկական գործունեությունը կամ վարձակալության պայմանագրով տրանսպորտային միջոցներ վարելը և այլն: Ոչ ծառայական է համարվում իրավական կարգավորում ունեցող մշտական գործունեությունը (օրինակ՝ անհատական աշխատանքային գործունեությունը, անձնական տրանսպորտային միջոցներ վարելը, որսորդությամբ, ձկնորսությամբ զբաղվելը և այլն): Պետական հարկադրանք-

քի այս երկու միջոցները կարող են փոխկապակցված լինել, քանի որ որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելը ենթադրում է նաև դատապարտյալին զրկել դրա հետ կապված պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:

Այս պատժատեսակը կարող է նշանակվել և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, որպես հիմնական պատիժ, սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար երկուսից մինչև յոթ տարի ժամկետով (ՀՀ քր. օր., 61-րդ հոդված, 3-րդ մաս): Որպես հիմնական պատիժ՝ այն կարող է նշանակվել, երբ այդ մասին ուղղակիորեն նշված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (ՀՀ քր. օր., 72-րդ հոդված), պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս (ՀՀ քր. օր., 88-րդ հոդված), պատիժ նշանակելը համաձայնության կամ համագործակցության վարույթի դեպքում (ՀՀ քր. օր., 77-րդ հոդված):

Որպես լրացուցիչ պատիժ՝ այս պատժատեսակը սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 1-3 տարի, իսկ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար՝ 1-5 տարի ժամկետով (ՀՀ քր. օր., 61-րդ հոդված, 4-րդ մաս):

Քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիաներում լրացուցիչ պատժատեսակները, այդ թվում նաև՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, նախատեսված չեն: Օրենսդիրը սահմանել է այն հիմքերը, որոնք պետք է կիրառվեն քննարկվող պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս: Մասնավորապես՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացու-

ցիչ պատիժ կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այս հարցին անդրադարձ է կատարել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ իր որոշումներում³⁹: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ որպես հիմնական (հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս) կամ լրացուցիչ պատիժ նշանակելիս այն տարածվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելու ամբողջ ժամանակահատվածի վրա, իսկ դրա ժամկետի հաշվարկն սկսվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց հետո: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը մնացած պատժատեսակների հետ նշանակելիս դրա ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Այս ձևակերպումից հետևում է, որ այն որպես լրացուցիչ պատժատեսակ կարող է կիրառվել ցանկացած պատժատեսակի հետ՝ ինչպես ազատությունից զրկելու հետ կապված, այնպես էլ չկապված: Քննարկվող պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ կիրառելու հարցերին անդրադարձ կատարվել է ՀՀ Վճռաբեկ դատարան-

³⁹ Տե՛ս Լիլիթ Վարդանյանի, Զարինե Այվազյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թ. հունիսի 24-ի թիվ ԵԱՔԴ/0016/01/14 որոշում, Աշոտ Գևորգյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թ. նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0044/01/15 որոշում:

նի որոշման մեջ⁴⁰:

Այս պատժատեսակի կիրառումը բխում է այն հանցագործությունների ռեցիդիվի կանխման անհրաժեշտությունից, որոնք կապված են հանցավորի պաշտոնական դիրքի կամ մասնագիտական գործունեության հետ: Այն կարող է խիստ արդյունավետ լինել, օրինակ, այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են կաշառք ստանալու, սպառողներին խաբելու, տրանսպորտային և այլ հանցագործությունների համար: Այդ մասին է վկայում նաև դատական պրակտիկան. այս պատժատեսակն առավել հաճախ կիրառվում է պաշտոնատար անձանց, տրանսպորտի, առևտրի համակարգի աշխատակիցների, բուժաշխատողների և այլոց նկատմամբ:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակի նշանակման հիմք են հանցանք կատարած անձի կողմից պետական ծառայության ոլորտում պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու անհնարինությունը և աննպատակահարմարությունը: Նման վերաբերմունք պետք է բխի ինչպես հանցագործության հատկանիշներից, այնպես էլ դատապարտյալի անձից: Այս պարագայում հանցագործության բնույթը կանխորոշվում է զբաղեցրած պաշտոնով կամ գործունեությամբ, այսինքն՝ օրենսդիրը նախատեսում է այս պատժատեսակը դատապարտյալի կողմից նմանատիպ հանցագործությունները կանխելու համար: Եթե հանցագործության բնույթը կապված չէ մասնագիտական գործունեության հետ, ապա դատապարտյալը չի կարող զրկվել այդ իրավունքից:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելու էությունն այն է, որ մեղադրական դատավճռի ուժով դատա-

⁴⁰ Տե՛ս Գագիկ Գևորգյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2021 թ. փետրվարի 19-ի թիվ ԵՂ/1090/01/19 որոշում:

պարտյալի և հիմնարկի, ձեռնարկության կամ կազմակերպության (պետական, հասարակական) վարչակազմի միջև աշխատանքային պայմանագիրը դադարում է: Այստեղ պաշտոն ասելով չպետք է հասկանալ միայն պետական իշխանության ներկայացուցչի կամ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթների կատարումը: Այն ավելի լայն հասկացություն է և ընդգրկում է պաշտոնների ավելի մեծ շրջանակ, օրինակ՝ զանձապահ, հաշվապահ և այլն:

Դատավճռով որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը դատապարտյալին որոշակի մասնագիտությամբ որևէ բնագավառում աշխատելն արգելելն է: Այս կամ այն իրավունքից զրկելը կիրառվում է, երբ հանցագործության բնույթից ելնելով՝ դատարանն անհնարին է համարում որոշակի պաշտոն զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այս պատժատեսակի պատժիչ էությունն այն է, որ դատապարտյալը զրկվում է պաշտոնի ազատ ընտրության, ժամանակի ընթացքում որոշակի գործունեության իրականացման իրավունքից: Բացի այդ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարող է հանգեցնել դատապարտյալի նախորդ պաշտոնով կամ գործունեությամբ իրեն վերապահված օրինական իրավունքների սահմանափակման կամ կորստյան, անընդմեջ մասնագիտական աշխատանքային ստաժի ընդհատման և, վերջապես, աշխատավարձի կրճատման:

Այն հանգամանքը, որ դատավճիռ կայացնելու պահին դատապարտյալն արդեն չի զբաղեցնում հանցագործության հետ կապված համապատասխան պաշտոնը կամ չի զբաղվում համապատասխան գործունեությամբ, արգելք չէ այդ պատիժը նշանակելու համար: Դատարանն իրավասու է նաև կիրառել այս պատժատեսակը, երբ դատապարտյալը զբաղեցրել է այդ պաշտոնը

կամ զբաղվել է որոշակի գործունեությամբ ոչ մշտապես, այլ հրամանով կամ ցուցումով ժամանակավորապես կատարել է համապատասխան պարտականությունները:

Պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում պատիժը փոխարինվում է ազատազրկմամբ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու 3 օրը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ազատազրկմամբ փոխարինելիս ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով (ՀՀ քր. օր., 61-րդ հոդված, մաս 7-րդ): Այս կանոնով է իրականացվում հաշվարկը, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման կարգն ու պայմանները նախատեսված են քրեակատարողական օրենսդրությամբ: Այս պատժի կատարումն ապահովում է պրոբացիայի ծառայությունը:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտը ստանալուց հետո

պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում նրան պատշաճ ծանուցում է պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, կազմում է անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ:

Եթե դատապարտյալը գրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից, ապա պրոբացիայի ծառայությունը եզրափակիչ դատական ակտն ստանալուց հետո դրա պատճենն անհապաղ ուղարկում է դատապարտյալի աշխատավայրի վարչակազմ, իսկ եթե գրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ այդ իրավունքը տրամադրած մարմին կամ կազմակերպություն (ՀՀ ՔԿՕ, հոդված 32):

Եթե դատապարտյալը գրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, ապա պրոբացիայի ծառայությունը համապատասխան նշում է կատարում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վարվող տվյալների շտեմարանում, որտեղ պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ ստուգվում են դատապարտյալի կողմից աշխատանքի կատարման կամ գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ տվյալները:

Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունք տրամադրելու կամ այն վերացնելու իրավասություն ունեցող մարմինը կամ կազմակերպությունը, ստանալով եզրափակիչ դատական ակտի պատճենը, համապատասխան նշում է կատարում իր կողմից վարվող տվյալների շտեմարանում և դատապարտյալի կողմից որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուց հետո այդ գործունեությամբ զբաղվելու փաստ հայտնաբերելու դեպքում հայտնում է պրոբացիայի ծառայությանը:

Դատապարտյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառման կամ ազատությունից

գրկելու հետ կապված պատիժ նշանակվելու դեպքում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով նշանակված պատժի կատարումը կասեցվում է մինչև համապատասխանաբար նշված խափանման միջոցի ժամկետը լրանալը կամ այն փոփոխելը կամ վերացնելը կամ նշանակված պատժի կրման ավարտը: Այդ դեպքում այսպիսի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու կատարման կասեցումը վերացնում է Պրոբացիայի ծառայությունը, իսկ պատժի կատարումը շարունակվում է ընդհանուր կարգով:

Այս պատժատեսակի դատապարտված անձանց պարտականություններն են՝ կատարել դատավճռի պահանջները, Պրոբացիայի ծառայողների օրինական պահանջները, ներկայացնել փաստաթղթեր, որոնք կապված են պատիժը կրելու հետ, հաշվառման ներկայանալուց հետո տեղեկանք ներկայացնել աշխատանքի և զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ, իսկ նոր աշխատանքի անցնելու դեպքում՝ տեղեկանք նոր աշխատանքի և զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ:

ՀՀ ՔԿՕ-ի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մասին օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի պահանջները պարտադիր են դատապարտյալի աշխատավայրի վարչակազմի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այն մարմինների կամ կազմակերպությունների համար, որոնք իրավասու են նման գործունեությամբ զբաղվելու թույլտվություն տալու կամ վերացնելու այն:

Դատապարտյալի աշխատավայրի վարչակազմը պարտավոր է՝ ապահովել եզրափակիչ դատական ակտի պահանջների կատարումը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել եզրափակիչ դատական ակտով դատապարտյալին արգելված պաշտոնները

գրադեցնելու կամ արգելված գործունեությամբ զբաղվելու հետ կապված բոլոր իրավունքներից զրկելու ուղղությամբ, դատապարտյալի հետ աշխատանքային պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու դեպքում ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնել պրոբացիայի ծառայությանը (ՀՀ ՔԿՕ, հոդված 32, 2-րդ մաս):

Որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունք տրամադրելու կամ այն վերացնելու իրավասություն ունեցող մարմինը կամ կազմակերպությունը եզրափակիչ դատական ակտի պատճենը և Պրոբացիայի ծառայության ծանուցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է վերացնել դատապարտյալին արգելված գործունեությամբ զբաղվելու իրավունքի թույլտվությունը կամ սահմանված ժամկետով կասեցնել դրա գործողությունը՝ զրկելով որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ այդ մասին տեղեկացնելով պրոբացիայի ծառայությանը (ՀՀ ՔԿՕ, հոդված 32, 3-րդ մաս):

5. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

Այս պատժատեսակը քրեական օրենսգրքի պատժի համակարգի նորամուծություններից է, որը ՀՀ նախկին քրեական օրենսդրությունը չէր նախատեսում: ՀՀ քր. օր. 62-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթակա օտարերկրյա քաղաքացուն ՀՀ սահմաններից հեռացնելն է՝ արգելելով գտնվել ՀՀ-ում՝ 5-ից 10 տարի ժամկետով: Այս պատժատեսակի ժամկետի հաշվարկը սկսվում է ՀՀ տարածքից վտարելու պահից:

Օտարերկրյա քաղաքացին կարող է վտարվել իր քաղաքացիության պետություն կամ այն պետություն, որտեղ վերջինս մշտապես բնակվում է: Վտարման երկիրը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով դատապարտյալի կարծիքը:

Այս պատժատեսակը լրացուցիչ պատժատեսակ է, որը կարող է կիրառվել բացառապես օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ՝ պայմանով, որ վերջիններս չեն օգտվում չվերադարձելիության սկզբունքից կամ ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով սահմանված համանման պաշտպանությունից: ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ այս պատժատեսակը կիրառվել չի կարող: Այն կիրառելի չէ նաև ՀՀ կամ միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված չվերադարձելիության սկզբունքից օգտվող անձանց (օրինակ՝ փախստականների, ապաստան ստացած, ապաստան հայցող անձանց) նկատմամբ, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Չվերադարձելիության սկզբունքից օգտվող անձանց շրջանակը սահմանված է միջազգային իրավական փաստաթղթերով⁴¹, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով⁴²:

Քրեական օրենսգիրքը պարզաբանում է, որ այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝

1) մինչև հանցանք կատարելը ՀՀ քաղաքացու կամ ՀՀ հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ ՀՀ մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,

2) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական

⁴¹ Տե՛ս Convention Relating to the Status of Refugees, 28.07.1951, Protocol Relating to the Status of Refugees, 16.12.1966:

⁴² Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, 27.11.2008:

հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,

3) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար,

4) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (ՀՀ քր. օր., 62-րդ հոդված, 6-րդ մաս):

Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կատարվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատիժը կրելուց հետո: Այն դեպքում, երբ արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմինը ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համաձայնություն է ձեռք բերում դատապարտյալին պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու վերաբերյալ, ապա օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը համարվում է ի կատար ածված դատապարտյալի փոխանցումն իրականացնելու մասին արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո: Այն դեպքում, երբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքով կայացվել է անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշում, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կատարվում է փորձաշրջանն ավարտվելուց հետո:

Օրենսդիրը հստակ ընդգծում է, որ ՀՀ-ից չի կարող վտարվել այն անձը, որի նկատմամբ նշանակվել է այս պատժատեսակը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բե-

րել փախստականի կամ ՀՀ ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու կատարման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ:

ՀՀ ՔԿՕ-ի 35-րդ հոդվածը սահմանում է օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու կատարման կարգը: Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու կատարման նկատմամբ վերաբերելի մասով կիրառվում են ՀՀ ՔԿՕ-ով ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների կատարման համար նախատեսված կարգավորումները՝ հաշվի առնելով այս պատժատեսակի համար նախատեսված առանձնահատկությունները:

Պրոբացիայի ծառայողն ազատությունից զրկելու հետ չկապված հիմնական պատժի դեպքում՝ պատժի կատարման ժամկետն ավարտվելուց առնվազն հինգ օր առաջ, իսկ ազատությունից զրկելու հետ կապված պատժի դեպքում պատժի կատարման ժամկետն ավարտվելուց առնվազն մեկ ամիս առաջ օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի պատճենն ուղարկում է ՀՀ ոստիկանություն՝ անհրաժեշտ աջակցություն ստանալու նպատակով:

Օտարերկրյա քաղաքացու վտարման օրը, երթուղին, պետական սահմանի անցման կետը և վտարմանն առնչվող՝ եզրափակիչ դատական ակտով չկարգավորված այլ հարցերը որոշում է պրոբացիայի ծառայությունը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության և այլ պետական մարմինների հետ:

6. Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

ՀՀ քր. օր.-ի 63-րդ հոդվածի համաձայն՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցանք կատարած սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողին իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր (այդ թվում՝ ավելի բարձր վարձատրվող) պաշտոնի նշանակվելու, ավելի բարձր հերթական կոչում ստանալու իրավունքից զրկելն է՝ դրամական բավարարման գումարից հոգուտ պետության 10-ից մինչև 20 տոկոս պահումով:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակելու ժամկետով դատարանը կարող է սահմանել կրթական կամ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու լրացուցիչ պարտականություն:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը չի կարող նշանակվել, եթե առկա է հանցանքների կամ դատավճիռների համակցություն, և կատարված հանցագործություններից մեկի համար կարող է նշանակվել ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակում պատժատեսակը կրելու ընթացքում օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից դատապարտյալի ազատվելու դեպքում պատժի կատարումը դադարեցվում է: Զինվորական ծառայությունից դատապարտյալի՝ իր դիմումի համաձայն ազատվելու դեպքում պատիժը փոխարինվում է տուգանքով՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման 1 ամիսը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց՝ ոչ ավելի, քան տուգանքի տասնապատիկի չափով:

ՀՀ քր. օր.-ն այս պատժատեսակը նախատեսում է որպես խառը տեսակի պատիժ, այսինքն՝ այն կարող է կիրառվել ն՝ որ-

պէս հիմնական, և՛ որպէս լրացուցիչ: Օրենսդիրը հստակեցրել է, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը որպէս հիմնական պատիժ կարող է նշանակվել քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար որպէս հիմնական պատիժ սահմանվում է երեք ամսից երեք տարի, իսկ որպէս լրացուցիչ պատիժ՝ երեք ամսից երկու տարի ժամկետով:

Կարծում ենք՝ խնդրահարույց է այն հարցը, թե որպէս լրացուցիչ պատժատեսակ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը կարող է արդյոք կիրառվել տուգանք պատժատեսակի հետ, քանի որ երկուսն էլ գուքային սահմանափակումով պատժատեսակներ են, այսինքն՝ նախատեսում են անձի եկամտի որոշակի մասը հոգուտ պետության բռնագանձում: Օրենսդիրն այս հարցը թողնում է անպատասխան, և մեր կարծիքով՝ աննպատակահարմար է այս պատժատեսակների գուգակցումը:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակում կատարելու կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ ՔԿՕ-ով, որի 37-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունն ապահովում է զինվորական ծառայության մեջ սահմանափակում կատարելու, ինչպէս նաև դատապարտյալի կողմից կրթական կամ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու լրացուցիչ պարտականության կատարումը, եթե այդպիսին սահմանել է դատարանը:

7. Ազատության սահմանափակումը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

ՀՀ քր. օր.-ի 64-րդ հոդվածի համաձայն՝ ազատության սահմանափակումը դատապարտյալին առանց ուսումնառությունից

կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է: Այն նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ վեց ամսից երեք տարի ժամկետով: Դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների, հավաքների կամ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը կամ որոշակի ժամերի բացակայել տանից: Օրենսդիրը հստակ սահմանել է, որ դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, դատապարտյալի նկատմամբ սահմանում է վերը թվարկված արգելքներից մեկը կամ մի քանիսը:

Օրենսդիրը նաև հստակ պահանջում է, որ դատարանի նշանակած արգելքները չսահմանափակեն դատապարտյալի հետ բնակվող անձանց ազատության կամ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը: Այս դրույթը կիրառման առումով ունի կարևոր նշանակություն, քանի որ անձի նկատմամբ ազատության սահմանափակում պատժատեսակը նշանակելիս պետք է առավելագույնս հաշվի առնվեն նրա հետ ապրող անձանց իրավունքների հնարավոր սահմանափակումները: Հետևաբար, պատիժ նշանակելիս պետք է հնարավորինս հաշվի առնել դատապարտյալի բնակության միջավայրը կամ ստանալ նրա հետ համատեղ ապրող անձանց կամավոր համաձայնությունը՝ իրենց հետ համատեղ բնակվող դատապարտյալի նկատմամբ այս պատժատեսակը կատարելու արդյունքում՝ իրենց իրավունքների կամ ազատությունների որոշակի իմաստով սահմանափակման վերաբերյալ:

Որոշակի ժամերի տանից բացակայելու արգելքը չի կարող պակաս լինել օրական ութ և չի կարող ավելի լինել օրական

տասներկու ժամից:

Օրենսդրական կարգավորում չի ստացել այս պատժատեսակը հերթափոխով (24 ժամ) աշխատող անձանց նկատմամբ կիրառելու հարցը, օրինակ՝ հերթապահող բուժաշխատողների, անվտանգության ոլորտում ծառայողների և այլն: Քրեական օրենսգրքում նման անձանց նկատմամբ ազատության սահմանափակում նախատեսելու արգելքի բացակայությունը նշանակում է դրա կիրառման հնարավոր լինելը:

Օրենսդիրը սահմանում է, որ դատապարտյալի՝ ազատության սահմանափակում պատժից խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ ազատության սահմանափակման 2 օրը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել տվյալ պատժատեսակի համար նախատեսված այն առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Դատապարտյալը պատժից խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 15 օրվա ընթացքում, կամ վեց ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ չի պահպանում դատարանի կողմից իր վրա դրված արգելքները:

Ազատության սահմանափակման կատարման կարգն ու

պայմանները սահմանվում են քրեակատարողական օրենսդրությամբ: ՀՀ ՔԿՕ-ի 39-րդ հոդվածի համաձայն՝ ազատության սահմանափակման կատարումն ապահովում է պրոբացիայի ծառայությունը: Ազատության սահմանափակման կատարումն իրականացվում է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ:

Ազատության սահմանափակումը նշանակելու մասին օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում, դատապարտյալին պատշաճ ծանուցում է պրոբացիայի ծառայություն ներկայանալու վերաբերյալ, ինչպես նաև կազմում է անձնական գործ: Դատապարտյալը վերցվում է հաշվառման, լրացվում է հաշվառման քարտ, կազմվում է վերահսկողության պլան, նրան ստորագրությամբ անհապաղ պարզաբանվում են պատժի կատարման կարգն ու պայմանները, իր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև դրանց չկատարման դեպքում օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությունը:

Վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայողն իրավունք ունի այցելելու դատապարտյալի բնակության վայր (բացառիկ դեպքերում՝ դատապարտյալի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ նաև գիշերային ժամերին), նրան կանչելու Պրոբացիայի ծառայություն, ստանալու գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, բնակության, ուսման կամ աշխատանքի վայրից, կրթական հաստատությունից պահանջելու և ստանալու պատժի կատարման համար անհրաժեշտ՝ դատապարտյալի վարքագծի վերաբերյալ տեղեկություններ:

Դատապարտյալի հետ բնակվող անձինք պարտավոր են չխոչընդոտել պրոբացիայի ծառայողի գործունեությունը: Վեր-

ջինս պետք է հնարավորինս խուսափի դատապարտյալի հետ բնակվող անձանց անհանգստություն պատճառելուց:

Այն դեպքում, երբ դատարանը սահմանել է առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության բնակության վայրը փոխելու արգելք, ապա դատապարտյալը բնակության վայրը փոխելու համար համաձայնություն ստանալու նպատակով դիմում է պրոբացիայի ծառայություն, որը դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում է որոշում: Նման պարագայում պրոբացիայի ծառայությունը կարող է թույլատրել դատապարտյալին փոխել բնակության վայրը միայն բացառիկ հանգամանքների առկայության դեպքում: Բացառիկ հանգամանքներ են՝ դատապարտյալի ծանր հիվանդությունը և այլ վայրում բժշկական համապատասխան օգնություն ստանալու անհրաժեշտությունը, մերձավոր ազգականի⁴³ մահը կամ ծանր հիվանդությունը, արտակարգ իրավիճակը, կրթություն ստանալու կամ այլ վայրում աշխատանքի անցնելու հիմքով բնակության այլ վայր տեղափոխվելու անհրաժեշտությունը կամ այլ հանգամանքներ, որոնք ողջամտորեն անհամատեղելի են տվյալ վայրում պատժի կատարման հետ:

Դատապարտյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառման կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նշանակվելու դեպքում ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժի կատարումը կասեցվում է մինչև նշված խափանման միջոցի ժամկետը լրանալը կամ այն փոփոխելը կամ վերացնելը կամ նշանակված

⁴³ Այստեղ հարկ ենք համարում նշել, որ այս պատժատեսակի և ՀՀ ՔԿՕ իմաստով՝ մերձավոր ազգական է համարվում ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, երեխան, այդ թվում՝ խորթ երեխան, եղբայրը, քույրը, պապը, տատը և թոռը:

պատժի կրման ավարտը: Այդ դեպքում ազատության սահմանափակման կատարման կասեցումը վերացնում է պրոբացիայի ծառայությունը:

Ազատության սահմանափակման կատարումից խուսափելու դեպքում պրոբացիայի ծառայությունն այդ մասին կազմում է արձանագրություն և երեք աշխատանքային օրվա ընթացքում միջնորդություն է ներկայացնում դատարան՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված ազատության սահմանափակումն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ:

Պատիժը կրելուց հետո պրոբացիայի ծառայությունը դատապարտյալին տալիս է տեղեկանք՝ պատիժը կրած լինելու մասին և այդ մասին հայտնում դատական ակտը կայացրած դատարանին, ՀՀ ոստիկանություն, իսկ անձնական գործն արխիվացվում է:

ԳԼՈՒԽ 7

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Կարճաժամկետ ազատազրկման կատարման կարգն ու պայմանները

Պատժի համակարգում կարճաժամկետ ազատազրկում պատժատեսակի ընդգրկման գաղափարը քրեական իրավունքի տեսության մեջ քննարկվել է դեռ շատ վաղուց: Մեր օրենսդիրն ընդունելի է համարել այս պատժատեսակը և այն նախատեսել պատժի համակարգում:

ՀՀ քր. օր. 65-րդ հոդվածի համաձայն՝ կարճաժամկետ ազատազրկումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում անազատության մեջ պահելն է, որը դատարանը նշանակում է տասնհինգ օրից մինչև երկու ամիս ժամկետով: Ընդ որում կարճաժամկետ ազատազրկումը նշանակվում է նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած անձի նկատմամբ: Կարճաժամկետ ազատազրկման նվազագույն ժամկետը կարող է տասնհինգ օրից պակաս լինել:

Կարճաժամկետ ազատազրկումը դասվում է հիմնական պատիժների շարքը և որպես այդպիսին՝ դատարանի կողմից կարող է նշանակվել, երբ այդ մասին ուղղակիորեն նշված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում, ինչպես նաև օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս (ՀՀ քր. օր., 72-րդ հոդված), պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս (ՀՀ քր. օր., 88-րդ հոդված):

ՀՀ քր. օր. 98-րդ հոդվածի համաձայն՝ կարճաժամկետ ազատազրկումն անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն

դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը: Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության է, անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում:

Այս պատժատեսակը հանցագործի նկատմամբ բարոյական ներգործության միջոց է, հատկապես եթե նա առաջին անգամ է հայտնվել մեղադրյալի աթոռին⁴⁴: Այն, ըստ էության, դատապարտյալի համար բացահայտում է քրեական պատժի էությունը և նախազգուշացնում նրան, որ այս պատժատեսակին կարող է հաջորդել ավելի երկարաժամկետ պատիժ՝ ազատազրկման ձևով: Կարճաժամկետ ազատազրկումը կարող է կիրառվել առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձանց նկատմամբ, որոնց երկարատև ազատազրկման դատապարտելն աննպատակահարմար է:

ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը (2003թ.) իրավացիորեն չէր նախատեսում նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատժի կրած լինելու արգելքը կարճաժամկետ ազատազրկում նշանակելու համար և այդ պարագայում ենթադրվում էր, որ կարճաժամկետ ազատազրկումը պետք էր կիրառել երկու ակներև դեպքերում. նախ՝ երբ հանցագործը նախկինում ազատազրկման ձևով պատիժ չէր կրել, և նրա անձը բնութագրվում է բացասականորեն: Նման պարագայում կարճաժամկետ, բայց արդյունավետ ներգործությունը կարող է ստիպել նրան ձեռնպահ մնալ նոր հանցագործություններից: Երկրորդ՝ երբ հանցագործը նախկինում կրել էր որևէ քրեական պատիժ, այդ թվում՝ ազատազրկում, բայց քրեական օրենքի սանկցիան, որով նա կրկին

⁴⁴ См. у **Зубков А.И.** Уголовно-исполнительное право России. М., 1997, էջ 442:

ենթարկվում էր պատասխանատվության, չի պարունակում ավելի խիստ պատժատեսակ, քան կարճաժամկետ ազատազրկումն է⁴⁵: Նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած լինելու արգելքը խնդիրներ է առաջացնելու դատարանի համար, մասնավորապես այն հանցակազմերով, որոնց սանկցիաները չեն նախատեսում կարճաժամկետ ազատազրկումից ավելի խիստ պատիժ:

Կարճաժամկետ ազատազրկման քրեաիրավական նշանակությունն այն է, որ այս պատժատեսակի քրեաիրավական ներգործությունն իրականացվում է դատապարտվածների՝ հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում, պատժի կատարման առանձնահատուկ կարգին և պայմաններին համապատասխան, որը և սահմանվում է քրեակատարողական օրենսդրությամբ:

ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը սահմանում է կարճաժամկետ ազատազրկման կատարման կարգն ու պայմանները (ՀՀ ՔԿՕ, 13-րդ գլուխ):

Դատապարտյալները կարճաժամկետ ազատազրկումը կրում են քրեակատարողական հիմնարկներում և, որպես կանոն, նույն վայրում: Դատապարտյալը պատիժը կրելու մեկ վայրից մյուսը փոխադրելը թույլատրվում է, եթե պահանջվում է բուժում հիվանդանոցային պայմաններում, կամ՝ դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովելու համար (տվյալ դեպքում սպառնալիքը կարող է բխել այլ դատապարտյալներից), և այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք խոչընդոտում են դատապարտյալի տվյալ քրեակատարողական հիմնարկում մնալը: Բացառիկ հանգամանքներ ասելով պետք է

⁴⁵ Այս հարցի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ տրվում է նման մեկնաբանություն: См и **Миллюков С.Ф.** Российская система наказаний. СПб, 1998, էջ 21:

հասկանալ ցանկացած արտակարգ իրադրություն (ջրհեղեղ, երկրաշարժ, հրդեհ և այլն), ինչպես նաև դատապարտյալի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակը՝ կապված նրա հոգեկան ապրումների հետ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ վերջիններս կարող են հանգեցնել ինքնասպանության (սուիցիդի) և այլն:

Հասարակությունից խիստ մեկուսացման էությունը այն է, որ կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածների և բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող ազատազրկման դատապարտվածների համար նախատեսված պատժի կրման պայմանները միևնույնն են, բայց սահմանափակումներ ի բնույթով դրանք ավելի խիստ են:

Կարճաժամկետ ազատազրկման կատարումը դատապարտված զինծառայողների նկատմամբ ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող կայազորային կարգապահական մեկուսարանը: Զինծառայող դատապարտյալների վրա տարածվում են ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված կարճաժամկետ ազատազրկման կատարման պայմանները, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

Սպայական կազմի դատապարտված զինծառայողները (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց) պահվում են շարքային կազմի դատապարտված զինծառայողներից անջատ, իսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված ժամկետային դատապարտված զինծառայողները՝ պայմանագրային զինծառայողներից:

Կարճաժամկետ ազատազրկման կատարման ժամանակահատվածն ընդհանուր զինվորական ծառայության և հերթական զինվորական կոչում ստանալու համար անհրաժեշտ ծառայության ժամկետի մեջ չի հաշվակցվում: Կարճաժամկետ ազատազրկման դատապարտված զինծառայողը չի կարող ներկայաց-

վել հերթական զինվորական կոչման, բարձրացվել պաշտոնում, տեղափոխվել ծառայության նոր վայր, ազատվել զինվորական ծառայությունից, բացառությամբ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքերի:

Նրանց նյութակենցաղային և բժշկական օգնության ու սպասարկման ապահովումը, խրախուսանքի և տույժի միջոցների կիրառումն իրականացվում են զինվորական կանոնագրքերով սահմանված չափանիշներով:

ՀՀ ՔԿՕ-ն ընդարձակել է կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածների իրավունքների շրջանակը: Այսպես՝ 44-րդ հոդվածը նախատեսում է դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ ապահովելու համար հնարավոր պայմաններ՝ տեսակցության սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հնարավորություն: Դատապարտյալը պատժի ընթացքում ունի առնվազն մեկ կարճատև (մինչև չորս ժամ տևողությամբ) տեսակցության իրավունք, որը տրամադրվում է միայն մերձավոր ազգականների հետ:

Անչափահաս դատապարտյալին տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն երկու կարճատև (մինչև չորս ժամ տևողությամբ) տեսակցություն՝ ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ:

Դատապարտյալին տրվում է մեկ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ հեռախոսակապից և մեկ անգամ տեսազանգից օգտվելու իրավունք:

Բացառիկ հանգամանքների դեպքում՝ մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, արտակարգ իրավիճակ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին, ինչպես նաև իր երեխային

պետական կամ այլ հաստատությունում կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով կարող է տրամադրվել լրացուցիչ կարճատև տեսակցություն կամ հեռախոսակապից օգտվելու հնարավորություն կամ կարճատև մեկնում՝ մինչև երեք օր ժամկետով՝ չհաշված մեկնելու և վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը (ՀՀ ՔԿՕ, հոդված 44, մաս 6-րդ):

Դատապարտյալին թույլատրվում է իր հաշվին վարել նամակագրություն, որի գաղտնիությունը երաշխավորում ու պահպանում է քրեակատարողական հիմնարկը: Նամակագրությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով՝ առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին գննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով (ՀՀ ՔԿՕ, հոդված 44, մաս 7-րդ):

Կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածն օգտվում է նաև առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զրոսանքի իրավունքից:

Քրեակատարողական օրենքը նախատեսում է նաև կարգապահական ներգործության միջոցների կիրառումը կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ: Պատիժը կատարող հիմնարկի պետը դատապարտյալի դրական վարքագծի, աշխատանքի կամ ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի համար քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով սահմանված կարգով կարող է կիրառել խրախուսանքի հետևյալ միջոցները՝ շնորհակալություն, զրոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով, հեռախոսակապից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ ամսական լրացուցիչ մեկ թույլտվությունից ոչ ավելի, տեսազանգից լրացու-

ցիչ օգտվելու թույլտվություն՝ ամսական լրացուցիչ մեկ թույլտվությունից ոչ ավելի, կարճատև տեսակցությունից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ պատժի կատարման ընթացքում մեկ թույլտվությունից ոչ ավելի, նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում (ՀՀ ՔԿՕ, 46-րդ հոդված):

Ինչ վերաբերում է կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ կիրառվող տույժի միջոցներին, ապա քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար դատապարտյալի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, նկատողություն, տեսակցության իրավունքի սահմանափակում, հեռախոսակապից օգտվելու իրավունքի սահմանափակում, տեսազանգից օգտվելու իրավունքի սահմանափակում, տեղափոխում պատժախուց՝ մինչև 10 օր ժամկետով (ՀՀ ՔԿՕ, 47-րդ հոդված):

Կարճաժամկետ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցների կիրառման կարգը, նրանց նյութակենցաղային ապահովումը և բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են ազատազրկման դատապարտվածների համար ՀՀ ՔԿՕ-ով սահմանված կարգով:

Եզրափակելով այս պատժատեսակի բովանդակության շարադրումը՝ նշենք, որ ՀՀ քր. օր. Հատուկ մասի հոդվածների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ կարճաժամկետ ազատազրկումը կիրառվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար: Շուկայական տնտեսության պայմաններում կարճաժամկետ ազատազրկման նշանակումը, կարծում ենք, առավել արդյունավետ կարող է լինել տնտեսական գործունեության, ծառայական գործունեության բնագավառներում, ինչպես նաև կենցաղային հողի վրա կատարվող հանցավոր արարքների դեմ պայքարի գործում:

2. Կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակի կատարման կարգն ու պայմանները

Այս պատժատեսակը նորություն չէ պատիժների համակարգում և տեղ էր գտել նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքերում, իհարկե փոքր-ինչ այլ ձևակերպմամբ՝ կարգապահական գումարտակ ուղարկելը: Այստեղ պահելու կատարումն ապահովում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող կարգապահական գումարտակը (ՀՀ ՔԿՕ, 13-րդ հոդված, 5-րդ մաս): Այն խիստ արդյունավետ պատժատեսակ է. այդ մասին է վկայում դրա կիրառման բազմամյա փորձը, բայց դա ներկայումս չի կիրառվում:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված՝ կարգապահական գումարտակում պահելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնելու օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան կարգապահական գումարտակ ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո:

ՀՀ քր. օր. 66-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում պահելը հանցանք կատարած զինծառայողին (բացառությամբ սպայական և ավագ ենթասպայական կազմերի) մեկուսացման պայմաններում անազատության մեջ պահելն է:

Կարգապահական գումարտակում պահելը հիմնական պատժատեսակ է և նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ կատարած զինծառայողի նկատմամբ՝ 3 ամսից 3 տարի ժամկետով, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած դատապարտյալի անձը, նպատակահարմար է համարում առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը՝ նույն ժամկետով:

Ազատագրկման փոխարեն կարգապահական գումարտակում պահելը նշանակելիս ժամկետները հաշվվում են ազատագրկման մեկ օրը կարգապահական գումարտակում պահելու մեկ օրվան համապատասխան:

Այս պատժատեսակի էությունն այն է, որ դատապարտյալը դատարանի կողմից նախատեսված ժամկետով հարկադրաբար ուղարկվում է կարգապահական գումարտակ, որտեղ նրա նկատմամբ կիրառվում են քրեաիրավական ներգործության հիմնական միջոցները:

Դատապարտյալները կարող են աշխատանքի ներգրավվել կարգապահական գումարտակի կամ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որոշված օբյեկտներում, ինչպես նաև մասնակցել կարգապահական գումարտակի բարեկարգման աշխատանքներին: Կարգապահական գումարտակում պատժի կրման ժամանակը զինվորական ծառայության ընդհանուր ժամկետի մեջ չի հաշվվում: Պատժի կրումն ավարտելուց հետո զինծառայողը, որպես կանոն, վերադառնում է նախկին գորամասը՝ զինվորական ծառայության հետագա կրման համար:

Կարգապահական գումարտակում պահելն ազատագրկումից տարբերվում է նրանով, որ դատապարտյալը այս դեպքում պահպանում է զինծառայողի կարգավիճակը՝ բնականաբար իրավունքների էական սահմանափակմամբ: Դատապարտյալը, անկախ զինվորական կոչումից և նախկինում զբաղեցրած դիրքից, պատիժը կրելու ընթացքում գտնվում է շարքային կազմի զինծառայողի կարգավիճակում, կրում է կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով սահմանված նմուշի՝ առանց տարբերանշանների համազգեստ: Դատապարտյալ զինծառայողների նկատմամբ նախատեսվում և կիրառվում են քրեակատարողական օրենսդրությամբ, ինչպես նաև զինվորական ծառայությամբ պայմանավորված հարկադրանքի միջոցներ:

ՀՀ ՔԿՕ-ի 51-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում պատժի կրման կարգն ու պայմանները սահմանվում են կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով: Դատապարտյալի նկատմամբ, վերասոցիալականացման հիմնական միջոցներից բացի, կարող են կիրառվել նաև զինվորական ծառայությամբ պայմանավորված վերասոցիալականացման այլ միջոցներ:

Կարգապահական գումարտակում դատապարտյալին արգելվում է ունենալ կանխիկ դրամ, այդ թվում՝ արտարժույթ, արժեթղթեր, ինչպես նաև կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով արգելված առարկաներ և իրեր: Հայտնաբերված կանխիկ դրամը, արտարժույթը, արժեթղթերը և այլ արժեքավոր իրերը, կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով սահմանված կարգին համապատասխան, առգրավվում և պահվում են մինչև պատժից ազատվելը:

Կարգապահական գումարտակի հրամանատարությունը ՀՀ պաշտպանության նախարարի սահմանած հատուկ ծրագրով դատապարտյալի հետ անցկացնում է ֆիզիկական և մարտական պատրաստության դասընթացներ:

Կարգապահական գումարտակում ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ արտաքին աշխարհի հետ դատապարտյալների կապն ապահովելու համար: Դատապարտյալն ունի ամսական առնվազն երկու կարճատև՝ մինչև չորս ժամ տևողությամբ տեսակցության իրավունք: Տեսակցությունները տրամադրվում են մերձավոր ազգականների հետ, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ կարգապահական գումարտակի հրամանատարի թույլտվությամբ, նաև այլ անձանց հետ: Դատապարտյալին տրվում է մեկ ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ հեռախոսակապից և մեկ անգամ տեսազանգից օգտվելու իրավունք:

Բացառիկ հանգամանքների դեպքում՝ մերձավոր ազգականի

մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, արտակարգ իրավիճակ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին, ինչպես նաև իր երեխային պետական կամ այլ հաստատությունում կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով դատապարտյալին կարող է տրամադրվել լրացուցիչ կարճատև տեսակցություն կամ հեռախոսակապից օգտվելու հնարավորություն կամ կարճատև մեկնում՝ մինչև յոթ օր ժամկետով՝ չհաշված մեկնելու և վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը: Կարգապահական գումարտակի սահմաններից դուրս գտնվելու ժամանակը հաշվարկվում է պատժի ժամկետի մեջ: Կարճատև մեկնում տրամադրվում է ոչ ավելի, քան տարվա ընթացքում երկու անգամ: Դատապարտյալն իրավունք ունի ստանալու և ուղարկելու հանձնուք կամ ծանրոց՝ շաբաթական մինչև 20 կիլոգրամ քաշով, ներառյալ հեղուկ:

Դատապարտյալն իրավունք ունի ստանալու և կատարելու դրամական փոխանցումներ, իր հաշվին վարելու նամակագրություն, որի գաղտնիությունը երաշխավորում ու պահպանում է կարգապահական գումարտակը: Նամակագրությունն իրականացվում է կարգապահական գումարտակի հրամանատարության միջոցով և առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու այն ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով (ՀՀ ՔԿՕ, 52-րդ հոդված):

ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը սահմանում է կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցների կիրառման հնարավորությունը: Այսպես, դրական վարքագծի, աշխատանքի կամ ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի համար դատապարտյալի նկատմամբ կարգապահական գումար-

տակի ներքին կանոնակարգով սահմանված կարգով կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները՝ շնորհակալություն, հեռախոսակապից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ տարեկան լրացուցիչ չորս թույլտվությունից ոչ ավելի, տեսազանգից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ տարեկան լրացուցիչ չորս թույլտվությունից ոչ ավելի, լրացուցիչ կարճատև տեսակցության տրամադրում՝ տարեկան լրացուցիչ երկու տեսակցությունից ոչ ավելի, նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում: Դատապարտյալ զինծառայողների նկատմամբ կարող են կիրառվել նաև զինվորական կանոնադրքերով սահմանված խրախուսանքի այլ միջոցներ (ՀՀ ՔԿՕ, 53-րդ հոդված):

Պատժի կատարման սահմանված կարգը և պայմանները խախտելու համար դատապարտյալի նկատմամբ կարգապահական գումարտակի ներքին կանոնակարգով սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, նկատողություն, մինչև մեկ ամիս տևողությամբ՝ տեսակցության իրավունքի սահմանափակում, մինչև մեկ ամիս տևողությամբ՝ հեռախոսակապից օգտվելու իրավունքի սահմանափակում, մինչև մեկ ամիս տևողությամբ՝ տեսազանգից օգտվելու իրավունքի սահմանափակում, մինչև 15 օր ժամկետով կարգապահական կալանք (ՀՀ ՔԿՕ, 54-րդ հոդված):

Դատապարտված զինծառայողների նյութակենցաղային և բժշկական օգնության ու սպասարկման ապահովումն իրականացվում է զինվորական կանոնադրքերով սահմանված չափանիշներով (ՀՀ ՔԿՕ, 55-րդ հոդված):

ԳԼՈՒԽ 8

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

1. Ազատագրվում պատժատեսակի կատարման ընդհանուր դրույթներ

Վերաբերմունքը պատժին՝ որպես հանցավորության դեմ պայքարի միջոցի, թե՛ գիտության մեջ և թե՛ պրակտիկայում տարբեր է, բայց վերջին հաշվով ամեն ինչ հանգում է նրան, որ առանց քրեական պատիժների հասարակությունը գոյատևել չի կարող: Քրեական պատիժները, ինչպես ցանկացած սոցիալական երևույթ իրենց էությամբ հակասական են: Պատիժը՝ որպես հանցավորության դեմ պայքարի հասարակական հարաբերությունները կարգավորող առավել կարևոր և արդյունավետ միջոց, ծնում է սոցիալական և սոցիալ-հոգեբանական բնույթի բացասական հետևանքներ: Այդ բացասական հետևանքները դրսևորվում են ազատագրվում պատժատեսակը կատարելիս: Ազատագրվման սոցիալական հետևանքներն այնքան մեծ են, որ գերազանցում են քրեակատարողական ներգործության միջոցները և բացասական հետևանքներ են ունենում դատապարտյալի վրա:

Ազատագրվում պատժատեսակի կատարումը բարդ, հակասական, փոխկապակցված և փոխհամաձայնեցված գործընթաց է: Ազատագրվման կատարման դեպքում դատապարտյալի իրավական վիճակը հասարակության այլ անդամների համեմատությամբ խիստ սահմանափակվում է մասնավորապես քաղաքացիական, աշխատանքային, ընտանեկան և այլ իրավունքներում: Ազատագրվումն ուղեկցվում է դատապարտյալի նկատմամբ որո-

շակի և բավականին լուրջ իրավասահմանափակումներով, որոնք էապես փոփոխում են անձի իրավական վիճակը: Այն գրկում է դատապարտյալին ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքից (ՀՀ Սահմանադրություն, 40-րդ հոդված), աշխատանքի ընտրության իրավունքից (ՀՀ Սահմանադրություն, 57-րդ հոդված), հանգստի իրավունքից, հարազատների և այլ անձանց հետ ազատորեն շփվելու իրավունքից և այլն: Դիտավորյալ հանցանքների համար ազատազրկման դատապարկված և պատիժը կրող քաղաքացիները գրկվում են ընտրելու իրավունքից Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք (ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված):

Ազատազրկումը դատապարտյալի հարկադիր մեկուսացումն է հասարակությունից, նրան այդ նպատակին ծառայող հատուկ՝ քրեակատարողական հիմնարկներում տեղավորելու միջոցով, դատարանի դատավճռով սահմանված ժամկետով:

ՀՀ քր. օր. 67-րդ հոդվածի համաձայն՝ «Ազատազրկումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից որոշակի ժամկետով մեկուսացնելն է, որը կարող է նշանակվել սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում»:

Ազատազրկումը հիմնական և իր բովանդակությամբ պատիժների համակարգի առավել խիստ պատժատեսակն է, և դատական պրակտիկայում դրա կիրառման տեսակարար կշիռը բավական մեծ է: Ազատազրկումը կիրառվում է միայն այն դեպքերում, երբ պատժի այլ տեսակները չեն կարող ապահովել դատապարտյալի վերադասարկման և պատժի մյուս նպատակների իրականացումը: Այն նախատեսվում է օրենքով և դատարանի կողմից նշանակվում է այն հանցագործությունների համար, որոնք առավել մեծ վտանգավորություն են ներկայացնում և

կատարվել են մեծ վտանգավորություն ներկայացնող անձանց կողմից: Դատարանը ազատազրկում կարող է նշանակել այն դեպքերում, երբ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով, որով որակվել է արարքը, այն ուղղակիորեն նախատեսված է: Եթե օրենքի սանկցիան, որով անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ, ազատազրկման հետ միաժամանակ նախատեսում է նաև այլ, ավելի մեղմ հիմնական պատժատեսակներ, ապա դատարանը դատավճիռ կայացնելիս պետք է քննարկի նաև դրանց կիրառման հարցը և ազատազրկում կարող է նշանակել այն դեպքում, երբ գտնի, որ տվյալ դատապարտյալին առավել նպատակահարմար է մեկուսացնել հասարակությունից:

Ազատազրկում կարող է նշանակվել նաև հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելով՝ ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների ութ ժամվա դիմաց (ՀՀ քր. օր. 60-րդ հոդված), ազատության սահմանափակումն ազատազրկմամբ փոխարինելով՝ ազատազրկման մեկ օրը հաշվարկելով ազատության սահմանափակման երկու օրվա դիմաց (ՀՀ քր. օր. 64-րդ հոդված), որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ազատազրկմամբ փոխարինելով՝ ազատազրկման մեկ օրը հաշվարկելով այդ պատժատեսակի երեք օրվա դիմաց (ՀՀ քր. օր. 61-րդ հոդված), տուգանքն ազատազրկմամբ փոխարինելով՝ ազատազրկման երեք օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց (ՀՀ քր. օր. 59-րդ հոդված, մաս 11):

Դատապարտյալի նկատմամբ ազատազրկման դատավճիռը պետք է հիմնված լինի գործի նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության վրա՝ հաշվի առնելով հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործի անձը և պատասխանատվության վրա ազդող

բոլոր հանգամանքները: Ամեն պարագայում այն պետք է լինի օրինական, հիմնավորված և արդարացի:

ՀՀ քր. օր. 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ազատագրվումը նշանակվում է երեք ամսից քսան տարի ժամկետով: Ընդ որում, օրենսդիրը ժամկետների հարցում ցուցաբերում է տարբերակված մոտեցում և նախատեսում, որ անզգույշ հանցագործությունների համար ազատագրվումը չի կարող գերազանցել տասը տարին (ՀՀ քր. օր. 67-րդ հոդված, 4-րդ մաս): Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս ազատագրվման ժամկետները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում ազատագրվման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել քսանհինգ տարին կամ վերջնական հիմնական պատիժ՝ ցմահ (ՀՀ քր. օր. 74-րդ հոդված), իսկ դատավճիռների համակցությամբ՝ երեսուն տարին կամ վերջնական հիմնական պատիժ՝ ցմահ (ՀՀ քր. օր. 75-րդ հոդված): Ազատագրվման նվազագույն ժամկետը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է պակաս լինել երեք ամսից, և առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը չի կարող դատապարտվել ազատագրվման:

ՀՀ քր. օր. 95-րդ հոդվածը սահմանում է տարբերակված մոտեցում անչափահաս դատապարտյալների տարիքի, հանցագործությունների տեսակների, ժամկետների և պատժի տեսակների նկատմամբ: Մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: 16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը

կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

ՀՀ քր. օր.-ը հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ ազատազրկման ժամկետները գումարելիս նախատեսում է տարբերակված լուծումներ՝ պայմանավորված դատապարտյալի տարիքով, ազատազրկման ժամկետներով: Հանցագործությունների համակցությամբ առավելագույն ժամկետ է սահմանվում տասներկու տարին (ՀՀ քր. օր. 102-րդ հոդված): Իսկ դատավճիռների համակցությամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը վերջին հանգանքը կատարելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց նկատմամբ չի կարող գերազանցել տասը, տասնութ տարին չլրացած անձանց նկատմամբ՝ տասներկու, իսկ քսանմեկ տարին չլրացած անձանց նկատմամբ՝ քսանհինգ տարի ժամկետը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կատարում է այնպիսի հանցանք, որի համար նախատեսված է նաև ցմահ ազատազրկում (ՀՀ քր. օր. 103-րդ հոդված):

2. Ազատագրկման դատապարտվածների դասակարգման հասկացությունը և դասակարգման խմբերը:

***Ազատագրկման դատապարտվածների դասակարգումը
որոշակի հատկանիշների հիման վրա նրանց բաժանումն է՝
ըստ համեմատաբար միասեռ խմբերի, որն ուղղված է պատժի
նպատակների առավել արդյունավետ իրականացմանը***

Դատապարտյալների դասակարգման հիմքում ընկած է քրեակատարողական իրավունքի այնպիսի սկզբունք, ինչպիսիք են պատիժների կատարման տարբերակումը և անհատականացումը: Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքն իրականացվում է պատժի նշանակման և կատարման գործընթացում, և հաշվի են առնվում հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցագործի անձը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, դատապարտյալի վարքագծի առանձնահատկությունները պատժի կրման ընթացքում, վերաբերմունքը պատժին և այլն: Դատապարտյալների դասակարգումը համարվում է պատիժների կատարման տարբերակման էական հատկանիշ, որը խիստ կայուն է և գործում է պատժի կատարման ողջ ժամկետի ընթացքում: Այս հատկանիշի կարևորությունը այն է, որ հենց դրանով է տարբերակումը սահմանազատվում անհատականացումից⁴⁶:

Իրավաբան տեսաբաններից բոլորի մոտեցումներում պարտադիր շեշտվում է դատապարտյալների դասակարգումը որպես պատժի կատարման տարբերակման կենսագործման հիմնական

⁴⁶ См. и Уголовно-исполнительное право России: теория, законодательство, международные стандарты, отечественная практика конца XIX - начала XXI века. /Под ред. д. ю. н., проф. **А. И. Зубкова**. - 3-е изд., перераб. и доп. - М.: Норма, 2006. էջ 16-17):

միջոց: Դատապարտյալների դասակարգումը քրեակատարողական իրավունքի գիտության ամենահետաքրքիր և բարդ հիմնահարցերից է, ինչը պայմանավորված է տարբերակման գործընթացում դրա հիմքային դերով: Ժամանակի ընթացքում մշակվել են դատապարտյալների դասակարգման բազմազան տարբերակներ՝ կրիմինալոգիական, քրեաիրավական, քրեակատարողական, սոցիալական-իրավական, հոգեբանական, մանկավարժական⁴⁷: Ըստ պրոֆեսորներ Վ.Ի. Սելիվերստովի և Ի.Վ. Շմարովի՝ պատժի կատարման տարբերակման մեթոդը դատապարտյալների դասակարգումն է տարբեր խմբերի⁴⁸:

Ազատագրված դատապարտվածների դասակարգումն ապահովում է դատապարտյալների տարբեր խմբերի մեկուսացումը՝ կանխելու համար առավել վտանգավոր հանցագործների ազդեցությունը նվազ վտանգավորների վրա, քրեակատարողական հիմնարկների անհրաժեշտ համակարգի և տարբեր անվտանգային գոտիների ստեղծումը, քրեաիրավական ներգործության մի-

⁴⁷ Պատիժների կատարման տարբերակման համար դատապարտյալների դասակարգման հիմքերի և չափանիշների մասին ավելի մանրամասն տե՛ս **Коваленко В.В.**, Классификация лиц, осужденных к лишению свободы, и проблемы дифференциации исполнения наказания в исправительно-трудовых колониях: автореф. дисс. ... канд. юрид. наук: 12.00.08. Киев, 1991. էջ 7-9; **Перков И.М.**, Классификация осужденных к лишению свободы и распределение их по исправительно-трудовым учреждениям. Рязань: НИИРИО РВШ МВД СССР, 1978. էջ 6; **Стругова Е.В.**, Дифференциация и индивидуализация исполнения наказания в виде лишения свободы в отношении осужденных женщин: автореф. дисс. ... канд. юрид. наук: 12.00.08. Рязань, 1995. էջ 14-15; **Федореев П.Р.** Отрицательно характеризующиеся осужденные в местах лишения свободы: дисс. ... канд. юрид. наук: 12.00.08. Рязань, 2005. էջ 23 և այլն:

⁴⁸ Այս տեսաբանները դատապարտյալների տարբերակման կամ դասակարգման չափանիշներ են համարում կատարված հանցանքի ծանրությունը, անցյալի հանցավոր գործունեությունը, մեղքի ձևը, վարքագիծը պատժի կրման ընթացքում (տե՛ս Уголовно-исполнительное право России /Под ред. проф. **В.И. Селиверстова**. – 2-е изд., перераб. и доп. – М.; Юристь, 2019.- էջ 95):

ջոցների խիստ անհատական կիրառումը, պատժի կրման արդյունավետ պայմանների ստեղծումը և այլն:

Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշների 67-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալների դասակարգման նպատակներն են՝ դատապարտյալների առանձնացումը նրանցից, ովքեր իրենց հանցավոր անցյալի կամ այլ բացասական հատկանիշների ուժով կարող են վատ ազդեցություն ունենալ այլ դատապարտյալների վրա: Դա հեշտացնում է նրանց հետ տարվող աշխատանքը:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգումը սերտորեն կապված է քրեական իրավունքի այնպիսի ինստիտուտի հետ, ինչպիսին հանցագործության տեսակներն են: Վերջինս որոշակի առումով և որոշում է դատապարտյալների դասակարգման խմբերը: Ազատազրկման դատապարտվածների դասակարգմանն ուղղակիորեն վերաբերում են նաև քրեական օրենսդրության բազմաթիվ այլ նորմեր և ինստիտուտներ՝ ռեցիդիվը, քրեական պատասխանատվության տարիքը, մեղքի ձևերը, ազատազրկման ժամկետները և այլն:

Ազատազրկման դատապարտվածները դասակարգվում են իրավական, դաստիարակչական և հոգեբանական չափանիշներով: Դասակարգման չափանիշները կարող են լինել նաև սոցիալ-ժողովրդագրական (սեռ, տարիք, առողջական վիճակ, քաղաքացիությունը) և քրեաիրավական (հանցագործության հասարակական վտանգավորությունը, հանցագործի անձի բնութագիրը, մեղքի ձևը, պատժի ժամկետը, ռեցիդիվը): Թվարկված ինստիտուտները և նորմերն ազատազրկման դատապարտվածների դասակարգման չափանիշներ են, որոնք իրացվում են դատապարտյալների նկատմամբ քրեակատարողական հիմնարկի տեսակը և անվտանգային գոտին որոշելիս: Ցանկացած դասակարգման, ներառյալ ազատազրկման դատապարտվածների հիմնական միջո-

ցը դասակարգման չափանիշներն են: Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ընդունված է ազատազրկման դատապարտված անձանց դասակարգման չափանիշներ համարել օրենքով սահմանված իրավաբանական հիմքերը, որոնցում գուգակցվում են կատարված հանցանքի և հանցագործի անձի հանրորեն վտանգավորության աստիճանը, ինչն էլ իր հերթին բնութագրվում է մեղքի ձևով, կատարված արարքի ծանրությամբ ու բնույթով, ազատազրկման ձևով պատժի նախկինում կրման և ազատազրկման վայրերից ազատման հիմքերի քանակով⁴⁹:

ՀՀ ՔԿՕ-ն, հետևելով իրավական զարգացման հաջորդայնության սկզբունքին, պահպանել է ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի հիմնական միջոցը՝ դատապարտյալների դասակարգումը: Դրա ուսումնասիրությունը (մասնավորապես 59-րդ հոդվածի) հնարավորություն է տալիս վեր հանելու ազատազրկման տարբերակված կատարման համար օրենքում սահմանված դատապարտյալների դասակարգման հետևյալ չափանիշները՝

ա) Հանցանքի վտանգավորության աստիճանը, որի հիմքը ՀՀ քր. օր. ամրագրված հանցանքի տեսակների ինստիտուտն է: ՀՀ քր. օր. 17-րդ հոդվածը հանցանքները դասակարգում է չորս խմբի՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր՝ նկատի ունենալով օրենսգրքի հատուկ մասում նախատեսված ազատազրկման ժամկետները: Այս ձևական չափանիշների հիմքում դրված են խորքային բնույթ ունեցող այնպիսի իրական չափանիշներ, ինչպիսիք են մեղքի ձևը, կատարված արարքի վտանգավոր հետևանքներն ու բնույթը և այլն, որոնք բոլորը միասին արտահայտում են հանցանքի տվյալ տեսակի հան-

⁴⁹ См. у **Рябинин А.А.**, Основы исправительно-трудового (уголовно-исполнительного) права. вопросы дифференциации и индивидуализации наказания. - М.: Юристъ, 1995. էջ 91:

րորեն վտանգավորության աստիճանը: Այսպիսով, հանցանքների տեսակների քրեաիրավական ինստիտուտի կիրառման միջոցով քրեակատարողական իրավունքում օրենքն առանձնացնում է դատապարտյալների չորս խումբ՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր, առանձնապես ծանր հանցանքների համար ազատազրկման դատապարտվածներ:

բ) Ազատազրկման ժամկետը, այսինքն՝ դատարանի կողմից դատապարտյալի նկատմամբ վերջնական դատական ակտով նշանակված ազատազրկման ժամկետը: Այս չափանիշի օգտագործմամբ ՀՀ ՔԿՕ-ում առանձնացվում են՝ տասը տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ցմահ ազատազրկման դատապարտված անձինք:

գ) Հանցագործությունների ռեցեդիվը որպես դատապարտյալների դասակարգման չափանիշ սահմանված է ՀՀ ՔԿՕ-ի 59-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, որտեղ ռեցեդիվի հատկանիշով ազատազրկման դատապարտվածները բաժանում են երկու խմբի՝ նախկինում ազատազրկում չկրած և կրած դատապարտյալներ: ՀՀ քր. օր.-ի 54-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների ռեցեդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, որը դատվածություն ունի դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: Այս դասակարգումը, իր հիմքում ունենալով քանակական հիմքեր, ի վերջո կապված է դատապարտյալի անձի հանրորեն վտանգավորության աստիճանի հետ: Օրենսդիրը ելնում է այն կանխավարկածից, որ նախկինում ազատազրկում կրած և դատվածություն ունեցող անձը հաջորդ անգամ ազատազրկմամբ պատժվող հանցանք կատարելու դեպքում առավել վտանգավոր է: Ազատազրկման դատապարտելու դեպքում ՔԿՀ-ի տեսակը ընտրելիս դատապարտյալի անձի բնութագրման համար շատ կարևոր նշանակություն ունի

դատվածության քանակը, որովհետև այն վկայում է դատապարտյալի հանրային վտանգավորության և նախկին պատիժը կրելուց հետո վերասոցիալականացման աստիճանի մասին⁵⁰:

Բացի այս երեք չափանիշներով արված դասակարգումներից՝ առկա են նաև դատապարտյալների այլ դասակարգումներ: ՀՀ ՔԿՕ-ով կատարված այդպիսի դասակարգումներից է դատապարտյալների բաժանումը չափահասի և անչափահասի, որն անուղղակիորեն իրականացված է ՀՀ ՔԿՕ-ի 57-րդ հոդվածում, որը կարգավորում է ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկների անվտանգային գոտիների տեսակները: Այդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ըստ անվտանգության աստիճանի՝ չափահաս դատապարտյալների համար ազատազրկում և ցմահ ազատազրկում կատարող քրեակատարողական հիմնարկներում գործում են անվտանգային գոտիների երեք տեսակներ: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ անչափահաս դատապարտյալները պատիժը կրում են իրենց համար նախատեսված քրեակատարողական հիմարկում: ՀՀ ՔԿՕ-ի 57-րդ հոդվածի այս իրավադրույթները հիմք են տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը, այստեղ կիրառելով դատապարտյալների դասակարգման տրամաբանական մեթոդը, դրա համար որպես չափանիշ օգտագործել է դատապարտյալների չափահասությունը:

Վերը շարադրված դրույթները հիմք են տալիս փաստացի առանձնացնել ազատազրկման դատապարտվածների դասակարգման հետևյալ խմբերը.

- ✓ անզգույշ հանցագործությունների համար ազատազրկման դատապարտվածներ,

⁵⁰ Տե՛ս **Ռ.Ա.Արքահամյան**, Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները, ԺԲ.00.05 մաս. ատենախոս. ի.գ.թ. գիտ. աստ. հայցման համար: Երևան, 2023, գլուխ 3-րդ, էջ 128:

- ✓ դիտավորյալ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներ,
- ✓ դիտավորյալ միջին ծանրության հանցագործությունների համար առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներ,
- ✓ դիտավորյալ ծանր հանցագործությունների համար առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներ,
- ✓ առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներ,
- ✓ նախկինում ազատազրկում կրած դատապարտյալներ,
- ✓ դատապարտյալներ ռեցիդիվի դեպքում,
- ✓ նախկինում ազատազրկում կրած դատապարտյալներ ռեցիդիվի դեպքում,
- ✓ ցմահ ազատազրկման դատապարտվածներ,
- ✓ դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթասպայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալներ⁵¹,
- ✓ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով դատապարտյալներ,
- ✓ կին դատապարտյալներ,
- ✓ անչափահաս դատապարտյալներ,
- ✓ քսանմեկ տարին չլրացած դատապարտյալներ,
- ✓ դատապարտյալ օտարերկրյա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք:

Ինչպես նշվեց, ՀՀ ՔԿՕ-ի վերլուծությունը հիմք է տալիս վե-

⁵¹ Դատապարտյալների դասակարգման այս խմբի մասին մանրամասն տե՛ս, **Դ. Հ. Ջիլֆիմյան**, «Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեախրավական և քրեակատարողական բնութագիրը», ԺԲ.00.05 մաս.ատենախոս. Ի.գ.թ. գիտ. աստ. հայցման համար: Երևան, 2020:

րը նշված դասակարգման խմբերին ավելացնել նաև՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար մինչև տաս տարի ժամկետով ազատազրկման դատապարտվածներ և առանձնապես ծանր հանցագործությունների համար տաս տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտվածներ, ինչպես նաև բարձր ռիսկայնություն ունեցող դատապարտյալներ, ովքեր լուրջ սպառնալիք են ներկայացնում քրեակատարողական հիմնարկի, մյուս դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգությանն ու ապահովությանը:

Անչափահաս դատապարտյալների դասակարգման ինքնուրույն խմբի առանձնացումը բացատրվում է նրանց անձի հոգեֆիզիոլոգիական և պատիժների կատարման գործընթացի առանձնահատկություններով, ինչպես նաև կանխելու համար նրանց նկատմամբ չափահաս հանցագործների բացասական ազդեցությունը: Կին դատապարտյալների դասակարգման ինքնուրույն խմբի առանձնացումն իրականացվում է նրանց անվտանգության ապահովման նպատակով և ելնելով նրանց հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններից:

Ազատազրկման դատապարտվածների դասակարգումն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում պատժի տարբերակման համար: Այն կանխորոշում է քրեակատարողական հիմնարկների համակարգը և ապահովում է դասակարգման տարբեր խմբերի պատկանող, հասարակական վտանգավորությամբ և վարքագծով տարբերվող դատապարտյալների միմյանցից առանձնացումը: Վերը ներկայացված դասակարգումն իրականացվում է ազատազրկման դատապարտվածներին քրեակատարողական հիմնարկների անվտանգային գոտիներով բաշխելիս:

Այսպիսով, ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման ուղղությամբ ՀՀ ՔԿՕ-ն կիրառել է իրավական մի շարք գործիքակազմեր: **Առաջին**՝ չափահաս և անչափահաս դատապարտյալների համար նախա-

տեսված քրեակատարողական հիմնարկներ, **երկրորդ՝** չափա-
հաս ազատագրկման դատապարտվածների քրեակատարողա-
կան հիմնարկներում նախատեսվել են ազատագրկման կատար-
ման տարբեր անվտանգային գոտիներ, **երրորդ՝** յուրաքանչյուր
անվտանգային գոտում սահմանել է պատժի կրման մեղմ և խիստ
պայմաններ, **չորրորդ՝** քրեակատարողական հիմնարկի տեսակի,
անվտանգային գոտու, դրանում խիստ ու մեղմ պայմանների
որոշման համար սահմանվել է արտադատական ընթացակարգ⁵²։
Եվ այդ արտադատական կարգով էլ ՀՀ քրեակատարողական
օրենսդրությունում իրացվում է քրեաիրավական տարբերա-
կումը։

3. Ղատապարտյալների տեղաբաշխումն ըստ քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակների

Ազատագրկման դատապարտված անձանց դասակարգումը
քրեակատարողական հիմնարկների անվտանգային գոտիների
տեսակներում դատապարտյալների փաստական բաշխման
հիմքն է։ Ընդհանուր կանոնի համաձայն՝ դասակարգման
միևնույն խմբին պատկանող դատապարտյալները ենթակա են
համատեղ պատիժը կրելու մեկ քրեակատարողական հիմնարկի
միևնույն անվտանգային գոտում։ Այս կանոնն ազդում է քրեակա-
տարողական հիմնարկների համակարգի վրա, թեև վերջիններիս
անվտանգային գոտիներն ավելի քիչ են, քան դատապարտյալնե-
րի դասակարգման խմբերը, և քրեակատարողական հիմնարկի

⁵² Տե՛ս **Ռ.Ա.Արքաշատյան**, Ազատագրկում պատժատեսակի կատարման
տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները, ԺԲ.00.05
մաս. ատենախոս. ի.գ.թ. գիտ. աստ. հայցման համար։ Երևան, 2023, գլուխ 3-
րդ, էջ 136։

միննույն անվտանգային գոտում ենթակա են պատիժ կրելու դասակարգման տարբեր խմբերի պատկանող դատապարտյալներ:

Քրեակատարողական օրենսդրությունը նախատեսում է դասակարգման տարբեր խմբերի պատկանող դատապարտյալների միմյանցից անջատ պահելու կարգը, որի արտահայտման նորմատիվ ձևը ՀՀ ՔԿՕ-ի 64-րդ հոդվածն է: Հոդվածի 1-ին մասը սահմանում է դատապարտյալների այն խմբերը, որոնք քրեակատարողական հիմարկում, որպես կանոն, միմյանցից անջատ են պահվում: Օրենսդիրն այստեղ կատարել է դատապարտյալների դասակարգում՝ հետևյալ չափանիշներով ու դրանց հիմքով առաջացած խմբերով՝

ա) սեռը որպես չափանիշ և խմբերը՝ արական և իգական սեռի դատապարտյալներ,

բ) տարիքը որպես չափանիշ և դասակարգման խմբերը՝ չափահաս և անչափահաս դատապարտյալներ,

գ) շրջապատի համար վարքագծի հնարավոր սպառնալիքը որպես չափանիշ և դասակարգման խմբերը՝ բարձր ռիսկայնություն ունեցող և պայմանականորեն ասած մյուս դատապարտյալներ,

դ) դատապարտյալի մինչև ազատազրկումը կատարած աշխատանքը կամ ծառայությունը որպես չափանիշ և դասակարգման խմբերը՝ դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթասպայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները և մյուս դատապարտյալներ,

ե) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունը որպես չափանիշ և դասակարգման խմբերը՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող և այդպիսի հիվանդություն չունեցող դատապարտյալներ,

զ) քաղաքացիությունը որպես չափանիշ և դասակարգման խմբերը՝ մի կողմից օտարերկրայա քաղաքացիներ և քաղաքացիություն չունեցող, իսկ մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացի դատապարտյալներ⁵³:

Դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու օրենքով սահմանված հիմքերի մեծ մասը և դրանցով սահմանված դատապարտյալներին անջատ պահելու ահրաժեշտությունը հիմնավորված են քրեակատարողական օրենսդրության սկզբունքներով կամ դատապարտյալների որոշակի հիմնական իրավունքներով: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթասպայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալներին անջատ պահելու օրենսդրական պահանջը, որի առանձնահատկությունները հետազոտող հեղինակները գտնում են, որ այդ խմբի դատապարտյալներին անջատ պահելու ինստիտուտի հիմքում ընկած սոցիոլոգիական պատճառը խորհրդային հասարակության մեջ ձևավորված և մինչ այժմ գոյատևող հանցավոր ենթամշակույթի առանձնահատկություններն են, որոնք վտանգում են դատապարտյալների անվտանգությունը⁵⁴:

Մյուս կողմից ազատագրվման դատապարտված դատապարտյալների դասակարգման վերը հիշատակված խմբի պատ-

⁵³ Տե՛ս **Ռ. Ա. Աբրահամյան**, Ազատագրվում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները, ԺԲ.00.05 մաս. ատենախոս. ի.գ.թ. գիտ. աստ. հայցման համար: Երևան, 2023, գլուխ 3-րդ, էջ 130:

⁵⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **Զիլֆիյան Դ.Հ.**, Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը: ԺԲ.00.05 մաս. ատենախոս. ի.գ.թ. գիտ. աստ. հայցման համար: Երևան, 2020, էջ 59-61:

ծի կատարման և կրման իրավական կառուցակարգերում սահմանված չեն ինչ-որ շեղումներ ազատագրկման պատժատեսակի կատարման ու կրման ընդհանուր կարգերից: Այդպիսի բացառություններ չեն արված նաև հիվանդություն ունեցող և օտարերկրացի ու քաղաքացիություն չունեցող դատապարտյալների համար՝ բացառությամբ դատապարտյալների մնացած զանգվածից անջատ պահելու կարգի:

Դատապարտյալներին անջատ պահելու քրեակատարողական ինստիտուտում կիրառված դասակարգումներից, ինչպես արդեն նշել ենք, ըստ սեռի դասակարգման խմբերն են՝ տղամարդ և կին դատապարտյալները:

ՀՀ ՔԿՕ-ի 64-րդ հոդվածում նախատեսված չեն այս դասակարգման հիմքում ընկած շահերը: ՀՀ ՔԿՕ-ով սահմանված պատժի կատարման պայմանների, անվտանգային գոտիների, դրանցում խիստ և մեղմ պայմանների, կիրառվող կարգապահական ներգործության միջոցների կարգավորումն իրականացնող իրավադրույթների զանգվածում չկան նաև որևէ բացառություն, տարբերություն, շեղում՝ նախատեսված կին դատապարտյալների համար: ՀՀ ՔԿՕ-ի նորմատիվ համակարգում առկա է միայն երկու հոդված, որոնցով կին դատապարտյալների համար սահմանված են որոշակի առանձնահատկություններ՝ ՀՀ ՔԿՕ 90-րդ հոդվածը՝ հղի, կերակրող մայր և երեխա ունեցող դատապարտյալի պատժի կատարման առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ ՔԿՕ 109-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթը, համաձայն որի հղի, կերակրող մայր կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալներն աշխատանքում ներգրավվում են՝ հաշվի առնելով նրանց առողջական վիճակը և այլ առանձնահատկությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Ըստ էության, դատապարտյալների դասակարգման մեթոդն է կիրառված ՀՀ ՔԿՕ-ի 64-րդ հոդվածի հիմքում, և սահմանված են դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու իրավա-

կարգավորումները՝ համաձայն որոնց՝ քրեակատարողական հիմնարկում, որպես կանոն, միմյանցից անջատ են պահվում՝

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ 18 տարին լրացած դատապարտյալների համար նախատեսված առանձնահատկությունների.

3) բարձր ռիսկայնություն ունեցող դատապարտյալները, որոնց անձնական հատկանիշները, քրեական ազդեցությունը, հանցագործության շարժառիթը, պատիժ կատարող մարմնում կամ հիմնարկում անօրինական գործողությունների կամ վարքագծի հետևանքները լուրջ սպառնալիք են ներկայացնում քրեակատարողական հիմնարկի, մյուս դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգությանն ու ապահովությանը՝ մյուս դատապարտյալներից.

4) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության ավագ ենթապայական և սպայական կազմերի զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները՝ մյուս դատապարտյալներից.

5) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից.

6) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ մյուս դատապարտյալներից:

ՀՀ ՔԿՕ-ն, ի համապատասխանություն միջազգային իրավական փաստաթղթերի պահանջների, չի նախատեսում անզուշությամբ կատարված հանցագործությունների համար ազատազրկման դատապարտվածներին, առաջին անգամ ազատազրկման դատապարտվածներին, առանձնապես ծանր հանցագործությունների համար ազատազրկման դատապարտվածներին և ցմահ ազատազրկման դատապարտվածներին միմյանցից անջատ պահելու նախկինում սահմանված կարգը:

Քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանումներում դատապարտյալներին անջատ պահելու սահմանված պահանջները կիրառվում են այնքանով, որքանով հնարավոր է դրանք ապահովել: Այս պահանջները կարող են չպահպանվել, եթե դատապարտյալները մասնակցում են իրենց համար կազմակերպված սոցիալական, հոգեբանական, հոգեթերապևտիկ, իրավական աշխատանքների, աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական կամ այլ միջոցառումների, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Այսպիսով՝ դատապարտյալների դասակարգման չափանիշների հիմքը քրեական և քրեակատարողական օրենսդրություններն են, իսկ միմյանցից անջատ պահելու կանոնները թե՛ միևնույն քրեակատարողական հիմնարկի շրջանակներում և թե՛ քրեակատարողական հիմնարկների տարբեր անվտանգային գոտիներում քրեակատարողական օրենսդրության կարգավորման առարկան են: Ամբողջությամբ վերցրած՝ դատապարտյալների դասակարգման չափանիշները և միմյանցից անջատ պահելու հիմքերը համատեղ ինստիտուտ են քրեական և քրեակատարողական իրավունքների համար:

Ազատագրվման դատապարտվածների քրեակատարողական դասակարգման և միմյանցից անջատ պահելու օրենսդրական կանոններին համապատասխան հիմնադրվում են քրեակատարողական հիմնարկների առանձին տեսակները, ինչպես նաև ամեն մի հիմնարկում սահմանվում են պատժի կատարման տարբերվող պայմաններ⁵⁵:

⁵⁵ Ըստ պրոֆ. **Ն.Ա. Մսրուչկովի**՝ պատժի կատարման տարբերակումը պետք է համաձայնեցվի քրեակատարողական հիմնարկների համակարգի հետ, քանի որ ազատագրվման դատապարտվածների դասակարգումը ենթադրում է նրանց բաշխումն ըստ համապատասխան ռեժիմի տեսակների

Ինչպես ազատագրկման դատապարտվածների դասակարգման չափանիշները, այնպես էլ քրեակատարողական հիմնարկների համակարգը քրեական պատիժների կատարման պատմության ընթացքում կրել են էական փոփոխություններ⁵⁶: ՀՀ-ում ազատությունից զրկելու հետ կապված պատժի կատարման գործառույթը, 2004 թ. ՀՀ ՔԿՕ-ի համաձայն, կատարում էին քրեակատարողական ծառայության հիմնարկները և սահմանում էին ազատագրկում պատժատեսակը կատարող քրեակատարողական հիմնարկների ըստ մեկուսացվածության աստիճանի հետևյալ տեսակները՝ բաց, կիսաբաց, կիսափակ, փակ և բուժական:

Գործող օրենդրությամբ սահմանված է, որ ազատագրկման կամ ցմահ ազատագրկման դատապարտվածները պատիժը կրում են ՀՀ տարածքում գտնվող քրեակատարողական հիմնարկներում, որոնք ազատագրկման կամ ցմահ ազատագրկման կատարման նպատակով ստեղծված, հատուկ մասնագիտացված, կազմակերպական տեսակետից ինքնուրույն պետական հիմնարկներ են և գործում են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքին և իրենց կանոնադրությանը համապատասխան⁵⁷:

ՀՀ քրեակատարողական նոր օրենսդրությունը պատիժների կատարման տարբերակման սկզբունքի համատեքստում նախատեսում է ընդհանրապես ազատագրկում կատարող քրեակատարողական հիմնարկների երեք տեսակ՝ ազատագրկում կատարող, ցմահ ազատագրկում կատարող, անչափահաս դատապարտ-

(տե՛ս *Стручков Н.А.*, Уголовная ответственность и ее реализация в борьбе с преступностью.- 1978. էջ 127):

⁵⁶ Տե՛ս *Телегин А.А.*, Правовые и организационные основы дифференциации лиц, содержащихся в местах лишения свободы, в период 1917-1953 годы. Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1997, 24 էջ:

⁵⁷ Տե՛ս *Հ.Մ.Խաչիկյան*, Ազատագրկման իրավական կարգավորման տեսական, մեթոդոլոգիական և կազմակերպական ասպեկտները Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն/ Եր.: ԵՊՀ հրատ., 2021, էջ 58:

յալների ազատագրկում կատարող:

Այսպիսով, քրեակատարողական նոր օրենսդրությունը, կատարելով ազատագրկման դատապարտված անձանց դասակարգում, նրանց նկատմամբ պատժի կատարումը տարբերակելու խնդիրը լուծում է քրեակատարողական հիմնարկներում երեք տեսակի անվտանգային գոտիների ստեղծմամբ՝ դասակարգման յուրաքանչյուր խմբի համար նախատեսելով համապատասխան հիմնարկի անվտանգային գոտում պատժի կատարումը: Ընդ որում դատապարտյալի համար կոնկրետ քրեակատարողական հիմնարկը և դրանում համապատասխան անվտանգային գոտին որոշելը կատարվում է արտադատական կարգով՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կողմից⁵⁸: Այդ հանձնաժողովը դատապարտյալների սկզբնական տեղաբաշխումը կատարում է ըստ օրենքով սահմանված քրեակատարողական հիմնարկների, իսկ այնուհետև՝ ըստ դատապարտյալի դասակարգման խմբերի՝ անվտանգային գոտու տեսակի՝ հաշվի առնելով դատապարտյալների դասակարգման չափանիշները և միմյանցից անջատ պահելու վերը շարադրված կանոնները: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովը ստեղծվել և դրա գործունեության կարգը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի 2005թ. ապրիլի 21-ի հրամանով: Տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգն իրականացվում է ՀՀ արդարադատությո-

⁵⁸ Ազատագրկման դատապարտվածների սկզբնական տեղաբաշխման տեսական կողմերի մասին մանրամասն տե՛ս **Хачикян А.М.**, Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы. Изд. Ереванского университета.- Ереван, 2008, գլուխ 1-ին, **Симосян А.В.**, Лишение свободы и их распределение по исправительным учреждениям. Дис. ... канд. юрид. наук: 12.00.08.- М.: РГБ, 2003.-162 էջ:

յան նախարարի նոր (14.03.2012թ) հրամանով:

ՀՀ ՔԿՕ-ի 59-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կատարելու համար դատապարտյալների սկզբնական տեղաբաշխումն ըստ քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակների որոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Ցածր անվտանգային գոտում պատիժ են կրում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած դատապարտյալները:

2. Միջին անվտանգային գոտում պատիժ են կրում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած և 10 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

3. Բարձր անվտանգային գոտում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

4. Բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտության դեպքում դատապարտյալը տեղափոխվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանում:

Մինչև քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումների ստեղծումը բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող դատապարտյալները տեղաբաշխման հանձնաժողովի որոշման հիման վրա տեղավորվում են «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում՝ հնարավորինս ապահովելով անվտանգային յուրաքանչյուր գոտու համար նախատեսված պայմանները:

Բժականական քրեակատարողական հիմնարկում պատիժ են կրում՝ ՄԻԱՎ վարակակիր, պալարախտի բաց ձևով հիվանդ կամ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով

տառապող, ալկոհոլիզմից, թմրամոլությունից և թունամոլությունից բուժման կարիք ունեցող, մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումով, ինչպես նաև բուժանհիտարական կամ բուժկանխարգելիչ օգնության կարիք ունեցող դատապարտյալները:

Դատապարտյալի և նրա մերձավոր անձանց համար ավելորդ դժվարություններ չառաջացնելու համար, հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների տեղաբաշխումը ՀՀ տարածքում, ՀՀ ՔԿՕ 58-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ տեղաբաշխման հանձնաժողովը պատիժը կրելու համար նախատեսում է դատապարտյալի նախկին մշտական կամ մերձավոր ազգականների բնակության վայրին հնարավորինս մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկ, եթե նման տեղաբաշխումը չի խոչընդոտում անվտանգության ապահովման կամ դատապարտյալների համատեղելիության պահանջները:

Այստեղ հարկ ենք համարում նշել, թե ովքեր են հանդիսանում ***նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած անձինք***: Այդպիսիք են՝ նրանք, ովքեր անցյալում կատարած հանցավոր արարքի համար դատապարտվել են ազատազրկման և պատիժ են կրել որևէ քրեակատարողական հիմնարկում: Չեն կարող համարվել նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրածներ նրանք, ովքեր դատապարտվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, և պատիժը կամ դրա չկրած մասը փոխարինվել է ազատազրկմամբ, անձինք, ովքեր դատարանի դատավճռով գտնվել են ազատազրկման վայրերում, և բացառիկ վերանայման արդյունքում գործը կարճվել է, կամ փոփոխվել է և նշանակվել է այլ պատժատեսակ, կամ դատավճիռը պայմանականորեն չի կիրառվել, ազատազրկման դատապարտված, բայց փաստորեն պատիժը չկրած անձինք՝ ներման կամ համաներման կիրառման հետևանքով, անձինք, որոնց նկատմամբ մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել քրեական պատասխանատ-

վության վաղեմության ժամկետները լրանալու պատճառով, նախկինում ազատագրկման դատապարտվածները, ովքեր պատժի ամբողջ ժամկետի ընթացքում գտնվել են նախնական կալանքի մեջ և քրեակատարողական հիմնարկներում պատիժ չեն կրել, որոշակի առումով նախկինում ազատագրկում չկրած պետք է համարել նաև այն ազատագրկման դատապարտվածներին, որոնց դատվածությունը դատական կարգով հանվել է կամ մարվել: Վերը շարադրվածի բովանդակությունից երևում է, որ նախկինում ազատագրկում չկրած են համարվում նաև ազատագրկման վայրերում պատժի կրման ընթացքում հանցավոր արարք կատարած և կրկին ազատագրկման դատապարտվածները:

***4. Ազատագրկման դատապարտվածներին պատիժը
կրելու ուղարկելը և քրեակատարողական հիմնարկներ
ընդունելու կարգը***

Դատապարտյալը պատիժը կրելու է ուղարկվում ոչ ուշ, քան եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու և այն կատարելու կարգադրությունը ստանալու օրվանից հետո՝ քսանօրյա ժամկետում: Այդ ժամկետում դատապարտյալն իրավունք ունի մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ ունենալու կարճատև մեկ տեսակցություն, ինչպես նաև մեկ հեռախոսակապի կամ տեսազանգի հնարավորություն (ՀՀ ՔԿՕ, 60-րդ հոդված):

Քրեակատարողական հիմնարկներ ուղարկելիս կազմվում է կարգագիր թե՛ մեկ, թե՛ մի քանի դատապարտյալների համար: Կարգագրում նշվում են դատապարտյալների ընդհանուր քանակը և քրեական օրենքի հոդվածները, որոնցով նրանք դատապարտվել են: Կարգագրին կցվում են դատապարտյալների անձնական գործերը կնքված վիճակում, որոնք պարունակում են դա-

տապարտյալի անձնագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձը հաստատող լուսանկարով այլ փաստաթուղթ, տեղաբաշխման հանձնաժողովի նիստի արձանագրությունից քաղվածք, անձնական և մատնադրոշմային քարտեր, լուսանկարներ, եզրափակիչ դատական ակտի պատճենը, տեղեկանք եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու մասին, տեղեկանք դատվածության մասին, բժշկական քարտ և այլն: Փաստաթղթերի բացակայության դեպքում անձը քրեակատարողական հիմնարկ չի ընդունվում:

Ազատագրկման դատապարտվածները պատժի կրման վայր են ուղարկվում և պատժի կրման մեկ վայրից մյուսն են տեղափոխվում պահակախմբով՝ պետության միջոցների հաշվին: Դատապարտյալը տեղափոխվում է բավարար լուսավորություն և օդափոխություն ունեցող, իրեն ավելորդ ֆիզիկական անհարմարություն պատճառելը բացառող փոխադրամիջոցով, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական հսկողությամբ: Տեղափոխման ընթացքում դատապարտյալը պետք է ապահովված լինի նյութական և սանիտարահիգիենիկ համապատասխան պայմաններով, ինչպես նաև հնարավորինս պաշտպանված լինի հասարակական հետաքրքրասիրությունից (ՀՀ ՔԿՕ, 61-րդ հոդված):

Կալանավորված անձին կամ դատապարտյալին ձեռնաշղթաներով կամ ոտնաշղթաներով փոխադրելը թույլատրվում է այն դեպքերում, երբ հիմնավոր կասկածներ կան ենթադրելու, որ կալանավորված անձը կամ դատապարտյալը կարող է դիմել փախուստի, վնասել իրեն կամ իրեն ուղեկցող անձանց կամ այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների: Ելնելով անհրաժեշտությունից՝ կալանավորված անձը կամ դատապարտյալը փոխադրամիջոցից մինչև փոխադրման վայր կարող է տեղափոխվել ձեռնաշղթայով կամ ոտնաշղթայով կամ ուղեկցող անձին ձեռնաշղթայով ամրակցված վիճակում: Չորս և ավելի

Ժամ տևողությամբ փոխադրման դեպքում կալանավորված անձը կամ դատապարտյալը պետք է ապահովվի սննդով:

Դատապարտյալներին պահակախմբով տեղափոխումն իրականացվում է տղամարդկանց՝ կանանցից, անչափահասներին՝ չափահասներից, միևնույն գործով դատապարտված անձանց՝ միմյանցից և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություն ունեցող դատապարտյալին՝ այլ դատապարտյալներից անջատ:

Եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ազատազրկման դատապարտվածը, ինչպես հայտնի է, ձեռք է բերում նոր կարգավիճակ, բայց դատապարտյալի իրավունքների և պարտականությունների փաստացի իրականացումը սկսվում է քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո: Դատապարտյալի քրեակատարողական հիմնարկ ընդունումը կազմակերպչական, կանխարգելիչ, հոգեբանադաստիարակչական միջոցառումների համալիր է: Այն բարդ ու կարևոր գործընթաց է և պահանջում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի լուրջ աշխատանք⁵⁹: Դրանով է պայմանավորված դատապարտյալներին քրեակատարողական հիմնարկներ ընդունելու կարգի իրավական նշանակությունը:

Քրեակատարողական հիմնարկ կալանավորված անձանց և դատապարտյալի ընդունումը կազմակերպվում է կարանտինային բաժանմունքում ցանկացած ժամի՝ քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի կողմից: Քրեակատարողական հիմնարկ ընդունվող դատապարտյալը պարտադիր ենթարկվում է անձնական խուզարկության, իսկ նրա իրերը՝ զննության:

Նախնական բժշկական զննությունն անցնելու, քրեակատա-

⁵⁹ См. Уголовно-исполнительное право. Под ред. Ю.И. Калинина. Т.2, М., 2006. էջ 59:

բողական հիմնարկի պայմաններին հարմարվելու, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով նախատեսված պատժի կատարման կարգին և պայմաններին իրազեկվելու, ինչպես նաև ինքնասպանության և ինքնավնասման ռիսկը վեր հանելու և գնահատելու, ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա պատժի կատարման անհատական պլանավորման և պայմանների որոշման նպատակով՝ դատապարտյալը մինչև 15 օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում: Կարանտինային բաժանմունքում դատապարտյալի գտնվելու առանձնահատկությունները սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով (ՀՀ ՔԿՕ, 62-րդ հոդված, Ներքին կանոնակարգի 3-րդ գլուխ, 12-38 կետեր):

Քրեակատարողական հիմնարկ ընդունված կամ տեղափոխված կալանավորված անձի կամ դատապարտյալի հետ հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից իրականացվում է ինքնասպանության և ինքնավնասման, ինչպես նաև հոգեկան առողջության ռիսկերի գնահատում՝ նրա մուտք գործելուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

Կարանտինային բաժանմունքում ընդունվելուց անմիջապես հետո կալանավորված անձը կամ դատապարտյալը ենթարկվում է նաև առաջնային բժշկական զննության, որն իրականացնում են պարբերաբար՝ կալանքի կամ պատժի ողջ ընթացքում «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժիշկները՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց անմիջապես հետո դատապարտյալը տեղեկացվում է իր հիմնական իրավունքների և պարտականությունների, քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգի, քրեակատարողական հիմնարկում տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման ծավալների ու տրամադրման կարգի, պատիժը կրելու կարգի և

պայմանների, ինչպես նաև պատիժը կրելու սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցների, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու դեպքերի մասին: Իրազեկումը հաստատվում է տվյալ անձի ստորագրությամբ, իսկ դրա մասին տեղեկանքը կցվում է նրա անձնական գործին:

Յուրաքանչյուր դատապարտյալի համար վարվում է անձնական գործ: Այն պետք է ներառի դատապարտյալի անձին և պատժի կատարմանը վերաբերող պարբերաբար թարմացվող տեղեկություններ, այդ թվում՝ դատապարտյալի նկատմամբ նախկինում կիրառված խափանման միջոցի մասին, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկ ընդունելու և պատժից ազատելու ամսաթվերը: Անձնական գործին կարող են ծանոթանալ դատապարտյալը և նման լիազորություն ունեցող մարմինները կամ անձինք: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը երաշխավորում է դատապարտյալի անձնական տվյալների պաշտպանությունը:

Ինչպես արդեն նշվեց, քրեակատարողական հիմնարկ բերված դատապարտյալի ընդունումը կազմակերպվում է կարանտինային բաժանմունքում: Այն գտնվում է քրեակատարողական հիմնարկի առանձնացված հատվածում՝ այնպես, որպեսզի բացառվի մյուս խցերում կամ կացարաններում գտնվող դատապարտյալների հետ շփումը՝ բացառությամբ քրեակատարողական հիմնարկի ցածր անվտանգային գոտու: Այստեղ դատապարտյալների համար ստեղծված են տվյալ քրեակատարողական հիմնարկի համար սահմանված պատժի կրման նույնատիպ պայմաններ: Դատապարտյալները տեղաբաշխվում են ըստ խցերի կամ կացարանների, որտեղ նրանք փոխադրվում են կարանտինային բաժանմունքում աշխատանքները սահմանված կարգով

ավարտվելուց հետո:

Դատապարտյալներն ըստ խցերի կամ կացարանների տեղաբաշխվում և անջատ են պահվում ՀՀ ՔԿՕ համապատասխան՝ հաշվի առնելով նաև անձանց համատեղելիությունը, առողջական վիճակը և անվտանգության ապահովումը: Այս գործընթացը կատարվում է քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ օպերատիվ ստորաբաժանման պետի միջնորդագրի հիման վրա՝ հաշվի առնելով կարանտինային բաժանմունքում գտնվելու ընթացքում դատապարտյալների վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվությունը:

Այն կալանավորված անձինք կամ դատապարտյալները, ովքեր քրեակատարողական հիմնարկ են բերվում կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներով կամ հիվանդությամբ կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ, բժշկական եզրակացության հիման վրա ուղարկվում են քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանում, իսկ եթե նրանց այստեղ պահելը նույնպես վտանգավոր է կյանքի կամ շրջապատի համար, ապա սահմանված կարգով ուղարկվում են լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական մարմինների բուժական հիմնարկ:

Դատապարտյալը քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուց անմիջապես հետո գրանցվում է դրա համար նախատեսված մատյաններում և անհատական քարտերում: Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների հաշվառումն ունի հետևյալ նպատակները՝ քրեակատարողական հիմնարկների գործունեության կարգավորում, պատժի կրման անհատական պլանավորում, դատապարտյալների պատժի կրումից ժամանակին ազատելու ապահովում, դատավճիռների, համաներման, ներման ակտերի ժամանակին, անսխալ իրականացման հնարա-

վորության ստեղծում:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է դատապարտյալի՝ քրեակատարողական հիմնարկ ընդունվելու, այդ թվում՝ մեկ այլ հիմնարկից տեղափոխվելու մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, տեղեկացնել դատապարտյալի ցանկությամբ նրա մերձավոր ազգականներին կամ նրա նշած այլ անձանց:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն իրավունք չունի դատապարտյալի գտնվելու վայրի մասին հայտնելու վերը նշված անձանց, եթե դատապարտյալը գրավոր դիմում է ներկայացրել այդ մասին, բացառությամբ անչափահաս դատապարտյալների (ՀՀ ՔԿՕ, 63-րդ հոդված):

Ընտանիքին կամ մերձավոր ազգականներին հայտնվում են հիմնարկի հասցեն, սննդամթերքների և առաջին անհրաժեշտության առարկաների ցանկն ու քանակը, որ կարող են ստանալ դատապարտյալները ծանրոցներով, հանձնուքներով և փաթեթներով, ինչպես նաև տեսակցությունների տրամադրման կարգը և այլն:

***5. Դատապարտյալին կալանավորվածներին
պահելու վայրում թողնելը կամ բարձր անվտանգային գոտի
տեղափոխելը կամ վարույթն իրականացնող մարմնի մոտ
գտնվող քրեակատարողական հիմնարկում պահելը***

Ազատագրկման դատապարտվածները, որոնց նկատմամբ եզրափակիչ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, ընդհանուր կանոնի համաձայն, պատիժ են կրում քրեակատարողական հիմնարկում՝ համապատասխան անվտանգային գոտում: Միաժամանակ, երբեմն անհրաժեշտություն է առաջանում դա-

տապարտյալներին թողնել կալանավորվածներին պահելու վայրում կամ վարույթն իրականացնող մարմնի մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկում կամ ուղարկել բարձր անվտանգային գոտի, չնայած որ պատժի կրումը նախատեսված է քրեակատարողական հիմնարկի այլ անվտանգային գոտում: Քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսվում է կալանավորվածներին պահելու վայրերում ազատագրկման դատապարտվածներին թողնելու երկու դեպք՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար (դատապարտյալը այդ նպատակով կարող է ուղարկվել նաև քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտի) և դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում:

ՀՀ ՔԿՕ-ի 66-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալը, որը պատիժը պետք է կրի կամ կրում է միջին անվտանգային գոտում, կարող է տեղափոխվել բարձր անվտանգային գոտի կամ թողնվել կալանավորվածներին պահելու վայրում՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու նպատակով:

Դատապարտյալը տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքների համար բարձր անվտանգային գոտի է տեղափոխվում կամ կալանավորվածներին պահելու վայրում է թողնվում Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ, դատապարտյալի գրավոր համաձայնությամբ՝ հաշվի առնելով նրա դրական վարքագիծը:

Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքների համար բարձր անվտանգային գոտի տեղափոխված կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնված դատապարտյալը պահվում է միջին անվտանգային գոտու համար՝ ՔԿՕ-ով և քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով նախատեսված պայմաններում՝ մյուս դատապարտյալներից մեկուսացված և անջատ, չփակվող ընդհանուր խցում և օգտվում է

ամենօրյա երկժամյա զբոսանքի իրավունքից (ՀՀ ՔԿՕ, 66 հոդված, 3-րդ մաս):

Նրանք կարող են բնակվել կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի առանձին շենքերում՝ չփակվող ընդհանուր խցերում: Նրանք մեկուսացված են նաև պատիժ կրող այն դատապարտյալներից, ովքեր օգտագործվում են քրեակատարողական հիմնարկի այլ աշխատանքների համար: Այս դատապարտյալներն օգտագործվում են կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի նյութական ապահովման, բարեկարգման շինությունների և նման բնույթի այլ աշխատանքներում: Քրեակատարողական հիմնարկի տարածքից նրանք կարող են դուրս գալ միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Մեկ այլ անձի կողմից կատարված հանցավոր արարքի վերաբերյալ գործերով դատապարտյալը, քրեական այլ վարույթի շրջանակներում քրեական վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ և Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ, կարող է պահվել նախաքննություն կատարող մարմնի կամ տվյալ դատարանի դատական տարածքին հնարավորինս մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկում՝ պահպանելով անվտանգային գոտու տեսակը, կամ կարող է թողնվել կալանավորվածներին պահելու վայրում:

Մեկ այլ անձի վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով դատաքննությանը մասնակցելու անհրաժեշտության դեպքում դատապարտյալը, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ և Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ, կարող է պահվել տվյալ դատարանի դատական տարածքին հնարավորինս մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկում՝ պահպանելով անվտանգային գոտու տեսակը (ՀՀ ՔԿՕ, 67-րդ հոդված, 2-րդ մաս):

Մեկ այլ անձի վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով քննչական գործողություններ կատարելու կամ դատական քննությանը մասնակցելու համար քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը, համապատասխան մարմնի պատճառաբանված որոշմամբ, կարող է բերվել կալանավորվածների պահելու վայր կամ համապատասխան քրեակատարողական հիմնարկ: Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկից կալանավորվածներին պահելու վայր տեղափոխելու դատարանի կամ նախաքննության մարմնի որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Դատապարտյալը կալանավորվածներին պահելու վայրում կարող է թողնվել մինչև համապատասխան քրեական վարույթի ավարտը: Նա այդ ընթացքում օգտվում է դատապարտյալի իրավունքներից և կրում է դատապարտյալի պարտականությունները:

6. Քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակը փոխելը

Ինչպես հայտնի է, դատապարտյալների դասակարգման կարևորագույն խնդիրներից է քրեակատարողական հիմնարկի տեսակը որոշելը, այսինքն՝ որտեղ պետք է դատապարտյալը կրի պատիժը: Օրենսդիրը սահմանում է ընդհանուր կանոն, համաձայն որի՝ դատապարտյալը պատժի ամբողջ ժամկետը, որպես կանոն, կրում է մեկ քրեակատարողական հիմնարկում (ՀՀ ՔԿՕ, 65-րդ հոդված, 1-ին մաս):

Նման մոտեցումը պայմաններ է ստեղծում դատապարտյալի անձի ուսումնասիրման, պատժի կրման անհատական պլանավորման, պատժի արդյունավետ կատարման, քրեաիրավական ներգործության միջոցների խելամիտ կիրառման համար: Բայց պրակտիկայում՝ պատժի կրման ընթացքում, երբեմն անհրաժեշտություն է առաջանում դատապարտյալի պատժի կրման պայմանների փոփոխման, այդ թվում՝ մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով: Դա չի նշանակում դատապարտյալի դասակարգման խմբի փոփոխում. այն պատժի կրման ողջ ժամկետի ընթացքում որպես կանոն անփոփոխ է:

Պատժի կրման պայմանների փոփոխման հնարավորությունը, որը կախված է պատժի կրման ընթացքում դատապարտյալի վարքագծից, պատժի կատարման կարևոր սկզբունքներից է: Ընդհանուր առմամբ քրեակատարողական հիմնարկի տեսակը փոխելն միտված է քրեակատարողական օրենսդրության պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքի իրականացմանը:

Պատժի կրման պայմանների փոփոխումը վերաբերում է ազատազրկման դատապարտվածների նկատմամբ կիրառվող

խրախուսանքի և տույժի միջոցների թվին: Ինչպես նշել ենք, նման փոփոխում կարող է կատարվել ինչպես մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում, այնպես էլ մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով (անվտանգության գոտիների փոփոխում), երբ պատժի կրման պայմանները մեղմացվում են կամ, ընդհակառակը, խստացվում:

Քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակը կարող է փոխվել՝ ելնելով դատապարտյալի վարքագծից կամ դատապարտյալին պատժից ազատելու նախապատրաստման նպատակով (ՀՀ ՔԿՕ, 68-րդ հոդված, 1-ին մաս): Քրեակատարողական հիմնարկի տեսակի փոփոխումը, երբ նախատեսվում է պատժի կրման պայմանների բարելավում, իրականացվում է դատապարտյալի դրական վարքագծի դրսևորման և պատժի ժամկետի՝ օրենքով նախատեսված որոշակի մասը կրելու դեպքում:

Պատժի կրման պայմանների փոփոխումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի մեկ տեսակից այլ տեսակ տեղափոխելու միջոցով պայմանների փոփոխման առավել հստակ և ամբողջական համակարգ է, քանի որ նախատեսում է ինչպես դրական, այնպես էլ բացասական փոփոխությունների հնարավորություն⁶⁰:

ՀՀ ՔԿՕ-ի 69-րդ հոդվածը, սահմանելով պատժի կատարման համար անվտանգային գոտու տեսակը փոխելու կարգը և պայմանները, դրանց հիմքում դրել է պատժի կատարման անհատականացման սկզբունքից բխող հիմիքեր ու ընթացակարգ: Նախ, պատժի կատարման համար անվտանգային գոտու տեսակը կա-

⁶⁰ Ст' у **Бриллиантов А.В.** Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дифференциации условий отбывания наказания. М., 1995, էջ 8:

րող է փոխվել անվտանգության ավելի ցածր աստիճանի՝ հիմք ընդունելով Վերաստցիալականացման գնահատման հանձնաժողովի եզրակացությունն ազատագրկման կամ ցմահ ազատագրկման դատապարտված անձի դրսևորած դրական վարքագծի վերաբերյալ: Դատապարտյալը կարող է տեղափոխվել՝

1) ցածր անվտանգային գոտի, եթե՝ ա. դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մինչև 10 տարի ժամկետով ազատագրկման կամ նախկինում չի կրել ազատագրկում՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն կեսը կրելուց հետո, բ. դատապարտվել է 10 տարուց ավելի ժամկետով ազատագրկման կամ նախկինում կրել է ազատագրկում՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն երկու երրորդը կրելուց հետո, գ. դատապարտվել է ցմահ ազատագրկման և պատիժը կրում է միջին անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն 20 տարին կրելուց հետո.

2) միջին անվտանգային գոտի, եթե՝ ա. դատապարտվել է 10 տարուց ավելի ժամկետով ազատագրկման կամ նախկինում ազատագրկում է կրել՝ ռեցիդիվի դեպքում, և պատիժը կրում է բարձր անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո, բ. դատապարտվել է ցմահ ազատագրկման և պատիժը կրում է բարձր անվտանգային գոտում՝ նշանակված պատժի առնվազն 15 տարին կրելուց հետո:

Մեկուսացվածության ավելի բարձր աստիճան ունեցող քրեակատարողական հիմնարկ տեղափոխության կարգը և պայմանները նախատեսված են ՀՀ ՔԿՕ-ի 69-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ պատժի կատարման համար անվտանգային գոտու տեսակը կարող է փոխվել դեպի անվտանգային ավելի բարձր աստիճանի պատիժը կատարելու ցանկացած ժամանակ՝

հիմք ընդունելով Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի եզրակացությունը դատապարտյալի դրսևորած բացասական վարքագծի վերաբերյալ կամ վերջինիս գրավոր դիմումը՝ ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կատարելու համար անվտանգային գոտու տեսակը չի կարող փոխվել բարձր անվտանգային գոտու՝ բացառությամբ ռեցիդիվի դեպքում:

Դատապարտյալները, փոխադրվելով մեկ քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ (անվտանգային գոտի), ձեռք են բերում այդ քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների իրավունքները և պարտականությունները: Նրանց նկատմամբ մյուս դատապարտյալների համեմատությամբ ոչ մի սահմանափակում կամ արտոնություն չի կիրառվում:

Դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից նույն տեսակի մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելը՝ պահպանելով անվտանգային գոտու տեսակը՝ կարող է թույլատրվել՝ դատապարտյալի ռիսկայնությամբ պայմանավորված, դատապարտյալի անվտանգությունն ապահովելու նպատակով, դատապարտյալի հիվանդությամբ պայմանավորված, քրեակատարողական հիմնարկի վերակազմակերպման կամ գործունեության դադարեցման արդյունքով, արտակարգ կամ ռազմական դրության, արտակարգ իրավիճակի, զանգվածային անկարգության, դատապարտյալների զանգվածային անհնազանդության, քրեակատարողական հիմնարկի վրա հարձակման իրական վտանգի դեպքերում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի շենքային ենթակառուցվածքների վնասման արդյունքով, դատապարտյալի՝ արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու նպատակով, տվյալ քրեակատարողական հիմնարկում դա-

տապարտյալի հետագա պատիժը կրելը խոչընդոտող այլ բացառիկ հանգամանքների դեպքերում (ՀՀ ՔԿՕ, 65-րդ հոդված, 2-րդ մաս):

ՀՀ ՔԿՕ-ի 69-րդ հոդվածի 4-9-րդ մասերով նախատեսվում են անվտանգային գոտու տեսակը փոխելու պայմանները: Սահմանվում է, որ Տեղաբաշխման հանձնաժողովը հարցը քննարկում է դատապարտյալի դիմումի հիման վրա քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացրած միջնորդագիրն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Բացառիկ դեպքերում նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով, եթե անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնասիրություն: Եթե դատապարտյալի վարքագծում նոր հանգամանք է ի հայտ գալիս, ապա քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Տեղաբաշխման հանձնաժողովին:

Եթե դատապարտյալը իր գրավոր դիմումի համաձայն տեղափոխվել է անվտանգության ավելի բարձր աստիճանի անվտանգային գոտի, ապա տեղափոխումից հետո նրա անվտանգության ավելի ցածր աստիճանի անվտանգային գոտի տեղափոխելու հարցը քննարկվում է ընդհանուր կարգով, և դատապարտյալը կարող է տեղափոխվել անվտանգության ավելի ցածր աստիճանի անվտանգային գոտի առնվազն երեք ամիս անվտանգության ավելի բարձր աստիճանի անվտանգային գոտում պատիժը կրելուց հետո:

Եթե անվտանգային գոտու տեսակը փոխվել է անվտանգության ավելի ցածր աստիճանի, ապա փոխվելուց հետո անվտանգային գոտու տեսակն անվտանգության ավելի ցածր աստիճանի անվտանգային գոտիով փոխելու հարցը կարող է Տեղաբաշխման հանձնաժողովը կրկին քննարկել տվյալ անվտանգային գոտում պատիժն առնվազն մեկ տարի կրելուց հետո, իսկ եթե պատժի

մնացած մասը պակաս է մեկ տարուց, ապա՝ պատժի մնացած մասի կեսը կրելուց հետո:

Եթե դատապարտյալը իր դրսևորած բացասական վարքագծի հիման վրա տեղափոխվել է անվտանգության ավելի բարձր գոտի, ապա անվտանգության ավելի ցածր աստիճանի յուրաքանչյուր հաջորդ անվտանգային գոտի դատապարտյալի տեղափոխման հարցը կարող է քննարկվել ավելի բարձր աստիճանի անվտանգային գոտի տեղափոխման ժամկետի կեսը կրելուց հետո:

ԳԼՈՒԽ 9

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

1. Ազատագրելու և պատժատեսակի կատարման կանոնակարգի հասկացությունը և հիմնական պահանջները

Քրեակատարողական հիմնարկներում, ինչպես և ցանկացած այլ մարմնում կանոնակարգը հիմնվում է որոշակի կանոների վրա, որոնց կատարումը ենթադրում է համապատասխան պարտականությունների իրականացում: Կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում օժտված է հատուկ, միայն իրեն բնորոշ գծերով: Մասնավորապես, կանոնակարգի շրջանակներում է իրականացվում դատապարտյալների նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների և իրավասահմանափակումների ամբողջությունը, որոնք կազմում են ազատագրելու և պատժատեսակի էությունը: Կանոնակարգը պատժի նպատակների իրականացման հիմնական միջոց է, որի պահանջները սահմանվում են քրեակատարողական օրենսդրության նորմերով: Եվ վերջապես, կանոնակարգն ազատագրված վայրերում ունի իր պահանջների իրականացումն ապահովող հատուկ մեխանիզմ:

Այսպիսով՝ *կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի կատարման կարգի և պայմանների ամբողջությունն է* (ՀՀ ՔԿՕ, 70-րդ հոդված, առաջին մաս): Կանոնակարգը կարգավորում է դատապարտյալների կյանքի բոլոր կողմերն ազատագրված վայրերում պատժի կրման ամբողջ ժամկետի ընթացքում և սահմանում դատապարտյալների թույլատրելի վարքի շրջանակները: Կանոնակար-

գը սահմանափակում է ազատագրկման դատապարտվածների իրավունքները, բայց միաժամանակ պաշտպանում է նրանց շահերը, քանի որ կանոնակարգի պահանջները հավասարապես պարտադիր են և՛ յուրաքանչյուր դատապարտյալի, և՛ քրեակատարողական հիմնարկի ցանկացած աշխատակցի համար:

Կանոնակարգը սահմանում է իրավահարաբերության բոլոր մասնակիցների և սուբյեկտների վարքի կանոնները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, որոնք ծագում են պատժի կատարման և կրման առիթով, ինչպես նաև իրավասահմանափակումների իրականացման կարգը:

Դատապարտյալների վերաուցիալականացման հիմնական միջոցների թվում նշվում է նաև կանոնակարգը (պատիժ կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները): Այն ապահովում է դատապարտյալների պարտադիր, տարբերակված մեկուսացումը հասարակությունից, պահպանությունը, նրանց նկատմամբ մշտական հսկողության սահմանումը՝ նոր հանցագործություններ կամ այլ հակաօրինական արարքներ կատարելու հնարավորությունը բացառելու նպատակով, նրանց պարտականությունների պատշաճ կատարումը, իրավունքների ու օրինական շահերի իրականացումը, դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների անվտանգությունը, դատապարտյալների դասակարգման տարբեր խմբերի՝ միմյանցից անջատ պահելը, պատժի կրման պայմանների փոփոխումը, պահելու տարբեր պայմաններ նախատեսումը՝ ելնելով դատապարտյալի անձից, անվտանգային գոտու տեսակից և նրա վարքագծից, կատարված հանցագործության բնույթից ու հասարակական վտանգավորության աստիճանից:

Կանոնակարգը դատապարտյալների վերաուցիալականացման միջոցների կիրառման պայմաններ է ստեղծում: Այս տեսակետից անհրաժեշտ է առանձնացնել այն նորմերը, որոնք սահ-

մանում են դատապարտյալների վերասոցիալականացման միջոցները՝ դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածություն, ինչպես նաև հասարակական ներգործության իրականացման կարգն ու պայմանները: Կանոնակարգը պարունակում է նաև նորմեր, որոնք սահմանում են դատապարտյալների նյութակենցաղային ապահովումը և բժշկասանիտարական սպասարկումը: Ինքնուրույն նշանակություն ունեն կանոնակարգի այն նորմերը, որոնք կարգավորում են հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխումը ինչպես պատժի կրման ընթացքում դատապարտյալների, այնպես էլ այլ անձանց կողմից: Այն ընդգրկում է դատապարտյալների պահպանության և նրանց նկատմամբ վերահսկողության իրականացման կանոնները, կանխարգելիչ միջոցառումների իրականացումը և այլն:

ՀՀ ՔԿՕ-ի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է՝ ապահովել քրեակատարողական հիմնարկում դատապարտյալի արժանապատիվ պահման պայմաններ, հնարավորինս նվազեցնել ազատազրկման և ազատության մեջ գտնվելու միջև եղած հոգեբանական տարբերությունները, ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, վերասոցիալականացնել դատապարտյալին և ձևավորել նրա դրական վարքագիծը, աջակցել դատապարտյալին՝ իր մեջ ձևավորելու և զարգացնելու այնպիսի հմտություններ և ունակություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպել հետագա կյանքը:

Քրեակատարողական հիմնարկներում սահմանվում է ներքին կանոնակարգ, որը նախատեսում է դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելու կարգը, դատապարտյալի

վարքագծի կանոնները, դատապարտյալին արգելված առարկաների և իրերի ցանկը, արգելված առարկաներն առգրավելու, դատապարտյալի և քրեակատարողական հիմնարկում նրա խցի - կամ կացարանի խուզարկություն, ինչպես նաև նրա իրերի զննություն կատարելու, տեսակցության, նամակագրության, հանձնույնները և ծանրոցները դատապարտյալին փոխանցելու, հեռախոսակապից, տեսազանգից օգտվելու կարգը, օրվա կարգացուցակը և ՀՀ ՔԿՕ-ից, ինչպես նաև իրավական այլ ակտերից բխող այլ հարցեր (ՀՀ ՔԿՕ, 71-րդ հոդված, առաջին մաս):

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2023թ. ապրիլի 13-ին և ուժի մեջ մտել 2023թ. ապրիլի 27-ին:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) ապահովում է քրեակատարողական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված՝ կալանք խափանման միջոցի և ազատությունից զրկելու հետ կապված պատիժների (բացառությամբ կարգապահական գումարտակում պահելու և զինծառայողների նկատմամբ նշանակված կարճաժամկետ ազատազրկման) կատարման կարգի և պայմանների ամբողջությունը:

Ներքին կանոնակարգի պահանջների կատարումը պարտադիր է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկ այցելող յուրաքանչյուր այլ անձի համար (Ներքին կանոնակարգ, 1-ին-6-րդ կետեր):

Ներքին կանոնակարգը սահմանում և կանոնակարգում է կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման կարգը, կալանավորված անձանց՝ կալանավորվածներին պահե-

լու վայր, դատապարտյալներին՝ քրեակատարողական հիմնարկ ընդունելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների վարքագծի կանոնները, անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները, սննդամթերք ու առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների նյութական կենցաղային ապահովումը, կալանավորված անձանց և դատապարտյալների օրվա կարգացուցակը, քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալներին պահելու պայմանների առանձնահատկությունները, կալանավորվածներին պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կամ անչափահաս՝ կալանավորված անձանց և դատապարտյալներին պահելու պայմանների առանձնահատկությունները, խուզարկություն, զննում և առգրավում կատարելու կարգն ու պայմանները, կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքը, կրթությունը, գրքերից, ամսագրերից ու թերթերից օգտվելը, դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կրոնական ծեսերին մասնակցելը, տեսակցությունների տրամադրման կարգը, հանձնույթներ, ծանրոցներ ընդունելու և հանձնելու, դրամական փոխանցումներ ստանալու և ուղարկելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ ներկայացնելը, նամակագրությունը, հեռախոսակապի, տեսազանգերի տրամադրման կարգը, մեկնումների տրամադրման կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու և ամուսնությունը գրանցելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի ու տույժի միջոցները և դրանք

կիրառելու կարգը, կալանավորվածներին պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կալանավորվածներին պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը, կալանավորված անձանց և դատապարտյալներին փոխադրելը, կալանավորված անձանց կալանքից և դատապարտյալներին պատժից ազատելու կարգն ու պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությունից բխող այլ հարաբերություններ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է դատապարտյալին հասկանալի լեզվով տեղեկացնել քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի մասին քրեակատարողական հիմնարկի կարանտինային բաժանմունքում՝ նրանից ստորագրություն վերցնելով:

2. Ազատագրկում պատժատեսակի կանոնակարգի գործառույթները

Ազատագրկման կանոնակարգի պահանջների ապահովումն ուղղված է կանոնակարգի հետևյալ գործառույթների իրականացմանը՝ ***պատժիչ, դաստիարակչական, ապահովող և սոցիալական վերահսկողության կամ կանխարգելիչ:***

Պատժիչ գործառույթն ազատագրկման կրման ընթացքում իրականացվում է դատապարտյալների նկատմամբ տարբեր իրավասահմանափակումների կիրառմամբ: Դատապարտյալները մեկուսացվում են հասարակությունից, նրանց նկատմամբ սահմանվում են մշտական հսկողություն ու պահպանություն քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս կարող են տեղաշարժվել պահակախմբի հսկողությամբ: Այս գործառույթն իրականացնում է հասարակության պահպանության խնդիր, քանի որ պատիժը հասարակության և նրա անդամների համար ինք-

նապաշտպանության միջոց է: Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշների 58-րդ հոդվածում նշվում է, որ բանտարկության կամ ընդհանրապես ազատագրվման դատավճիռների նպատակը վերջին հաշվով հասարակության պաշտպանությունն է:

Դատախարակչական գործառույթի էությունը հետևյալն է. վերջին հաշվով հարկադրանքն է ազդում մարդու վրա, մղում է նրան կարգապահության, պատժի կրման սահմանված կարգի պաշտպանության, ինչպես նաև ստեղծում անհրաժեշտ նախադրյալներ դատապարտյալի վերասոցիալականացման համար: Կանոնակարգի պահանջները կարող են դատապարտյալների մեջ ձևավորել հասարակության կողմից ընդունելի վարքագիծ, այս գործառույթը կարող է իրավական անհրաժեշտ պայմաններ ստեղծել քրեախիբավական ներգործության միջոցների արդյունավետ կիրառման համար:

Ապահովող գործառույթն իրավական հիմք է դատապարտյալների նկատմամբ կիրառվող կանխարգելիչ ներգործության միջոցների իրականացման համար: Կանոնակարգի պահանջները որոշում են դատապարտյալների աշխատանքի ներգրավելու կանոնները, դատապարտյալի կրթության և մասնագիտական կրթության, մշակութային, կրոնական, լուսավորչական և մարզական միջոցառումների առանձնահատկությունները: Կանոնակարգի նորմերը որոշում են նաև դատապարտյալների նյութական ցաղային ապահովման, բժշկական սպասարկման կարգն ու առանձնահատկությունները: Եթե պատժիչ և դատախարակչական գործառույթները վերաբերում են միայն դատապարտյալներին, ապա ապահովող գործառույթն ուղղված է նաև իրավահարաբերության այլ սուբյեկտներին, մասնավորապես քաղաքացիներին, ովքեր գտնվում են քրեակատարողական հիմնարկների օբյեկտներում կամ դրանց տարածքում կամ հարող գոտում:

Սոցիալական վերահսկողության կամ կանխարգելիչ գործառույթն ուղղված է կանխելու հանցագործությունները և այլ իրավախախտումներն ինչպես դատապարտյալների, այնպես էլ այլ անձանց կողմից, ովքեր գտնվում են քրեակատարողական հիմնարկների տարածքում կամ հարող օբյեկտներում: Այս գործառույթը տարածվում է դատապարտյալների աշխատանքային գործունեության, կենցաղի ու կյանքի այլ բնագավառների վրա և ապահովվում է պատժի կրման ընթացքում հատուկ կանոններով սահմանված պետական վերահսկողության միջոցով:

Ազատազրկման կանոնակարգի այս գործառույթները գործում են միաժամանակ, գտնվում են փոխադարձ կապի մեջ և լրացնում են մեկը մյուսին: Դրանք, գործելով ինքնուրույն, միաժամանակ պայմաններ են ստեղծում գործառույթների ամբողջության արդյունավետ իրականացման համար:

3. Ազատազրկման կանոնակարգի բովանդակությունը

Ազատազրկման կանոնակարգի բովանդակությունը, իր հիմնական տարրերով և գործառույթներով հանդերձ, կանոնների ամբողջություն է, որը ապահովում ու կարգավորում է ազատազրկման կատարման և կրման կարգն ու պայմանները: Պայմանականորեն այն կարելի է բաժանել երեք խմբի՝ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներին, դատապարտյալներին և քրեակատարողական հիմնարկների գործունեությանն այս կամ այն կերպ առնչվող այլ քաղաքացիների վերաբերող կանոններ: Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներին վերաբերող կանոնները կարգավորում են նրանց իրավունքները և պարտականությունները կանոնակարգի շրջանակներում, այն է՝ դատապարտյալների պարտադիր տարբերակված մեկուսացումն ու անվտանգությունն ապահովող, ներքին կարգապահությունն

ապահովող, դատապարտյալների իրավունքների և պարտականությունների կատարումն ապահովող, դատապարտյալների հանցագործությունների կամ այլ իրավախախտումների կանխումն ապահովող կանոններ:

Պատժի կրման կանոնները, որոնք վերաբերում են դատապարտյալներին, հետևյալներն են՝ դատապարտյալների նյութականադային ապահովումը, վարքագիծը, օրվա կանոնակարգը, դատապարտյալների իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը, քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառումը, դատապարտյալների սոցիալական ապահովությունը կարգավորող կանոնները և այլն:

Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական, սանիտարահիգիենիկ, և առողջապահական չափանիշներին: Քրեակատարողական հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից (ՀՀ ՔԿՕ, 79-րդ հոդված, 1-ին մաս):

Պատժի կրման ընթացքում դատապարտյալը պետք է ապահովված լինի մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններով: Դատապարտյալին տրամադրվում են քնելու անհատական տեղ և անկողնային պարագաներ:

Դատապարտյալն ապահովվում է իր սեռին, տարվա եղանակին, կլիմայական պայմաններին համապատասխանող միասնական նմուշի հանդերձանքով: Դատապարտյալն իր հագուստի վրա կրում է անվանական կրծքանշան: Դատապարտյալի հանդերձանքը չպետք է լինի ճնշող կամ նվաստացնող (ՀՀ ՔԿՕ, 79-րդ հոդված, 2-րդ մաս):

Դատապարտյալը պատժի կատարման ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության հա-

մար անհրաժեշտ սննդամթերքով: Սննդամթերքի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է: Անչափահաս, հղի, կերակրող մայր կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ կամ դիետիկ սննդամթերքով: Դատապարտյալը պետք է ապահովված լինի խմելու ջրով: Հավելյալ կամ դիետիկ սննդամթերքով ապահովման կարիք առաջացնող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալին տրամադրվող հավելյալ կամ դիետիկ սննդամթերքի չափաբաժինները հաստատում է ՀՀ կառավարությունը (ՀՀ ՔԿՕ, 79-րդ հոդված, 4-րդ մաս):

Իրավունքի նորմերը սահմանում են դատապարտյալների կողմից սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը: Դատապարտյալն իր միջոցներով կարող է ամսվա ընթացքում ձեռք բերել ՀՀ ՔԿՕ-ով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ, ինչպես նաև գրենական պիտույքներ, զրքեր, թերթեր, ամսագրեր և այլ գրականություն (ՀՀ ՔԿՕ, 79-րդ հոդված, 5-րդ մաս):

Քրեակատարողական հիմնարկների միջին կամ բարձր անվտանգային գոտիների մեկուսացված պայմաններում պահվող դատապարտյալն իրավունք ունի ամենօրյա զբոսանքի: Դատապարտյալին տրամադրվում է ոչ պակաս, քան օրական մեկ ժամ, իսկ հղի, մինչև երեք տարեկան երեխա ունեցող կամ անչափահաս դատապարտյալներին՝ ոչ պակաս, քան երկու ժամ տևողությամբ զբոսանք, որը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում: Դատապարտյալի զբոսանքի տևողությունը սահմանվում է ՀՀ ՔԿՕ-ով՝ հաշվի առնելով անվտանգային գոտու տեսակը: Դատապարտյալների կողմից քրեակատարողական հիմնարկների ներքին կա-

նոնները խախտելու դեպքում զրոսանքը կարող է ժամկետից շուտ դադարեցվել (ՀՀ ՔԿՕ, 79-րդ հոդված, 6-րդ մաս):

Քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժը կրող դատապարտյալն իր ցանկությամբ կարող է դուրս չգալ զրոսանքի: Դատապարտյալի զրոսանքից հրաժարվելու փաստն արձանագրվում է համապատասխան մատյանում (Ներքին կանոնակարգի 50-րդ կետ):

Ազատագրվման դատապարտվածների սոցիալական կապերը արտաքին աշխարհի հետ ամրապնդելու և ընդարձակելու նպատակով քրեակատարողական օրենսդրությունը նախատեսում է համապատասխան պայմաններ: Այդ նպատակով քրեակատարողական հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավորություններ: Քրեակատարողական հիմնարկում տեսակցության համար կահավորվում են նաև հատուկ սենյակներ, որոնք հնարավորինս պետք է հարմարեցված լինեն երեխաների ժամանցի համար, ներառյալ՝ կահույքը և խաղալիքները:

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ դատապարտյալին կարող է տրամադրվել կարճատև տեսակցություն՝ մինչև չորս ժամ տևողությամբ, քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի տեսողական հսկողությամբ: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ կամ այն անձանց հետ, որոնց հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա, կարող է տրամադրվել երկարատև տեսակցություն՝ մինչև երեք օր տևողությամբ: Տրամադրվող տեսակցությունների տեսակը և քանակը սահմանվում են ՀՀ ՔԿՕ-ով:

ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված դեպքերում դատապարտյալներին կարող է տրվել հինգ օր տևողությամբ երկարատև տեսակ-

ցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով: Քրեակատարողական հիմնարկի ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալներին տարվա ընթացքում կարող է տրվել հինգ օր տևողությամբ առնվազն մեկ երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով: Քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով տեսակցության վայրն ընտրում է դատապարտյալը, կամ առաջարկվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Տեսակցության վայրը պետք է հնարավորինս մոտ գտնվի քրեակատարողական հիմնարկին: Իր ընտրած տեսակցության վայրի մասին դատապարտյալը դիմումով տեղեկացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, որը քննարկում է տեսակցության տրամադրման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով տեսակցության վայրի տեղակայումը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով համապատասխան հսկողություն իրականացնելու և անվտանգությունն ապահովելու իրական հնարավորությունը (Ներքին կանոնակարգի 174-րդ կետ):

Դատապարտյալին տեսակցություն տրամադրելու անհրաժեշտ պայման են դատապարտյալի համաձայնությունը և տեսակցություն հայցող անձի դիմումին կցված՝ վերջինիս անձը հաստատող, իսկ երկարատև տեսակցության համար՝ նաև նախկինում համատեղ բնակվելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հետ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հավաստող փաստաթղթերի առկայությունը:

Օրենսդրությամբ տեսակցությունների համար սահմանված նվազագույն քանակից ավելի տեսակցություն չի տրամադրվում բացասական բնութագրվող, ոչ օրինապահ վարքագիծ դրսևորող, աշխատանքի կամ ուսման նկատմամբ անբարեխիղճ վերաբեր-

մունք ցուցաբերող, տույժ ունեցող դատապարտյալին: Տեսակցության թույլտվությունը մերժվում է քրեակատարողական հիմնարկի պետի, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի պատճառաբանված որոշմամբ:

Դատապարտյալի ցանկությամբ երկարատև մեկ տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև մեկ տեսակցությամբ, իսկ կարճատև մեկ տեսակցությունը՝ մեկ հեռախոսակապով կամ տեսազանգով (ՀՀ ՔԿՕ, 80-րդ հոդված, 4-րդ մաս):

Դատապարտյալի հետ, անկախ տեսակցության տեսակից, միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը չորս չափահաս անձանց և դատապարտյալի հինգ անչափահաս եղբայրներին, քույրերին, զավակներին և թոռներին (Ներքին կանոնակարգի 161-րդ կետ):

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը տեսակցության եկած անձանց ծանոթացնում է տեսակցության անցկացման կարգին և պայմաններին: Տեսակցության եկած անձանց կողմից բերված սննդամթերքը, իրերը և առարկաները, որոնք արգելված չեն, դատապարտյալին են փոխանցվում որպես ծանրոց կամ հանձնուք:

Տեսակցության եկած անձանց նախազգուշացվում է սահմանված կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում տեսակցությունը վաղաժամկետ դադարեցնելու հնարավորության մասին:

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցությունն անցկացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի տեսողական հսկողությամբ: Տեսակցությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել նշված անձանց կողմից դատապարտյալին ներքին կանոնակարգով նախատեսված արգելված առարկաների, իրերի կամ սննդամթերքի փոխանցման կամ փոխանցման փորձի կատարման փաստի հայտնաբերման, ինչ-

պէս նաև տեսակցության եկած անձանց կամ դատապարտյալի կողմից միմյանց կամ վարչակազմի ներկայացուցչի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու կամ վերջինիս օրինական պահանջներին չենթարկվելու դեպքերում (Ներքին կանոնակարգի 165-րդ կետ):

Դատապարտյալներին տրամադրված երկարատև տեսակցությունների ժամանակ նրանց վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կարող են կատարվել ստուգայցեր՝ չտանահարելով դատապարտյալի արժանապատվությունը, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը և չխախտելով հանգստի ու քնի իրավունքը:

Տեսակցության ընթացքում դատապարտյալի նկատմամբ չի տարածվում քրեակատարողական հիմնարկում սահմանված օրվա կարգացուցակը (Ներքին կանոնակարգի 168-րդ կետ):

Իրավաբանական օգնություն ստանալու նպատակով՝ դատապարտյալին իր գրավոր դիմումի հիման վրա տրամադրվում է փաստաբանի հետ տեսակցություն՝ առանց քանակի և տևողության սահմանափակման, աշխատանքային օրերին, դատապարտյալին կարճատև տեսակցություն տրամադրելու համար օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ առցանց: Փաստաբանի հետ դատապարտյալի տեսակցությունները տեղի են ունենում խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) (ՀՀ ՔԿՕ, 80-րդ հոդված, 5-րդ մաս):

Տեսակցություն տրամադրելու մասին քրեակատարողական հիմնարկի վարչակազմն անձնական քարտում կատարում է գրառում՝ նշելով տեսակցություն տրամադրելու ամսաթիվը և տեսակցության եկած անձանց տվյալները:

Տեսակցության իրավունքը դատապարտյալին տրվում է անմիջապես քրեակատարողական հիմնարկ ժամանելուց հետո,

անկախ նրանից, թե կալանավորվածներին պահելու վայրում երբ է ունեցել վերջին տեսակցությունը: Առաջին անգամ տեսակցության տեսակը որոշում է դատապարտյալը, ապա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Դատապարտյալի ծանր հիվանդության դեպքում, երբ վտանգ է սպառնում նրա կյանքին, քրեակատարողական հիմնարկի պետը կարող է թույլատրել հարազատների հետ արտահերթ տեսակցություն:

Դատապարտյալը, որի երեխան խնամվում և դաստիարակվում է պետական կամ այլ հաստատությունում, երկու ամիսն առնվազն մեկ կարճատև և վեց ամիսն առնվազն մեկ երկարատև տեսակցության իրավունք ունի իր երեխայի հետ: Այս տեսակցությունների առավելագույն քանակը որոշում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ հաշվի առնելով դատապարտյալի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երեխայի հետ և ազդեցությունը նրա վրա, ինչպես նաև երեխայի լավագույն շահը (ՀՀ ՔԿՕ, 80-րդ հոդված, 6-րդ մաս): Տեսակցության ծախսերը կատարվում են այն քրեակատարողական հիմնարկի հաշվին, որտեղ պատիժ է կրում դատապարտյալը, եթե դատապարտյալի անձնական հաշվին պահանջվող գումարը բացակայում է: Նման տեսակցությունից առաջ, անհրաժեշտության դեպքում, դատապարտյալի և նրա երեխայի հետ իրականացվում է նախապարաստական աշխատանք սոցիալական աշխատողի, հոգեբանի կամ մանկավարժի կողմից:

Օրենքով սահմանված կարգով միմյանցից անջատ պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների տեսակցությունները տեսակցությունների համար սահմանված հատվածում կազմակերպվում են այնպես, որպեսզի բացառվի նրանց՝ միմյանց հետ շփումը (Ներքին կանոնակարգի 170-րդ կետ):

Դատապարտյալին թույլատրվում է ստանալ և իր հաշվին ուղարկել հանձնույնքեր կամ ծանրոցներ, առանց սահմանափակ-

ման ստանալ և կատարել դրամական փոխանցումներ, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների և հեռագրերի թվի սահմանափակման: Ծանրոցները, հանձնուքները, նամակները և հեռագրերն ուղարկելու և ընդունելու, ինչպես նաև դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է քրեակատարողական հիմնարկների Ներքին կանոնակարգով:

Դատապարտյալը կարող է շաբաթվա ընթացքում ստանալ մինչև 20 կիլոգրամ (ներառյալ հեղուկ) հանձնուք և ծանրոց: Ծանրոցի առավելագույն քաշը որոշվում է փոստային կապի գործունեության կանոնակարգով:

Հիվանդ, հաշմանդամություն ունեցող, հղի, կերակրող մայր և մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալները կարող են ստանալ լրացուցիչ հանձնուքներ և ծանրոցներ՝ բժշկական ցուցմամբ սահմանված կամ երեխայի կարիքներին համապատասխան քանակով ու տեսականիով:

Բժշկական ցուցմամբ դատապարտյալների համար նախատեսված դեղերով և բժշկական արտադրատեսակներով, ինչպես նաև մանկական պարագաներով ու սննդամթերքով հանձնուքներն ու ծանրոցները չեն ընդգրկվում ՀՀ ՔԿՕ-ով նախատեսված հանձնուքների ու ծանրոցների քաշի մեջ: Դեղերով և բժշկական արտադրատեսակներով հանձնուքներն ու ծանրոցներն ուղարկվում են քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանումներ՝ համապատասխան դատապարտյալի բուժման նպատակով (ՀՀ ՔԿՕ, 81-րդ հոդված):

Ծանրոցները և հանձնուքները բացվում են, և դրանց պարունակությունը գնվում է քրեակատարողական հիմնարկի ծառայողի կողմից՝ դրանք բերող անձի ներկայությամբ:

Ծանրոցները կամ հանձնուքները հասցեատիրոջն են հանձնվում, որպես կանոն, այն ստանալուց հետո մեկ օրվա ըն-

թացքում: Եթե դատապարտյալը գտնվում է պատժախցում, նրա անունով ստացված հանձնուքները և ծանրոցները վերցվում են պահպանության և նրան են հանձնվում տույժը կրելուց հետո: Այդ ընթացքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ապահովում է ծանրոցների և հանձնուքների պահպանությունը և չի ընդունում դատապարտյալին բերված հանձնուքների և ծանրոցների մեջ պարունակվող սննդամթերքը (Ներքին կանոնակարգի 134-րդ կետ):

Հանձնուքները և ծանրոցները չեն ընդունվում՝ հանձնուքի կամ ծանրոցի քաշի՝ սահմանված չափին անհամապատասխանության դեպքում, հանձնուքը կամ ծանրոցը հանձնող անձի կողմից համապատասխան փաստաթղթեր չներկայացվելու դեպքում, դատապարտյալի կողմից հանձնուքը կամ ծանրոցն ստանալուց գրավոր հրաժարվելու դեպքում, ինչպես նաև եթե քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ դատապարտյալը զրկվել է հանձնուք կամ ծանրոց ստանալուց:

Դատապարտյալն իր մերձավոր ազգականներին կամ այլ անձանց ծանրոց կամ հանձնուք ուղարկելու նպատակով դրամասին դիմում է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, որում նշվում է ուղարկվող ծանրոցի կամ հանձնուքի պարունակությունը:

Վարչակազմի ներկայացուցիչը, նախօրոք ստուգելով դատապարտյալի անձնական հաշվում ծանրոցի կամ հանձնուքի ուղարկման համար անհրաժեշտ փոստային ծառայությունների գումարի առկայությունը, կազմակերպում է համապատասխան հասցեով դրա ուղարկումը, որի կապակցությամբ դիմումում համապատասխան նշում է կատարվում և ստորագրվում դատապարտյալի կողմից:

Դատապարտյալին ուղարկվող դրամը փոխանցվում է նրա անձնական հաշվին՝ առանց դրա սահմանափակման: Դատա-

պարտյալը կարող է իր անձնական հաշվից դրամական փոխանցումներ կատարել իր մերձավոր ազգականներին կամ այլ անձանց, բացառությամբ այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալներին՝ առանց դրանց սահմանափակման:

Դատապարտյալի կողմից դրամ ստանալու և ուղարկելու նպատակով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կազմակերպում է դատապարտյալի անձնական հաշիվների վարումը և ապահովում դատապարտյալի կողմից իր դրամի ազատ տնօրինումը:

Դատապարտյալների նամակագրությունը նրանց սոցիալական կապերի ամրապնդման կարևոր միջոց է: Նամակագրությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Նամակագրության գաղտնիությունը երաշխավորվում է (ՀՀ ՔԿՕ, 82-րդ հոդված): Դրանք հանձնվում են դատապարտյալին կամ ուղարկվում են ըստ պատկանելության ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, հեռագրերը հանձնվում են անհապաղ:

Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով տրամադրվում է ամսական մեկական հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հնարավորություն՝ պետական միջոցների հաշվին: Հեռախոսակապից և տեսազանգից դատապարտյալը լրացուցիչ օգտվում է սեփական միջոցների հաշվին: Հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 20 րոպեն, բացառիկ դեպքերում այն կարող է երկարաձգվել ևս 10 րոպեով (ՀՀ ՔԿՕ, 83-րդ հոդված, 1-ին մաս):

Դատապարտյալն իր ցանկությամբ հեռախոսակապից և տեսազանգից լրացուցիչ օգտվելու իրավունք կարող է ստանալ

քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո, ինչպես նաև բացառիկ հանգամանքների դեպքում: Կալանավորված անձանց և դատապարտյալների միջև հեռախոսակապն ու տեսազանգն արգելվում են:

Քրեակատարողական հիմնարկում հեռախոսակապը և տեսազանգը կարող են տեղի ունենալ քրեակատարողական հիմնարկի ներկայացուցչի տեսողական հսկողությամբ՝ բացառելով խոսակցությունը լսելը (ՀՀ ՔԿՕ, 83-րդ հոդված, 4-րդ մաս):

Հեռախոսակապը կամ տեսազանգը կազմակերպվում է տեղադրված քարտային հեռախոսակապի կամ էլեկտրոնային այլ հանգույցների միջոցով, որոնց համար նախատեսված քարտերը դատապարտյալը կարող է ձեռք բերել քրեակատարողական հիմնարկի կրպակից կամ խանութից կամ ստանալ հանձնուքով կամ ծանրոցով:

Չի թույլատրվում գիշերային ժամերին հեռախոսակապից օգտվել: Դատապարտյալը հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու համար դիմում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, որն այն տրամադրում է նախօրոք սահմանված հերթականությամբ:

Դատապարտյալների նկատմամբ հասարակության հոգևոր ներգործության ապահովմանն են ուղղված ազատագրվման դատապարտվածների կողմից հեռուստահաղորդումների և ֆիլմերի դիտումն ու ռադիոհաղորդումների ունկնդրումը, ինչպես նաև գրականության ձեռքբերումը: Ազատագրվման դատապարտվածներին, բացառությամբ պատժախցում գտնվող դատախարտյալների, թույլատրվում է աշխատանքից ազատ ժամերի դիտել հեռուստահաղորդումներ և ֆիլմեր, ունկնդրել ռադիոհաղորդումներ, բացառությամբ օրվա կանոնակարգով սահմանված գիշերային հանգստի ժամանակ: Դատապարտյալները և նրանց խմբերը սեփական միջոցների հաշվին քրեակատարողական հիմնարկի

վարչակազմի միջոցով առևտրային ցանցից կարող են ձեռք բերել հեռուստացույցներ և ռադիոընդունիչներ կամ ստանալ դրանք ազգականներից և այլ անձանցից:

Դատապարտյալին թույլատրվում է հանձնուքներով և ծանրոցներով ստանալ գրականություն և գրենական պիտույքներ կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջոցով ձեռք բերել դրանք, ինչպես նաև առանց սահմանափակման, սեփական միջոցների հաշվին բաժանորդագրվել թերթերի ու ամսագրերի: Դատապարտյալին արգելվում է ստանալ, ձեռք բերել, պահել և տարածել պատերազմ, բռնություն կամ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորվածատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրող կամ քարոզող, պոռնկագրական բնույթի հրատարակություններ կամ այլ նյութեր (ՀՀ ՔԿՕ, 85-րդ հոդված, 2-րդ մաս):

Դատապարտյալն օգտվում է քրեակատարողական հիմնարկում եղած պարբերական մամուլից և գրականությունից: Բաժանորդագրության ձևակերպումը կատարում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը: Բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է դատապարտյալի անձնական հաշվից: Բաժանորդագրությունը ձևակերպվում է դատապարտյալի անունով՝ քրեակատարողական հիմնարկի փոստային հասցեով:

Քրեակատարողական հիմնարկում կազմակերպվում են գրադարաններ: Քրեակատարողական հիմնարկի միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում և բարձր անվտանգային գոտում գրադարանում առկա գրքերի և ամսագրերի փոխանակությունն իրականացվում է դատապարտյալների՝ գրադարա-

նավարին տրված պատվերների հիման վրա: Քրեակատարողական հիմնարկի միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում և ցածր անվտանգային գոտուում գրադարանին կից կազմակերպվում է ընթերցասրահ, որից դատապարտյալներն օգտվում են օրվա կարգացուցակով իրենց հատկացված ազատ ժամերին (Ներքին կանոնակարգի 191 և 192-րդ կետեր):

4. Առանց պահակախմբի կամ առանց ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս դատապարտյալների տեղաշարժվելու իրավունքը

Այս իրավունքից օգտվելու կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ ՔԿՕ-ի 86-րդ հոդվածով: Քրեակատարողական իրավունքի այս ինստիտուտն ունի երկակի նշանակություն: Առաջին հերթին այն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում քրեակատարողական հիմնարկների կանոնավոր տնտեսական գործունեության համար և ապա էականորեն նեղացնում է դատապարտյալների մեկուսացման շրջանակները և, հետևաբար, խթանիչ դեր է կատարում դատապարտյալների վերասոցիալականացման գործում:

Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող, կալանավորվածներին պահելու վայրում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու նպատակով թողնված դատապարտյալին, ելնելով կատարվող աշխատանքի բնույթից, կարող է թույլատրվել առանց պահակախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվել քրեակատարողական հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս: Այս իրավունքը դատապարտյալներին տրամադրվում կամ այն վերացվում է քրեակատարողական հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Այն կարող է տրամադրվել

միայն դրական վարքագիծ դրսևորող դատապարտյալին՝ պատ-
ժի ժամկետի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո: Առանց պա-
հախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի
կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս
տեղաշարժվել չի թույլատրվում տվյալ քրեակատարողական
հիմնարկում վեց ամսից պակաս ժամկետով պատիժ կրողներին,
չհանված կամ չմարված տույժեր ունեցող դատապարտյալներին,
անվտանգային գոտու խիստ պայմաններում գտնվողներին,
պատժի կատարման ընթացքում դիտավորյալ հանցագործությ-
յունների համար դատապարտյալներին, ռեցիդիվի դեպքում, ինչ-
պես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց:

Դատապարտյալների երթևեկությունն առանց պահակախմ-
բի կամ ուղեկցորդման կարող է արգելվել ՀՀ արդարադատությ-
յան նախարարության կողմից սահմանված վայրերում: Նման ի-
րավունքից օգտվող դատապարտյալները տեղավորվում են
քրեակատարողական հիմնարկների առանձին բնակելի շենքե-
րում՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատա-
րողական հիմնարկի վարչական սահմաններում: Առանց պահա-
կախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու թույլտվություն
ստացած դատապարտյալների՝ կալանավորվածներին պահելու
վայրի կամ քրեակատարողական հիմնարկի սահմաններից
դուրս բնակվելն արգելվում է:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվել թույ-
լատրվում է միայն համապատասխան ժամերին և համապա-
տասխան ուղիով: Դատապարտյալի՝ կալանավորվածներին պա-
հելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի սահմաններից
դուրս գալու և վերադարձի ժամանակը կարգավորվում է ըստ աշ-
խատանքի բնույթի և տևողության:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու
թույլտվություն ստացած դատապարտյալը ոչ աշխատանքային

Ժամերին գտնվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի տարածքում: Նրա նկատմամբ տարածվում են տվյալ քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալի համար սահմանված վարքագծի կանոնների պահանջները: Նա կարող է կրել տարվա եղանակին համապատասխան սահմանված միասնական նմուշի կամ քաղաքացիական հագուստ:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու թույլտվություն ստացած դատապարտյալը կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու ընթացքում պարտավոր է՝

1) պահպանել տեղաշարժման ուղին և ժամանակը,

2) ժամանակին վերադառնալ և դրա մասին տեղյակ պահել կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմին,

3) կալանավորված անձանց պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, ինչպես նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչների առաջին իսկ պահանջով ներկայացնել անցագիրը, իսկ կալանավորվածներին պահելու վայր կամ քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց հետո այն հանձնել կալանավորվածներին պահելու վայրի կամ հիմնարկի վարչակազմի համապատասխան ներկայացուցչին,

4) աշխատանքային ժամերին չլքել աշխատավայրը,

5) անցագիրը չտրամադրել այլ անձանց:

Կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի պետի որոշման հիման վրա դատապարտյալը զրկվում է առանց պահախմբի կամ ուղեկցորդման կալանավորվածներին պահելու վայրի կամ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս գտնվելու թույլտվությունից՝ այդպիսի թույլտվություն ստացած դատապարտյալի կողմից վարքագծի

կանոնների խախտման կամ կատարվող աշխատանքի բնույթը փոխվելու դեպքերում:

5. Ղատապարտյալների մեկնումները քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս

Քրեակատարողական իրավունքի այս ինստիտուտը պատժի կրման կանոնակարգի կարևորագույն տարրերից է, որը հնարավորություն է տալիս մեղմացնել մեկուսացումը հասարակությունից, ամրապնդել դատապարտյալների օգտակար սոցիալական կապերն արտաքին աշխարհի հետ և նախապատրաստել դատապարտյալին ազատության մեջ ապրելուն:

Ազատագրվման դատապարտված և քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալներին, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրերում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար թողնված դատապարտյալներին կարող է թույլատրվել մեկնումներ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 1-ին մաս).

1) կարճատև մեկնում՝ մինչև յոթ օր ժամկետով, չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը՝ բացառիկ հանգամանքների դեպքում՝ մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, արտակարգ իրավիճակ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին.

2) կարճատև մեկնում՝ մինչև յոթ օր ժամկետով, չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա ունեցող դատապարտյալին՝ երեխային համա-

պատասխան հաստատությունում կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով.

3) երկարատև մեկնում՝ մինչև 30 օր ժամկետով, չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը՝ սոցիալական վերականգնման նպատակով ցածր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալին, ինչպես նաև ազատվելուց հետո կենցաղային, աշխատանքի և սոցիալական այլ հարցեր նախապես կարգավորելու համար (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 1-ին մաս):

ՀՀ ՔԿՕ-ն ընդարձակել է ազատազրկման դատապարտվածների մեկնումների իրավունքը քրեակատարողական հիմնարկների սահմաններից դուրս: Այսպես, քրեակատարողական հիմնարկից դուրս անչափահաս երեխաներ ունեցող դատապարտյալը տարին մեկ անգամ, երեխաներին տեսակցելու նպատակով, ունի մինչև 10 օր ժամկետով կարճատև մեկնման իրավունք՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երկու օրը, եթե տեսակցելու ցանկություն է հայտնել երեխան, և դա չի հակասում նրա լավագույն շահին (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 2-րդ մաս):

Բացառիկ համգամանքների դեպքում և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա ունեցող դատապարտյալին կարճատև մեկնումներն առանձնապես ծանր հանցանքի համար 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ ներկայացուցիչների ուղեկցությամբ: Առանձնապես ծանր հանցանքի համար 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց երկարատև մեկնումներ տրամադրվում են պատժի երկու երրորդը կրելուց հետո, իսկ ցմահ դատա-

պարտված անձանց՝ 15 տարի հետո (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 3-րդ մաս):

Բացասական բնութագրվող դատապարտյալին մեկնում կարող է տրամադրվել միայն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ ներկայացուցիչների ուղեկցությամբ:

Միջին կամ բարձր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալին մեկնում տրամադրվում է տարվա ընթացքում երկու անգամից ոչ ավելի:

Հոգեկան առողջության խնդիր կամ հաշմանդամություն ունեցող դատապարտյալին, որն առողջության պատճառով խնամքի կարիք ունի, ինչպես նաև անչափահաս դատապարտյալին մեկնում կարող է տրամադրվել միայն մերձավոր ազգականի կամ այլ անձի ուղեկցությամբ (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 5-րդ մաս): Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններ ունեցող, ակոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կուրսը չանցած, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում հակահամաճարակային միջոցառում անցկացնելու ընթացքում մեկնում կարող է տրամադրվել, եթե համապատասխան բժշկի եզրակացությամբ դատապարտյալը հասարակության կամ իր համար վտանգ չի ներկայացնում, կամ նման վտանգը վերացվում է նրան ուղեկցելու միջոցով, որը պետք է փոխհատուցվի դատապարտյալի դրամական միջոցներով (ՀՀ ՔԿՕ, 87-րդ հոդված, 6-րդ մաս):

ՀՀ ՔԿՕ-ի 88-րդ հոդվածը սահմանում է դատապարտյալին մեկնումներ տրամադրելու կարգը: Ըստ դրա՝ վերառոցիալականացման գնահատման հանձնաժողովի առաջարկությամբ մեկնումներ տրամադրվում են քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ՝ հաշվի առնելով դատապարտյալի անձը և նրա դրսևորած վարքագիծը պատժի կատարման ընթացքում, կատա-

րած հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, ինչպես նաև պատժի կրման ժամկետը: Բացառիկ հանգամանքների կապակցությամբ կարճատև մեկնում տրամադրելու դիմումը քննարկվում է մեկ օրվա ընթացքում, իսկ երկարատև մեկնմանը՝ եռօրյա ժամկետում: Քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս գտնվելու ժամանակը հաշվվում է պատիժը կատարելու ժամկետի մեջ: Մեկնումների հետ կապված ծախսերը հոգում է դատապարտյալը սեփական միջոցների հաշվին կամ այլ անձ՝ դատապարտյալի համաձայնությամբ:

Քրեակատարողական հիմնարկի պետն իր որոշման մասին անհապաղ գրավոր հայտնում է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը՝ ըստ դատապարտյալի փաստացի մեկնման, հաշվառման կամ նախկին բնակության վայրի (Ներքին կանոնակարգի 194-րդ կետ):

Մեկնում տրամադրելու համար համապատասխան որոշումն ընդունվում է դատապարտյալի գրավոր դիմումի և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերը փաստող անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա: Դիմումը կարող է մերժվել քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ:

Մեկնման թույլտվություն ստացած դատապարտյալը կարող է կրել առօրյա կամ այլ հագուստ: Նրան տրվում է սահմանված նմուշի վկայական, նրան բացատրվում է մեկնման կարգը և նախազգուշացվում սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց խուսափելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Այդ կապակցությամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կազմվում է արձանագրություն, որը ստորագրում է նաև դատապարտյալը:

Դատապարտյալի՝ քրեակատարողական հիմնարկ վերադառնալուն պես նրան տրված վկայականը վերցվում է և կցվում

նրա անձնական գործին: Սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց խուսափող դատապարտյալը ենթակա է քրեական պատասխանատվության:

Դատապարտյալը համարվում է սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց խուսափող, եթե վերադառնալու ժամկետին հաջորդող հաշվառման ժամանակ նա չի գտնվել քրեակատարողական հիմնարկում: Սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց խուսափող դատապարտյալը ենթակա է ձերբակալման՝ պահակախմբի հսկողությամբ պատիժը կրելու ուղարկվելու կամ քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Նման պարագայում քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ՀՀ քր. օր. 506 հոդվածով սահմանված կարգով («Արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը»):

1. Արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստը կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Կարճաժամկետ մեկնման կամ պատժի հետաձգման ժամկետի ավարտից հետո ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելն այն անձի կողմից, որին թույլատրվել է ազատազրկման վայրից կարճաժամկետ մեկնում, կամ որի նկատմամբ դատավճռի կատարումը հետաձգվել է պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Եթե անձը մեկնման ժամանակահատվածում հիվանդացել է կամ ստացել այնպիսի մարմնական վնասվածքներ, որոնց դեպ-

քում պահանջվում է հիվանդանոցային բուժում կամ բնակության վայրում կամ ցուցված համապատասխան այլ վայրում մեկուսացում, ապա այդ նպատակով նա տեղափոխվում է քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանում, իսկ դրա անհնարինությունից կամ անհետաձգելիությունից ելնելով՝ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ կամ մեկուսացման վայր: Տվյալ դեպքում նա չի համարվում սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց խուսափող (Ներքին կանոնակարգի 199-րդ կետ):

Անկանխատեսելի հանգամանքների ուժով սահմանված ժամկետում քրեակատարողական հիմնարկ վերադառնալու անհնարինության դեպքում քրեակատարողական հիմնարկ վերադառնալու ժամկետը քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև հինգ օրով (ՀՀ ՔԿՕ, 88-րդ հոդված, 6-րդ մաս):

6. Կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներում

Ազատագրված վայրերում պատիժ են կրում հասարակության համար վտանգ ներկայացնող հանցագործությունների համար դատապարտվածները, ովքեր ընդունակ են նույնիսկ պատժի կրման ընթացքում հանցավոր արարքներ գործել⁶¹ և դրանով իսկ քրեակատարողական հիմնարկներում ստեղծել արտակարգ իրավիճակ (զանգվածային անկարգություններ, խմբակային անհնազանդություն, հասարակությունից մեկուսացում ապահովող հիմնարկների գործունեության կազմալուծում, ՀՀ քր. օր. 454 հոդվածով նախատեսված՝ պատիժն ի կատար ածող հիմնարկում կամ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում իրականացվող գործունեության խոչընդոտում և այլն): Քրեակատարողական հիմնարկների տեղակայման վայրերում հնարավոր են տարերային աղետներ (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ և այլն): Վերջապես, հնարավոր է օրենքով սահմանված կարգով արտակարգ իրավիճակ, ռազմական դրության սահմանում ամբողջ երկրում կամ քրեակատարողական հիմնարկի տեղակայման վայրում: Նման արտակարգ իրավիճակների համար ՀՀ ՔԿՕ-ն նախատեսում է քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակների կանոնակարգ սահմանելու հնարավորություն: Տրվում են արտակարգ իրավիճակների կանոնակարգ սահմանելու սպառիչ հիմքերը, քանի որ այն էականորեն սահմանափակում է ոչ միայն դատապարտյալների, այլև այն քաղաքացիների իրավունքները և ազատությունները, ովքեր գտնվում են քրեակատարողական հիմնարկների տարածքում կամ դրանց օբյեկտներում: ՀՀ ՔԿՕ-ի 76-րդ հոդվածի առաջին

⁶¹ Մանրամասն տե՛ս **Хачикян А.М.** Лишение свободы: Криминологические и уголовноисполнительные проблемы. Ереван 2008, գլուխ երրորդ:

մասի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի տեղակայման շրջանում արտակարգ իրավիճակի, ռազմական դրության, զանգվածային անկարգության, ինչպես նաև դատապարտյալների զանգվածային անհնազանդության, քրեակատարողական հիմնարկի վրա հարձակման իրական վտանգի դեպքերում քրեակատարողական հիմնարկում կարող է հայտարարվել արտակարգ իրավիճակ:

Արտակարգ իրավիճակ հայտարարում և դադարեցնում է ՀՀ արդարադատության նախարարը՝ մինչև 30 օր ժամկետով՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում, իսկ դատապարտյալների զանգվածային անկարգության և զանգվածային անհնազանդության դեպքում արտակարգ իրավիճակ հայտարարելուց հետո անհապաղ դիմում է ՀՀ կառավարություն՝ համապատասխան որոշում ընդունելու համար: Բացառիկ դեպքերում արտակարգ իրավիճակ հայտարարելու ժամկետը կարող է երկարաձգվել ևս մինչև 30 օրով, իսկ հակահամաճարակային նպատակներով՝ մինչև դրա անհրաժեշտությունը վերանայլ:

Կալանավորվածներին պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու բոլոր դեպքերում և ցանկացած իրավիճակներում այդ վայրերի վարչակազմի հիմնական խնդիրները կալանավորված անձանց ու դատապարտյալների կյանքի և առողջության պաշտպանությունը, փախուստի և խմբակային անկարգությունների կանխումն են: Արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում կարող է կասեցվել դատապարտյալի՝ ՀՀ ՔԿՕ-ով սահմանված իրավունքների իրականացումը, սահմանվել պահպանության և հսկողության ուժեղացված տարբերակներ, քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու հատուկ կարգ, փոփոխվել օրվա կանոնակարգը, սահմանափակվել արտադրական, նյութակենցաղային,

աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական և այլ գործունեությունը, կարող են ձեռնարկվել նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումներ: Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգն արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում սահմանում է ՀՀ կառավարությունը: Արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դրա մասին անհապաղ հաղորդվում է կալանավորված անձանց կամ դատապարտյալներին՝ ներքին ռադիոցանցի կամ բարձրախոսի միջոցով: Նրանց պարտադիր կերպով հաղորդվում է իրենց իրավունքների սահմանափակման վերաբերյալ:

Քրեակատարողական հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետևյալ իրավունքները՝ կրոնական ծեսերին մասնակցելու, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու, կրթություն ստանալու, աշխատանքով զբաղվելու, սննդամթերք կամ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու, լրացուցիչ վճարովի ծառայություններից օգտվելու, դրամական փոխանցումներ, ծանրոցներ և հանձնույթներ ուղարկելու և ստանալու, նամակագրության, զբոսանքի, տեսակցություններ ունենալու, հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու, մեկնումների, առանց պահակախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու (Ներքին կանոնակարգի 352-րդ կետ):

Դատապարտյալի, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և այլ անձանց կյանքին ու առողջությանը սպառնացող անմիջական վտանգ ծագելու դեպքում քրեակատարողական հիմնարկի պետը կարող է իրավիճակին համապատասխան միջոցներ կիրառել վերը նախատեսված միջոցառումների սահմաններում՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով քրեակատարո-

դական ծառայության պետին և ՀՀ արդարադատության նախարարին, որը ծանուցումն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է կայացնում արտակարգ իրավիճակի կանոնակարգ սահմանելու կամ այն վերացնելու մասին:

Արտակարգ իրավիճակների կանոնակարգը տարածվում է նաև քրեակատարողական հիմնարկներին հարող տարածքում, այսինքն՝ այնտեղ, որտեղ գործում են կանոնակարգի պահանջները: Այդ վայրերում կարող է սահմանափակվել կամ ընդհանրապես արգելվել տրանսպորտի, քաղաքացիների մուտքը կամ, ընդհակառակը, կարող է արգելվել ելքը, կամ կարող են հարկադրաբար տարհանել այդտեղից մարդկանց՝ կյանքի և առողջության պաշտպանության նկատառումով:

7. Ազատագրկման դատապարտվածների պատժի կրման պայմանների փոփոխումը

Պատժի կրման պայմանների փոփոխման ինստիտուտի էությունը դատապարտյալների իրավական վիճակի փոփոխումն է, մասնավորապես՝ նրանց իրավունքների շրջանակի ընդարձակումը կամ կրճատումը (պատժի կրման պրոգրեսիվ համակարգը)⁶²:

Քրեակատարողական իրավունքի այս ինստիտուտը դասվում է դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցների շարքը: Պատժի կրման պայմանների փոփոխումն իրականացվում է երկու ձևով՝ մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում և դատապարտյալին մեկ քրեա-

⁶² Այդ մասին մանրամասն տե՛ս **Ткачевский Ю.М.** Прогрессивная система исполнения уголовных наказаний. М., 1997:

կատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու միջոցով⁶³:

Մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում պատժի կրման պայմանների փոփոխումը դատապարտյալների՝ օրենքով նախատեսված իրավունքների և արտոնությունների ավելացումն է կամ կրճատումը, այսինքն՝ պատժի կրման ընթացքում իրենց դրականորեն դրսևորող դատապարտյալների իրավունքների և ազատությունների շրջանակը կարող է ընդլայնվել, կամ, ընդհակառակը, բացասական վարքագիծ դրսևորողների իրավունքների շրջանակը կարող է սահմանափակվել: Դատապարտյալների իրավունքների նման տարաբնույթ լինելը հետապնդում է որոշակի նպատակներ՝ կարգավորել և խթանել վերասոցիալականացման գործընթացը, նախապատրաստել և օգնել ազատազրկվածներին ազատության մեջ ապրելուն և այլն:

ՀՀ ՔԿՕ-ն քրեակատարողական իրավունքի այս կարևորագույն ինստիտուտի կիրառման առավել ընդարձակ հնարավորություն է նախատեսում: Մասնավորապես, ազատազրկման դատապարտվածները մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում կարող են գտնվել տվյալ հիմնարկի տեսակով նախատեսված պատժի կրման մեղմ և խիստ պայմաններում: Պատժի կրման պայմանների փոփոխումը մեկ քրեակատարողական հիմնարկի շրջանակներում քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված հիմքերով իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի եզրակացությամբ՝ քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ (ՀՀ ՔԿՕ, հոդված 77-րդ, 3-

⁶³ Դատապարտյալին մեկ քրեակատարողական հիմնարկից (անվտանգային գոտի) մեկ այլ քրեակատարողական հիմնարկ (անվտանգային գոտի) տեղափոխելու միջոցով պատժի կրման պայմանների փոփոխման մասին մանրամասն տե՛ս սույն դասագրքի 8-րդ գլխում:

րդ մաս), (այս հարցը մանրամասն կլուսաբանվի սույն գլխի հաջորդ՝ 8-րդ ենթագլխում):

***8. Ազատագրկման կատարման կարգը և պայմանները
տարբեր տեսակի քրեակատարողական հիմնարկներում***

Ազատագրկման կանոնակարգի բովանդակության հիմքը նախ և առաջ դատապարտյալների մեկուսացումն է արտաքին աշխարհից: Ինչպես հայտնի է, այդ մեկուսացումն իրականացվում է դատապարտյալին հատուկ ազատագրկման վայրեր՝ քրեակատարողական հիմնարկներ տեղավորելու միջոցով, որը, փաստորեն, դատապարտյալի ֆիզիկական մեկուսացումն է: Դատապարտյալները, որպես կանոն, գտնվում են սահմանապատված և պահպանվող տարածքում, իսկ միջին և բարձր անվտանգային գոտու քրեակատարողական հիմնարկներում՝ մեկուսացված խցերում: Դատապարտյալների ֆիզիկական մեկուսացումն արտաքին աշխարհից բացարձակ բնույթ չի կրում, քանի որ նրանք հնարավորություն ունեն կապեր պահպանելու իրենց ազգականների, բարեկամների և այլոց հետ (տեսակցություններ, նամակագրություն, հեռախոսային կապ, տեսազանգ և այլն):

Ինչպես արդեն նշել ենք, քրեակատարողական հիմնարկներում սահմանվում են երեք՝ ցածր, միջին և բարձր անվտանգային գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են հասարակությունից դատապարտյալների մեկուսացման աստիճանով, դատապարտյալների աշխատանքի բնույթով, նրանց իրավունքների և պարտականությունների շրջանակով և այլն: Դատապարտյալների նվազագույն մեկուսացում և իրավունքների առավելագույն շրջանակ նախատեսված է ցածր անվտանգային գոտում, իսկ առավել-

լագույն մեկուսացում և իրավունքների խիստ սահմանափակում՝ բարձր անվտանգային գոտում:

ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը նախատեսում է ոչ միայն պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու տեսակը որոշելը, այլև պատժի կրման պայմանները (մեղմ և խիստ) բոլոր տեսակի քրեակատարողական հիմնարկների անվտանգային գոտիներում, որտեղ պատիժ են կրում դասակարգման տարբեր խմբերի պատկանող դատապարտյալներ:

ՀՀ ՔԿՕ-ի 19-րդ գլուխը նախատեսում է ազատագրկման կատարման առանձնահատկությունները տարբեր տեսակի անվտանգային գոտիներում: Այստեղ սահմանվում են նաև պատժի կրման պայմանների փոփոխումը մեկ (յուրաքանչյուր) քրեակատարողական հիմնարկի անվտանգային գոտու շրջանակներում:

ՀՀ ՔԿՕ-ի 95-րդ հոդվածը սահմանում է ազատագրկման կատարման պայմանները ***ցածր անվտանգային գոտում***.

1. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում ոչ մեծ ծանրության, իսկ խիստ պայմաններում՝ միջին ծանրության հանցանքների համար դատապարտվածները:

2. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև 10 դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև յոթանասունհինգապատիկի չափով գումար:

2) տարվա ընթացքում ունենալ առնվազն տասներկու կարճատև և տասներկու երկարատև տեսակցություն:

3) տարվա ընթացքում ունենալ առնվազն մեկ՝ մինչև հինգ օր տևողությամբ, երկարատև տեսակցություն՝ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս բնակվելու իրավունքով:

3. Ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև յոթանասունապատիկի չափով գումար:

2) տարվա ընթացքում ունենալ 10 կարճատև և 10 երկարատև տեսակցություն:

4. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում և քրեակատարողական հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս:

5. Ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

6. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալներին անջատ պահելու՝ ՀՀ ՔԿՕ-ի 64-րդ հոդվածով սահմանված սկզբունքները չեն գործում, և դատապարտյալները պահվում են հասարակական համակեցության կանոններին համապատասխան:

7. Տույժեր չունենալու և դրական վարքագիծ դրսևորելու դեպքում պատժի ժամկետի ոչ պակաս, քան վեց ամիսը ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում կրելուց հետո դա-

տապարտյալները տեղափոխվում են ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններ:

8. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող և պատժի կատարման սահմանված կարգի՝ երկու կամ ավելի խախտումներ թույլ տված դատապարտյալները տեղափոխվում են ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններ:

9. Ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններից մեղմ պայմաններ կամ մեղմից խիստ պայմաններ կրկնակի տեղափոխություն կատարվում է ՀՀ ՔԿՕ-ի 95-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված կարգով:

10. Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող դատապարտյալները պատժի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ կարող են ստանալ քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս ազատ տեղաշարժվելու հնարավորություն՝ քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ: Այս դեպքում դատապարտյալին թույլատրվում է բնակվել և աշխատել քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հսկողության ներքո: Դատապարտյալը կարող է համատեղ բնակվել առանց պահակախմբի կամ առանց ուղեկցորդման տեղաշարժվելու իրավունք ունեցող այլ դատապարտյալների հետ:

Ցածր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժը կրող դատապարտյալները պահվում են առանց պահակախմբի, նրանց աշխատանքը և կրթությունը կարող են կազմակերպվել քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս, որը չպետք է խոչընդոտի պատիժը կրելու կարգը և պայմանները:

ՀՀ ՔԿՕ-ի 96-րդ հոդվածը սահմանում է ազատազրկման կատարման պայմանները ***միջին անվտանգային գոտում***.

1. Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում ծանր հանցանքների համար դատապարտվածներ:

րը, խիստ պայմաններում՝ առանձնապես ծանր հանցանքների համար մինչև 10 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրածները՝ ռեցիդիվի դեպքում:

2. Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև յոթանասունապատիկի չափով գումար:

2) տարվա ընթացքում ունենալ առնվազն ութ կարճատև և ութ երկարատև տեսակցություն:

3. Միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև վաթսունհինգապատիկի չափով գումար:

2) տարվա ընթացքում ունենալ առնվազն վեց կարճատև և վեց երկարատև տեսակցություն:

4. Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

5. Միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել առնվազն երեք ժամ ցերեկային որոշակի ժամերի քրեակատարողական հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

6. Տույժեր չունենալու և դրական վարքագիծ դրսևորելու դեպքում պատժի ժամկետի ոչ պակաս, քան մեկ երրորդը միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում կրելուց հետո դատապարտյալները տեղափոխվում են միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններ:

7. Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող և պատժի կատարման սահմանված կարգի՝ երկու կամ ավելի խախտումներ թույլ տված դատապարտյալները տեղափոխվում են միջին անվտանգային գոտու խիստ պայմաններ:

8. Միջին անվտանգային գոտու խիստ պայմաններից մեղմ պայմաններ կամ մեղմից խիստ պայմաններ կրկնակի տեղափոխություն կատարվում է ՀՀ ՔԿՕ-ի 96-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված կարգով:

ՀՀ ՔԿՕ-ի 97-րդ հոդվածը սահմանում է ազատազրկման կատարման պայմանները ***Բարձր անվտանգային գոտում.***

1. Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, իսկ խիստ պայմաններում՝ ցմահ ազատազրկման և նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

2. Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև վաթսուհինգապատիկի չափով գումար.

2) տարվա ընթացքում ունենալ առնվազն վեց կարճատև և վեց երկարատև տեսակցություն:

3. Բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև չորս դատապարտյալի համար նախատեսված մեկուսացված խցում: Նրան թույլատրվում է՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր բանկային հաշվից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի մինչև վաթսունապատիկի չափով գումար:

2) տարվա ընթացքում ունենալ առնվազն չորս կարճատև և չորս երկարատև տեսակցություն:

4. Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում դատապարտյալն ամենօրյա երկու ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք ունի:

5. Բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում դատապարտյալն ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք ունի:

6. Տույժեր չունենալու և դրական վարքագիծ դրսևորելու դեպքում պատժի ժամկետի ոչ պակաս, քան երեք տարին բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում կրելուց հետո դատապարտյալները տեղափոխվում են բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններ:

7. Բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններում պատիժ կրող և պատժի կատարման սահմանված կարգի խախտումներ թույլ տված դատապարտյալները տեղափոխվում են բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններ:

8. Բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններից մեղմ պայմաններ կամ մեղմից խիստ պայմաններ կրկնակի տեղափոխություն կատարվում է ՀՀ ՔԿՕ-ի 97-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված կարգով:

Վերլուծելով ազատազրկման կատարման պայմանները (անվտանգային գոտիներ՝ ցածր, միջին, բարձր և դրանցից յուրա-

քանչյուրում՝ մեղմ և խիստ պայմաններ) սահմանող ՀՀ ՔԿՕ 95-97-րդ հոդվածները՝ կարող ենք փաստել, որ օրենսդիրը քրեակատարողական հիմնարկների անվտանգային գոտիների միմյանցից զանազանելու հիմնական չափանիշներ է սահմանել առաջին հերթին պատժի կատարման տարբերակման և անհատականացման քրեակատարողական սկզբունքից բխող դասակարգման չափանիշները, իսկ այնուհետև պատժի կատարման այնպիսի պայմաններ, ինչպիսիք են՝ կացարանային պայմանները, ձեռք բերվող սննդամթերքի և առաջին անհրաժեշտության առարկաների քանակը, տեսակցությունների քանակը, տեղաշարժման հնարավորությունները, իսկ պայմանների փոփոխումը մեղմից խիստ կամ հակառակը կապել է տույժեր ունենալու կամ չունենալու և դրական վարքագիծ դրսևորելու հետ:

Պատժի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքի կենսագործման իրավական երաշխիքներից է նաև ազատագրվում պատժատեսակի կատարման պայմանների անհատականացման ինստիտուտը (ՀՀ ՔԿՕ, 77-րդ հոդված, 1-ին մաս), համաձայն որի՝ ազատագրվման դատապարտված անձը մեկ քրեակատարողական հիմնարկում կարող է գտնվել տվյալ հիմնարկի տեսակով նախատեսված պատժի կատարման անվտանգային գոտու մեղմ և խիստ պայմաններում: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ ՀՀ ՔԿՕ-ի 95-97-րդ հոդվածների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ անվտանգային գոտու մեղմ և խիստ պայմանների նշանակման համար օրենքը սահմանել է խիստ որոշակի չափանիշներ, որոնք համընկնում են դատապարտյալների դասակարգման և ըստ անվտանգային գոտիների բաշխման չափանիշների հետ: Ինչպես հայտնի է՝ դասակարգման չափանիշները հիմնականում ձևակերպված են համակցված, այսինքն՝ դասակարգման խմբի կազմավորման և յուրաքանչյուր անվտանգային գոտու համար կիրառվել են համալիր

(մի քանի հատկանիշ ներառող) չափանիշներ, որոնց տարբերական արդյունքում որոշվում է համապատասխան գոտու մեղմ կամ խիստ պայմաններում դատապարտյալին տեղաբաշխելը:

Այստեղ հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ ՔԿՕ-ի 77-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է քրեակատարողական հիմնարկում պատժի կրման խիստ պայմանների տեղափոխման հետ անհամաձայնության դեպքում դատապարտյալն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բողոքարկել տեղափոխման մասին որոշումը:

Ազատագրվման դատապարտվելու և բուժանիտարական, բուժկանխարգելիչ բժշկական օգնության ու սպասարկման անհրաժեշտության դեպքում դատապարտյալը տեղափոխվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկում տեղակայված **բժշկական ստորաբաժանում:**

Դատապարտյալների նախնական բժշկական զննությունն իրականացվում է կարանտինային բաժանմունք տեղափոխվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Քրեակատարողական հիմնարկի կարանտինային բաժանմունքում մինչև բժշկական զննություն անցնելը քրեակատարողական հիմնարկի աշխատակիցը դատապարտյալին մայրենի կամ նրան հասկանալի լեզվով գրավոր և բանավոր իրազեկում է առողջության պահպանման, ներառյալ բժշկական օգնության և սպասարկման իրավունքի, բժշկական օգնության և սպասարկման ծավալների ու տրամադրման կարգի մասին:

ՀՀ ՔԿՕ-ի 99-րդ հոդվածը սահմանում է ազատագրվման կատարման պայմանները քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանում տեղափոխվելու դեպքում: Այստեղ դատապարտյալը պահվում է առանձնացված հատվածում, կացարանում կամ խցում՝ հնարավորինս ապահովելով կոնկրետ

անվտանգային գոտու տեսակի պայմանները, որտեղ տեղաբաշխվել է դատապարտյալը պատիժը կրելու համար:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում է քրեակատարողական ծառայությունից անկախ գործող մասնագիտացված կազմակերպությունը (ՀՀ ՔԿՕ, 91-րդ հոդված, 1-ին մաս):

Դատապարտյալների արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են մասնագիտացված կազմակերպության՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումները:

Քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը մասնագիտացված կազմակերպությունն ապահովում է ցանկացած պահի՝ 24 ժամ և յոթ օր ռեժիմով: Անհրաժեշտության դեպքում բժշկական օգնություն և սպասարկում տրամադրում են շտապօգնության բրիգադները՝ տեղում կամ տեղափոխելով մասնագիտացված կազմակերպության հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական ստորաբաժանում կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ:

Դատապարտյալի գիտակցության մթազնման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում դատապարտյալին առանց իր համաձայնության մասնագիտացված կազմակերպությունը տրամադրում է անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում (այդ թվում՝ արհեստական սնուցման ձևով) միայն կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բժշկի պատճառաբան-

ված գրավոր եզրակացության հիման վրա (ՀՀ ՔԿՕ, 91-րդ հոդ-
ված):

Քրեակատարողական հիմնարկում կարող է ստեղծվել առանձնացված ստորաբաժանում կամ կացարան կամ խուց՝ դա-
տապարտյալներին տարբեր մեկուսացվածության աստիճաննե-
րով պահելու նպատակով:

Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին միմյանցից անջատ պահելու քրեակատարողական օրենսդրու-
թյան պահանջները կիրառվում են ըստ հնարավորության: Դատա-
պարտյալներին քրեակատարողական հիմնարկում անջատ պա-
հելու՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներից բացի՝
կիրառվում են նաև այլ չափորոշիչներ, որոնց անհրաժեշտությու-
նը բխում է բուժական և առողջապահական խնդիրների իրակա-
նացման առանձնահատկություններից, հիվանդությունների
տեսակներից ու բնույթից:

Դատապարտյալների բուժումն առողջապահական մարմին-
ների բուժական հիմնարկներում որպես կանոն կազմակերպվում
է մեկտեղանոց հիվանդասենյակներում կամ այդ նպատակով
նախատեսված այլ տարածքում՝ բացառելով բուժում ստացող այլ
անձանց ներկայությունը (Ներքին կանոնակարգի 294-րդ կետ):

Առանձնապես ծանր հանցագործությունների համար որոշա-
կի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված ան-
ձինք, ովքեր բուժման նպատակով բժշկական ստորաբաժանում
են տեղափոխվել քրեակատարողական հիմնարկի բարձր անվ-
տանգային գոտուց, քրեակատարողական հիմնարկի բժշկական
ստորաբաժանումում պահվում են հատուկ առանձնացված և
խցային հիվանդասենյակներում (Ներքին կանոնակարգի 286-րդ
կետ):

Օրվա կարգացուցակը ներառում է բուժական միջոցառում-
ներ: Դատապարտյալների ներկայությունը ստուգվում է՝ ըստ մե-

կուսացված մասերի կամ հիվանդասենյակների քանակական հաշվարկի: Երկարատև տեսակցությունները տրամադրվում են՝ ըստ տվյալ դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունների, եթե նրա մոտ բացակայում են բժշկական հակացուցումները:

Դատապարտյալի աշխատանքը կազմակերպվում է համաձայն բժշկական ցուցումների՝ ըստ նրա աշխատունակության աստիճանի և քրեակատարողական հիմնարկի պայմաններում նրան համապատասխան աշխատանքում ներգրավելու հնարավորության⁶⁴:

Հիվանդության սիմուլյացիայի կամ կեղծ փաստաթուղթ օգտագործելու կամ խաբեության կամ ապօրինի այլ եղանակով բժշկական օգնության կամ սպասարկման դիմած կալանավորված անձի կամ դատապարտյալի վարքագիծը գնահատվում է որպես Ներքին կանոնակարգի պահանջների խախտում, և նրա նկատմամբ կարող են կիրառվել օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության, ներառյալ՝ տույժի միջոցներ: Հիվանդության ձևացման (սիմուլյացիա) դրդապատճառները, մինչև դրանց համար համապատասխան տույժի միջոցներ կիրառելը, որոշվում են կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ իրականացված հոգեբանական կամ բժշկական քննության միջոցով՝ համապատասխան մասնագետների կողմից տրված կարծիքի կամ կարծիքների հիման վրա (Ներքին կանոնակարգի 291-րդ կետ):

⁶⁴ ՀՀ կառավարության 01.03.2018թ թիվ 204-Ն որոշմամբ ստեղծվեց «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի արդյունքում բժշկական անձնակազմը ձեռք է բերել մասնագիտական անկախություն քրեակատարողական ծառայությունից: «Դատապարտյալների հիվանդանոցը» «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ինքնուրույն ստորաբաժանումն է:

Դատապարտյալի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է նրա մերձավոր ազգականներին ու պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին: Մահացած դատապարտյալի դին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործողությունների իրականացումից հետո հանձնվում է նրա մերձավոր ազգականներին կամ համապատասխան դիմում ներկայացնող անձին: Այդպիսիք չլինելու դեպքում դատապարտյալի հուղարկավորումն իրականացվում է պետական միջոցների հաշվին (ՀՀ ՔԿՕ-ի 101-րդ հոդված):

Ցմահ ազատագրկում: Ցմահ ազատագրկումն իբրև քրեական պատժատեսակ նախատեսված է մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրությամբ և կիրառվում է բավականին մեծ ծավալով⁶⁵: Ազատագրկման այս տեսակը, ի տարբերություն մի շարք այլ երկրների, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի օրենսդրությանը փաստորեն անհայտ էր: ՀՀ (2003թ.) քր. օրենսգրքում առաջին անգամ պատիժների համակարգում որպես ինքնուրույն և հիմնական պատժատեսակ նախատեսվել է ցմահ ազատագրկումը: ՀՀ (2021թ.) քր. օրենսգրքը ևս նախատեսեց այն, որի 68-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Ցմահ ազատագրկումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար»:

⁶⁵ См. у **Антонян Ю.М., Верещагин В.А.** Убийцы, отбывающие пожизненное лишение свободы. Государство и право. М., 1999, N 11, էջ 45:

Ցմահ ազատագրկումը դատապարտյալի մեկուսացումն է հասարակությունից՝ այդ նպատակին ծառայող հատուկ հիմնարկներում տեղավորելու միջոցով, բայց, ի տարբերություն ազատագրկման, այն նշանակվում է անժամկետ: Դասակարգման այս խմբին պատկանող դատապարտյալներն առավել վտանգավոր հանցագործներն են, ուստի նրանք պատժի կրման որոշակի փուլում պահվում են այլ դատապարտյալներից առանձին: Ցմահ ազատագրկման դատապարտվածները քրեակատարողական հիմնարկի բարձր անվտանգային գոտում պահվում են մեկուսացված խցերում: Ըստ մեկուսացված խցերի դատապարտյալներին բաշխելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր դատապարտյալի անձը: Ցմահ ազատագրկման դատապարտված անձինք պահվում են խցերում, որպես կանոն, յուրաքանչյուր խցում չորս դատապարտյալից ոչ ավելի: Դատապարտյալի խնդրանքով կամ նրա անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ դատապարտյալը կարող է պահվել մենախցում:

Դասակարգման այս խմբին պատկանող դատապարտյալներն ամենօրյա մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունք ունեն: Ցմահ ազատագրկման դատապարտվածներն իրավունք ունեն սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար ծախսել որոշակի գումար, ունենալ տեսակցություններ, ստանալ ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պատժի կրման պայմանները ցմահ ազատագրկման դատապարտվածների համար համապատասխանում են քրեակատարողական հիմնարկների բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող ազատագրկման դատապարտվածների պատժի կրման պայմաններին:

Մարդասիրության սկզբունքից է բխում ՀՀ քր. օր. 68-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 18 տարին չլրացած անձինք:

Քրեական և քրեակատարողական օրենսդրությունների նորամուծություններից է դասակարգման բոլոր խմբերի դատապարտյալների նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատման կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ ցմահ ազատազրկման դատապարտվածների՝ ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին կրելուց հետո: Եթե ցմահ ազատազրկում կրող անձն այնպիսի նոր հանցանք է կատարել, որի համար նշանակվում է ազատազրկում կամ ցմահ ազատազրկում, ապա քսան տարվա ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև ազատազրկման ձևով նոր նշանակված պատժի ժամկետը լրանալը, իսկ ցմահ ազատազրկում նշանակելու դեպքում՝ մինչև 20 տարին լրանալը:

ՀՀ ՔԿՕ-ի 98-րդ հոդվածը նախատեսում է ազատազրկման կատարման պայմանների առանձնահատկությունները միջին և բարձր անվտանգության գոտիներում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար: Այսպես՝ ցմահ ազատազրկման դատապարտված անձը միջին անվտանգային գոտու խիստ պայմաններից տեղափոխվում է միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններ երեք տարի խիստ պայմաններում պատժի կրումից հետո՝ պատժի կատարման սահմանված կարգի խախտումների համար վերջին մեկ տարում տույժեր չունենալու դեպքում, իսկ բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններից տեղափոխվում է բարձր անվտանգային գոտու մեղմ պայմաններ ութ տարի խիստ պայմաններում պատժի կրումից հետո՝ պատժի կատարման սահմանված կարգի խախտումների համար վերջին մեկ տարում տույժեր չունենալու դեպքում:

Ցմահ ազատազրկումն ազատազրկումից նախ և առաջ տար-

բերվում է նրանով, որ մեծամասամբ դատապարտյալին ամբողջովին զրկում է ազատվելու հնարավորությունից, քանի որ ցմահ ազատազրկման դատապարտվածի պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է որպես բացառություն, և նման հնարավորություն կարող է վիճակվել ամեննին ոչ բոլոր դատապարտյալներին: Բացի այդ, պետական հարկադրանքի այս միջոցը դատապարտյալին փաստորեն դարձնում է «անխոցելի», նույնիսկ պատժի կրման ընթացքում ցանկացած նոր հանցանք կատարելու դեպքում ցմահ ազատազրկմանը լրացուցիչ պատժի ժամկետ ավելացնել հնարավոր չէ: Մի շարք երկրների քրեական օրենսդրություններում փորձ է արվում լուծել այս խնդիրը, այսպես՝ Ֆինլանդիայի քրեական օրենսգիրքը պատժի համակարգում նախատեսում է ցմահ ազատազրկման դատապարտվածին լուսավոր մենախցում մինչև վեց տարի ժամկետով տեղավորելը (այսինքն՝ դատապարտյալը տեղավորվում է մենախցում, որտեղ լույսը չի մարում նույնիսկ գիշերային ժամերին)⁶⁶:

Ցմահ ազատազրկվածները համամարդկային արժեքներից առավելագույնս օտարված անձինք են, որին նպաստում են ընդհանուր անհարմարավոդականությունը, պատժից ազատվելու հեռանկարի բացակայությունը, խցային պայմանները և պատժի կրման մյուս խստագույն սահմանափակումները: Պետք է հավաստել, որ քրեակատարողական հիմնարկների բարձր անվտանգային գոտում պատժի կրման պայմանները բացառիկ դաժան են, և բազմաթիվ դատապարտյալներ այն կրում են խիստ հիվանդագին: Սոմատիկ և հոգեկան առողջության տարատեսակ խնդիրների որոշակի աստիճանը ձևավորում է ցմահ ազատազրկման կրման պայմաններին հարմարվելու այնպիսի մեխանիզմներ, որոնք արգելակում են քրեակատարողական հիմնարկ-

⁶⁶ См. у **Клюканова Т.М.** Уголовное право зарубежных стран. М., 2017, էջ 52:

ների աշխատակիցների հետ համագործակցության հնարավորությունը⁶⁷:

9. Կանոնակարգի ապահովման միջոցները քրեակատարողական հիմնարկներում

Ազատազրկման կանոնակարգի բովանդակությունը, հիմնական պահանջները և տարրերը նախատեսող նյութական նորմերը ենթադրում են ընթացակարգային նորմերի մի ամբողջ համակարգ, որը կարգավորում է կանոնակարգի իրականացման իրավական մեխանիզմը: Ընթացակարգային նորմերի համակարգն ընդգրկում է նաև քրեակատարողական հիմնարկներում կանոնակարգի ապահովման միջոցները նախատեսող նորմերը, որոնք ուղղված են քրեակատարողական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին և, մասնավորապես, այդ հիմնարկների վարչակազմին: Կանոնակարգի ապահովման միջոցները չեն ընդգրկվում կանոնակարգի բովանդակության մեջ և ապահովում են քրեակատարողական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների կողմից ազատազրկման կատարման ու կրման կարգը և պայմանները: Այդ միջոցները կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր և հատուկ բնույթի:

Կանոնակարգի ապահովման ***ընդհանուր բնույթի միջոցները քրեաիրավական ներգործության միջոցներն են***, որոնք ապահովում են օրինապահ վարքագիծը, իրավահարաբերությունների մասնակիցների և սուբյեկտների կողմից օրինականության պահպանումը և առաջին հերթին քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից, ովքեր իրենց գործունեությամբ պարտավոր են պայմաններ ստեղծել ազատազրկման վայրերում օրի-

⁶⁷ См. у **Антонян Ю.М., Верещагин В.А.** Убийцы, отбывающие пожизненное лишение свободы. Государство и право. М., 1999, N 11, էջ 45:

նականության խախտումները կանխելու, դատապարտյալների իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար: Կանոնակարգի ապահովումը կախված է նաև այն անձանցից, ովքեր այցելում են քրեակատարողական հիմնարկներ, ովքեր իրենց գործունեության բնույթով առնչվում են ազատազրկման դատապարտվածների հետ: Նրանք պարտավոր են պահպանել քրեակատարողական հիմնարկներում սահմանված կանոնները:

Քրեակատարողական հիմնարկներում կանոնակարգի ապահովման հատուկ միջոցներն են՝ դատապարտյալների պահպանությունը և հսկողությունը նրանց նկատմամբ, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, կարգապահական ներգործության՝ խրախուսանքի և տույժի միջոցները, դատապարտյալների նկատմամբ կիրառվող անձնական անվտանգության միջոցները: Այս միջոցների շարքը կարելի է դասել նաև կանոնակարգը քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներում:

Դատապարտյալների պահպանությունը և հսկողությունն իրականացվում են քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից: Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումն իրականացնում է արագ արձագանքման աշխատանքներ՝ ներքին կանոնակարգի խախտումները վերացնելու, քրեակատարողական հիմնարկների արտաքին պահպանությունն իրականացնելու, փախուստների կանխման և այլն: Պահպանության և հսկողության խնդիրներն են՝ քրեակատարողական հիմնարկների գործունեության անվտանգության ապահովում, դատապարտյալների և այլ անձանց հանցագործությունների ու իրավախախտումների հայտնաբերում և կանխում, նրանց մեկուսացման, ներքին կարգապահության կանոնների ապահովում և այլն:

ՀՀ ՔԿՕ-ի 72-րդ հոդվածը նախատեսում է հետևյալ կարգավորումները: Սահմանվում են հսկողության և վերահսկողության տեխնիկական միջոցներ: Դատապարտյալների կամ այլ անձանց անվտանգության ապահովման կամ այլ իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով՝ դատապարտյալների փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման սահմանված կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումները կանխելու կամ խափանելու նպատակով քրեակատարողական հիմնարկում և դրան հարող տարածքում կարող է իրականացվել էլեկտրոնային հսկողություն՝ տեսաձայնագրող միջոցների կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային հսկողությունն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ՝ օրենքով նախատեսված նպատակներով և կարող է դադարեցվել քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ:

Նշված հսկողության մասին հիմնարկի վարչակազմը պարտավոր է գրավոր տեղեկացնել դատապարտյալներին: Էլեկտրոնային հսկողությունը պետք է իրականացվի այնպիսի պայմաններում, որոնք չեն նվաստացնում դատապարտյալների պատիվն ու արժանապատվությունը: Երկարատև տեսակցությունների համար հատկացված սենյակներում, կացարաններում և խցերում էլեկտրոնային հսկողություն չի իրականացվում:

Քրեակատարողական հիմնարկից փախուստները, ինքնավնասումները, ինքնասպանությունները, պատժի կատարման կարգի խախտումները, անկարգությունները, հանցանքները կամ այլ իրավախախտումներ կանխելու կամ խափանելու նպատակով դատապարտյալը կարող է ենթարկվել զննման, անձնական խուզարկության, նրա իրերը՝ զննման, իսկ քրեակատարողական հիմնարկում նրա կացարանը, մեկուսացված խուցը կամ նրա

գտնվելու այլ վայրը՝ խուզարկության (ՀՀ ՔԿՕ, 74-րդ հոդված, 1-ին մաս):

Քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու, քրեակատարողական հիմնարկից դուրս գալու, խցից կամ կացարանից մեկ այլ խուց կամ կացարան կամ բժշկական ստորաբաժանում տեղափոխվելու դեպքում դատապարտյալը ենթարկվում է գննման (ՀՀ ՔԿՕ, 74-րդ հոդված, 3-րդ մաս):

Քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնում են քրեակատարողական հիմնարկների օպերատիվ մարմինները, ինչպես նաև իրենց իրավասության սահմաններում նման իրավունքներով օժտված այլ մարմինները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրներն են՝ դատապարտյալների, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների և այլ անձանց անվտանգության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող ու կատարվող հանցավոր արարքների և պատժի կրման սահմանված կարգի խախտումների հայտնաբերումը, կանխումն ու բացահայտումը, քրեակատարողական հիմնարկներից փախուստի դիմած և ազատագրված կրումից խուսափող դատապարտյալների սահմանված կարգով հետախուզումը, դատապարտյալների կողմից մինչև քրեակատարողական հիմնարկ հասնելը կատարված հանցավոր արարքների հայտնաբերմանը և բացահայտմանը նպաստելը:

ՀՀ ՔԿՕ-ի 73-րդ հոդվածի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն՝ քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությունն ապահովելու, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունները կանխելու և բացա-

հայտելու նպատակով: Քրեական վարույթի շրջանակներում քրեակատարողական հիմնարկներում կարող են իրականացվել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և գաղտնի քննչական գործողություններ:

Քրեակատարողական հիմնարկներում կանոնակարգի ապահովման հատուկ միջոցներից կարգապահական ներգործության՝ խրախուսանքի և տույժի միջոցների, ինչպես նաև դատապարտյալների նկատմամբ կիրառվող անձնական անվտանգության միջոցների կարևորությունը և կիրառման առանձնահատկությունները նկատի ունենալով՝ դրանք կներկայացվեն դասագրքի սույն գլխի հաջորդ՝ ինքնուրույն ենթագլուխներում:

10. Կարգապահական ներգործության՝ խրախուսանքի և տույժի միջոցները

Ազատազրկման կանոնակարգի ապահովմանն են ուղղված դատապարտյալների նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության՝ խրախուսանքի և տույժի միջոցները, որը կարևոր պայման է քրեակատարողական հիմնարկներում սահմանված կանոնակարգի պահանջների իրականացման համար:

ՀՀ ՔԿՕ-ի 102-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դրական վարքագծի, աշխատանքի կամ ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի կամ դատապարտյալների ինքնագործ միավորումների աշխատանքներին կամ միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) շնորհակալություն.

2) հեռախոսակապից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ տարեկան լրացուցիչ չորս թույլտվությունից ոչ ավելի.

3) տեսագանգից լրացուցիչ օգտվելու թույլտվություն՝ տարեկան լրացուցիչ չորս թույլտվությունից ոչ ավելի:

4) կարճատև կամ երկարատև լրացուցիչ տեսակցության թույլտվություն, տարվա ընթացքում երկու կարճատև կամ երկու երկարատև տեսակցությունից ոչ ավելի:

5) սոցիալական վերականգնման նպատակով լրացուցիչ մեկնում՝ տարեկան լրացուցիչ երկու մեկնումից ոչ ավելի:

6) բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալի զբոսանքի ժամանակի ավելացում՝ մինչև երկու ժամ, մեկ ամիս ժամկետով:

7) անվտանգային գոտու խիստ պայմաններից տեղափոխում նույն անվտանգային գոտու մեղմ պայմաններ:

8) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում:

Դրականորեն բնութագրվող դատապարտյալների նկատմամբ որպես խրախուսանքի միջոց կարող են կիրառվել նաև պատժի կրման պայմանների փոփոխումը, դատապարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող քրեակատարողական հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

Խրախուսանքի միջոցների կիրառման համար հիմք կարող է հանդիսանալ ոչ միայն դատապարտյալի ընդհանուր դրական վարքագիծը պատժի կրման ընթացքում, այլև ցանկացած մեկ այլ դրական արարք:

Դատապարտյալների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր խրախուսանքի միջոցները կիրառվում են գրավոր՝ քրեակատարողական հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ: Դատապարտյալի նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելու մասին որոշման պատճենը կցվում է նրա անձնական գործին:

Դատապարտյալների նկատմամբ **տույժի** միջոցների կիրառումն ազատագրկման կանոնակարգը խախտող դատապարտյալների համար հարկադրանքի ձև է: Այդ միջոցների ճիշտ և ժամանակին կիրառումն անհրաժեշտ պայման է դատապարտյալների նոր իրավախախտումները կանխելու համար: Դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցների կիրառման հիմք կարող է հանդիսանալ ինչպես նրանց կողմից կատարված մեկ զանցանքը, այնպես էլ պատժի կրման ընթացքում ցուցաբերած ընդհանուր բացասական վարքագիծը:

ՀՀ ՔԿՕ-ի 104-րդ հոդվածի համաձայն՝ պատժի կատարման սահմանված կարգը խախտելու համար դատապարտյալի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել **տույժի** հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, նկատողություն, մինչև մեկ ամիս ժամկետով զրկել հեռախոսակապից կամ տեսազանգից օգտվելու իրավունքից, տեսակցության իրավունքից, մինչև 15 օր ժամկետով տեղափոխել պատժախուց:

Տույժի միջոցները կիրառվում են գրավոր՝ քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ, բացառությամբ նախազգուշացման, որը կարող է հայտարարվել նաև բանավոր:

Կատարված կարգապահական խախտումը քննելիս և կարգապահական տույժ նշանակելիս քրեակատարողական հիմնարկի պետը ծանոթանում է կատարվածի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի ծառայողի ներկայացրած գրավոր նյութերին, ընդունում համապատասխան որոշում, որը կցվում է դատապարտյալի անձնական գործին:

Տույժի միջոցները նախատեսող նորմերի կիրառման համար կարևոր նշանակություն ունի դրանց իրականացման իրավական մեխանիզմի սահմանումը: ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը սահմանում է տույժի միջոցների նշանակման հիմքերը: Այսպես՝ դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցները կիրա-

ռելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, տույժի միջոցի կիրառմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու ողջամիտ անհրաժեշտությունը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը նախքան խախտումը կատարելը: Նշանակվող տույժը պետք է համապատասխանի դատապարտյալի կատարած խախտման ծանրությանը և բնույթին: Տույժը կիրառվում է բացառապես խախտումը կատարած անձի նկատմամբ այն հայտնաբերելուց հետո՝ ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, իսկ եթե խախտման կապակցությամբ կատարվել է ստուգում, ապա դրա ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելու օրվանից մեկ ամիս հետո: Տույժը, որպես կանոն, կատարվում է անհապաղ, իսկ դրա անհապաղ կատարման անհնարինության դեպքում՝ ոչ ուշ, քան մեկ ամսում՝ այն նշանակելու օրից : Մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ (ՀՀ ՔԿՕ, 106 հոդված, 2-րդ մաս): Տույժը պետք է լինի արդարացի և պետք է կիրառվի միայն համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում ընդունված որոշման հիման վրա:

Անչափահաս, հղի, կերակրող մայր կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալի նկատմամբ պատժախուց տեղափոխելը չի կարող նշանակվել և կիրառվել:

Դատապարտյալին պատժախցից քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանում տեղափոխելու դեպքում քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանումում դատապարտյալին պահելու ժամանակը հաշվվում է տույժը կրելու ժամկետի մեջ:

Եթե դատապարտյալը պատժախցից բժշկական ստորաբաժանում է տեղափոխվել հիվանդության ձևացման (սիմուլյացիա) կամ անդամախեղության պատճառով, ապա բժշկական ստորաբաժանումում նրա անցկացրած ժամանակահատվածը չի հաշ-

վարկվում տույժը կրելու ժամկետի մեջ (Ներքին կանոնակարգի 243-րդ կետ):

Դատապարտյալը համարվում է տույժ չունեցող, եթե տույժը կրելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, չի ենթարկվել նոր տույժի, կամ նախկինում նշանակված տույժը հանվել է: Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել պատիժները կատարելու նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: Դատապարտյալի կողմից տույժի միջոցի բողոքարկումը չի կասեցնում տույժի կիրառումը:

Պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառելու դեպքում համապատասխան մատյանում պարտադիր գրանցվում են դատապարտյալին այնտեղ պահելու սկիզբը և ավարտը: Դատապարտյալները պատժախուց կարող են տեղափոխվել հետևյալ դեպքերում՝

ա) այլ դատապարտյալների նկատմամբ ճնշում գործադրելու, նրանց վիրավորելու, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ այլ անձանց վրա հարձակում գործելու,

բ) քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի օրինական պահանջներին չենթարկվելու,

գ) արգելված առարկաներ, իրեր և սննդամթերք ձեռ բերելու, պահելու, օգտագործելու, պատրաստելու կամ փոխանցելու,

դ) քրեակատարողական հիմնարկի գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար:

Պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց, կարող է կիրառվել նաև, եթե չարամիտ խախտող ճանաչված դատապարտյալը թույլ է տվել Ներքին կանոնակարգի պահանջների խախտում կամ այլ իրավախախտում (Ներքին կանոնակարգի 238-րդ կետ):

ՀՀ ՔԿՕ-ի 107-րդ հոդվածը նախատեսում է, որ պատժախցում գտնվելու ընթացքում դատապարտյալին կարող են արգելվել՝ դրամական փոխանցումներ ստանալը և կատարելը, հանձնույթներ կամ ծանրոցներ ստանալը և ուղարկելը՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը, տեսակցությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, տեսազանգից օգտվելը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Յուրաքանչյուր սահմանափակումը կիրառելիս քրեակատարողական հիմնարկի պետը պետք է հիմնավորի պատճառական կապը կատարած խախտման և կիրառվող սահմանափակման միջև և սահմանափակման կիրառմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու ողջամիտ անհրաժեշտությունը (ՀՀ ՔԿՕ, 107-րդ հոդված, 4-րդ մաս): Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում կարող է կիրառվել օրենքով նախատեսված մեկից ավելի սահմանափակում: Արգելվում է պատժախցում գտնվող անձանց նկատմամբ, օրենքով նախատեսվածից բացի, այլ սահմանափակումներ կիրառելը:

Դատապարտյալը պատժախցում կարող է անընդմեջ պահվել քսան օրից ոչ ավելի:

Պատժախցում պահվող դատապարտյալներին ամեն օր այցելում են բժշկական սպասարկման համապատասխան ծառայողը և պատասխանատու հերթապահը՝ դրա մասին գրառում կատարելով համապատասխան մատյանում:

Պատժախցում գտնվելու ընթացքում դատապարտյալն անհատական քնելու տեղով ապահովվում է միայն քնի համար սահմանված ժամերին: Դատապարտյալը պատժախցում կարող է պահվել միայնակ:

Պատժախցում պահվող դատապարտյալն ապահովվում է իր սեռին, տարվա եղանակի կլիմայական պայմաններին համապատասխանող նախատեսված միասնական նմուշի հանդերձանքով: Դատապարտյալին արգելվում է պատժախցում իր մոտ պահել անձնական իրեր՝ բացառությամբ անձնական հիգիենայի պարագաների, ինչպես նաև կրոնական գրականության և նկարների:

Պատժախցում պահվող դատապարտյալի սննդի ընդունումն իրականացվում է պատժախցում: Պատժախուցը մաքրվում է այնտեղ գտնվող դատապարտյալի կողմից:

ՀՀ ՔԿՕ-ի 105-րդ հոդվածը սահմանում է ազատազրկման դատապարտված անձի կողմից ***պատժի կատարման սահմանված կարգի խախտումները***: Այս հասկացության ձևակերպումն ազատազրկում պատժատեսակի կատարման համար ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ քրեակատարողական օրենսդրության բազմաթիվ նորմերի կիրառման համար այն ունի վճռորոշ դեր: Դատապարտյալի կողմից պատժի կատարման սահմանված կարգի խախտումներ են համարվում՝ զանցանքը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, քրեակատարողական հիմնարկներում անհնազանդությունը կամ դրան ակտիվորեն մասնակցելը, նշված խախտումները կատարելու նպատակով խմբեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը կամ օգտագործումն արգելված առարկաներ պատրաստելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, միջանձնային ֆիզիկական կամ հոգեկան ներգործությունը:

Մեկ տարվա ընթացքում պատժի կատարման սահմանված կարգի եռակի խախտումը կարող է համարվել չարամիտ, եթե այդ խախտումներից յուրաքանչյուրի համար դատապարտյալը ենթարկվել է տույժի՝ բացառությամբ նախազգուշացման, և տույժը չի հանվել կամ մարվել:

Պատժի կատարման սահմանված կարգի չարամիտ խախտման դեպքում դատապարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման անվտանգային ավելի բարձր աստիճան ունեցող գոտի՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

Դատապարտյալը պատժի կատարման սահմանված կարգի չարամիտ խախտող է ճանաչվում քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ՝ երրորդ տույժը նշանակելու հետ միասին (ՀՀ ՔԿՕ, 105 հոդված):

11. Անձնական անվտանգության միջոցների և մարտական կամ ծառայողական զենքի գործադրումը

Քրեակատարողական հիմնարկներում կանոնակարգի ապահովման գործում առանձնահատուկ տեղ է գրավում անձնական անվտանգության միջոցների և մարտական կամ ծառայողական զենքի գործադրումը: Օրենսդրությամբ նախատեսված անձնական անվտանգության միջոցներն են՝ ֆիզիկական ուժի գործադրումը և հատուկ միջոցները: Կանոնակարգի ապահովման գործում որպես բացառիկ միջոց է մարտական զենքի գործադրումը: Իրենց էությամբ անձնական անվտանգության միջոցները և մարտական կամ ծառայողական զենքի գործադրումը պետական հարկադրանքի տարատեսակ են, որոնց կիրառման հիմնավորվածությունը և անհրաժեշտությունը գնահատվում են քրեաիրավական ինստիտուտների շրջանակում՝ որպես անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն, հիմնավորված ռիսկ, վնաս պատճառելը հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս և մասնագիտական գործառույթների իրականացում: Այս միջոցներն արտաքինապես դրսևորվում են որպես ֆիզիկական ներգործություն այն անձանց նկատմամբ, ովքեր հանդիսանում են վտանգի աղբյուր: Դրանք կիրառվում են

արտակարգ կամ կոնֆլիկտային իրադրություններում, երբ դատապարտյալները բռնություն են գործադրում քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կամ քաղաքացիների, այլ դատապարտյալների կամ իրենց նկատմամբ:

Այս միջոցները պետք է տարբերել դատապարտյալների նկատմամբ կիրառվող տույժի միջոցներից: Դրանք ուղղված են կանխելու դատապարտյալների հանրորեն վտանգավոր գործողությունները, գործողություններ, որոնք կամովին չեն կանխվում և կարող են ունենալ վտանգավոր հետևանքներ: Տույժի միջոցները կիրառվում են որպես կարգապահական ներգործության միջոցներ դատապարտյալների այն անօրինական գործողությունների համար, որոնք արդեն ավարտվել են կամ կանխվել: Այդ պատճառով հնարավոր է դատապարտյալների հանրորեն վտանգավոր գործողությունները կանխելու համար գործադրել վերը նշված միջոցներ, ապա այդ կապակցությամբ կիրառել տույժի միջոցներ:

Անձնական անվտանգության միջոցների ու զենքի տեսակները և դրանց կիրառման հիմքերն ու կարգը քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում (գլուխ 14): Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների օրինական պահանջներին չարամտորեն չհնազանդվելու, նրանց դիմադրություն ցույց տալու, մոլեգնություն դրսևորելու, զանգվածային անկարգությունների մասնակցելու, պատանդներ վերցնելու, քաղաքացիների վրա հարձակվելու, հանրորեն վտանգավոր այլ գործողություններ կատարելու, ինչպես նաև փախուստների ժամանակ կամ քրեակատարողական հիմնարկներից փախուստի դիմած դատապարտյալներին հայտնաբերելիս ու քրեակատարողական հիմնարկ վերադարձնելիս, նշված հակաիրավական գործողությունները կանխելու նպատակով, երբ դատապարտյալները սպառնում են վնաս

պատճառել իրենց կամ շրջապատողներին, կարող են կիրառվել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք: Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցները կարող են կիրառել անվտանգության միջոցներ և զենք ազատագրելու կատարող հիմնարկների տարածքում և այն գոտիներում, որտեղ տարածվում են կանոնակարգի պահանջները:

Քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, այդ թվում մարտարվեստների հնարքներ քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելու կամ պարտականությունների կատարումը խոչընդոտելու յուրաքանչյուր դեպքում:

Քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ կարող են գործադրվել «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

Որպես քաղաքացիական զենք՝ կիրառվում են կայծային պարպիչ, էլեկտրահարող սարք, ինչպես նաև գազային ատրճանակ: Որպես հատուկ միջոցներ՝ կիրառվում են ռետինե մահակներ, ձեռնաշղթաներ և ոտնաշղթաներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, արգելքներ քանդող միջոցներ, ջրանետներ կամ զրահամեքենաներ, ծառայողական շներ, ինչպես նաև մարդու առողջությանը վնաս չպատճառող յուրաքանչյուր այլ միջոց:

Մարտական կամ ծառայողական զենք գործադրվում է «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

Զենք գործադրվում է բացառիկ դեպքերում. եթե դատապարտյալի գործողությունները բացահայտ վտանգ են սպառնում շրջապատողների կյանքին և առողջությանը: Զենք կիրառվում է անպայմանորեն նախագուշացնելուց հետո: Առանց նախագուշացման այն կարող է կիրառվել. զենքի կամ տրանսպորտային միջոցների օգնությամբ կատարվող հարձակումները կանխելու համար, քրեակատարողական հիմնարկից զենքով կամ տրանսպորտային միջոցների օգնությամբ դատապարտյալի փախուստի դեպքում, տրանսպորտային միջոցներից ընթացքի ժամանակ փախուստի դեպքում: Զենքի գործադրումն օրինական է, եթե այլ միջոցներով հնարավոր չէ կանխել մատնանշված գործողությունները:

Արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ կամ մարտական կամ ծառայողական զենք գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների կամ անչափահասների նկատմամբ՝ բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելիս քրեակատարողական ծառայողը պարտավոր է՝ նախագուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում քրեակատարողական ծառայողի կյանքի կամ առողջության համար, կամ երբ ստեղծված իրադրությունում նման նախագուշացումն անհնար է, դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ, մարմնական վնասվածքներ ստացած

անձանց ցույց տալ առաջին օգնություն («Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 51-րդ հոդված):

Անվտանգության միջոցների և զենքի գործադրման դեպքում քրեակատարողական ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի գործադրման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին: Նման պարագայում առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին քրեակատարողական վարչության պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին: Համապատասխան անձինք իրենց իրավասության շրջանակներում ստուգում են զենքի և անվտանգության միջոցների կիրառման օրինականությունը և կայացնում են համապատասխան որոշում:

ԳԼՈՒԽ 10

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Դատապարտյալների աշխատանքի իրավական կարգավորումը

Աշխատանքը սոցիալ-տնտեսական, փիլիսոփայական ու իրավաբանական կատեգորիա է՝ նյութական և հոգևոր բարիքներ ձեռք բերելու, անձի սոցիալական դրսևորման միջոցներից մեկը: Աշխատանքով են ստեղծվում նյութական և մշակութային արժեքները, ձևավորվում և դրսևորվում է անհատը: Աշխատանքի միջոցով անձը զարգացնում է իր ֆիզիկական, մտավոր ունակությունները, ձևավորում, ամրապնդում է հիմնական բարոյական հատկանիշները, վերաբերմունքը սոցիալական կարևոր արժեքների նկատմամբ:

Մեծ է աշխատանքի դերը նաև ազատագրկման դատապարտվածների համար: Այն վերասոցիալականացման, ազատագրկման վայրերում կարգապահության ապահովման կարևորագույն երաշխիք է: Աշխատանքն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քրեակատարողական հիմնարկների տնտեսական կանոնավոր գործունեության, դատապարտյալների անձնական կարիքները բավարարելու համար:

Դատապարտյալների աշխատանքը կարգավորվում է աշխատանքային օրենսդրությամբ և քրեակատարողական իրավունքի հատուկ նորմերով: Ազատագրկման դատապարտվածների աշխատաժամանակի տևողությունը, աշխատանքի պաշտպա-

նության, անվտանգության տեխնիկայի և արտադրական սանիտարիայի կանոնները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան: Միջազգային պարտավորություններին համապատասխան՝ ազատագրկված անձանց աշխատանքը չի կարող օգտագործվել ի շահ պետության: Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն չափանիշներում սահմանվում է, որ յուրաքանչյուր դատապարտյալ պարտավոր է աշխատել իր ֆիզիկական և հոգեկան հնարավորություններին համապատասխան: Եվրոպական բանտային կանոնների՝ աշխատանքին նվիրված գլուխը սկսվում է հետևյալ դրույթով. «Ազատագրկման վայրերում աշխատանքը դիտվում է որպես վերասոցիալականացման դրական տարր»:

Ազատագրկման դատապարտվածների՝ միջազգային իրավական ակտերով սահմանված աշխատանքի պարտադիր լինելը չի վկայում դրա հարկադիր բովանդակության մասին: Այն չպետք է լինի հարկադիր և (կամ) շահագործող բնույթի և չպետք է ուղղված լինի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի անձնական շահերը բավարարելուն: Դատապարտյալների աշխատանքի պարտադիր (ցանկալի) լինելը նախատեսված է գրեթե բոլոր երկրների պենիտենցիար համակարգերում: Եվ դա պատահական չէ. հանրորեն օգտակար աշխատանքն իր էությամբ վերականգնողական-դաստիարակչական բովանդակություն ունի, ավելին՝ դրա կիրառումն ունի առողջարար, կարգապահական, տնտեսական (վարձատրման հնարավորություն, աննպատակ ժամանակի օգտագործման երկընտրանք և այլն) նշանակություն⁶⁸:

ՀՀ ՔԿՕ-ի 108-րդ հոդվածի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկում կարող են կազմակերպվել աշխատանքային գրադվածության սենյակներ կամ խցեր՝ դատապարտյալներին

⁶⁸ Տե՛ս՝ *А.В.Бриллиантов, С.И.Курганов. Уголовно-исполнительное право Российской Федерации*, М., 2023, էջ 194-195:

աշխատանքներում ներգրավելու նպատակով: Դատապարտյալներն աշխատանքում ընդգրկվում են իրենց ցանկությամբ:

Դատապարտյալին աշխատանքի ներգրավելիս քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է հաշվի առնել նրա սեռը, տարիքը, աշխատունակությունը, առողջական վիճակը, ունակությունները և հնարավորինս՝ մասնագիտությունը: Դատապարտյալի աշխատանքային գործունեությունը չպետք է խոչընդոտի քրեակատարողական հիմնարկի առջև դրված խնդիրներն իրականացնելուն:

Քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալներին աշխատանքը կազմակերպելիս նախապատվությունը տրվում է այն դատապարտյալին, ով ունի գույքային պարտավորություններ կամ գտնվում է նյութական ծանր վիճակում:

Դատապարտյալներն աշխատանքի են ներգրավվում քրեակատարողական հիմնարկների ձեռնարկություններում, պետական ձեռնարկություններում կամ սեփականության այլ ձևեր ունեցող ձեռնարկություններում՝ դատապարտյալների պատշաճ պահպանության և մեկուսացման պահանջներն ապահովելու պայմանով: Դատապարտյալներն իրավունք ունեն զբաղվելու ստեղծագործ աշխատանքով, ինչպես նաև անհատական աշխատանքային գործունեությամբ:

Կենսաթոշակային տարիքը լրացած դատապարտյալը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող, հղի, կերակրող մայր կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող դատապարտյալն աշխատանքում են ներգրավվում՝ հաշվի առնելով նրանց առողջական վիճակը և այլ առանձնահատկությունները՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (ՀՀ ՔԿՕ, 109-րդ հոդված, 3-րդ մաս):

Աշխատանքային վեճերի առիթով դատապարտյալին արգելվում է ընդհատել աշխատանքը: Աշխատանքից հրաժարվելը կամ աշխատանքն ընդհատելը համարվում է պատժի կրման սահ-

մանված կարգի խախտում և հիմք է դատապարտյալի նկատմամբ կարգապահական և (կամ) նյութական պատասխանատվություն կիրառելու համար:

Աշխատանքների և պաշտոնների ցանկը, ուր արգելվում է դատապարտյալների ներգրավումը, սահմանվում է ՀՀ կառավարության կողմից⁶⁹: Արգելվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին ներգրավելը հետևյալ աշխատանքներում և պաշտոններում՝ քրեակատարողական ծառայության տարածքային մարմիններ, դրանց ստորաբաժանումներ, շինություններ, որոնցում տեղակայվում է հսկողություն իրականացող անձնակազմը, որոնցում պահվում են զենք, ծառայողական փաստաթղթեր, հատուկ տեխնիկական միջոցներ, կապի և հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների սպասարկման կամ նորոգման աշխատանքներ, դեղորայքի, դեղանյութերի, բժշկական նշանակության առարկաների պահպանման, հաշվառման, բաշխման կամ արտադրության աշխատանքներ, պահպանության ինժեներական կամ տեխնիկական միջոցների սպասարկում կամ նորոգում, զենք, թունավոր, պայթուցիկ կամ հրդեհավտանգ նյութերի պահպանման, հաշվառման, բաշխման կամ արտադրության աշխատանքներ, մթերային կամ իրերի պահեստների պահպանման աշխատանքներ, ինչպես նաև այդ պահեստներում՝ որպես վաճառող, գանձապահ, հաշվապահ, պետ, ոգելից խմիչքների արտադրություն, սուր, կտրող ծակող գործիքների կամ առարկաների արտադրություն, հեռահաղորդակցության, վիդեոաուդիո ձայնագրող սարքերի, նկարահանող այլ տեխնիկայի միջոցով կատարվող աշխատանք, որպես տեսանկարահանող, լուսանկարիչ, տրանսպորտի վարորդ և այլն:

⁶⁹ Տես՝ ՀՀ կառավարության որոշումը կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկը հաստատելու մասին, 16.02.2018թ.:

Դատապարտյալները, բացի քրեակատարողական հիմնարկների հետ ունեցած աշխատանքային հարաբերություններից, նման հարաբերությունների մեջ կարող են մտնել նաև այլ գործատուների հետ: Այդ դեպքում անհրաժեշտ է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և տվյալ գործատուի միջև գրավոր համաձայնության առկայությունը՝ պահպանելով դատապարտյալների համար աշխատանքի ընտրության, անվտանգության, թույլատրելիության և օրենսդրությամբ նախատեսված այլ պայմանները: Եթե դատապարտյալն աշխատանքային հարաբերությունների մեջ է մտել այլ գործատուների հետ, ապա կնքվում է եռակողմ համաձայնագիր քրեակատարողական հիմնարկի, գործատուի և դատապարտյալի հետ: Եռակողմ պայմանագրում, բացի ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ գործատուի և աշխատողի իրավունքներից և պարտականություններից, աշխատանքի էական պայմաններից ու աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր հանգամանքներից, սահմանվելու են քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչների կողմից վերահսկողություն իրականացնելու և ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելու պարտականությունները և քրեակատարողական օրենսդրության նպատակներից բխող այլ պայմաններ (Ներքին կանոնակարգի 88-րդ կետ):

Քրեակատարողական հիմնարկներն իրավունք ունեն ծավալել սեփական արտադրություն, պայմանագրային հիմունքներով օգտագործել ֆինանսական միջոցներ, գույք և այլն, ինքնուրույն ընտրել մատակարարներ, սպառողներ, սահմանել արտադրվող արտադրանքի գները, տնօրինել սեփական արտադրության արտադրանքները: Աշխատանքը պլանավորվում է, բաց է թողնվում հումք, իսկ արտադրանքը կարող է մատակարարվել նույնիսկ արտաքին շուկա:

Մեփական արտադրական գործունեություն ծավալելիս քրեակատարողական հիմնարկները պարտավոր են՝ ապահովել աշխատանքի բարենպաստ պայմաններ, կատարել պայմանագրային պարտավորությունները, օրենքով սահմանված կարգով կրել պատասխանատվություն պայմանագրային պարտավորությունների խախտման, շրջակա միջավայրի աղտոտման, կյանքի և առողջության պահպանության պահանջների խախտման համար, իրենց գործունեության մասին պարբերաբար տալ հաշվետվություն համապատասխան պետական մարմիններին:

Անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվելիս քրեակատարողական հիմնարկներում պետք է պահպանվեն քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջները, ապահովվի այդ գործունեությունից որոշակի շահույթ ձեռք բերելու հնարավորությունը:

Քրեակատարողական հիմնարկների բարձր անվտանգային գոտում կամ միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում կարող են կազմակերպվել աշխատանքային զբաղվածության խցեր՝ դատապարտյալներին խցային պայմաններում աշխատանքներում ներգրավելու նպատակով: Նման քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալները կարող են աշխատանքներում ներգրավվել նաև իրենց խցերում, եթե այդ աշխատանքների իրականացմամբ չեն խախտվում տվյալ խցում առկա մյուս դատապարտյալների իրավունքները՝ պահպանելով սանիտարահիգիենիկ, աշխատանքային անվտանգության և հակահրդեհային կանոնները: Նման դատապարտյալների համար աշխատանքով ապահովման հնարավորությունները խիստ սահմանափակ են՝ անհրաժեշտ պայմանների բացակայության հետևանքով:

Քրեակատարողական հիմնարկների ցածր և միջին անվտանգային գոտիներում կարող են կազմակերպվել արդյունաբե-

րական կամ գյուղատնտեսական նշանակության աշխատանքային զբաղվածության սենյակներ կամ գոտիներ, ինչպես նաև արտադրական գոտիներ:

Քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս աշխատանքներում կարող է ներգրավվել միայն առանց պահակախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու թույլտվություն ստացած դատապարտյալը:

Առանց վարձատրության քրեակատարողական հիմնարկի կամ դրան հարող տարածքի բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար, դատապարտյալի գրավոր համաձայնության առկայության դեպքում, հիմնարկի պետն ընդունում է որոշում նրան տվյալ աշխատանքներում ներգրավելու մասին (ՀՀ ՔԿՕ, 111 հոդված): Որոշման մեջ նշվում են ընդունման օրը, վայրը, համառոտ բովանդակությունը՝ կատարվող աշխատանքներում ներգրավվող դատապարտյալների թիվը, աշխատանքների բնույթը, աշխատանքների կազմակերպման համար պատասխանատու ծառայությունները, աշխատանքների իրականացման ժամանակահատվածը: Դատապարտյալը չվարձատրվող աշխատանքներում ներգրավվում է ոչ հանգստյան ժամերին՝ օրական երկու ժամից ոչ ավելի ժամանակով: Դատապարտյալներն առանց վարձատրության կարող են ներգրավվել միայն քրեակատարողական հիմնարկների և դրանց հարող տարածքների բարեկարգման աշխատանքներում, բացառությամբ պահպանական շինությունների: Դատապարտյալները առանց աշխատանքի վարձատրության կարող են ներգրավվել նաև քրեակատարողական հիմնարկների մշակութային, կենցաղային պայմանների բարելավման աշխատանքներում և քրեակատարողական հիմնարկները սննդամթերքով ապահովելու օժանդակ աշխատանքներում: Պահպանական շինություններում դատապարտյալները կարող

են աշխատանքի ներգրավվել միմիայն տարերային աղետներից կամ այլ արտակարգ հանգամանքների պատճառով դրանց վնասման դեպքում:

Չվարձատրվող աշխատանքներում ներգրավված դատապարտյալի կողմից աշխատանքի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի, ինչպես նաև տվյալ աշխատանքները կազմակերպելու իրավասություն ունեցող ստորաբաժանման ծառայողների հանձնարարությունները պատշաճ և ժամանակին չկատարելու դեպքում իրավասու ստորաբաժանման ղեկավարը կարող է համապատասխան միջնորդագիր (զեկուցագիր) ներկայացնել քրեակատարողական հիմնարկի պետին՝ տվյալ դատապարտյալին չվարձատրվող աշխատանքներում ներգրավվածությունը դադարեցնելու վերաբերյալ: Միջնորդագրի (զեկուցագրի) կապակցությամբ իրականացված ուսումնասիրության հիման վրա քրեակատարողական հիմնարկի պետը կայացնում է համապատասխան որոշում (Ներքին կանոնակարգի 96-րդ կետ):

Աշխատանքի պահպանության և անվտանգության տեխնիկայի պատասխանատվությունը կրում են քրեակատարողական հիմնարկի պետը և արտադրության գծով տեղակալը: Աշխատանքի սկիզբը և ավարտը (հերթափոխը) որոշվում է հերթափոխային ժամանակացուցով, որը սահմանում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ համաձայնեցնելով դատապարտյալների աշխատանքի վայրի ձեռնարկության վարչակազմի հետ: Դատապարտյալների համար սահմանվում է ութժամյա աշխատանքային օր: Աշխատանքի սկիզբը և ավարտը սահմանվում են քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով: Ազատագրվման վայրերում արտաժամյա աշխատանք թույլատրվում է աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմնականում անհետաձգելի աշխատանքներ կատարելու և ավարտելու նպատակով:

Ազատագրկման դատապարտվածներին վճարովի աշխատանքի մեջ ներգրավելու ժամանակը համարվում է նրանց ընդհանուր աշխատանքային ստաժ: Աշխատած ժամանակի հաշվառումն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝ օրացուցային տարվա արդյունքներով:

ՀՀ ՔԿՕ-ի 110-րդ հոդվածը սահմանում է դատապարտյալների աշխատանքի վարձատրության իրավունքը: Աշխատաժամանակի և արտադրանքի չափաբաժիններն ամբողջությամբ կատարելու դեպքում դատապարտյալների ամսական վարձատրությունը չի կարող պակաս լինել սահմանված նվազագույն աշխատավարձից: Ոչ լրիվ աշխատանքային օրվա կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթվա դեպքում դատապարտյալի աշխատանքը վարձատրվում է կատարված աշխատաժամանակին կամ թողարկված արտադրանքին համապատասխան:

Ազատագրկման դատապարտվածներին պահելու ծախսերը հատուցելու համար նրանց աշխատավարձից, կենսաթոշակներից և այլ եկամուտներից կատարվում են պահումներ:

2. Դատապարտյալների կրթության և մասնագիտական կրթության իրավական կարգավորումը

Ազատագրկման դատապարտվածների կրթական զբաղվածությունը դատապարտյալների վերասոցիալականացման հիմնական միջոցներից է:

ՀՀ ՔԿՕ-ի 112-րդ հոդվածի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի ֆորմալ կրթությունը՝ հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրերով (հեռակա, մասնակի բեռնվածության, հեռավար ձևերով), ինչպես նաև ոչ ֆորմալ կրթությունն օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակեր-

պելու ուղղությամբ: Դատապարտյալի կրթությունը կարող է իրականացվել նաև վերջինիս կամ օրենքով չարգելված միջոցների հաշվին:

Քրեակատարողական հիմնարկների վարչակազմը պարտավոր է ստեղծել դատապարտյալների ուսման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Այդ նպատակով քրեակատարողական հիմնարկներում հիմնվում են միջնակարգ հանրակրթական երեկոյան (հերթափոխային) դպրոցներ, իսկ քրեակատարողական հիմնարկների բարձր անվտանգային գոտիներում ուսումը կազմակերպելու համար կարող են ստեղծվել ուսումնախորհրդատվական կետեր:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կարող է դատապարտյալների հանրակրթությունը, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթությունը կազմակերպել նաև համագործակցելով այլ կազմակերպությունների հետ (Ներքին կանոնակարգի 78-րդ կետ):

Այն դատապարտյալը, որի՝ կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին պատժից ազատելու ժամկետը լրանալուն մնացել է մեկ տարուց ավելի, կարող է, անկախ տարիքից, օրենքով սահմանված կարգով իրացնել իր կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ) ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (ՀՀ ՔԿՕ, 112 հոդված, 3-րդ մաս):

Քրեակատարողական հիմնարկում ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված միջոցների հաշվին կարող է կազմակերպվել մասնագիտություն չունեցող դատապարտյալի նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն կամ մասնագիտական պատրաստում՝ ոչ ֆորմալ կրթությամբ, որում դատապարտյալները ներգրավվում են իրենց ցանկությամբ: Մասնագիտական կրթությունը հնարավորինս պետք է լինի այնպիսին, որ

աշխատանքի կատարման ընթացքում պահպանվեն կամ բարելավվեն դատապարտյալի՝ պատժից ազատվելուց հետո ապրուստի միջոց վաստակելու ունակությունները (ՀՀ ՔԿՕ, 113 հոդված):

Դատապարտյալն այդ մասնագիտությամբ կարող է աշխատել քրեակատարողական հիմնարկում նաև պատժի կրումն ավարտելուց հետո: Քրեակատարողական հիմնարկներում մասնագիտական կրթությունը կարող է կազմակերպվել մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում, որոնց մասնաճյուղերը կարող են ստեղծվել ազատազրկման վայրերում՝ ուսուցանելով նրանց քրեակատարողական հիմնարկների արտադրությունում: Ուսումը կազմակերպվում է առանց արտադրությունից կտրվելու: Ցմահ ազատազրկում կրող դատապարտյալները, պատժի կրման կանոնակարգի առանձնահատկություններից ելնելով, մասնագիտական կրթություն կարող են ստանալ հենց արտադրությունում: Նախնական մասնագիտական կրթությունն անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է աշխատանքային օրվա տևողության սահմաններում:

Դատապարտյալների մասնագիտական կրթությունը քրեակատարողական հիմնարկներում կազմակերպելիս քրեակատարողական հիմնարկի վարչակազմը իրականացնում է կրթություն չունեցող, ինչպես նաև մասնագիտություն չունեցող և իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնել ցանկացող դատապարտյալների հաշվառում, ստեղծում է ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ, վերահսկում է ուսումնական հաստատության անձնակազմի կողմից ներքին կանոնակարգի պահանջների պահպանումը, ապահովում է ուսումնական հաստատության անձնակազմի անվտանգությունը քրեակատարողական հիմնարկի տարածքում գտնվելու ընթացքում (Ներքին կանոնակարգի 82-րդ կետ):

Մովորող դատապարտյալը քննություններ հանձնելու կա-

պակցությամբ աշխատանքային պարտականությունների կատարումից ազատվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Ուսման ամբողջ դասընթացն անցած դատապարտյալները ստանում են համապատասխան կրթության փաստաթուղթ, որը պահվում է նրանց անձնական գործերում մինչև պատժի կրման ավարտը:

Դատապարտյալի կրթությունը չպետք է խոչընդոտի քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի պահանջների կատարումը: Ուսումնական հաստատության ղեկավարությունը քրեակատարողական հիմնարկի վարչակազմին սահմանված կարգով կարող է ներկայացնել միջնորդություն՝ դրականորեն բնութագրվող դատապարտյալներին խրախուսանքի ներկայացնելու համար:

Դատապարտյալների կրթությունը կազմակերպվում և իրականացվում է պետական կրթական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան: Դատապարտյալների միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է հեռակա, դրսեկության և հեռավար ձևերով՝ ՀՀ արդարադատության նախարարության սահմանած կարգով՝ համաձայնեցնելով ՀՀ ԿԳՄՄ նախարարության հետ: Միջնակարգ և մասնագիտական կրթությունը կազմակերպվում է նաև ստացիոնար եղանակով՝ քրեակատարողական հիմնարկի տարածքում:

Դրսեկության ձևով կարող են իրականացվել նաև դատապարտյալի հանրակրթությունը և մասնագիտական կրթությունը՝ բացառությամբ անչափահաս դատապարտյալների (Ներքին կանոնակարգի 81-րդ կետ):

Անչափահաս դատապարտյալի համար հիմնական կրթությունը պարտադիր է: Ուսումը շարունակելու, կրթություն ստանալու ցանկություն ունեցող դատապարտյալի համար քրեակատարողական հիմնարկի վարչակազմը և տեղական ինքնակառավար-

ման համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ: Դատապարտյալների կրթություն ստանալը խրախուսելի է և հաշվի է առնվում ՀՀ ՔԿՕ-ում սահմանված Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի կողմից նրանց վարքագիծը գնահատելիս:

3. Դատապարտյալների վերասոցիալականացման իրավական կարգավորումը

Դատապարտյալի վերասոցիալականացումը հոգեբանամանկավարժական, տնտեսական, թերապևտիկ, իրավաբանական, սոցիալական և կազմակերպական միջոցների երկարատև գործընթաց է, որն ուղղված է յուրաքանչյուր դատապարտյալի մեջ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ունակություններ, հմտություններ և պատրաստակամություն⁷⁰:

Վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման նպատակով աշխատանքը դատապարտյալի հետ համագործակցությամբ և նրա ակտիվ մասնակցությամբ իրականացվող գործունեություն է՝ ուղղված դատապարտյալի սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը (ՀՀ ՔԿՕ, հոդված 19, 1-ին մաս):

ՀՀ ՔԿՕ-ի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատապարտյալների վերասոցիալականացման հիմնական միջոցներն են՝ պատժի կատարման կարգն ապահովելը, վերականգնողական ծրագրեր իրականացնելը, անչափահասների հետ դաստիարակչական (մանկավարժական) աշխատանքներ իրականացնե-

⁷⁰ «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում» Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիա Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, ժողովածու, **Հ.Մ. Խաչիկյան** Պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները ՀՀ-ում, էջ 69, Երևան, 2016:

լը, դատապարտյալներին աշխատանքով ապահովելը, ընդհանուր, մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալը, մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը, արտաքին աշխարհի հետ կապն ապահովելը: Դատապարտյալների վերասոցիալականացման համար իրականացվում է դատապարտյալների կարիքների գնահատում, որի ընթացքում հաշվի է առնվում վերը նշված միջոցների կիրառման հնարավորությունը:

Ազատագրվման դատապարտվածի հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքի նպատակն է՝ մարդու, հասարակության, աշխատանքի, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումը, ինչպես նաև դատապարտյալի մշակութային և կրթական մակարդակի բարձրացումը, օրինապահ վարքագծի խթանումը, առողջ կենսակերպի ամրապնդումն ու զարգացումը: Դատապարտյալի և ընդհանրապես հասարակության համար նման օգտակար նպատակների նախատեսումը չի նշանակում, որ դրանք պատժի կրման ընթացքում ամբողջությամբ իրագործելի են: Բայց, այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, այն ունենում է դրական արդյունքներ: Վերասոցիալականացման հատուկ խնդիր կարելի է համարել քրեական ենթամշակույթի, ոչ ֆորմալ՝ հանցագործ աշխարհում ընդունված «օրենքների» մերկացումը, դատապարտյալների մղումն անկեղծորեն զղջալուն և մեղքն ընդունելուն:

Քրեակատարողական օրենսդրությունը պարունակում է երկու սկզբունքային դրույթ. առաջին՝ վերասոցիալականացման աշխատանքը դատապարտյալների հետ տարվում է հաշվի առնելով պատժի տեսակը, նրանց անձնային և վարքային փոփոխությունները, կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը պատժի կրման ընթացքում, դատա-

պարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժի ժամկետը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ: Երկրորդ՝ դատապարտյալների մասնակցությունը կրթական, մշակութային, մարզական և նման այլ միջոցառումներին հաշվի է առնվում նրանց վերասոցիալականացման աստիճանը գնահատելիս, ինչպես նաև նրանց նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելիս՝ ընդհուպ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում և այլն:

Դատապարտյալների ներգրավումը վերասոցիալականացման աշխատանքների մեջ կրում է կամավոր բնույթ, բայց քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգով կարող են նախատեսվել միջոցառումներ, որոնց դատապարտյալների մասնակցությունը պարտադիր է:

Վերասոցիալականացման գործընթացը կազմակերպվում է քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից: Այդ աշխատանքներում կարող են ներգրավվել նաև հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ազատազրկման դատապարտվածների հետ անհատական, խմբակային և զանգվածային ձևերով, հոգեբանամանկավարժական մեթոդներով տարվում է վերասոցիալականացման աշխատանք՝ մասնագիտական միջամտությամբ, այդ թվում՝ հոգեբանության, սոցիալական աշխատանքի, սոցիալական մանկավարժության գիտականորեն և փաստահեն ապացուցված մեթոդներով և ձևերով (ՀՀ ՔԿՕ, հոդված 20, 1-ին մաս):

Վերասոցիալականացման աշխատանքը տարբերակվում է՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի տեսակը, պատժի ժամկետը, պահելու պայմանները: Իրականացվում է ազատազրկման դատապարտվածների վերասոցիալականացմանը նպաստող բարոյական, մշակութային, լուսավորչական, հոգե-

բանական, իրավական, աշխատանքային, մարզական և այլ գործունեություն: Այլ գործունեությունն ասելով պետք է հասկանալ գաղափարաքաղաքական, գեղագիտական, տնտեսական, բնապահպանական և այլն: Նման ներգործության առավել արդյունավետ ձևերից է դատապարտյալների հետ տարվող անհատական աշխատանքը, որն իրականացվում է՝ հաշվի առնելով դատապարտյալի անձը, տարիքը, կրթությունը, մասնագիտությունը, անհատական այլ հատկանիշներ և հանցագործության հանգամանքները:

Դատապարտյալների վերասոցիալականացման խնդիրներն են՝ կրթական մակարդակի, մասնագիտական կրթության, արտադրական որակավորման բարձրացումը, առողջության պաշտպանությունը, քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգի և պայմանների պաշտպանությունը, իրավախախտների միջավայրին հատուկ սոցիալ-հոգեբանական բացասական երևույթների չեզոքացումը, դատապարտյալի անհրաժեշտ սոցիալական կապերի պահպանման և զարգացման հնարավորությունների ընդլայնումը, հասարակությունում ընդունված կյանքի համար համատեղելի պայմանները դատապարտյալի համար, սեփական անձը և շրջապատողներին հարգելու ունակության ձևավորում ազատագրվման բացասական երևույթները նվազեցնելու միջոցով և այլն⁷¹:

Դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացը կազմակերպելու համար քրեակատարողական հիմնարկներում ստեղծվում է նյութատեխնիկական բազա: Վերասոցիալա-

⁷¹ «Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները ՀՀ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում» Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիա Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Ժողովածու, **Հ.Մ. Խաչիկյան** Պատմի ենթարկված անձի վերասոցիալականացման հիմնախնդիրները ՀՀ-ում, էջ 70, Երևան, 2016:

կանացման աշխատանքի կազմակերպման և դատապարտյալի օգտակար զբաղվածության ապահովման համար պատիժ կատարող մարմնում և հիմնարկում նախատեսվում են համապատասխան պայմաններ, այդ թվում՝ լսարանային և կրթական տարածքներ, մարզասրահներ, գրադարաններ, աշխատանքային զբաղվածության գոտիներ և այլ հնարավորություններ (ՀՀ ՔԿՕ, հոդված 20, 3-րդ մաս):

ՀՀ ՔԿՕ-ի 21-րդ հոդվածում սահմանվում է, որ դատապարտյալի հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքները գնահատելու նպատակով ստեղծվում է վերասոցիալականացման գնահատման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի հոգեբանը կամ սոցիալական աշխատողը, ինչպես նաև օպերատիվ և անվտանգության բաժիններից մեկական ծառայող: Ըստ անհրաժեշտության՝ կարող են ներգրավվել նաև հոգևորական, բժիշկ և այլ մասնագետներ:

Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովը յուրաքանչյուր դատապարտյալի հետ տարվող վերասոցիալականացման աշխատանքների արդյունքները քննարկում է 3-6 ամիս պարբերականությամբ՝ կախված դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետից և ռիսկերի ու կարիքների գնահատման արդյունքներից: Հանձնաժողովն իր կարծիքն արտահայտում է դատապարտյալի՝ պատժի կատարման պայմանների կամ քրեակատարողական հիմնարկում անվտանգային գոտու տեսակի փոփոխության, խրախուսանքի կամ տույժի միջոցներ կիրառելու, պատժից ազատելու և վերասոցիալականացման գործընթացն ապահովող ցանկացած այլ գործառնությունների:

Դատապարտյալների վերասոցիալականացման գործում որոշակի դեր է պատկանում ազատագրված դատապարտված-

ների ինքնագործ միավորումներին: Ազատագրկվածների օգտակար նախաձեռնությունը զարգացնելու և խրախուսելու նպատակով քրեակատարողական հիմնարկներում կարող են ստեղծվել դատապարտյալների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, կրոնական և այլ նպատակային ուղղվածություն ունեցող ինքնագործ միավորումներ, որոնք գործում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հսկողությամբ: Այդ միավորումները կարող են համագործակցել համապատասխան նպատակային ուղղվածությամբ հասարակական կամ այլ կազմակերպությունների հետ: (ՀՀ ՔԿՕ, հոդված 23, 1-ին մաս):

Դատապարտյալի մասնակցությունն ինքնագործ միավորումների աշխատանքներին խրախուսվում է և հաշվի առնվում նրա վերասոցիալականացումը գնահատելիս: Ինքնագործ միավորումների անդամ դատապարտյալը լրացուցիչ արտոնություններից չի օգտվում և չի ազատվում դատապարտյալի համար քրեակատարողական հիմնարկի օրվա կարգացուցակով նախատեսված՝ պարտադիր համարվող միջոցառումներից:

Հարցերի շրջանակը, որ իրավասու են լուծել ինքնագործ միավորումները, բավական ընդարձակ է, բայց նախատեսվում են որոշակի սահմանափակումներ, բացառելու համար ազատագրկման վայրերում անկառավարելի իրադրությունների զարգացումը:

Դատապարտյալների ինքնագործ միավորումների հիմնական խնդիրներն են՝ զարգացնել դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները և օգտակար նախաձեռնությունը, դրական ազդեցություն ունենալ դատապարտյալի վերասոցիալականացման գործում, մասնակցել դատապարտյալի աշխատանքը, կենցաղը և հանգիստը կազմակերպելուն, համագործակցել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ կարգապահության հաստատման ու դատապարտ-

յալների միջև առողջ հարաբերությունների ձևավորման գործում, սոցիալական աջակցություն ցուցաբերել դատապարտյալին և նրա ընտանիքին: Դատապարտյալների ինքնագործ միավորումները կարող են հետապնդել նաև պատժի նպատակներին, կատարման կարգին և պայմաններին չհակասող այլ խնդիրներ (ՀՀ ՔԿՕ, 23-րդ հոդված, 2-րդ մաս):

Դատապարտյալների ինքնագործ միավորման կազմավորման հիմքը նրանց կողմից քրեակատարողական հիմնարկի պետին ներկայացված դիմումն է, որում նշվում են միավորման տեսակը, անդամների թիվը, գործունեության նպատակները և խնդիրները: Քրեակատարողական հիմնարկի պետը դիմումն ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ուսումնասիրում է դրանում նշված տեղեկատվության իրական նպատակները և ընդունում որոշում ինքնագործ միավորման կազմավորումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին (Ներքին կանոնակարգի 202,203 կետեր):

Դատապարտյալների ինքնագործ միավորում կազմավորելու մասին դիմումը կարող է մերժվել, կամ ստեղծված ինքնագործ միավորումը կարող է ապակազմավորվել, եթե այն կրում է ձևական բնույթ, հակասում է պատիժը կատարելու նպատակներին, կարգին և պայմաններին, հետապնդում է շահադիտական կամ հակահրավական գործունեություն ծավալելու նպատակ: Տվյալ դեպքում հաշվի են առնվում միավորման մեջ ընդգրկվող կամ ընդգրկված դատապարտյալների անձը, պատիժը կրելու ընթացքում նրանց ցուցաբերած վարքագիծը և անձը բնութագրող այլ հանգամանքներ (Ներքին կանոնակարգի 204-րդ կետ):

Դատապարտյալների ինքնագործ միավորման անունից հանդես է գալիս միավորման ղեկավարը կամ ղեկավար խումբը: Այլ միությունների և կազմակերպությունների հետ կապն ու համագործակցությունն իրականացվում են նրանց միջոցով: Դատա-

պարտյալների ինքնագործ միավորումն իր գործունեությունն իրականացնում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գիտությամբ և սերտ համագործակցությամբ: Արտաքին աշխարհի հետ կապն ապահովում է հիմնարկի վարչակազմը:

Դատապարտյալների ինքնագործ միավորումը համապատասխան միջոցառում կազմակերպելու համար նախօրոք դիմում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին, որն ստեղծում է անհրաժեշտ պայմաններ այն բնականոն անցկացնելու համար: Անցկացվող միջոցառումը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե այն դուրս է գալիս որոշված նպատակների սահմաններից ու վտանգում է դատապարտյալների և քրեակատարողական հիմնարկում գտնվող այլ անձանց անվտանգությունը:

ԳԼՈՒԽ 11

ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Պատժից ազատելու հասկացությունը և տեսակները

Անվիճելի է, որ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձը ենթակա է դատապարտման ու պատժի: Սակայն դեռ հնագույն ժամանակներից բոլոր պետությունների օրենսդրությունները նախատեսել են պատժի կատարման (կամ հետագա կրման) անհնարինությունը հիմնավորող հանգամանքներ, որոնց առկայության դեպքում դատապարտված անձն ազատվում է կամ կարող է ազատվել պատժից: Հանցանք կատարած և դատապարտված անձին պատժից ազատելը բոլորովին չի նշանակում, թե կատարված արարքը կորցրել է հանցագործության բնորոշ հատկանիշները, իսկ այն կատարող անձն այլևս վտանգավոր չէ հասարակության համար: Ուղղակի հաճախ առօրյա կյանքում մեղադրական դատավճիռ կայացնելուց մինչև դրա կատարումը կամ դատապարտյալի կողմից պատժի մի մասը կրելուց հետո ակնհայտ է դառնում, որ պատժի նպատակներն արդեն իսկ իրականացել են, և նշանակված պատժի կատարումը (կամ հետագա կրումը) աննպատակահարմար է, կամ առկա են պատժի կատարումն արգելակող կամ դժվարացնող այլ հանգամանքներ (օրինակ՝ դատապարտյալի հիվանդությունը): Նման դեպքերում դատապարտյալը, ում նկատմամբ մեղադրական դատավճիռ է կայացվել, կա՛մ ամբողջությամբ ազատվում է պատժի կրումից, կա՛մ եթե պատժի կրումն արդեն սկսվել է, դրա հետագա կրումից: Փաստորեն պատժից ազատելու ինստիտուտի սոցիալական նշանակությունը

նը այն է, որ թույլ է տալիս տնտեսել քրեաիրավական հարկադրանքը, խթանել դատապարտյալի վերասոցիալականացումը, բացառել պատժի կատարումը այն դեպքերում, երբ պատժի նպատակներն անիրագործելի են:

Պատժից ազատելը դատարանի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձի՝ քրեական պատժի ամբողջությամբ կամ մասամբ կրումը բացառելն է:

Ինչպես հայտնի է, պատժից ազատելուն, որպես կանոն, նախորդում է քրեական պատասխանատվությունից ազատելը: Նման պարագայում առաջինը բնականաբար ենթադրում է երկրորդը: Այս եզրահանգումը հիմնավորվում է երկու կարևոր և անվիճելի փաստարկներով: Առաջին՝ քրեական պատիժը քրեական պատասխանատվության իրականացման կարևորագույն ձևերից մեկն է, որի ուժով վերջինս կարող է կատարել սոցիալ-իրավական իր հիմնական գործառույթը հանցագործի նկատմամբ նաև առանց պատիժ նշանակելու: Երկրորդ՝ եթե որոշակի հիմքերով հանցագործը չի ենթարկվել քրեական պատասխանատվության կամ ազատվել է դրանից, ապա նրա նկատմամբ պատիժ նշանակելն անմտություն է և անթույլատրելի, քանի որ պատիժը կարող է հետևել միայն դրան նախորդած քրեական պատասխանատվությանը⁷²: Բայց ճիշտ չէր լինի վերը նշված քրեաիրավական ինստիտուտները նույնացնել: Թե՛ քրեական պատասխանատվությունը, թե՛ քրեական պատիժը օժտված են բացառիկ անհատականությամբ ու անկրկնելիությամբ և համեմատաբար ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտներ են: Նման եզրահանգումն ամրապնդվում է նաև նրանով, որ քրեաիրավական պատժից ազատելը միաժամանակ չի ենթադրում քրեական պատասխա-

⁷² См. и Уголовное право. Общая часть. Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамова. М., 1998. Ё2 435

նատվությունից ազատել: Քրեական պատասխանատվությունից, որպես կանոն, ազատվում են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարելու դեպքում, իսկ քրեական պատժից հնարավոր է ազատվել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու դեպքում: Քրեական իրավունքի նշված ինստիտուտները սահմանազատելիս պետք է նկատի ունենալ նաև դրանց դատավարական բնույթը. քրեական պատժից ազատելը, ի տարբերություն քրեական պատասխանատվությունից ազատելու, իրականացվում է մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո և, հետևաբար, միայն դատարանի կողմից, մինչդեռ քրեական պատասխանատվությունից ազատելը կարող են իրականացնել տարբեր սուբյեկտներ (մինչդատական վարույթում), ինչպես նաև դատարանը:

Պատժից ազատելու նպատակահարմարության հարցը քննարկելիս հաշվի են առնվում ոչ միայն պատժից ազատելու համապատասխան տեսակի կիրառման հիմքերը, պայմանները և կարգը նախատեսող նորմը, այլև քրեական օրենսդրության ընդհանուր խնդիրները (ՀՀ քր. օր., 2-րդ հոդված) և պատժի նպատակները (ՀՀ քր. օր., 55-րդ հոդված): Պատժից ազատելիս փոփոխվում են ոչ միայն մեղադրական դատավճիռը, այլև դրանով կարգավորվող իրավահարաբերությունները:

Պատժից ազատելը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով՝ լրիվ ազատում (մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելը), որոշակի պայմանով (պայմանական վաղաժամկետ) ազատում, նախապես նշանակված պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմով: Քննարկվող ինստիտուտն ընդգրկում է բոլոր տեսակի պատիժներից ազատումը:

Պատժից ազատելու տեսակից կախված՝ կարող է տարբերվել ազատվող սուբյեկտների շրջանակը: Այս հատկանիշի նկատմամբ օրենքը մի դեպքում որևէ սահմանափակում չի դնում.

պատժից կարող է ազատվել ցանկացած դատապարտյալ՝ ծանր հիվանդության հետևանքով (ՀՀ քր. օր., հոդված 87-րդ), մյուս դեպքում այն կարող է տարածվել միայն դատապարտյալների որոշակի շրջանակի վրա՝ հղի կնոջ կամ խնամքին մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձի (ՀՀ քր. օր., հոդված 86-րդ), զին-ծառայողների (ՀՀ քր. օր., հոդված 87-րդ, 8-րդ մաս) նկատմամբ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև պատժից ազատելու քրեաիրավական ինստիտուտի բարդ նորմատիվ հիմքերը: ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերը նախատեսում են պատժի կատարման կամ դրա հետագա կրման անհնարինությունը հիմնավորող հանգամանքների բավականին զարգացած համակարգ, որի ուժով հնարավոր է դառնում քրեական պատժից կամ դրա հետագա կրումից ազատելը: Պատժից ազատելու հիմքերը, պայմանները, էությունն ու նշանակությունը սահմանում է քրեական օրենսդրությունը (ՀՀ քր. օր., 13-րդ գլուխ, 84-90-րդ հոդվածներ), իսկ ազատելու կարգը՝ քրեակատարողական օրենսդրությունը (ՀՀ ՔԿՕ, 25-րդ գլուխ, 130-139-րդ հոդվածներ):

Օրենքում նշված հիմքերի առկայության փաստն անմիջապես չի հանգեցնում դատապարտյալին պատժից պարտադիր ազատելուն: Բացառություն է միայն ՀՀ քր. օր. հոդված 90-րդը. եթե մեղադրական դատավճիռն ի կատար չի անվել դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում:

Քրեական պատժից ազատելու տեսակներն իրենց սոցիալական ուղղվածությամբ ունեն օրենսդրական տարաբնույթ ձևակերպումներ և իրականացման համար պահանջում են տարբեր հիմքեր ու պայմաններ: Քրեական պատժից ազատելու հիմքերի դասակարգման վերաբերյալ մասնագետները միակարծիք չեն: Դասակարգման տեսանկյունից յուրաքանչյուրն էլ յուրովի հետաքրքրություն է ներկայացնում: Առաջարկվում է, օրինակ,

պատժից ազատելու բոլոր տեսակները բաժանել ըստ փուլերի, որոնց ընթացքում դատարանը ազատման մասին որոշում է կայացնում՝ ըստ ազատման պայմանների առկայության կամ բացակայության, ըստ ազատման բովանդակության և հիմքերի, ըստ ընթացակարգի և այլն: Կարծում ենք՝ տեսական և գործնական նշանակություն կարող է ունենալ միայն այն դասակարգումը, որը հնարավորություն է տալիս առավելագույնս արդյունավետ օգտագործել այս ինստիտուտը: Տեսականորեն և գործնականորեն նպատակահարմար է պատժից ազատելու՝ օրենսդրությամբ հայտնի բոլոր տեսակները բաժանել երկու խմբի՝ ոչ պայմանական և պայմանական, որոնց շրջանակներում կարող է նախատեսվել նաև ավելի նեղ դասակարգում: Նման դասակարգումը ենթադրում է ոչ միայն պատժից ազատելու այս կամ այն տեսակի բովանդակության, ազատման հատուկ ընթացակարգի, այլև քրեաիրավական և քրեակատարողական հետևանքների տարբերություն:

Քրեական իրավունքի տեսանկյունից դասակարգման առաջին խումբն ընդգրկում է ոչ պայմանական ազատման հետևյալ տեսակները՝ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը կամ պատժից ազատելը (ՀՀ քր. օր., հոդված 88-րդ), կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալ զինծառայողի պատժի կրումից ազատելը այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի (ՀՀ քր. օր., հոդված 87-րդ, 8-րդ մաս), պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քր. օր., հոդված 90-րդ), պատժից ազատելը դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը և բացառիկ վերանայման արդյունքով դատա-

վճռի բեկանումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելով⁷³: Պատժից ազատելու այս տեսակների դեպքում անձի նկատմամբ որևէ պայման չի ներկայացվում, և նա չի կարող կրկին ենթարկվել այն պատժին, որից ազատվել է նույնիսկ հետագա ժամանակահատվածում նրա բացահայտ բացասական (բայց ոչ հանցավոր) վարքագծի դեպքում:

Դասակարգման երկրորդ խումբն ընդգրկում է պայմանական ազատման բնույթ ունեցող հետևյալ տեսակները՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը (ՀՀ քր. օր., հոդված 85-րդ), պատժից ազատելը կամ պատիժը հետաձգելը հիվանդության հետևանքով (ՀՀ քր. օր., հոդված 87-րդ), պատժից ազատելը արտակարգ հանգամանքների հետևանքով (ՀՀ քր. օր., հոդված 89-րդ) և հղի կնոջ կամ խնամքին մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը (ՀՀ քր. օր., հոդված 86-րդ): Դասակարգման այս խմբի մեջ է ընդգրկված նաև պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ), որը նախկին քրեական օրենսգրքում, մեր կարծիքով, անհիմն տեղակայված էր պատժի նշանակմանը նվիրված գլխում: Պատժից ազատելու այս տեսակների դեպքում պատժից ազատված դատապարտյալի առջև օրենքով նախատեսված կարգով որոշակի պայմաններ է դրվում, որ վերջինս պարտավոր է պահպանել այսպես կոչված փորձաշրջանի ընթացքում: Այդ պայմանները չկատարելու դեպքում դատապարտյալը պարտավոր է ամբողջությամբ կրել պատիժը կամ դրա չկրած մասը:

Օրենքով կարող են նախատեսվել պատժից ազատելու այլ

⁷³ Հարկ ենք համարում նշել, որ պատժից ազատելու այս՝ ոչ պայմանական տեսակները՝ պատժից ազատելը դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը և բացառիկ վերանայման արդյունքով դատավճռի բեկանումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելով, նախատեսված են միայն քրեակատարողական օրենսդրությամբ (ՀՀ ՔԿՕ, 130-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին և 2-րդ կետեր):

հիմքեր: Դրանց թվին կարելի է դասել, օրինակ՝ արարքի հանցավորությունը բացառող կամ պատիժը մեղմացնող օրենքի ընդունումը, դատավճռի փոփոխումը՝ պատժի սահմանմամբ պատժի կրածի չափով և այլն: Պատժից ազատելու այս տեսակներն իրավական ինստիտուտներ չեն և կարող են կիրառվել ըստ իրադրության:

Իրավաբանական գրականության մեջ պատժից ազատելու քննարկվող համակարգում երբեմն ընդգրկում են նաև ներումը և համաներումը⁷⁴: Նման դիրքորոշումը հիմնավորված չէ: Ներումն ու համաներումը քրեական պատասխանատվությունից և քրեական պատժից ազատելու յուրօրինակ տեսակներ են և ենթակա են առանձին վերլուծության: Այս ինստիտուտների իրավաբանական հատուկ բնույթով է պայմանավորված քրեական օրենսգրքի առանձին գլխում դրանց նախատեսված լինելը (ՀՀ քր. օր., գլուխ 14-րդ):

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելը

Քրեական օրենսգրքի պատժից ազատելու գլխում, ի տարբերություն հին քրեական օրենսգրքի, իրավացիորեն կանոնակարգում է ստացել նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը: ՀՀ քր. օր. 84-րդ հոդվածում սահմանվել են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքը և իրավական բնույթը: Այսպես. եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացու-

⁷⁴ Տե՛ս, օրինակ, Уголовное право. Общая часть. Под ред. Б.В. Здравомыслова, Ю.А. Красикова. М., 1994, էջ 488, Уголовное право. Общая часть. Под ред. Н.Ф. Кузнецовой, Ю.М. Ткачевского. М., 1993 էջ 292:

մը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Իրավաբանական գրականության մեջ պատիժը պայմանականորեն չկիրառելը դիտվում է որպես ինքնուրույն ինստիտուտ, և երբեմն որոշ իրավաբան գիտնականներ այն կապում են պատժի նշանակման հետ: Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ նորում այս ինստիտուտը կարգավորող նորմը տեղ է զբաղեցրել պատժից ազատելու հարցերը սահմանող նորմերի շարքում: Պատիժը պայմանականորեն չկիրառելն իր իրավական բնույթով պետք է դիտել որպես պատժից ազատելու ինքնուրույն տեսակ, քանզի այն իր հիմնական հատկանիշներով (կիրառման հիմքով, փորձաշրջանի առկայությամբ, դատապարտյալի վրա դրվող պարտականությունների բնույթով, փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի գնահատումով) գրեթե լիովին համապատասխանում է քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը կրելուց ազատելու մյուս տեսակների բովանդակությանը: Դեռ ավելին, դատապարտյալը պատժից պայմանական վաղաժամկետ ազատվում է պատժի մի մասը կրելուց հետո, իսկ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ազատվում է պատժի կրումից ամբողջովին:

ՀՀ դատական պրակտիկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժի կատարումը հետաձգելու դատական ակտերի որոշակի թիվը վկայում է պատիժ նշանակելիս մարդասիրության դրսևորման և պատիժը փաստացի կրելու աննպատակահարմարության գաղափարի նկատմամբ ճիշտ մոտեցման մասին:

Քրեական օրենսգրքում օրենսդիրը հստակեցրել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով պատժից կարող է ազատվել նաև այն անձը, ում նկատմամբ նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ կիրառվել է համա-

ձայնեցման կամ համագործակցության վարույթ (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 2-րդ): Իսկ հանցագործությունների համակցության առկայության դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը որոշվում է համակցությամբ վերջնական պատիժը նշանակելուց հետո (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 3-րդ):

Այս ինստիտուտը կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել: Այս դրույթից հետևում է, որ դատարանը հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցագործության համար (ծանր կամ առանձնապես ծանր), որպես կանոն, պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշում չպետք է կայացնի, չնայած օրենքն այս կապակցությամբ հատուկ սահմանափակում չի մտցրել:

Դատարանը կարող է պատիժը պայմանականորեն չկիրառել նաև հանցագործության այնպիսի մասնակիցների նկատմամբ, ովքեր ծանր հանցագործություն մեջ երկրորդական դեր են ունեցել և գործի փաստացի հանգամանքներն ու հանցավորի անձին վերաբերող տվյալները վկայում են այդ անձի առանց պատժի կրման վերաստցիալականացման հնարավորության մասին:

Պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել միայն այն դեպքում, երբ հանցավորի նկատմամբ որպես հիմնական պատիժ նշանակվում է ՀՀ քր. օր. հոդված 84-րդի առաջին մասում թվարկված պատժատեսակներից մեկը: Միևնույն ժամանակ օրենքը թույլ է տալիս պատիժը պայմանականորեն չկիրառելիս նշանակել նաև լրացուցիչ պատիժ, ինչպես նաև անվտանգության միջոց,

որոնք դատապարտյալը պետք է փաստացի կրի:

Դատարանը, գործնականորեն պատիժը պայմանականորեն չկիրառելիս ելնելով պատժի նշանակման սկզբունքներից և ՀՀ քր. օր. հոդված 84-րդի պահանջներից, հանցագործության համար նշանակում է կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ՝ բնականաբար այն համոզմունքով, որ դատապարտյալը կարող է վերասոցիալականացվել առանց նշանակված պատիժը փաստացի կրելու: Եթե դատարանը որոշում է պատիժը պայմանականորեն չկիրառել, ապա նման որոշման կայացումը պետք է պատճառաբանվի դատավճռում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ միաժամանակ դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, 5-րդ մաս), որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի (Պրոբացիայի ծառայության) հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված պարտականությունները: Փորձաշրջանն այն ժամանակահատվածն է, երբ դատապարտյալին հնարավորություն է տրվում վերասոցիալականացվել՝ առանց պատիժը փաստացի կրելու: Փորձաշրջանի նպատակային նշանակությունն այն է, որ այդ ընթացքում դատապարտյալի նկատմամբ կիրառվում են որոշակի սահմանափակումներ, դատարանը համոզվում է իր որոշման ճշմարտացիությանը, դատապարտյալն իր վարքագծով ավելի օրինապահ է դառնում՝ գիտակցելով փորձաշրջանի ընթացքում նոր հանցանք կատարելու իրավական հետևանքները: Փորձաշրջանի ժամկետը որոշվում է դատարանի համոզմամբ և գնահատելով՝ անհրժեշտ ժամանակահատվածը դատապարտյալի առանց պատիժ կրելու վերասոցիալականացման կամ պատժի մյուս նպատակների իրականացման համար:

Փորձաշրջանի ընթացքում դատարանի կողմից նշանակվող պարտականություններն են՝

1) կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելը, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը,

2) առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության ՀՀ տարածքը չլքելը,

3) բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը (քրեական նախկին օրենսգրքով սահմանվում էր բնակության վայրը չփոխելու պահանջ, ինչը բավականին խնդրահարույց էր),

4) ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը,

5) հանրօգուտ աշխատանքներում ներգրավվելը,

6) սեռավարակից կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունից բուժման կուրս անցնելը,

7) տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը,

8) որոշակի վայրեր այցելելու արգելքը,

9) հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:

Քրեական օրենքը սահմանում է, որ դատարանի կողմից դատապարտյալի համար պարտականություններ սահմանելը պարտադիր բնույթ է կրում: Օրենսդիրը սահմանել է, որ դատարանը դատապարտյալի համար սահմանում է նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրա-

վասու մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ այլ պարտականություններ, որոնք կարող են նպաստել նրա վերասոցիալականացմանը:

Քրեական օրենսգրքում հատուկ կարգավորում է սահմանված զինծառայողների համար: Օրենսդիրը նախատեսել է, որ զինծառայողի վրա կարող են դրվել այնպիսի պարտականություններ, որոնք չեն խոչընդոտում զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումում իր ծառայողական պարտականությունների կատարումը (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 7-րդ):

ՀՀ քր. օր. 84-րդ հոդվածի հինգերորդ մասի 4-րդ և 6-րդ կետերի բովանդակությունից բխում է, որ պատիժը պայմանականորեն կարող է չկիրառվել նաև ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից կախվածություն ունեցող, սեռավարակակիր կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով դատապարտյալների նկատմամբ, որոնց վրա դատարանը կարող է դնել համապատասխան պարտականություններ:

ՀՀ քր. օր. հոդված 84-րդի, 9-ից 16-րդ մասերը նախատեսում են այն հնարավոր տարբերակները, երբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատապարտյալի համար առաջանում են բացասական հետևանքներ:

Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում խուսափում է դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակած անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա համակողմանի գնահատման ենթարկելով խուսափելու պատճառները՝ դատարանը վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրական-

նացնող իրավասու մարմնի կամ դատապարտյալի միջնորդությամբ մինչև 1 տարի ժամկետով երկարաձգում է անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանի ժամկետը, այդ թվում՝ առավելագույն՝ 5 տարի ժամկետով նշանակված փորձաշրջանի ժամկետը (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 9-րդ):

Եթե փորձաշրջանի ժամկետը երկարաձգելուց հետո անձը շարունակում է խուսափել դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակած անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 10-րդ):

Օրենսդիրը հստակեցրել է, որ եթե հանցագործությունների համակցությամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, որը պայմանականորեն չի կիրառվել, և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ, ապա դրա կատարումից խուսափելու դեպքում դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացնում է (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 11-րդ):

Օրենսդրի կողմից առանձին կանոնակարգման են ենթարկվել փորձաշրջանի ընթացքում հանցանք կատարելու իրավական հետևանքները: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է նոր դիտավորյալ հանցանք (ցանկացած ծանրության), ապա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը վերացվում է: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է անզույժ հանցանք, ապա պատի-

Ժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծում է դատարանը: Եթե դատարանը գործի հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքով որոշում է չվերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը և նոր կատարված հանցանքի համար նշանակում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, ապա այդ պատիժը պայմանականորեն չի կիրառվում, և փորձաշրջանի ժամկետը երկարաձգվում է մինչև 5 տարի ժամկետով: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է մեկից ավելի անգգույշ հանցանք, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացվում է (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մասեր 12, 13):

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու կարգով: Հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանը կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ:

Եթե դատարանը նպատակահարմար չի համարում պատիժը պայմանականորեն չկիրառելը, ապա անցած փորձաշրջանի 2 օրը հաշվվում է կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման 1 օրվա դիմաց (ՀՀ քր. օր., հոդված 84-րդ, մաս 14-րդ): Եթե դատարանը որոշում է վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը, ապա դատապարտյալը պետք է կրի այն պատիժը, որը նշանակվել է դատարանի կողմից:

Փորձաշրջանը հաջողությամբ ավարտելու իրավական հետևանքները քրեական օրենսդրությունը չի կարգավորում, և

մեր կարծիքով դա օրենսդրության բացն է: Երբ դատարանը պատիժը պայմանականորեն չի կիրառել, և երբ փորձաշրջանն անցնելուց հետո դատարան միջնորդություն չի ներկայացրել պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման կապակցությամբ, ապա դատարանը պետք է համապատասխան վերաբերմունք դրսևորի և որոշում կայացնի պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշումը վերջնականապես վերացնելու մասին: Այսպես՝ օրինակ, դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ Պրոբացիայի ծառայության միջնորդությամբ և ներկայացմամբ դատարանը կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատապարտյալի դատվածությունը հանելու մասին:

3. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

Քրեական պատիժների կատարումով իրականացվում են պատժի՝ օրենքով նախատեսված նպատակները, այդ թվում՝ դատապարտյալի վերաստցիալականացումը: Եթե դատապարտյալի վերաստցիալականացումը որպես պատժի նպատակ իրականացվել է մինչև պատժի ժամկետի ավարտը, ապա պատժի հետագա կրումը դառնում է աննպատակահարմար: Այդ պատճառով, մարդասիրության սկզբունքին համապատասխան, օրենքը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել այն անձանց, որոնց նկատմամբ նշանակված պատժի մնացած ժամանակահատվածը կրելը որևէ դեր չի կարող կատարել պատժի նպատակների իրականացման առումով: Այս պարագայում պատժի կրումից վաղաժամկետ ազատելը մի կողմից դատապարտյալի համար խրախուսանքի ձև է, մյուս կողմից՝ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կողմից օրինակելի վարքագծի դրսևորման խթանիչ միջոց: Պայ-

մանական վաղաժամկետ ազատման հիմքերը և պայմանները նախատեսված են ՀՀ քր. օր., հոդված 85-րդում:

Պայմանական վաղաժամկետ ազատում հնարավոր է ազատագրվման և կարգապահական գումարտակում պահելը պատժատեսակների կրումից (մյուս պատժատեսակներից պայմանական վաղաժամկետ ազատումը պարզապես աննպատակահարմար է):

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերջնական որոշումը կայացնում է դատարանը պատժի նշանակված ժամկետի որոշակի մասը դատապարտյալի կողմից կրելուց հետո միայն: Վերջինս էլ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման պարտադիր պայմաններից է: ՀՀ քր. օր.-ը նախատեսում է ազատագրվման նշանակված ժամկետի որոշակի մասի փաստացի կրումից կախված տարբերակում:

Օրենսգրքում արվում է նաև վերապահում, որ ցանկացած պարագայում ազատագրվման կամ կարգապահական գումարտակում պահելու պատժի փաստացի կրելու ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել: Քրեական օրենսգրքի այս դրույթն արդարացի է, քանի որ այս ժամկետը (որպես նվազագույն) անհրաժեշտ է պատիժը կատարող մարմնին՝ համոզվելու համար դատապարտյալի իրական, այլ ոչ թե կեղծ վերառոցիալականացման մասին:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմք հանդիսացող պատժի որոշակի ժամանակահատվածի պարտադիր կրման պայմանը օրենսդիրը կապում է ոչ թե հանցանքի ծանրության, այլ դատարանի վերջնական ակտով սահմանված պատժի ժամկետի հետ: Մասնավորապես, ՀՀ քր. օր. 85-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատապարտյալը կարող է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե կրել է՝

1) հինգ տարին չգերազանցող ժամկետով ազատագրվման

ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) տասնհինգ տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երկրորդը,

3) երեսուն տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,

4) նոր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը՝ նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու և այն վերացնելու դեպքում:

Պատժի փաստացի կրելու ժամկետ է համարվում նաև մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը:

ՀՀ քրեական օրենսդրությունը փաստորեն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն է տալիս դասակարգման ցանկացած խմբի պատկանող դատապարտյալի և չի նախատեսում սահմանափակումներ պատժից ազատելու այս տեսակի համար:

ՀՀ նախկին (ՀՀ 1961թ. քրեական օրենսգիրք) քրեական օրենսդրությունը նախատեսում էր բավական սահմանափակումներ պատժից ազատելու այս տեսակի համար: Այսպես, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում չէր թույլատրվում կիրառել առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստների՝ նկատմամբ, ինչպես նաև մի շարք ծանր հանցագործությունների՝ բանդիտիզմի, զանգվածային անկարգությունների, դիտավորյալ սպանության, ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորությանը ծանր մարմնական վնասվածք հասցնելու, առանձնապես չարամիտ խուլիգանության և այլնի դեպքում: Պատժից ազատելու այս տեսակը արգելվում էր կիրառել նաև այն անձի նկատ-

մամբ, ում մահապատիժը ներման կամ համաներման կարգով փոխարինվել էր ազատազրկմամբ, նախկինում դիտավորյալ հանցագործությունների համար երկու և ավելի անգամ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ, եթե նախորդ հանցագործությունների համար դատվածությունը չի հանվել կամ մարվել օրենքով սահմանված կարգով, նրանց նկատմամբ, ովքեր նախկինում ազատազրկման վայրերից պայմանական վաղաժամկետ ազատվել էին դատարանի կողմից նշանակված պատժաչափը լրիվ չկրած և պատժի չկրած մասի ընթացքում կատարել են դիտավորյալ հանցանք (ՀՀ 1961թ. քր. օր. հոդված 49-րդ):

ՀՀ քրեական օրենսդրության նվաճումներից է պայմանական վաղաժամկետ ազատման հնարավորություն ունեցող դատապարտյալների դասակարգման այս կամ այն խմբի սահմանափակումներից հրաժարվելը, որն էականորեն ընդարձակել է պատժից ազատելու այս տեսակի կիրառման սահմանները՝ տարածելով այն նույնիսկ ցմահ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ:

ՀՀ քր. օր.-ը որոշակի կարգ է սահմանում ցմահ ազատազրկման դատապարտվածներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար: Ցմահ ազատազրկման նշանակումը վկայում է ինչպես կատարված արարքի, այնպես էլ այն կատարող անձի հասարակական մեծ վտանգավորության մասին: Ուստի օրենսդիրը սահմանում է, որ նման անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին: Եթե ցմահ ազատազրկում կրող անձի կողմից կատարվել է այնպիսի նոր հանցանք, որի համար նշանակվում է ազատազրկում կամ ցմահ ազատազրկում, ապա վերը նշված ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև նոր պատժի ժամկետը լրանալը, իսկ ցմահ ազատա-

գրկում նշանակելու դեպքում՝ մինչև 20 տարին լրանալը:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելու դեպքում դատարանը սահմանում է փորձաշրջան՝ պատժի չկրած մասի չափով, իսկ ցմահ ազատազրկման դատապարտվածի համար դատարանը սահմանում է փորձաշրջան տասը տարի ժամկետով, որի ընթացքում անձը գտնվում է իրավասու մարմնի վերահսկողության ներքո:

Կիրառելով պայմանական վաղաժամկետ ազատում՝ դատարանն անձի վրա կարող է դնել պարտականություններ, որոնք թվարկված են ՀՀ քր. օր. 84-րդ հոդվածի հինգերորդ մասով, այսինքն՝ նույն պարտականությունները, ինչ որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս:

Դատարանը կարող է նախատեսել այդ պարտականություններից մեկը կամ մի քանիսը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ այլ պարտականություններ, որոնք կարող են նպաստել նրա վերասոցիալականացմանը:

Դատապարտյալ զինծառայողի վրա կարող են դրվել այնպիսի պարտականություններ, որոնք չեն խոչընդոտում զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումում իր ծառայողական պարտականությունների կատարումը:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձի վարքագծի, այդ թվում նաև դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ Պրոբացիայի պետական ծառայությունը:

Պատժից ազատելու այս տեսակը համարվում է պայմանական, քանի որ դատապարտյալի հետագա ճակատագիրը կախված է պատժից վաղաժամկետ ազատվելուց հետո նրա վարքա-

գծից: Եթե պատժի չկրած մասի ընթացքում դատապարտյալը խուսափում է պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ վերահսկողությունից, ապա դատարանը դատապարտյալի վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու մասին: Քրեական օրենսգրքի այս դրույթից բխում է, որ պայմանական վաղաժամկետ ազատված անձի կողմից կատարված ոչ բոլոր իրավախախտումները կարող են հիմք հանդիսանալ նրա՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու համար: Ինչպես նշվեց, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու հիմք կարող է լինել դատապարտյալի՝ դատարանի կողմից իր վրա դրված պարտականություններից խուսափելը: Նման պարտականություններ դատարանի կողմից կարող են դրվել պայմանական վաղաժամկետ ազատվողի վրա, կամ դրանք կարող են փոփոխվել պատժի չկրած մասի ընթացքում: Խախտումներ որպես այդպիսիք կարելի է համարել՝ բազմակի, առանձնապես կոպտությամբ աչքի ընկնող, պայմանական վաղաժամկետ ազատվածի վարքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի նախազգուշացումից հետո չընդհատվող արարքները և այլն:

Դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ ազատման վերացման դեպքում դատապարտյալի պատժի չկրած մասը ենթակա է կատարման:

ՀՀ քր. օր. 85-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, կամ պարզվում է, որ նա հանցանք է կատարել պատիժը կրելու ընթացքում, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ

որոշումը և պատիժ է նշանակում դատավճիռների համակցության կանոններով:

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ անձը մինչև դատապարտվելը կատարել է այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը և պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության կանոններով: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկն սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից պատժի կրումը վերսկսելու պահից:

Քրեական օրենսգիրքը հստակ ամրագրում է, որ ցանկացած նոր հանցանքի կատարման պարագայում դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը: Քրեական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցանք (ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ) կատարելու դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու՝ պարտադիր կրման ենթակա ժամկետի ընթացքն ընդհատվում է: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկը սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից հիմնական պատժի կրումն սկսելու պահից:

Այլ պատժատեսակն ազատազրկմամբ փոխարինելիս դատապարտյալը չի կարող պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում դատապարտյալը չի ազատվում իր նկատմամբ նշանակված լրացուցիչ պատժից:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կարգը նախատեսված է ՀՀ ՔԿՕ-ով, որի 132-րդ հոդվածը սահմանում է՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել ՀՀ քր. օր.-ով սահմանված պայմանների առկայության դեպքում: Այսպես՝ ազատագրվման ձևով պատիժ կրող անձը օրենքով սահմանված պատժի նվազագույն ժամկետը կրելուց հետո դատարանի կողմից կարող է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը ստորև նախատեսված հանգամանքների վերաբերյալ քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության գեկույցների քննարկման արդյունքում կայացնում է պատժից պայմանական ազատման որոշում: ՀՀ քր. օր. հոդված 85-րդի 1-ին մասը նախատեսում է հետևյալը՝ եթե դատապարտյալը պատժի կրման ընթացքում դրսևորել է պատշաճ վարքագիծ, և դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ տույժի առկայությունը,

2) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն,

3) պատժի կրման ընթացքում աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, և չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով,

4) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հան-

գամանքները.

1) դատապարտյալի տարիքը պատիժը կրելու, ինչպես նաև հանցանքը կատարելու պահին,

2) հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

3) ռեցիդիվի առկայությունը,

4) կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,

5) հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնած լինելը,

6) քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,

7) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները,

8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին,

9) ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը,

10) սոցիալական միջավայրը,

11) առողջական վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և բուժման արդյունքը,

12) հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները,

13) դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականության գնահատման առումով դիրքորոշում է հայտնել

նան ՀՀ Վճռաբեկ դատարանը⁷⁵:

Ազատագրկման կամ ցմահ ազատագրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կարգը նախատեսված է ՀՀ ՔԿՕ-ի 133-րդ հոդվածով: Իսկ կարգապահական գումարտակում պատիժ կրող դատապարտյալների պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կարգն ունի որոշակի առանձնահատկություններ, որը նախատեսված է ՀՀ ՔԿՕ-ի 134-րդ հոդվածով:

4. Պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու անհնարինության դեպքում պատժից ազատելը

Դատարանի դատավճռով նշանակված ազատագրկման կատարման կարգը և պայմանները անխուսափելիորեն ներգործում են դատապարտյալի գիտակցության, կամքի և հոգեբանության վրա, որոնք ամբողջությամբ դրսևորվում են նրա վարքագծում: Նշված ազդեցությունը դատապարտյալի մեջ կարող է առաջացնել ոչ միայն բացասական, այլև դրական մղումներ: Այս առումով պատժատեսակների՝ միմյանցով փոխարինելու ինստիտուտը խթանիչ գործոն է, որը հնարավորություն կարող է ընձեռել առանց դատարանի դատավճռի հիմնավորվածությանը կասկածելու պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժով:

Պատժից ազատելու այս տեսակի կիրառման հիմքերից մեկը կարող է լինել պատիժը կրելու ժամանակահատվածում դատապարտյալի վարքագիծը, որը նկատի ունենալով՝ դատարանը կարող է պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժով: Ի

⁷⁵ Տե՛ս Գարիկ Դավթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 23-ի թիվ ՇԴ/0021/15/20 որոշում, Արմեն Եղոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ3/0010/12/18 որոշում:

տարբերություն պայմանական վաղաժամկետ ազատման՝ պատ-
ժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժով նաև
այն դեպքում, երբ դատապարտյալն ամբողջությամբ չի վերասո-
ցիալականացվել, բայց հիմքեր կան ենթադրելու, որ նա հաստա-
տակամորեն բռնել է այդ ուղին, սակայն դեռ կարիք ունի քրեա-
կատարողական ներգործության, որը հնարավոր է ավելի մեղմ
պատժատեսակի կրման պայմաններում: Ընդ որում, քրեական
նոր օրենքը չի նախատեսում որևէ սահմանափակում ըստ հան-
ցանքի ծանրության, հետևաբար այն հնարավոր է կիրառել ինչ-
պես ոչ մեծ կամ միջին ծանրության, այնպես էլ ծանր կամ
առանձնապես ծանր հանցանքի կատարման դեպքում:

Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ
պատժով դատապարտյալի կողմից պատժի որոշակի մասը փաս-
տացի կրելուց հետո: Այս ժամանակահատվածում հնարավոր է
իրականացնել պատժի նպատակները, որը պետք է ապահովվի
ավելի մեղմ պատժատեսակի կատարման գործընթացում: Այս
ինստիտուտի սոցիալ-իրավական նշանակությունը դատա-
պարտյալների պատժի կրման պայմանների բարելավումն է, ուս-
տի նման դեպքում պատժի փոխարինմամբ դատապարտյալի
դրության վատթարացումն անթույլատրելի է: Այս կապակցու-
թյամբ ավելի մեղմ պատժի ժամկետը չի կարող գերազանցել այդ
պատժատեսակի չկրած մասը, ինչպես նաև փոխարինված պատ-
ժի համար օրենքով նախատեսված առավելագույն ժամանակը
կամ չափը:

Դատարանն իրավասու է պատժի չկրած մասը փոխարինել
ցանկացած ավելի մեղմ պատժով: Այս հարցը լուծելիս դատարա-
նը հիմք է ընդունում ՀՀ քր. օր. հոդված 56-րդով նախատեսված
պատժի տեսակները՝ յուրաքանչյուրի համար քրեական օրենքով
նախատեսված սահմաններում: Այդ նորմի համաձայն՝ ցանկա-
ցած պատժատեսակի համեմատությամբ ավելի մեղմ են համար-

վում ՀՀ քր. օր. հոդված 56-րդի առաջինից տասմեկերորդ կետերով նախատեսված բոլոր պատիժների նախորդող պատժատեսակները: Նման մոտեցումը, մեր կարծիքով, արժանի է քննադատության, քանի որ պատիժների փոխարինումը մեկը մյուսով ոչ միշտ է նպատակահարմար կամ արդյունավետ. օրինակ՝ ազատազրկման չկրած մասը կարգապահական գումարտակում պահելով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ հանրային աշխատանքներով փոխարինելը և այլն: Որպես փոխարինող ավելի մեղմ պատիժ, մեր համոզմամբ, կարող են հանդիսանալ տուգանքը, հանրային աշխատանքները և ազատության սահմանափակումը:

Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը ոչ պայմանական է: Այդ պատճառով դատապարտյալի կողմից նոր հանցանքի կատարումը չի կարող վերացնել պատժի փոխարինման մասին դատարանի որոշումը: Դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս նոր հանցանքի համար նշանակված պատժին լրիվ կամ մասնակիորեն գումարվում է միայն փոխարինված, այսինքն՝ ավելի մեղմ պատիժը:

ՀՀ քր. օր.-ը պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը սահմանում է որպես պատժից ազատելու ինքնուրույն տեսակ, բայց բովանդակությունը շարադրում է նորովի, որը սկզբունքորեն տարբերվում է հին օրենսդրությամբ նախատեսված պատժից ազատելու այս տեսակից և, մեր կարծիքով, պատժից ազատելու ինքնուրույն տեսակի առանձնացման համար անհրաժեշտ որևէ նոր նախադրյալ կամ տարր չի պարունակում: Այսպես՝ ՀՀ քր. օր. 88-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատավճիռը կայացնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով նշանակված պատժատեսակի կատարումն օբյեկտիվորեն անհնարին է դարձել, ապա դատարանը նշանակ-

ված հիմնական կամ լրացուցիչ պատիժը կամ դրա չկրած մասը փոխարինում է ավելի մեղմ պատժով, իսկ պատիժը ավելի մեղմ պատժով փոխարինելու անհնարինության դեպքում դատապարտյալին ազատում է պատիժը կրելուց:

Օրենքում սահմանված «դատավճիռը կայացնելուց հետո ի հայտ եկած հանգամանքները, արդեն իսկ նախատեսված են պատժից ազատելու քրեական օրենսգրքով պատժից ազատելու մնացյալ տեսակներում և աննպատակահարմար ու անհնար են դարձնում այս նորմի նախատեսված տարբերակով կիրառումը, հատկապես որ նոր, ինքնուրույն նորմով չի բացահայտում դրա կիրառման ընթացակարգը, ավելին՝ ՀՀ ՔԿՕ 130-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանում է՝ «պատժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու անհնարինության դեպքում պատժից ազատելը»՝ անտրամաբանական, որևէ մեկնաբանության ոչ ենթակա, ՀՀ քր. օր. 88-րդ հոդվածի նմանատիպ կրկնություն:

Պատժից ազատելու այս տեսակի ոչ կիրառլի լինելը կապացուցի նաև դատական պրակտիկան, և, կարծում ենք, այն ենթակա է կա՛մ համապատասխան փոփոխության, կա՛մ ընդհանրապես քրեական օրենսգրքից հանվելու:

5. Հղի կնոջ կամ խնամքին մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը

Այս ինստիտուտը քրեական պատժից ազատելու առանձնահատուկ տեսակ է, և հիմքում ընկած է մարդասիրության սկզբունքը, որը դրսևորվում է ոչ միայն կանանց, այլև նրանց երեխաների, ինչպես նաև իրենց խնամքի տակ մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձանց, այդ թվում՝ տղամարդկանց նկատմամբ: Ակնհայտ է, որ դատապարտյալ կնոջ հղիությունը և մանկահա-

սակ երեխաներ ունենալու փաստը ազատագրկման ձևով պատիժ կրելը դարձնում են աննպատակահարմար: Հղի կանանց կամ մանկահասակ երեխաներ ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմաններն անհամատեղելի են ազատագրկում պատժատեսակի կրման հետ: Պատժի կրումը հետաձգելով՝ պաշտպանվում են նրանց ինչպես դեռ չծնված երեխաների, այնպես էլ մանկահասակ երեխաների շահերը, որոնց կանոնավոր զարգացումը կարող է խաթարվել իրենց մոր կամ խնամող անձի պատժի կրման պատճառով: Պատժից ազատելու այս տեսակը նպաստում է նաև ընտանիքի ամրապնդմանը: Ահա այս նկատառումներով է հիմնավորվում այս քրեափրավական նորմի առկայությունը: Այսպիսով, ՀՀ քր. օր. 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև 5 տարի ժամկետով ազատագրկման կամ ազատագրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի նկատմամբ նշանակված պատժի կատարումը կարող է հետաձգվել մինչև երեխայի 6 տարեկան դառնալը, եթե դատարանը համարում է, որ պատժի նպատակներին հասնելու համար պատիժն անմիջապես կատարելն անհրաժեշտ չէ:

Ազատագրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ դատարանը կարող է հետաձգել պատիժը կրելն այն ժամկետի սահմաններում, որի ընթացքում կինն ազատվում է աշխատանքից հղիության, ծննդաբերության, ինչպես նաև երեխայի մինչև վեց տարեկան դառնալու կապակցությամբ: Ընդ որում նշանակություն չունի, թե երբ է առաջացել հղիությունը՝ մինչև մեղադրական դատավճի՞րը, թե՞ պատժի կրման ընթացքում: Հղիության ժամկետը և կնոջ տարիքը չեն սահմանափակվում:

Պատժի կրման հետաձգում ասելով՝ հասկանում ենք, որ դատարանը հետաձգում է դատապարտյալի նկատմամբ ազա-

տագրկման կատարումը մինչև երեխայի վեց տարեկան դառնալը:

Պատժից ազատելու այս տեսակը հնարավորություն է տալիս պատժից ազատել այն դատապարտյալ տղամարդկանց, ովքեր միայնակ խնամում են մինչև վեց տարեկան երեխայի: Միաժամանակ այս ինստիտուտը չի տարածվում այն անձանց նկատմամբ, ովքեր ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար (օրինակ՝ սպանություն, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելը և այլն) դատապարտվել են հինգ տարուց ավելի ժամկետով ազատագրկման:

Քրեական օրենսգրքը հստակեցրել է այն պայմանները, որոնք հաշվի են առնվում դատարանի կողմից պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշում կայացնելիս՝ անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, հանցանք կատարողի անձը, պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելու դեպքում պատժի հետաձգված ժամկետը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված պարտականությունները: Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելիս դատարանն անձի վրա դնում է ՀՀ քր. օր. 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Այսինքն՝ ինչպես և պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս

դատարանի կողմից դատապարտյալի վրա պարտադիր կերպով դրվում են մեկ կամ մի քանի պարտականություններ: Դատարանը կարող է այնպիսի պարտականություններ դնել հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի վրա, որոնք իրագործելի են նրա կողմից:

Երեխայի վեց տարին լրանալուց հետո կամ նրա մահվան դեպքում դատարանը վերադառնում է դատապարտյալի պատժի հետագա կրման հարցի լուծմանը և, հաշվի առնելով փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վարքագիծը, կարող է ազատել նրան պատիժը կրելուց կամ այն փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ դատապարտյալին ուղարկել պատժի չկրած մասը կրելու: Այդ դեպքում դատարանը կարող է պատժի չկրած ժամկետը լրիվ կամ մասնակիորեն հաշվակցել պատիժը կրելու ժամկետին: Դատարանի կողմից կայացվող նման որոշումը նախ և առաջ կախված է պատժի կրման հետաձգման ընթացքում դատապարտյալի պարտականությունների կատարումից և ընդհանուր առմամբ նրա վարքագծից: Եթե հղի կինն ընդհատում է հղիությունն առանց դրա ընդհատման համար օրենքով սահմանված բժշկական ցուցումների կամ հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը:

Դատապարտյալը երեխային դաստիարակելուց խուսափող է համարվում, եթե պաշտոնապես չհրաժարվելով երեխայից՝ նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակահասարակական ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով կամ երեխային թողնում է հարազատների կամ այլ անձանց մոտ կամ թաքնվում է

կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին:

Այն դեպքում, երբ հղի կինը կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը: Փորձաշրջանի ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կարգով: Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու կարգով: Եթե հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը, ապա դատարանը կարող է որոշում կայացնել պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ:

Եթե պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը չի վերացվում, ապա փորձաշրջանն ավարտվելուց հետո անձն ազատվում է պատժի կրումից:

Այս խմբին պատկանող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելու կարգը նախատեսված է ՀՀ ՔԿՕ-ի 136-րդ հոդվածով: Մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկման կամ ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված հղի կնոջ կամ խնամքին մինչև վեց տարեկան երեխա ունեցող անձի

պատժի կատարումը հետաձգելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պրոբացիայի ծառայողը կամ քրեակատարողական հիմնարկի պետը, դատապարտյալը կամ նրա փաստաբանը: Միջնորդությանը կցվում են դատապարտյալի բնութագիրը, անձնական գործը, հղիության մասին բժշկական եզրակացությունը կամ երեխայի ծննդյան վկայականի պատճենը, առկայության դեպքում՝ դատապարտյալին և երեխային ընդունելու, նրանց բնակարան տրամադրելու և ապրելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին ազգականների համաձայնությունը կամ դատապարտյալի՝ բնակարանով և երեխայի հետ ապրելու համար անհրաժեշտ պայմաններով ապահովված լինելու մասին տեղեկանքը:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ազատման օրը Պրոբացիայի ծառայություն է ուղարկում պատժի կրումը հետաձգելու մասին դատարանի որոշման պատճենը՝ նշելով ազատելու օրը, և դատապարտյալից ստորագրություն է վերցնում պատժից ազատվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, Պրոբացիայի ծառայությունում հաշվառվելու պարտավորության մասին:

6. Պատժից ազատելը կամ պատիժը հետաձգելը հիվանդության հետևանքով

Պատժից ազատելու օրենքով նախատեսված հիմքերից է նաև անձի մոտ հիվանդության առկայությունը: Պատժից ազատելու այս տեսակը տարբերակվում է՝ պատժից ազատելն անձի հոգեկան առողջության խնդիրների դեպքում և պատժից ազատելն այլ հիվանդությունների պարագայում: Պատժից ազատելը կամ պատիժը հետաձգելը հիվանդության հետևանքով նախատեսված է ՀՀ քր. օր. 87-րդ հոդվածով: Եթե դատավճիռ կայացնելուց հետո

անձի մոտ ի հայտ է եկել հոգեկան առողջության այնպիսի խնդիր, որն անհնարին է դարձնում պատիժը կատարելը, ապա դատարանը դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա նրան ազատում է պատիժը կրելուց: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ քրեական օրենսգրքի վերը նշված նորմի ձևակերպման մեջ օգտագործվում է ոչ թե «հիվանդացել է», այլ՝ «ի հայտ է եկել» եզրույթը, քանի որ անձը կարող է հիվանդ լինել նաև մինչ հանցանք կատարելը, բայց հիվանդությունն ի հայտ գա հանցանքի կատարումից հետո:

Նման դատապարտյալը փաստորեն կրում է անմեղսունակության և՛ իրավաբանական, և՛ բժշկական բոլոր չափանիշները: Բայց նա չի կարող անմեղսունակ ճանաչվել, քանի որ, ինչպես հայտնի է, անմեղսունակությունը սահմանվում է հանցավոր արարքի կատարման պահի համար, իսկ նշված դատապարտյալի մոտ հոգեկան առողջության խնդիր է առաջացել հանցագործությունից հետո միայն: Այդ անձի նկատմամբ նշանակվում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, իսկ առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, երբ հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ անձը կարող է կրել պատիժ, դատարանը վերացնում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը և որոշում է կայացնում անձին ուղարկել պատիժը կրելու:

Եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը անձի մոտ ի հայտ է եկել հոգեկան առողջության այնպիսի խնդիր, որն անհնարին է դարձնում պատիժ նշանակելը, ապա դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա պատժի նշանակումը հետաձգվում է: Նա համարվում է մեղսունակ, բայց նրա նկատմամբ պատիժ նշանակել և այն կատարել չի կարելի, քանի որ նա չի կարող գիտակցել իր վարքագծի փաստական բնույթն ու հասարակական վտանգավո-

րությունը և ղեկավարել իր արարքները: Հետևաբար, չեն կարող իրականացվել պատժի նպատակները: Պատժից ազատելու այս տեսակը կախված չէ հանցագործության բնույթից և վտանգավորությունից, ինչպես նաև նշանակված պատժի տեսակից: Այդպիսի անձանց նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, իսկ առողջանալուց հետո նա կարող է ենթարկվել պատժի: Ժամանակավոր հոգեկան առողջության խնդիրներով անձը առողջանալուց հետո ենթակա է քրեական պատասխանատվության այն հանցագործության համար, որը նա կատարել է: Ինչպես արդեն նշվեց, եթե հիվանդությունը վրա է հասել դատավճռի հրապարակումից հետո, ապա դատապարտյալն առողջանալուց հետո կարող է վերադարձվել՝ պատժի չկրած մասը կրելու: Երկու դեպքում էլ պետք է ստուգել, թե չէ՞ն լրացել արդյոք քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները կամ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները:

Հոգեկան առողջության խնդրի բնույթի և խորության աստիճանի բացահայտումը վերապահված է դատահոգեբուժական փորձաքննությանը: Այդ իսկ պատճառով հոգեկան առողջության հետևանքով քրեական պատժից ազատելը դատարանի ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը: Եթե այդ պարագայում կիրառվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, ապա դրանք պետք է պայմանավորված լինեն հանցագործության ծանրությամբ, դատապարտյալի վտանգավորությամբ և ուշադրության արժանի այլ հանգամանքներով, որոնք տրամադրվում են դատարանին փորձագետ-հոգեբույժների և պատիժը կատարող մարմնի կողմից:

ՀՀ քր. օր. 87-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է այն անձին պատժի հետագա կրումից ազատելը, ով հիվանդացել է (դատավճիռը կայացնելուց հետո) այլ (ոչ հոգեկան առողջության հետ

կապված) հիվանդությամբ, որն անհնարին է դարձնում պատիժը կրելը: Խոսքը վերաբերում է այնպիսի հիվանդությունների, որոնք արգելք կարող են հանդիսանալ պատժի հետագա կրմանը և, հետևաբար, պատժի նպատակների իրականացմանը: Այդ հիվանդությունները կարող են անմիջական վտանգ սպառնալ դատապարտյալի կյանքին կամ հանգեցնել նրա համար այլ ծանր հետևանքների: Եթե հոգեկան հիվանդության հետևանքով պատժից ազատելը համարվում է պարտադիր և իրականացվում է դատարանի կողմից՝ անկախ հանցագործության ծանրությունից, պատժի ժամկետից, դատապարտյալի վարքագծից, ապա նրա մոտ այլ հիվանդության առկայության դեպքում դատարանը հաշվի է առնում և՛ հիվանդության բնույթը, և՛ հանցագործության ծանրությունը, և՛ դատապարտյալի անձն ու այլ հանգամանքներ: Այս կապակցությամբ պատժից ազատելը (ի տարբերություն առաջինի) համարվում է հնարավոր և ոչ պարտադիր: Անձի առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, որը, բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, հնարավոր է դարձնում պատժի կատարումը, դատարանը որոշում է կայացնում անձին ուղարկել պատիժը կրելու:

ՀՀ քր. օր. 87-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը անձի մոտ ի հայտ է եկել այնպիսի այլ հիվանդություն, որն անհնարին է դարձնում պատիժ նշանակելը, ապա դատաբժշկական փորձաքննության հիման վրա պատժի նշանակումը հետաձգվում է: Անձի առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, որը, բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, հնարավոր է դարձնում պատժի կատարումը, դատարանը պատիժ է նշանակում:

Անձի առողջական վիճակի փոփոխության հարցը բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովը քննության է առնում 6

ամիսը մեկ պարբերականությամբ:

Եթե անձի մոտ հիվանդությունն ի հայտ է եկել դատավճռի կայացումից հետո, և նա հիվանդության հիմքով ազատվել է պատժից, սակայն մինչև դատավճռի կատարման վաղեմության ժամկետը լրանալը կատարում է նոր հանցանք, ապա դատարանը պատիժ է նշանակում դատավճիռների համակցության կանոններով: Եթե անձի մոտ հիվանդությունն ի հայտ է եկել հանցանքի կատարումից հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը և մինչ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելը նա կատարում է նոր հանցանք, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններով:

ՀՀ քր. օր. 87-րդ հոդվածի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ պատժից ազատելու այս ինստիտուտը կարող է տարածվել ոչ բոլոր պատժատեսակների նկատմամբ: Մասնավորապես, հիվանդության հետևանքով նպատակահարմար չէ ազատել այնպիսի լրացուցիչ պատժատեսակներից, ինչպիսիք են որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը: Այսպես՝ որքանո՞վ է նպատակահարմար, օրինակ, անձին հոգեկան հիվանդության հետևանքով ազատել ազատագրկման հետագա կրումից և միաժամանակ վերականգնել որոշակի պաշտոններ զբաղեցնելու նրա իրավունքը:

Հիվանդության հետևանքով պատիժը կրելը հետաձգելու կամ պատժից ազատելու կարգը նախատեսված է ՀՀ ՔԿՕ-ով: ՀՀ ՔԿՕ 135-րդ հոդվածի համաձայն՝ հիվանդության հետևանքով պատժից ազատելու միջնորդությունն օրենքով սահմանված դեպքերում դատարան է ներկայացնում պրոբացիայի ծառայողը կամ քրեակատարողական հիմնարկի պետը, դատապարտյալը

կամ նրա փաստաբանը՝ բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Միջնորդության հետ միաժամանակ ներկայացվում են համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը և դատապարտյալի անձնական գործը:

Պատժից ազատելու միջնորդագիրը պետք է պարունակի դատապարտյալի անձը բնութագրող տվյալներ: Այս հանգամանքն արժանի է առավել ուշադրության, քանի որ, ինչպես նշվեց, ՀՀ քր. օր. 87-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերով պատժից ազատելը պարտադիր չէ, ինչպես հոգեկան առողջության խնդրի առկայության դեպքում: Այդ է պատճառը, որ դատարանը դատապարտյալի ազատման հարցը որոշելիս հիմք է ընդունում ոչ միայն հիվանդության առկայությունը, այլ նաև այլ հանգամանքներ: Պատժից ազատելու քննարկվող տեսակն առավել նպատակահարմար է կիրառել, երբ հիվանդության հետևանքով դատապարտյալը չի կարող ներգրավվել աշխատանքի կամ ուսման, մշտապես գտնվում է հիվանդանոցում, երկարատև բուժման կամ վիրահատման կարիք ունի և այլն: Եթե դատարանը, վերոհիշյալը հաշվի առնելով, որոշում է կայացնում դատապարտյալին չազատել պատժից, ապա այս պարագայում անհրաժեշտ է նրան տեղավորել հատուկ (մեկուսացված) բժշկական հիմնարկում:

Հատուկ պայմաններ են նախատեսված հիվանդության հետևանքով դատապարտյալ զինծառայողներին պատժից ազատելու համար: Դատապարտյալ զինծառայողը կարող է ազատվել պատժի հետագա կրումից, եթե հիվանդության բնույթի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի: Դատարանը, քննարկելով կարգապահական գումարտակի հրամանատարության միջնորդությունը և բժշկական հանձ-

նաժողովի եզրակացությունը, կարող է դատապարտյալ զինծառայողին ազատել պատժի կրումից: Ընդ որում՝ դատապարտյալ զինծառայողին հիվանդության հետևանքով անհրաժեշտ է ազատել ոչ միայն կարգապահական գումարտակում պատիժը կրելուց, այլև կարճաժամկետ ազատազրկումից, քանի որ վերջինիս կրման պայմանները նույնպես անհամատեղելի են հիվանդ դատապարտյալին պահելու համար անհրաժեշտ պայմանների հետ:

7. Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

Երբեմն դատական պրակտիկայում այս կամ այն պատճառով մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվում որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որից հետո դրա կատարումը պատժի հատուկ և ընդհանուր կանխման տեսանկյունից դառնում է աննպատակահարմար: Այդ ժամանակահատվածում պատժի նպատակները կարող են իրագործվել (օրինակ՝ անձը կարող է վերասոցիալականացվել), իսկ նախկինում նշանակված պատժի կատարումը նման պայմաններում դառնում է անտեղի: Այդ ընթացքում նոր հանցագործություններից ձեռնպահ մնալը վկայում է դատապարտյալի հասարակական վտանգավորության կորստյան և նրա նկատմամբ քրեաիրավական ներգործության կիրառման աննպատակահարմարության մասին: Վաղեմության ժամկետների ընթացքում անձի հասարակական վտանգավորության կորստյան կամ ծավալի փոքրացման տեսակետը լայն տարածում ունի քրեական իրավունքի տեսության մեջ⁷⁶. դրանով է հիմնավորվում մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները կիրառելու անհրաժեշտությունը: Այդ պատճառով

⁷⁶ См. и Курс уголовного права. Общая часть. Под ред. Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой. М., 1999, էջ 196:

քրեական օրենքը նախատեսում է մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու այս տեսակը:

Վաղեմության հիմքում ընկած են ժամանակի մարող ուժը, որոշակի ժամանակահատվածի ընթացքում ի կատար չածված պատժի կատարման անիմաստ լինելը: Վերջինիս գիտակցումն է մղել օրենսդրին վաղեմությունն ընդունել որպես պատժից ազատելու հիմքերից մեկը⁷⁷: Մեղադրական դատավճռի կատարման վաղեմությունը (պատժի վաղեմություն) քրեական օրենքով նախատեսված ժամկետների լրանալն է, որից հետո դատարանի կողմից նշանակված պատժի կատարումը (դատավճռի կատարումը) բացառվում է: Նախկին քրեական օրենսդրությունը, ինչպես նաև նորը, պատժից ազատելու այս տեսակի կիրառումը չի կապում մեղադրական դատավճիռը չկատարելու որևէ պատճառի հետ: Այդպիսիք կարող են հանդիսանալ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի ցանկացած հանգամանքներ (պատիժը կատարող պաշտոնատար անձանց անփութությունը, դատապարտյալի գերության մեջ կամ պատանդ լինելը, տարերային աղետի հետևանքով դատական փաստաթղթերի կորուստը, դատապարտյալի հիվանդությունը, որոնք արգելք են հանդիսացել պատժի կրմանը և այլն): Պատժից ազատելու այս տեսակի համար անհրաժեշտ պայմաններ են՝ մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետի լրանալը և պատժի կրումից դատապարտյալի չխուսափելը: ՀՀ քրեական նոր օրենսգրքում այս ինստիտուտը ձևակերպելիս կատարվել են որոշակի ճշտումներ, որոնցից կարևորը վաղեմության այս տեսակի իրավաբանական բնույթի հստակեցումն է:

⁷⁷ Վաղեմությունը, որպես այդպիսին, չի ընդունվել պատժի հատուցման տեսության կողմնակիցների կողմից. այն չէին արդարացնում նաև բազմաթիվ փիլիսոփաներ (Գանտ, Հեգել, Ֆոյերբախ և այլք):

Մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետները կախված են հանցագործության ծանրությունից և պատժի ժամկետից: ՀՀ քր. օր. 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար դատապարտված անձն ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում: Այսինքն՝ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետը հավասար է դատական վերջնական ակտով նշանակված պատժատեսակի տևողությանը: Օրինակ, եթե դատարանը անձին դատապարտել է 5 տարի ժամկետով ազատազրկման, ապա մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետը կսկսվի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և կտևի 5 տարի:

Ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել 1 տարվա ընթացքում (ՀՀ քր. օր., հոդված 90-րդ, մաս 2-րդ):

Մեղադրական դատավճռով նշանակված պատժի կատարումը հետաձգելու դեպքում մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ դատարանի որոշումը վերացնելուց հետո (ՀՀ քր. օր., հոդված 90-րդ, մաս 3-րդ):

Լրացած վաղեմության ժամկետները ինքնին վերացնում են պատժելիությունը՝ անկախ տվյալ ժամանակահատվածի ընթացքում տեղի ունեցած որևէ երևույթից: Միաժամանակ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է հիմնական պատիժը կրելուց (ՀՀ քր. օր., հոդված 90-րդ, 5-րդ մաս): Պատիժը կրելուց խուսափել են համարվում դատապարտյալի այն գործողությունները, որոնք արգելք են հանդիսա-

նում պետական մարմինների գործունեությանը՝ նրա նկատմամբ մեղադրական դատավճիռը կատարելու կապակցությամբ (փախուստ նախնական կալանքից, ձերբակալման, ազատագրկման վայրերից, բնակության վայրի, ազգանվան փոփոխում և այլն): Դատապարտյալի՝ պատժի կրումից խուսափելը վկայում է նրա հասարակական վտանգավորության և, հետևաբար, պատժի կատարման անհրաժեշտության մասին՝ նույնիսկ որոշակի ժամանակ անց: Վաղեմության ընթացքի կասեցում ասելով հասկանում ենք, որ պատժից խուսափելու օրվանից մինչև դատապարտյալի ձերբակալման կամ մեղայականով ներկայանալու օրը ընկած ժամանակը չի ընդգրկվում վաղեմության ժամկետի մեջ: Այդ դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահից:

Քրեական օրենսգիրքը նախատեսում է կասեցման դեպքում վաղեմության ժամկետի երկարաձգում: Վաղեմության ժամկետի կասեցման դեպքում ՀՀ քր. օր. 90-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված ժամկետը երկարաձգվում է դրա մեկ երկրորդի չափով: Օրինակ՝ եթե անձը դատապարտվել է ազատագրկման 6 տարի ժամկետով, որից հետո փախուստի է դիմել, ապա վաղեմության ժամկետը կասեցվում է, և վաղեմության ժամկետը ավելանում է 1/2-ով, այսինքն՝ 3 տարով, և դառնում 9 տարի:

ՀՀ քր. օր. 90-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելը տարածվում է ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժների վրա: Ի դեպ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, առավել հաճախ չեն կատարվում լրացուցիչ պատիժները: Հետազոտությունները ցույց են տվել, որ, օրինակ, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կեսից ավելին խուսափում է պատիժը կրելուց:

Նախատեսվում է մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետների ընդհատում (ՀՀ քր. օր. հոդված 90-րդ, 4-րդ մաս): Մասնավորապես, սահմանվում է, որ վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետներն անցնելն անձը նոր հանցանք է կատարում: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է նոր հանցանքը կատարելու հաջորդ օրվանից: Վաղեմության ժամկետի ընթացքում նոր հանցանքի կատարումը վկայում է անձի վտանգավորության մասին, որն ավելին է, քան մեղադրական դատավճռով նախատեսված պատժի կրումից խուսափող անձի դեպքում: Հետևաբար՝ քրեական օրենսգրքում վաղեմության ժամկետի ընդհատում նախատեսելն արդարացված է, քանի որ հակառակ պարագայում դատապարտյալը, ում նկատմամբ մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել, կարող է կատարել ցանկացած ծանրության հանցավոր արարք առանց մտավախության, որ դրանով կընդհատի նախորդ հանցագործության համար մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետները:

Ցմահ ազատազրկման կատարման վաղեմության ժամկետների որոշման հարցում քրեական նոր օրենսգիրքը դրսևորել է հատուկ վերաբերմունք, քանի որ, նախ՝ այս պատժատեսակի նշանակումը վկայում է կատարված արարքի և այն կատարող անձի հասարակական մեծ վտանգավորության մասին, և երկրորդ, ցմահ ազատազրկումն իր բնությամբ բացառիկ պատժատեսակ է: ՀՀ քր. օր. 90-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում:

Ելնելով խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների մեծ վտանգավորությունից, որոնց համար պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քր.

օր. 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով, հանցամք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով կրում է ոչ պայմանական բնույթ, ուստի պատժից ազատված անձինք ՀՀ քր. օր. 93-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ համարվում են դատվածություն չունեցող:

8. Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով

Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով կարելի է համարել նորույթ քրեական իրավունքի տեսությունում: Որպես այդպիսին՝ այն առաջին անգամ նախատեսվել է ԱՊՀ երկրների նմուշային քրեական օրենսգրքում և տեղ գտել նաև 2003 և նոր՝ 2021թթ. ՀՀ քրեական օրենսգրքերում: Պատժից ազատելու այս տեսակը քրեական իրավունքի մարդասիրության սկզբունքի դրսևորման ձևերից է, քանի որ դատապարտյալը կարող է ազատվել պատժից, եթե ընտանիքի միակ աշխատունակ անդամի հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի կրումը դատապարտյալի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների (ՀՀ քր. օր., 89-րդ հոդված):

Քրեական օրենսգրքում առանձին չեն ձևակերպվել «հրդեհը,

տեխնոլոգիական կամ տարերային աղետը», ինչպես նախկին քրեական օրենսգրքում, սակայն դրանք դիտարկվում են որպես «արտակարգ այլ հանգամանքներ»: Քննարկվող ինստիտուտը կիրառելու առանձնահատկություններին անդրադարձ կատարվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից⁷⁸:

Ընտանիքի միակ աշխատունակ անդամի հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով դատապարտյալին պատժից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պրոբացիայի ծառայողը կամ քրեակատարողական հիմնարկի պետը, դատապարտյալը կամ նրա փաստաբանը (ՀՀ ՔԿՕ, 137-րդ հոդված, 1-ին մաս): Միջնորդության հետ միաժամանակ պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմը դատարան է ներկայացնում տեղեկանքներ համապատասխան հանգամանքների վերաբերյալ և դատապարտյալի անձնական գործը:

Պատժից ազատվելով՝ դատապարտյալը հնարավորություն է ունենում կանխել վերը նշված հանգամանքներից բխող առավել ծանր հետևանքները: Իհարկե քրեական օրենսգրքում արված է վերապահում. պատժից ազատվելու նման հնարավորություն տրվում է ոչ բոլոր դատապարտյալներին, այլ միայն նրանց, ովքեր դատապարտվել են առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման կամ ավելի մեղմ պատժի, այսինքն՝ նրանք, ովքեր, բնականաբար, հասարակական մեծ վտանգավորություն չեն ներկայացնում:

Պատժից ազատելու այս տեսակի նպատակահարմարության մասին է վկայում նաև ժամանակի փորձը, երբ 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի կործանարար երկրաշարժից հետո պատժի կրումից ազատվեցին աղետի գոտու մեծ թվով բնակիչ դատա-

⁷⁸ Տե՛ս Տիրան Բուդաղյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԱՎԴ/0100/01/08 որոշում:

պարտյալներ՝ փրկարարական և վերականգնողական աշխատանքներին մասնակցելու համար:

Արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու մասին որոշում կայացնելու դեպքում նշանակված կամ պատժի չկրած ժամկետը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի հսկողության ներքո: Փորձաշրջանի ընթացքում դատարանը դատապարտյալի վրա դնում է քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում սահմանված պարտականություններից մեկը կամ մի քանիսը:

Այն դեպքում, երբ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված անձը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, ապա դատարանը վերացնում է արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշումը:

Արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշումը փորձաշրջանի ընթացքում կատարված հանցանքի հիմքով վերացնելու դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով: Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով և լուծում է արտակարգ հանգամանքների հետևանքով

անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշումը վերացնելու հարցը:

ՀՀ ՔԿՕ 137-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված անձը դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց խուսափող է համարվում, եթե Պրոբացիայի ծառայության կողմից երկու անգամ արգելված վարքագծի մասին նախազգուշացվելուց հետո դարձյալ չի կատարում սահմանված պարտականությունները:

ՀՀ ՔԿՕ-ի 26-րդ գլխում սահմանված է պատժից ազատվող դատապարտյալին ցուցաբերվող աջակցության իրականացման կարգը՝ անկախ պատժից ազատվելու տեսակից:

ՀՀ ՔԿՕ-ի 140-րդ հոդվածի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ: Պատժից ազատելու նախապատրաստման նպատակով դատապարտյալի հետ նախապես անցկացվում են համապատասխան աշխատանքներ՝ Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի սահմանած կարգով: Ազատագրվման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը՝

1) դատապարտյալի ընտրած բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմնին տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման ժամկետի, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակության վայրի առկայության մասին.

2) դատապարտյալին գրավոր և անհատապես ծանուցում է կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու իրավունքի մասին և ներկայացնում «Զբաղվածության մասին» օրենքով նախատեսված մասնագիտական ուսուց-

ման ծրագրերը, ինչպես նաև նրանց տվյալները փոխանցում է օրենքով սահմանված լիազորված մարմին՝ որպես աշխատանք փնտրող անձ հաշվառելու և զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում նրանց ընդգրկելու նպատակով:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ապահովում է նաև պատժից ազատվող դատապարտյալի անվճար տեղափոխումը մինչև նրա բնակության վայր կամ տրամադրում է դրա համար անհրաժեշտ գումար՝ ՀՀ տարածքում տեղափոխվելու համար: Պատժից ազատվող դատապարտյալին նաև տրամադրվում է տեղափոխման ընթացքում անհրաժեշտ սննդամթերք կամ դրա համար անհրաժեշտ գումար, ինչպես նաև սեզոնային անհրաժեշտ հագուստ: Հաշվի առնելով գույքային դրությունը՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի պատճառաբանված որոշման հիման վրա դատապարտյալին կարող է տրամադրվել նաև միանվագ դրամական օգնություն, որի չափն ու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալն ապահովվում է ժամանակավոր կացարանով՝ մինչև վեց ամիս ժամկետով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով:

Համաներումն⁷⁹ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտ է, որով ենթադրյալ հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել

⁷⁹ Ամնիստիա՝ լատիներեն *amnestia*՝ ներում, մոռացություն:

դատվածությունը (ՀՀ քր. օր., 91-րդ հոդված):

Համաներումը հայտարարվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի նկատմամբ (օրինակ՝ համաներման ակտով կարող է նախատեսվել մինչև երեք տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրումից ազատում): Այդ է պատճառը, որ համաներումը միայն նորմատիվ հիմք է ստեղծում դրա ներգործության ոլորտ ընկնող անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար: Կոնկրետ անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու իրավաբանական հիմք է իրավական նորմի կիրառման անհատական ակտը՝ քրեական գործի հարուցումից հրաժարվելու վերաբերյալ որոշումը, քրեական գործը կարճելու մասին որոշումը, դատարանի մեղադրական դատավճիռը՝ պատժի կրումից ազատելով և այլն:

Համաներման ակտով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը հնարավոր է քրեական դատավարության ցանկացած փուլում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից: Նման դեպքում դատախազը, քննիչը որոշում են կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին: Եթե գործը գտնվում է դատական քննության փուլում, ապա համանման որոշում կայացնում է դատարանը:

Գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չեն թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: Այս կարգավորումը գործում է, եթե համաներման մասին օրենքով այլ

բան նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, եթե մեղադրյալն առարկում է, ապա գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չեն թույլատրվում: Նման դեպքերում գործի քննությունը շարունակվում է մինչև վերջ, և եթե անձը մեղավոր է, սակայն համաներման ակտը տարածվում է նրա վրա, ապա դատարանը մեղադրական դատավճիռ է կայացնում՝ անձին ազատելով պատժի կրումից:

Համաներում կիրառելու կարգը սահմանում է համաներման ակտն ընդունող մարմինը: Եթե անձը արդեն կրում է ազատազրկման ձևով նշանակված պատիժը, ապա համաներման ակտով պատժի կրումից ազատումն իրականացվում է քրեակատարողական հիմնարկի պետի որոշման հիման վրա, որը հաստատվում է դատախազի կողմից:

Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժներից ազատելն իրականացվում է դատարանի որոշմամբ: Դատարանի որոշմամբ պատժի կրումից ազատումն իրականացվում է նաև այն դեպքերում, երբ դատավճիռն օրինական ուժի մեջ չի մտել, կամ անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Համաներումը կարող է լինել ընդհանուր և մասնակի: Ընդհանուր համաներումը տարածվում է այն բոլոր անձանց վրա, ովքեր կատարել են քրեական օրենսգրքի Հատուկ մասի որոշակի հոդվածներով նախատեսված հանցանքներ: Մասնակի համաներումը վերաբերում է համաներման ակտով նախատեսված որոշակի խումբ անձանց: Օրինակ՝ «ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման առաջին մասը նախատեսում է պատժից ազատել՝ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձանց, այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ

պատժի կրումը հետաձգվել է, և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց⁸⁰:

Համաներման ակտը կարող է նախատեսել նաև պատժի կրճատում: Օրինակ՝ վերոհիշյալ որոշման ութերորդ մասը նախատեսում էր որոշակի խումբ անձանց նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասի կրճատում՝ երկու երրորդով, կիսով չափ, մեկ երրորդով և մեկ քառորդով:

Մեկ այլ օրինակ ՀՀ վերջին համաներման ակտից. «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800 ամյակի և Հայաստանի Առաջին հանրապետության անկախության հռչակման 100 ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2018թ. նոյեմբերի 1-ի որոշման երկրորդ մասը նախատեսում է պատժից ազատել՝ առվելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց, այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է, և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց: Նախատեսվում է նաև որոշակի խումբ անձանց նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասի կրճատում՝ երկու երրորդով, կիսով չափ, մեկ երրորդով և մեկ քառորդով⁸¹:

Համաներման ակտը կարող է նախատեսել նաև այլ իրավական հետևանքներ՝ նշանակված պատժի ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում, դատվածության վերացում, լրացուցիչ պա-

⁸⁰ ՀՀ Ազգային ժողովի որոշումը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին», տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85642>:

⁸¹ ՀՀ օրենքը «Էրեբունի Երևանի հիմնադրման 2800 ամյակի և Հայաստանի Առաջին հանրապետության անկախության հռչակման 100 ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին», տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126291>:

տիժներինց ազատում:

Հարկ է նշել, որ ՀՀ նախկին քրեական օրենսդրությունը համաներման կիրառման համար օրենսդրական սահմանափակումներ չէր նախատեսում: Սակայն, որպես կանոն, համաներումը չէր տարածվում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների, ինչպես նաև ռեցիդիվի դեպքերի վրա: ՀՀ քր. օր. 91 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համաներում չի կարող կիրառվել ՀՀ քր.օր. 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ (խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ, ահաբեկչություն, խոշտանգում և այլն):

Որպես կանոն, համաներումը տարածվում է այն հանցագործությունների վրա, որոնք ավարտվել են նախքան համաներման ակտն ուժի մեջ մտնելը: Այսպես՝ տևող հանցագործությունների ավարտման պահ է համարվում մեղավորին ձերբակալելու կամ նրա՝ մեղայականով ներկայանալու պահը, շարունակվող հանցագործությունների ավարտման պահ է համարվում վերջին գործողությունը կատարելու պահը: Համաներման ակտն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվող և դեռևս չավարտված հանցագործությունների նկատմամբ համաներում չի տարածվում:

Ինչպես արդեն նշել ենք, համաներումը արտադատական ակտ է, որի կիրառման օրենսդրական հիմքերը նախատեսված չեն: Փաստորեն ամեն ինչ թողնված է պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի հայեցողությանը: Այսպիսի իրավիճակն ունի թե՛ բացասական, թե՛ դրական կողմեր: Հաճախ լինում են դեպքեր, երբ համաներումը տարածվում է ծանր հանցագործությունների վրա և չի տարածվում միջին ծանրության հանցագործությունների վրա, ինչը չի կարելի արդարացի համարել: Բացի այդ, համաներման ակտով հաճախ կարող է ի չիք դարձվել իրավապահ մարմինների և դատարանի՝ դատապարտյալների

վերասոցիալականացմանն ուղղված բազմամյա ջանքերը:

Համաներման ակտի ընդունումը կապված չէ կոնկրետ իրավական փաստի հետ, այն կարող է ընդունվել ցանկացած ժամանակ (որպես կանոն, համաներման ակտը կապվում է տվյալ պետության համար նշանակալից քաղաքական, սոցիալական իրադարձությունների հետ), ինչը կարող է անցանկալի հետևանքների հանգեցնել: Մասնավորապես, համաներման ակտերի կարճ ժամանակահատվածում հաճախակի ընդունումը ոչնչով արդարացված չէ և կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր քրեաձին վիճակի վրա: Նշված հանգամանքները հանգեցրել են նրան, որ համաներմումը բազմաթիվ հակառակորդներ է ձեռք բերել մարդկության պատմության ընթացքում, որոնց թվում էին նաև Ի. Կանտը, Չ. Բեկարիան և այլն:

Չնայած դրան՝ համաներմումը քրեական իրավունքի պատմականորեն առավել կայուն ինստիտուտներից է: Դրա անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով:

Համաներման միջոցով հնարավորություն է ստեղծվում վերացնել քրեական օրենքում եղած թերությունները: Մասնավորապես, երբ քրեաիրավական որևէ նորմ փաստացի դադարեցրել է իր գործողությունը, սակայն չի վերացվել, իսկ այդ նորմով դատապարտված անձինք պատիժ են կրում կամ ձևականորեն ենթակա են քրեական պատասխանատվության: Համաներմումն արդարացված է նաև այն հանցագործությունների կապակցությամբ, որոնք ժամանակավոր բնույթ են կրում, կապված են անբարենպաստ հանգամանքների հետ: Նման իրադրություններում համաներմումը ընդունվում է, եթե առկա է անբարենպաստ իրադրության բարելավման միտում, կամ պետությունը փորձում է բարելավել իրադրությունը: Այսպես՝ ՀՀ Ազգային ժողովի 2009թ. հունիսի 19-ի համաներմում հայտարարելու մասին որոշմամբ պատժից ազատվեցին նաև 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ

դատապարտված անձինք:

Այսպիսով՝ համաներումը՝ որպես պետաիրավական ակտ, օժտված է հետևյալ հատկանիշներով: Նախ՝ այն նորմատիվ բնույթ ունի, այսինքն տարածվում է անհատապես չորոշված անձանց շրջանակի վրա: Երկրորդ՝ համաներման նախաձեռնությունը բխում է պետական մարմնից: Երրորդ՝ համաներման ակտերն ունեն համապարտադիր բնույթ ինչպես այդ ակտերը կիրառող իրավապահ մարմինների, այնպես էլ այն անձանց համար, որոնց վրա տարածվում է համաներումը: Միակ բացառությունը այն անձինք են, ովքեր իրենց մեղավոր չեն ճանաչում և պնդում են, որ անպայման դատական քննություն իրականացվի: Չորրորդ՝ համաներման ակտը միայն նորմատիվ հիմք է ստեղծում անձինքրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համար: Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու իրավաբանական հիմք է իրավունքի նորմի կիրառման անհատական ակտը:

Ներումը մարդասիրական դրսևորում է, որի արդյունքում օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանցագործության համար դատապարտված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժով (ՀՀ քր. օր., 92-րդ հոդված):

Ներումը կարող է ունենալ այն նույն իրավական հետևանքները, ինչ որ համաներումը, բացառությամբ մեկի. ներման ակտով հնարավոր չէ անձին ազատել քրեական պատասխանատվությունից: Բացի այդ, հանցանք կատարած անձը ներման ակտով չի կարող ազատվել պատժից, քանի դեռ դատավճիռ չի կայացվել: Փաստորեն ներումը կարող է վերաբերել միայն այն անձանց, որոնց նկատմամբ դատավճիռ է կայացվել, և ովքեր պատիժ են կրում:

Ի տարբերություն համաներման՝ ներումը նորմատիվ բնույթ

չունի: Դա կոնկրետ դեպքում իրավունքի կիրառման անհատական ակտ է: Ներումն իրականացվում է անհատապես որոշված անձի նկատմամբ: Հաջորդ տարբերությունը, որն առկա է համաներման և ներման միջև, այն է, որ ներման ակտը անձին պատժից ազատելու իրավական հիմք է, մինչդեռ համաներումը կիրառելու համար անհրաժեշտ են համապատասխան մարմինների ակտեր:

Բացի այդ, եթե համաներման նախաձեռնությունը էլնում է պետական իշխանության մարմիններից, ապա ներման նախաձեռնությունը պատկանում է դատապարտյալին: Ներում շնորհելու հարցի քննարկման համար հիմք է դատապարտյալի կողմից ներկայացված խնդրագիրը: Ներման խնդրագիրը գրավոր դիմում է, որը հանցագործության համար դատապարտված անձը ներկայացնում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ ՀՀ նախագահի կողմից ներում շնորհելու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 135-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը: Ներում շնորհելու վերաբերյալ խնդրագրերը բավարարելու կամ մերժելու մասին ՀՀ նախագահը հրապարակում է հրամանագրեր: Դիմող դատապարտյալները տեղեկացվում են իրենց խնդրագրերի քննարկման արդյունքների մասին:

Ներման խնդրագրերը ներկայացնելու և քննարկելու, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2018թ. մարտի 7-ին:

Ներման խնդրագիր ներկայացնելու իրավունք ունի հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր անձ միայն դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այլ անձինք ևս կարող են ներկայացնել ներման միջնորդություններ, որոնք կցվում են դատապարտյալի ներկայացրած ներման խնդրագրին:

Ներման միջնորդությունները չեն քննարկվում, եթե առկա չէ դատապարտյալի ներման խնդրագիրը:

Ներման խնդրագրերը վերը նշված անձանց կողմից առձեռն, փոստով կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ ներկայացվում կամ պատիժը կատարող մարմնի միջոցով ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարություն:

Ներման խնդրագիրը քննարկելու նպատակով նախարարությունը ներման խնդրագիրն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներման խնդրագիր ներկայացրած անձի վերաբերյալ կազմում է անձնական գործ և ներկայացնում Վարչապետին:

Անձնական գործն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Վարչապետն այն ուղարկում է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով՝ ներման խնդրագրի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

Հաշվի առնելով ներման խնդրագրի բնույթը և կարևորությունը՝ բացառիկ դեպքերում Վարչապետը ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկությունը Հանրապետության նախագահին կարող է ներկայացնել առանց հարցը Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու:

Հանձնաժողովը ներման խնդրագիրն ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում, Վարչապետին ներկայացնում է եզրակացություն ներման խնդրագրի վերաբերյալ: Հանձնաժողովի՝ ներման խնդրագրի վերաբերյալ ներկայացրած եզրակացությունը խորհրդատվական բնույթ ունի:

Վարչապետը Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան տասնհինգօրյա ժամկետում, Հանրապետության նախագահին ներկայացնում է ներման խնդրագիր ներկայացրած անձին ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին Հանրապետության նախագահի

հրամանագրի նախագիծը, անձնական գործը և Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում):

Ներման խնդրագրերը քննարկելիս ուսումնասիրվում են հետևյալ հանգամանքները՝ ներման խնդրագրով հայցվող խնդրանքի էությունը, կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը, իր կատարած հանցանքի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքը, դատապարտյալի վերաբերմունքը քրեական ենթամշակույթին, սոցիալ-հոգեբանական բնութագիրը, պատիժը կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը, ռեցիդիվի առկայությունը, տուժողին պատճառված վնասը հատուցելը կամ այլ կերպ հարթելը, մասնակցությունը վերասոցիալականացման միջոցառումներին, առողջական վիճակը, սոցիալական դրությունը, ընտանեկան դրությունը և խնամքի տակ գտնվող անձանց առկայությունը, նախկինում ներում շնորհված լինելու կամ համաներում կիրառված լինելու, նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված լինելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինված լինելու հանգամանքը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Ազատազրկման դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար պատժի՝ օրենքով սահմանված մասի կեսը: Ցմահ ազատազրկման դատապարտված անձին կարող է ներում շնորհվել, եթե նա փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան 15 տարին:

ՀՀ քր. օր. 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ներում չի կարող կիրառվել ՀՀ քր. օր. 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած անձանց

նկատմամբ (խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ, ահաբեկչություն, խոշտանգում և այլն):

Հանրապետության նախագահը ստորագրում է ներում շնորհելու կամ ներման շնորհումը մերժելու մասին հրամանագրի նախագիծը կամ իր առարկություններով այն վերադարձնում Վարչապետին:

Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը և հրամանագրի նախագիծը կրկին ներկայացնում է Հանրապետության նախագահին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ընդունում է հրամանագիրը կամ դիմում է ՀՀ սահմանադրական դատարան:

Եթե Հանրապետության նախագահը հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնում է Վարչապետին, և Վարչապետն ընդունում է Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Վարչապետը Հանրապետության նախագահի առարկությունն ստանալու պահից հնգօրյա ժամկետում առարկությանը համապատասխան խմբագրում է հրամանագրի նախագիծը և ներկայացնում Հանրապետության նախագահին:

Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի վերադարձնում իր առարկություններով կամ Վարչապետի կողմից Հանրապետության նախագահի առարկությունները չընդունվելու դեպքում չի դիմում ՀՀ սահմանադրական դատարան, ապա հրամանագրի նախագիծն ուժի մեջ է մտնում իրավունքի ուժով:

Հանրապետության նախագահի աշխատակազմը ներման խնդրագրերի մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ընդունելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է ներման խնդրագիրը ներկայացրած անձին: Ներման ակտով անձը չի կարող ազատվել օրինական ուժի

մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական և ոչ նյութական վնասը հատուցելու պարտականությունից:

Ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, ներման նոր խնդրագրերը Հանրապետության նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել ներման նախորդ խնդրագրերի մերժման օրվանից մեկ տարի հետո:

Ներում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրերը և ծանուցումներն ի կատար են ածվում անհապաղ՝ հրամանագրերի քաղվածքները կամ ծանուցումներն ստանալուն պես:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք
3. ՀՀ Քրեական օրենսգիրք
4. ՀՀ Պրոբացիայի մասին օրենքը
5. ՀՀ քրեական իրավունք (ընդհանուր մաս), Երևան, ԵՊՀ հրատ., 2012
6. Խաչիկյան Հ.Մ., Ազատագրկման իրավական կարգավորման տեսական, մեթոդոլոգիական և կազմակերպական ասպեկտները ՀՀ-ում: Երևան, ԵՊՀ հրատ., 2021
7. Խաչիկյան Հ.Մ., ՀՀ Քրեակատարողական իրավունք Երևան, ԵՊՀ հրատ., 2011,
8. Уголовно-исполнительное право / Под ред. И.В. Шмарова. М., 1998
9. Уголовно-исполнительное право России / Под ред. В.И. Селиверстова. М., 2021
10. Уголовно-исполнительное право России / Под ред. А.И. Зубкова. М., 2002
11. Уголовно-исполнительное право. Учебник в двух томах. Рязань, 2005
12. Уголовно-исполнительное право Российской Федерации. Под ред. И.Л. Трунова. М., 2005
13. Уголовно-исполнительное право. Под ред. Ю.И. Калинина. Учебник в двух томах. М., 2006
14. Уголовно-исполнительное право Российской Федерации. Бриллиантов А.В., Курганов С.И. М., 2023
15. Уголовно-исполнительное право. Гришко А.Я., Иванов В.Д., М., 2017
16. Уголовно-исполнительное право России / Под ред. И. В. Дворянский. М., 2022

17. Стручков Н.А. Курс исправительно-трудового права. Проблемы Общей части. М., 1984.
18. Стручков Н.А. Курс исправительно-трудового права. Проблемы Особенной части. М., 1985.
19. Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации и минимальным стандартным правилам обращения с заключенными / Под ред. М.П. Мелентьева, С.П. Пономарева. М., 2015.
20. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М., 2014.
21. Антонян Ю.М., Эминов В.Е. Личность преступника. М., 2022.
22. Багреева Е.Г. Субкультура осужденных и их ресоциализация. М., 2001.
23. Актуальные проблемы криминологии, юридической психологии и уголовно-исполнительного права. Сборник научных статей. М., 2023.
24. Бриллиантов А.В. Проблемы классификации осужденных к лишению свободы в целях дифференциации условий отбывания наказаний. М., 1995.
25. Олейник А.Н. Тюремная субкультура в России: от повседневной жизни до государственной власти. М., 2001.
26. Старков О.В. Введение в криминопенологию. Уфа, 1997.
27. Старков О.В., Милюков С.Ф. Наказание: уголовно-правовой и криминопенологический анализ. СПб., 2001.
28. Пенитенциарная криминология. Под ред. Ю.М. Антоняна. М., 2002.
29. Таганцев Н.С. Русское уголовное право. Лекции. Часть общая. Т.2. М., 1994.
30. Ткачевский Ю.М. Прогрессивная система исполнения уголовных наказаний. М., 1997.
31. Фойницкий И.Я. Учение о наказании в связи с тюремове

дением. М., 2000.

32. Хабаров А.И. Тюрма и зона. Факты и документы. М., 2000.
33. Хачикян А.М. История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении. Ереван, 2005.
34. Хачикян А.М. Лишение свободы: Криминологические и уголовно-исполнительные проблемы. Ереван, 2008.
35. Хачикян А.М. Лишение свободы: проблемы исполнения наказания в отношении впервые осужденных. Ереван, 2000.
36. Хохряков Г.Ф. Парадоксы тюрьмы. М., 1991.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԻՆԻ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

Դասագիրք բուհերի համար

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Ավետիսյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 03.05.2024:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 24.375:

Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am